



ḥtjw
ḥtjw
ḥtjw

ḥtjw
ḥtjw
ḥtjw

1916




059
7-33

Small illegible text at the bottom right corner of the bookplate.

.....
⊕ Եզրպտահայ Սարեցոյցը ⊕
.....

**K. & G. MELKONIAN
CIGARETTES**



TRADE MARK

Գ. ԵՒ Կ. ՄԵԼԿՈՆԵԱՆ

ԱՄԵՆԱՀԻՆ ԵՒ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ

ՍԻԿԱՐԷԹԻ ՀԱՅ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ, ՀԱՍՏԱՏԵԱԼ 1882ԻՆ, Ի ԳԱՀԻՐԷ

ԱՄՍԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄՆ Է 12,000,000 ՍԻԿԱՐԷԹ

ՓՆՏՈՒՆՆԵ՛Ն ՄԵԼԿՈՆԵԱՆ ՏԱՆ ԱՌԱՋՆԱՅԱՏՈՒԿ

«Ֆլոր Մասկն», «Սիլբեր Մասկն» եւ «Մասկն» Սիկարեթները

Հայթայթիչ՝ մասնաւոր առանձնաշնորհման հրովարտակով՝ Ճարոնական կառավարութեան, Սիամի Արքունիքին, Եգիպտոսի Անգլիական Բարձր Գոմիսէրին եւ Զօրաբանականներուն, Սուտանի կառավարչի ու Զօրանոցներուն, եւն., եւն.:

Գործատուն՝ Գահիրէ, Թէվֆիգիյէ թաղ (Ապպաս թաւրոնին դիմաց) — Վաճառման գլխաւոր կեդրոններ՝ Աթապաէլ-Նատրա (Շիթայնին դիմաց), Պապ-էլ-Հատիտ (Կայարանին դիմաց), Ապտինի հրապարակին վրայ, Էգպէթիյէի մէջ, եւն.

Ունի իր 80 մասնաճիւղերը Եգիպտոսի եւ Սուտանի զանազան կեդրոններուն մէջ, ինչպէս նաև իր ներկայացուցիչները՝ Ծայրագոյն-Արեւելքի եւ Եւրոպայի գլխաւոր քաղաքներուն մէջ:

059
7-33

ALMANACH ARMÉNO-EGYPTIEN

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԻԵԱՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ

SURTEMBRE



Գ. ՏԱՐԻ

1916

19019

ՏՊԱԳՐ. Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
ԳԱՀԻՐԷ, 1916

ԾԽԱԽՈՏՔ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՔ

Մ Ա Ք Ո Ս Ե Ա Ն

(ԱՆՍՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ)

TABACS & CIGARETTES MATOSSIAN

(Société Anonyme)
LE CAIRE (EGYPTE)



ՀԱՍՏԱՏԵԱԼ 1899ԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ

ԿԵՒՐՈՆԱՏԵՂԻ	ԿԻԶԷ (Գահիրե)
ՃԻԻՂ	ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
ՄԱՍՆԱՃԻԻՂ ԵՒ ԳՈՐԾԱՏՈՒՆՔ	ԹԱՆԹԱ ԵՒ ԱՍԻՈՒԹ

ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԳՈՐԾԱՏՈՒՆԸ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ԱՄԵՆԱԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԳՐԱԽՄԱՆ ԲԱՆԱԿԻՆ
ՕՐԱԿԱՆ ՍՊԱՌՈՒՄ ԸՆԴՈՒՄ 15,000 ՔԻԼՕ



69125-67

“ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԵՑՈՅՑԸ”,

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՏԱՐԻՆ
(1914-1915)

Վերջացող տարեշրջանը հաւաքական կեանքի ու գործունէութեան աննախընթացօրէն ներուժ ու յուզումնալից ժամանակամիջոց մը եղաւ Եգիպտահայ Գաղութին համար: Եւ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ: Եւրոպական համարալսումին մէջ՝ իրաւասպան զոյգ պետութեանց կողքին՝ Թուրքիոյ դիւանար խիզախումը Հայ Ազգը կը դնէր իր պոյութեան մեծագոյն ճգնաժամին առջեւ: Արտասահմանի Հայութիւնը, բնականտարար, պիտի ցնցուէր, պիտի անդունէր, շղթայափակ Հայրենիքին սպառնացող վտանգներու մղձաւանջէն, զանոնք կանխելու և դիմագրաւելու իր յանցապարտ անպատրաստութեանը մէջ յանկարծակիի եկած:

Եգիպտահայուն հոգեբանական պարագան, այս վերջին տեսակէտով, ամենէն աւելի դառն ու հրասթափ բնոյթ մը պիտի ունենար:

Անոնք որ ուշագիւր հետեւած են — «Եգիպտահայ Տարեցոյց»-ի նախորդ երկու հատորներուն մէջ արձանագրուած —

Մեծ Փոքրկի
Նախընթացին

Եգիպտահայ հանրային բնաշրջութեան վերջին փուլերուն, դիւրաւ կրնան յետադարձօրէն մտաբերել այն բնորոշ ու վճռական ներքին «տագնապ»ները որոնցմէ անցեր էր այս գաղութը՝ Պալքանեան Պատերազմէն մինչեւ Համաւրոպական Պայքարին պայթումը: Պէտք չէր սպասել միջադէպեր, անուաներ ու իրողութիւն-

ներ վերլիչելու, թաղուած կամ անթաղ խնդիրներ քրքրելու: Բայց անցողակի անդրադառնալով ատոնց, աւելի վըստահաբար ու իրաւամբ պիտի արձանագրէի, թէ հայկական ներկայ անաւոր փորձութեանց նախընթօրին Արտասահմանի Հայութիւնը, և մասնաւորապէս Եգիպտոսայը, որոտացող փոթորիկին դէմ քաղաքացիական պարտաճանաչութեան միահաղոյն ու տիրական ճակատ մը պարզելու հոգեկան անըստգիւտ վիճակին մէջ չէին գտնուեր:

Դէպքերուն գահավիժումն այնքան աւելի տագնապեցուցիչ եղաւ, որքան մեր խղճմտանքը կը վկայէր մեզի թէ անոնք անակնկալի բերած պիտի չըլլային և կամ շատ բան փրկելու կեցուածքին մէջ պիտի գտնէին մեզի՝ եթէ գիտցած ըլլայինք պահպանել ու արդիւնաւորել հայրենի ինքնապաշտպանութեան նուիրական ուխտի մը շուրջը 1913ին մեր կայացուցած Համերաշխութիւնը...

Ներքին ուժացումի ու տարամէտ հոսանքաւորումներու այս շրջանին մէջ, Եգիպտոսայուն սթափումն ու զգայացնցումը շփոթ ու շուարուն նկարագիր մը ունեցան՝ քաղաքական հսկայ իրադարձութիւններու յեղակարծ ու հրամայական բռնադատումին տակ:

Անտարբեր հանդիսատեսի կրաւորական դիրքին մէջ մնալ չէր ըլլար, երբ անդին ցեղին բաղդն էր որ կը վըճուռէր, անոր ըլլալու կամ չըլլալու գերագոյն հարցն էր որ կը դրուէր ռազմի սրտով դորդացող հայկական սահմանագլուխներուն վրայ:

Կովկասը խուլ խմորումի, անհամբեր պրկումներու և ամեհի թափահարումներու մէջ իր առնական կորովները կը ժողվէր, կը լարէր, անխուսափելի դիմադրութիւններու, անսակարկելի գոհողութիւններու և անգասալիք խոյանքներու պատմական յանձնառութեանը մէջ: Իր հարիւր հազար կտրիճ զաւկըները կալիցիոյ ռազմաբեմին վրայ Ազատարար Չարին թշնամիներուն դէմ ճակատեցնող Ռուսահայը չէր շատանար այդքանով, ու Տփղիսի Ազգային Բիւրօն կը հիմնէր, հայ կամաւորական լէգէոնները կազմակերպելու համար, Արարատէն անդին սանձարձակ գուլուժի ու շղթայազերծ արհաւիրքներու մատնուած թրքահայ զանգուածներու փրկագործումին ու քաղաքական վաղորդայնին բոլորումուէր:


Հայ ազատամարտին դիւցաղնավիթային դէմքերը Պալքանէն, Պարսկաստանէն և ուրիշ վայրերէ կովկաս կը վազէին՝ գլուխ կանգնելու համար հայ հոգիէն ինքնաբերաբար բղխող կամաւորական շարժումին:

Հայկական այս անձկոտ, այլ ինքնաշարժ համազինուորումն անխորհուրդ ու անհեռատես խանդավառութեան մը

արդիւնքը չէր: Ու քաղաքական իմաստութեան միշտ մետասաներորդ ժամուն յաղթանակելու պատրաստ մեր խկարներուն առիթ չէր կրնար ընծայել կանխազգուշական

ազդարարութիւններու, և իրաւունք չէր ի տար պատասխանատուութեանց ապագայ հակիրճ ճշդումներու և ճրի վերագրումներու: Հայութիւնն իր առջեւ չունէր բաց մնացած ճամբաներու ընտրանքին վարանքը: Համաշխարհային երկու հսկայական դասաւորումներուն միջեւ, իր սիրտը կը բաբախէր իրաւունքի ախոյեան ազգերու եղբայրական սրտին հետ, իր համակրութիւնները թեւ առած կ'երթային Ֆրանսային, Անգլիային, Ռուսաստանին, որոնց կապուած էր մտաւորական, մշակութական ու պատմական այնքան հարազատ ու թանկագին առնչութիւններով: Ո՛րքան ալ պատրանքի դառնաթոյն բաժակներ պարպած, ո՛րքան ալ հմայաթափ ու սկեպտիկ դարձած ըլլար իր գոյութեան վերջին քսանամեակին, Մօտաւոր-Արեւելքի ամենէն տեսլապաշտ ու քաղաքակիրթ ցեղը գիտէր թէ ի՛նչ անաւոր ու անվերջ մարտիրոսացում արժամ էր իրեն Պիամարքի բացած իրաւամերժ, ուժապաշտ ու շահամոլ դարազլուխը, ամէն իտէալիզմ սպաննելով Եւրոպայի մէջ, և ամենէն ասպետական ձգտումներն ու թափերն իսկ կաշկանդելով, անկարողութեան դատապարտելով: Հայուն դեռ չի ցամքած արեան գոլորչիւններուն մէջէն չէ՞ր որ Բայքէրը համբուրուիլ շտապեր էր Համիտին հետ: Բրուսիական զինուորամուկ կայսերականութիւնը, բնականաբար, յարգանք պիտի չի ներընչէր Հայուն, որ իր երեք հարիւր հազար դիակներով իբրեւ պատուանդան ծառայիր էր՝ Պաղտատպանով սկսած ու գերմանօ-թուրք ներկայ ոճրակցութեամբ շարունակուող տեւտոնեան արեւելանուած ծրագիրներուն:

Բայց հարցը ո՛չ քաղաքական հաշիւի մը ձեւին տակ և



Ոչ ալ միջազգային բարոյական նախընտրութիւններու կամ համակրութիւններու տեսակէտէն էր որ կը ներկայանար մեզի, որպէսզի մենէ կախում ունենար մեր ազգովին հետեւելիք

ուղեգրիծն ամենանուագ վտանգաւոր ուղղութեամբ որոշել: Օսմանեան «Մահմանազրութեան» վերահաստատումէն սողին՝ Հայոց հանդէպ «երիտասարդ-թուրք» քաղաքականութեան ուշադիր հետեւող ու իրազեկ ո՛չ մէկուն համար գողանիք մըն էր թէ իթթիհատը Սելանիկէն վճռած էր «հայկական հարցը» լուծել Հայերուն բնաջնջումովը, և թէ իր այս ծրագիրը գործադրութեան փառաւոր սկիզբ մը ունեցած էր արդէն 1909ի կիլիկեան արհաւիրքներով: Պալքանեան պատերազմին հետեւանքով Բումէլիի կորուստին վրայ՝ Անատոլուի «արեւելեան նահանգներուն» մէջ «հայկական բեթորմներու» նուազագոյն ծրագրի մը հարկադրումը, և եւրոպացի երկու Ընդհանուր-Ֆննիչներու՝ Հօֆ և Վէսթէնէնկ «պէյ»երու՝ անուանումն ու առաքումը պէտք եղածէն շատ աւելին էին իթթիհատին կատաղութիւնը յորդեցընելու Հայութեան դէմ: Թուրք այլամերժ ազգայնամուրթիւնն՝ սկուաները կրճտեցնելով՝ պատեհ առիթին կը սպասէր, Հայուն արիւնսովը միանգամընդմիշտ մաքրելու համար «հայկական բեթորմներուն» հաշիւը: Ու երազուած ու չի գտնուած այդ առիթը, յանկարծ, կուգար, կը մերկանար, իր անդիմադրելի հրապոյրներն ինքնամատոյց կը փռէր իթթիհատի հայախանձ մուրացփին առջեւ, համերոպական պոռթկումին առաջին վայրկեանէն իսկ...

Հայկական Ահազանգը մէկ իմաստ, մէկ աղերս, մէկ հրաման ունէր. «Ի զէ՛ն Հայեր, արտաքին պաշտպանութեան բոլոր դուռերը կը գցուին ահա՛

Հայկական երկու միլիոն Թրքահայութեան վրայ, Ահազանգը ի զէ՛ն, մտքով հիւանդներ են անոնք որ դուրսէն օգնութիւն կը սպասեն թուրք

սանձակոտոր վայրագութեան դէմ որ բայա Հայուն գրեթէ կը հաւասարեցնէ իր եւրոպացի հիւրերը, որ ամէն դաշնագրական պարտաւորութիւն կը պատռէ, աղբիւսը կը նետէ, որ քաբիւքիւլասիօն ները կը ջնջէ, ու՛ կոնակն աւստրօ-գերման պլոթին տուած՝ լեզու կը հանէ Դաշնակիցներուն, որոնցմէ կը դողար երէկ... Ի զէ՛ն, ամէն ոք իր գլխուն ճարը թո՛ղ նայի, և տխմարներ, անբուժելի ցաւագարներ են անոնք որ գթութիւն կ'ակնկալեն իթթիհատէն... Ի զէ՛ն, հայրենի սահմաններէն ներս արգելափակ Հայութիւնը Եթաղանին տակէն պիտի անցնի, եթէ լեռներու կատարները բարձրա-

նալ չի գիտնայ, եթէ իր օձախները պաշտպանելու անկարող ըլլայ... Գահիճները պիտի չի խնայեն նորածիններուն անգամ, և մայրերու արգանդները պիտի ճեղքեն անոնց մէջ սպաննելու համար Հայուն սերունդը... Ի զէ՛ն, թո՛ղ ունեցողն իր զէնքին փարի, իր և իրեններուն կեանքը սուղ ծախելու համար, իսկ դուրսէն, Արտասահմանէն, Հայերը զէնքի ուժով, զինուորուած շարքերով միայն թո՛ղ մտածեն, թո՛ղ շտապին օգնութեան հասնիլ իրենց անպաշտպան ու անապահով եղբայրներուն, ի զէ՛ն...»:

Ուրի՛շ բան չէր ըսեր, ու չէ՛ր կրնար ըսել, Հայկական Ահազանգը:

Ու առանց ունայն ու մեղապարտ խարկանքներու մէջ վարանելու, կովկասը տիրաբար ու գործնականօրէն արձագանգ կուտար արգէն այս գերագոյն հաւարին:

Նիքօլա Ջարին հրամանն արձակուեր, կայծակուեր էր Գրիմլէնի կամարներէն.

— «Անցէ՛ք սահմանը»... Դէպի Հայաստան...

Ու Հայաստանի լանջքը կ'ալէժփէր, կ'ուռննար, ընդունելու համար յաղթական գրոհները կովկասի ուսահայ բանակներուն: Հայուն զարուար տառապանքն էր որ անդրարարատեան արեան դաշտերէն ու արցունքի կովիտներէն կը սկսէր թեթեւացման հեւքեր փչել: Զուլումի աշխարհին ընդերքէն նահատակ սերունդներու ոսկրտանքին բերկրապատար խայտանքի ձայնը կը լսուէր: Արարատեան հորիզոններուն վրայ, Աշտարակեցիներու, Արղութեաններու, Խրիմեան Հայրիկներու ուրուականները կը սաւառնէին, կը յածէին թեւատարած, յոյսի պսակումներուն ու փառքի աստուածացումներուն հրաւիրելով: կարծես, Հայուն անընկճելի ճետը...

Ի՞նչ կերպարանք կը պարզէր Եգիպտահայը, խելայեղ հայրենասեւեռումի այդ օրերուն: Պիտի փափաքէի որ ուրիշ մը ուրուագծէր հանրային-հոգեբանական այդ բնորոշ պատկերը, բայց ի՞նչ օգուտ որ այդ ուրիշը կը պակսի... Այն ատեն, «Եգիպտահայ Մամուլը» հոյակապ ձեռքերու մէջ էր, այնքան հոյակապ, որ անոնց հպումին տակ հայերէն տառերը կը պարէին, կ'երգէին, կը զտանցէին ամենէն խօլական ու Գանքաքիֆ ոստումներն ընելով համաշխարհային այլուրութիւններու անսահման ոլորտներուն մէջ, առանց

սակայն կարենալ բառ մը, վանկ մը «դուրս բերելու», որ այդ հանդիսաւոր ըրազին հայ կեանքէն, հայ հոգիէն փրթած հրացայտ զգացումի մը, հարազատ ցոլացումի մը հոմանիչ ըլլար... Անդին, մենաւոր մարդ մը գիշերներ կը լուսցնէր, կունակը ծռած իր գրական բանուորի անշուք սեղանին վրայ, մխացող լամբարի մը լոյսին տակ: Մզկիթի մը անմիջական գրացնութեան մէջ բնակելով, այգուն, մթնշաղէն առաջ, վիւեղգիւնին կանչը կը սթափեցնէր զայն իր աշխատանքին խորասուզումէն: Մարդը կը վառէր իր անհամարերորդ սիկառէթը, ու վերջին ձեռք մըն ալ զարնելով առջեւը դիզուած ձեռագիրներուն, կը պատրաստուէր արշալոյսին հետ դուրս ելլել, ՇարաՄուհամէտ Ալլիի մէկ գոհին մէջ երթալ շարել տալու գիշերն ի բուն արձանագրած իր երազները... Յորեկին, Գահիճի քիչ մը ամէն թաղերուն մէջ, կարելի էր հանդիպիլ անոր, երբ անութիւն տակ տպագրուած պրակներու բեռ մը վերցուցած, կ'աճապարէր, քրտնաթոր ու հեւասպառ:

Ի՞նչ կ'ըսէին եգիպտահայ «գրասէր հասարակութեան» մէջ այդ մարդուն շրջաբերած թուղթերը, որոնց վրայ կը կարդացուէին՝ Ողջո՞յն Ագասարաւ «Քեռի»ին, Արիւնին Պարսէր, Վաղուան Հայասանը, Ջայնը Հնչե՛ց և այլ զգայացունց խորագիրները:

Անոնք Եգիպտահայուն ականջին կը հնչեցնէին հայ քաղաքացիական անդրժելի ու անճողոպրելի պարտաւորութեանց ազդակոչը՝ կովկասէն դէպի Հայաստան ծայր տուող ազատագրական մեծ շարժումին հանդէպ: Հայ յոյսերուն, հայ անդոհներուն, հայ խիզախումներուն ամբողջ ամենի շունչն ու աղեխարշ գեղեցկութիւնը կը սարսուային այդ թուղթի կտորուանքին վրայ, թունդ հանելու համար եգիպտահայ հոգեկան լճացումը, և այս փարթամ գաղութը մղելու՝ պարագաներուն ծանրակշուութեան ու վճռականութեան համապատասխան, զգաստ, զոհարեր ու տենդային գործունէութեան մը:

Կարելի չէր ըսել, ուրեմն, որ Եգիպտահայ Հասարակութիւնը դէպքերուն տեղեակ պահող և իր անյետաձգելի պարտականութիւններուն հրաւիրող հրապարակային արտայայտութիւնները բոլորովին պակսեցան կովկասեան ալեկոծման սկզբնական օրերուն:

Ռուս առաջին յարձակողականն այնքան շանթահարիչ բնույթ մըն էր ունեցեր, որ շատեր՝ անխառն ոգեւորութեան մը մէջէն՝ անձնատուր կ'ըլլային անմիջական շքեղ իրականացումներու երանաւետ հաւատքին: Դէպի էրզրում իր յանդուգն վազքին մէջ, Կովկասեան Բանակը Պայազխի, Ալաշկերտի, Բասէնի դաշտերը խուժեր ու մէկ քանի շարաթէն ինքզինքը գտեր էր Տէվէ-Պոյունի



Հայրապետը կ'օրհնէ Հայ Կամաւորները Էջմիածնայ մէջ

կիրճին առջեւ, ուրկէ իր անցքը Կարինի անկումը պիտի նշանակէր: Հայ Կամաւորական գունդերը Հայրենիք մտեր, կը թռէին արդէն ուսս զօրաբաժիններու առջեւէն: Անդրանիկը

Մակուէն անցնելով, դէպի Վասպուրական՝ կը շտապէր: Համօն, որ տակաւին վեց ամիս առաջ մեր մօտէն յուսաւրէպ մեկներ էր հայրենի ինքնապաշտպանութեան գործին իբրեւ վերջին առաքեալ, Կաղզուանէն թափ առնելով,



դէպի Մանազկերտ ու անկէ դէպի Տարօն կ'առաջագրէր խոյանալ:

Քեռին, Դրօն, իրենց քաջերով, մըխըրճուէր էին Հայաստանի ռազմաժխոր ծոցին մէջ, իւրաքանչիւրն իր ընտրած ուղղութեամբ, կ'ուրճ տալով ոչ միայն թըշնամիին դարանակալ վոհմակներուն, այլ խտաշունչ ձմրան լեռ ու ձոր իրար խառնող անվերջ բուք-բորանին:

Այս լուրերն, ինչպէս նաեւ կամաւորական գործին շուրջ կովկասահայ յարածողն եռուզեռին արձագանգները հաս իրենց խորունկ ներգործութիւնը կ'ունենային յեղափոխական փոքրամասնութեան մը վրայ

Համազասպ Մուսնիսեանց (Համօ)

որ գետինը կ'օտնահարէր ջղաձգական անհամբերութեամբ: Դէպի հայկական ռազմաբեմ մեկնիլ ուզող կամաւորացուներ կային, որոնց նիւթական միջոցներ կը պակսէին: Եւ յետոյ,

հայ կամաւորական գունդերուն ի նպաստ հանգանակութիւն մը բանալու փափաքը շրթունքէ շրթունք կը շրջէր: Բայց ո՞վ պիտի առնէր ատոր նախաձեռնութիւնը: Ազգային իշխանութեանց վերապահուեցաւ, երկար ատեն, այդ պատիւը; և ամենքս ալ մեր կարգին այդ թելադրանքը մրմնջեցինք Առաջնորդ Սրբազանին, որ ամենուս հետ համաձայն ու ամենուս պէս անձկայրեաց ըլլալ հաւաստեց այդ մասին: Բայց շարաթները շարաթներուն կը յաջորդէին, ու մարդ տեղէն չէր երերար:

Հայ կռիւն իր առաջին յաջողութիւններով դեռ չէր կրցեր Եգիպտահայուն տալ պատերազմիկ ազգի մը պատկանելու գիտակցութիւնը, զայն դնել յաղթանակին համար կամովին ստանձնուած ճիգերու և զոհողութեանց շաւղին մէջ: Անդրանիկը մինչեւ Պաշքալէ, Սէրայ հասեր, ու Վանէն հինգ-

Ռուսական զեց ժամ միայն հեռու կը գտնուէր, երբ մենք հոս տակաւին բան մը Առաջին Նահանգը չէինք ըրած յօգուտ զինուորիկալ Հայաստանին: Որքան ալ անվի-

ճելի ըլլար հայ ռազմական շարժումին կենսական կարեւորութիւնը, մեր կարծրացած, կոշկոռ կապած ստրկամտութիւնը դարձեա՛լ կասկածանքով ու վերապահութեամբ կը վերաբերուէր անոր հանդէպ: Չէ՞ որ կռուողներուն, յեղափոխներուն, կուսակցականներուն ձեռնհասութեան սահմանին մէջ կը մնար այդ գործին ղեկավարութիւնը: Հապա՛ մենք որ վարժուեք էինք ութը տարիէ ի վեր գոյութեան իրաւունքէ զրկել այդ մարդիկն ու տարրերը, նորէ՞ն անոնց տիրակալութիւնը պիտի ընդունէինք, նորէ՞ն անոնք հրապարակը պիտի բռնէին, ազմկէին, խափանէին և մեր քրտնաջանօրէն կերտած «գիրք»երուն վրայ ստուեր պիտի ձգէին... Կովկասը կրնար խանդաղատիլ ու խանդավառուիլ անոնցմով, Ազգային Բիւրօին պէս համազգային մարմին մը ստեղծել անոնց հոգածութեան համար: Բայց Եգիպտո՞սը, հայ հակա-յեղափոխականութեան այս միջնաբերդն ալ վրայ պիտի տայինք, ճի՛շդ այն ատեն, երբ հոգեպարար հաւատքը կը տածէինք թէ հայ յեղափոխականութեան փլատակներուն վրայ մեր հմայքին ու ազդեցութեան սիւները յաւերժօրէն կանգնած էինք... Եգիպտահայ այս մասնաւոր մտայնութիւնը, եթէ չէր կրնար Հայ կռիւին ընդառաջ երթալ, նախախնա-

մական պարգեւի մը պէս պիտի դիմաւորէր Հայ Ազգա՞ր, հոգեբանական այն վայրկեանին որուն կ'ակնարկէի:

Ռուսական առաջին նահանջը «կացութիւնը կը փրկէր» եգիպտահայ նիւթազօր ու «պահպանողական» դասակարգին համար:

«Բան մը ընել պէտք էր»: Ահաւասի՛կ պատշաճ առիթը «բան մը ընելու»: Ռուսական նահանջը, հայ դժբաղդութիւններու իր անծայր թափօրովը, կուգար վայելուչ դերի մէջ՝ դնել մեր շնորհքով ազգայինները, որոնք Հայ կռիւն՝ բնախօսականօրէն՝ կը նախընտրէին անշուշտ Հայ Ազգա՞րին հասնիլ, այսպէսով, ինքնիրենց հետ տրամաբանական, հետեւողական ըլլալէ ալ չի գաղբելու նշանակելի առաւելութեամբ մը:

Հարիւր հազար հայ գաղթականներ, Ատրպատականէն ու կովկասի սահմանամերձ շրջաններէն Արարատեան Դաշտ թափեր էին՝ կամաւորական գունդերու պաշտպանութեանը տակ: Կարօտութիւնն անսահման էր, տառապանքը՝ համազգային օգնութեան կարօտ:

Եւ վերջապէս Եգիպտահայն իրար կ'անցնէր — դանդաղօրէն:

Հ. Բ. Ը. Միութեան «պատուակալ» հովանաւորութեան տակ, բարի կամեցողութիւններ ձեռք ձեռքի կուտային, ասպարէզ կուգային ու կովկասի թրքահայ գաղթականներուն ի նպաստ հանգանակութիւնը ժողովրդային բոլոր խաւերուն մէջ կ'արդիւնաւորուէր:

Հայ աղէտեալներուն եղբայրական օգնութեան գործը չէր կրնար, սակայն, մոռցնել Հայ կռիւին գէթ նիւթապէս սատարելու աւագ պարտականութիւնը, և եգիպտահայ յեղափոխական երիտասարդութիւնը թէեւ բարեխիղճ համբերութեամբ մը զգուշացած էր աղէտադարման աշխատանքը ո՛ր և է ռազմանուէր նախաձեռնութեամբ ջլատելէ, բայց անըմբեր կը մնար կովկասահայ կամաւորական շարժումին օժանդակութիւնն ալ օր առաջ սկսած տեսնելու:

Գաղթականներու Հանգանակիչ Մասնաժողովը գրեթէ աւարտած էր իր դերը, շուրջ 3,000 ոսկիի կոկիկ համագումարով մը, երբ Հ. Յ. Գաշնակցութեան Եգիպտոսի Կօմիտէն իր «Օգնենք Հայ կռիւին» զգայացունց կոչը հրապարակ կը

հանէր, ու կը բանար Հայ կամաւորական Գունդերու Զին-
նորական Նպաստի հանգանակութիւնը (*):

Ժողովուրդը դեռ նոր իր նիհար քսակը պարպած Կով-
կաս ապաստանեալներու գանձանակին մէջ, սրտաշարժ,
հոգեւին ընդունելութիւն մը կ'ընէր Հայաստանի ռազմիկ

կամաւորական
Հանգանակութիւնը

զաւկըներուն անունով իրեն դի-
մողներուն: Մարդիկ իրենց և ի-
րենցներուն օրուան հացին գինը
կը հանէին երկու ձեռքով կուտա-

յին հանգանակիչներուն, որոնք լացնող, փղծկեցնող աղ-
նուութեան, հայրենասիրութեան անմոռանալի տեսարան-
ներու վկայ եղան ամենէն խոնարհ ու յետին անկիւններուն
մէջ... Հէյ, քու հալալ այլ անպակ մուրատիդ մատա՞ղ,
ղարիբ, խեղճուկ, աշխատաւոր ժողովուրդ, չէ՞ որ դուն
ամէն տեղ միեւնոյն պատուական ու անխարդախ խմորն
ես... Մէկ-երկու շաբաթէն երկու-երեք հազար ոսկի կ'ար-
ձանագրուէր կամաւորական տուրքի ցուցակներուն վրայ,
ու այդ ընթացքով ձեռնարկը քիչ օրէն կը խոտանար ան-
նախընթաց ու պատկառելի համեմատութիւններ առնել ու
եզիպտահայ մեծագործութեան փառաւոր յիշատակարան մը
ձեւացնել:

Եզիպտահայ միջակորեարը, ժողովրդային ոգեւորու-
թեան այս անսպասելի արդիւնքէն սահմուկած, աննշան բա-
ցառութիւններով, անմասն կը մնար բացուած հանգանա-
կութեան մէջ, տարիներէ ի վեր վարժուած ըլլալով հասա-
րակական ամէն ձեռնարկի հանդէպ իր կարգախօսն առնել
որոշ շրջանակէ մը:

Իսկ այս ձեռնարկին տարապայման յաջողութիւնը կը
թուէր վրդովեցուցած ըլլար մարդիկ որոնք համոզուած էին
թէ իրենցմէ անկախաբար կարելի չէր եզիպտահայ տիրոյթին
մէջ ո՛ր և է խոշոր արգասիք յառաջ բերել: Արդարեւ, տես-

(*) Քանի մը օր յետոյ, Բրեկրանիայի մէջ նոյն Յանձնա-
խումբին նախաձեռնութեամբ կը սարճուէր հանդէս մը, ուր
Երեմ անկախ մտաւորականներ՝ ՓրօՅ. Յ. Թ. Դայաեան, Պ. Հ.
Երամեան եւ այս սողերը գրով մանկանացուն՝ խօսք կ'առնէին
անխտակաւ ոգուով մասնացեալու համար հայ կամաւորա-
կայան գործին ազգային կենսական տարողութիւնը:

նըւած ալ չէր որ այնքան համեստ նախաձեռնութիւն մը
այսքան արգաւանդ ու ջերմագին համակրութիւններով ըն-
դունուէր: Ասոր մէջ տեսակ մը պարտութիւն, գրեթէ
վտանգ մը կարծեցին տեսնել, մինչդեռ պարզ էր թէ այդ յա-
ջողութիւնը նախաձեռնողներուն համար սխրագործութիւն մը
կամ փառապատի մը ըլլալէ աւելի՝ անոնց առաջադրած նպա-
տակին սրբութեան ու ազգային կենսական նշանակութեան
ընդհանուր ըմբռնումին սփոփիչ ու ցայտուն ապացոյցն էր:

Այս դժբաղդ թիւրիմացութիւնը դուռ բացաւ եզիպ-
տահայ ներքին ողբալի իրագործութիւններու, որոնց վրայ
անհրաժեշտ կը սեպեմ վարագոյր մը

64/25-67

վարագոյր մը խնամքով իջեցնել հոս, վասնզի նախ
Իջեցնե՛ճ հոս այս տարեկան քրոնիկագրութեան սահ-
մաններէն դուրս կ'ուզեմ թողուլ հասա-
րակական հաշուեյարդարութեան ամէն մտահոգութիւն, և
յետոյ անպատեհ, նոյնիսկ վնասակար կը նկատեմ այս միւ-
ջոցիս վերտրծարծումը հազիւ լուծ — եթէ ոչ բողոքովին
մարած — կիրքերու, որոնց բորբոքումն երէկ այնքան ցաւ
ւալիօրէն կ'ուտրեց, կ'ուտրակեց եզիպտահայ թափը՝ ոչ միայն
Հայ Կուրիւն, այլ նաև Հայ Աղէտին ի սպաս դրուելիք զոհա-
բերութիւններուն մէջ:

Կարելի չէ ըսել թէ Եզիպտահայն անտարբեր մնաց հա-
մազգային այս մեծ ճգնաժամին հանդէպ, որքան ալ ան
չարդարացուց իր վրայ դրուած մեծագոյն յոյսերը:

Վերջացող տարեշրջանին՝ Զինուորական Նպաստի Յանձ-
նախումբերը յաջողեցան 3,000 ոսկիի օժանդակութիւն մը
հասցնել հայ ռազմական գործին: Առաջին վարանքներէ ու
տատանումներէ յետոյ, Ն. Վ. Պօղոս փաշա Նուպարի շուրջ
կազմուած «Ազգային Շահերու Պաշտպանութեան Հիմնա-
դրամ»-ի եզիպտահայ պլօն ալ մէկ-երկու հազար ոսկի տրամադ-
րեց նոյն նպատակին, երբ կամաւորական շարժումը՝ դէպի
Հայաստան ռուս երկրորդ յարձակողականին առթիւ, հայկա-
կան երկրորդ անդիմադրելի արշաւանքի մը բնոյթը կ'առ-
նէր, երբ վանի ու վասպուրականի ապստամբ Հայութիւնն
իր վեցդարեան լուծը կը խորտակէր իր իսկ ձեռքերով, և
երբ վարդանի, Անդրանիկի, Քեռիի, Համազասպի, Դրօի
գունդերն՝ էջմիածնայ մէջ հայրապետական օրհնութիւնն
ստանալէ ետքը՝ մինչև Տարօն կը սուրային՝ անկարագրելի



յափշտակութեան մը արբշտանքին մէջ իրենց յաղթական քայլերուն կապերով մեր հոգիները: Այդ վաղանցուկ այլ երանաւէտ օրերուն՝ հոս ձեռքէ ձեռք կը քաշուէր կամաւորներուն դատը, ամէն ոք տիրութիւն կ'ընէր անոնց, և ամենքն անոնց անունով կ'երգուէրնային:

Վասպուրականի ազատագրումը տեսակ մը պայծառութիւն ցոլացուցած էր եգիպտահայ մթնոլորտին մէջ: Աղեքսանդրիան մեծաշուք հանդիսաւորութեամբ կը ցնծատօնէր այդ փաստապանծ դէպքը, որ կ'ողջունուէր հայկական վերածնութեան ընդերկար երազուած, ոգեկոչուած արշալոյսն իբրեւ: Տիրգրան կամսարական ու Համբարձում Երամեան Հայ Գաղափարին յաղթանակը պերճօրէն կ'աւետէին, այդ օրը, միեւնոյն բեմէն:

Գահիրէն ալ բերկրանքի իր աւելի մտերմիկ ու համասեր համախմբումները կ'ունենար, այդ առթիւ: Յայտնի կ'ըլլար, տակաւ, թէ ազգային բողոքաւորումը մեզ պիտի մօտեցնէր և հուսկ ուրեմն միարանութեան, համերաշխութեան յուսով գետին մը պիտի ընծայէր բոլոր գործօն ու անհանգարտ տարրերուն: Ինքնին միսիթարական էր հաստատել թէ՛ հակառակ ռազմատենչիկ նոյն ձգտումներն ունեցող խումբակցութիւններու իրերամերժ գիրքերուն, հակառակ ոմանց սրտամտօրէն շարժադրուած ծուռ յարումներուն ու շինծու յարակցումներուն, կուսակցական երկու հոսանքներն ալ ոգեւորող առաջադրութիւններն էապէս մարտական նկարագիր ունէին: Մէկը յայտնապէս կը հետապնդէր կովկասի հայ կամաւորական ձիգին հզօրացումն, իսկ միւսը խորհուրդի մէջ կը փայփայէր հայկական տարբեր, այլ նոյնքան ցանկալի — եթէ ոչ յանպատրաստից հնարաւոր — ռազմաճակատի մը տեսական երկունքը: Մէկուն բաղձանքը միւսին ալ պահ մը երազն եղած էր, և անկարելի չէր որ՝ ծրագիրներու և պատրանքներու փլուզումէն վերջը՝ կենդանի գործին շուրջը յեղափոխական շրջանակներու համագործակցութիւն մը յառաջ գար հոս իրերու բնական բերումով: Եւ արդէն, կարծես թէ, վայրկեան մը, շատ քիչ բան մնացեր էր այդ «հրաշք»ին իրականացման համար:

Բայց, աւա՛ղ, այս քամբաղդ ժողովուրդին տրուած չէր իր գիւցազնական մեծագոյն նուաճումին վրայ գէթ ամառ մը լման հրճուել յաղթական: Սեւ ամպեր, յանկարծ, կը

կուտակուէին Տարօնի ու Վասպուրականի երկինքին վրայ: Վան, Հայաստանի սիրտը, հազիւ ազատ շնչել սկսած, կը հեւասպառէր, մէկէն ի մէկ, նոր կեանքի ու վերածնութեան

Երկրորդ նահանգը
Վանի Քայխալումը

իր սխրագեղ երազները խափանող
դժպէի մղձաւանջին ի տես... Հայ-
րենի վերաշինութեան ցնծագին աշ-
խատանքն իր սաղմին մէջ իսկ

պիտի քանդուէ՞ր, կովկասն ի զո՞ւր իր լաւագոյն ուժերը Վան վազցուցած պիտի ըլլար, հայկական մանրանկար «ինքնավարութիւնն»՝ իր «նահանգապետ» Արամով ու բոլոր հայ պաշտօնատարներով՝ եղերագաւեչտի կարճ արարուած մը պիտի ըլլար լսկ, ու մեր բոլոր սաւառնաթեւ յոյսերը պիտի խորտակուէ՞ին, արիւնի ու աւերի մէջ պիտի թաղուէ՞ին... Բայց ի՞նչու այս վայրագ կատակը, ո՞վ անէծքի Աստուած, որ Հայուն շատ տեսար իր դարաւոր լացին փոխարէն բերկրալիք գարնան մը ժպիտը...:

Կամաւորական սլացքը թշնամի անհարթելի պատուարի մը բաղխեր էր Տարօնի սեմին վրայ, այն խեղայեղիչ բոպէին երբ Մուշի ու Սասունի մեր քաջարի վերապրողներն՝ Անտօքի ու Բերդակի կատարներն ապաստանած՝ Ռուբէնի ու Կոմսի ղեկավարութեան տակ՝ մէկ ձեռքով հտ կը մղէին քիւրտ ու տաճիկ շաղկակեր վոհմակներու բլրապատիկ գրոհները, և միւսով նշան կ'ընէին Դաւովան-Կոպ-Կարմուշ ռազմաճակատին վրայ մաքառող հայ կամաւոր գունդերուն... Ու ընդվզումի մեր երէկէն ցաւագին յանկերգ մը կուգար կողկողել, ասդին, մեր խռովակոծ մտածումին մէջ, կը փլցնէր, կը տրոքէր մեր սիրտը.

Մի՛ վրհասիր, քա՛ջ Ասսուն,
Քեզ համար չե՛ նորութիւն,
Մեր պապերից սորվեր ես
Մեռնիլ զլամարդու պէս,
Ա՛յդ քեզ բողիկ յիշատակ...
Շեմիկ, Սեմալ պաւարուած եմ քեզեռով,
Տալարիկի անցնեմ ք պասուեր զօրքերով.
Մի՛ վրհասիր, քա՛ջ Մուրաս,
Սուրբ շարժե անրնդհաս.
Մեր հեռաւոր եղբայրներ
Չեմ մնար միշտ անսարբեր,
Շուտով կուգան օգնութեան...»

Ահ, մէկ անգամուան համար որ հայ աշուղին քաղցրիկ հաւատքը շքեղօրէն արդարացեր էր, և «հեռաւոր եղբայրներն» արծուարչաւ կը հասնէին Սասունին «օգնութեան», պէտք էր որ անոնց խոյանքը կտարէր, կասէր՝ Հայ Յոյսի գարաւոր տաճարակիրն հանդիսացած էրան գրեթէ ստորօրը...



Խէչօ և Դրօ

նաւանդ քու Մշոյ դաշտիդ ազիզ ժողովուրդը կրնար այլևս աչքերը գոց շարգուիլ... Մնաս բարձր, Տարօն, եղերաբաղդ որրան Հայ Գաղափարին, ի՞նչ էլք կը մնար այլ ևս քու յուսահատ մաքառուժիդ՝ երբ Վասպուրականն իսկ կը բացուէր, անգունդ կը դառնար քու առջիդ, երբ Վանը կը

Խմբապետ Խէչօին գնդակահար տապալուժը Տարօնի սահմաններուն վրայ՝ կարծես ազդանշանն եղաւ հայկական սազմաճակատին ու անոր հետեւ լաստակերտուած վերականգնուժի ամբողջ կառուցուածքին քայքայման:

Մնաս բարձր, Տարօն, քու Քաղէշդ կրնար այլևս արիւնի բաղնիքներով յագեցնել Տիւմանէն ու Վանէն կորակոր փախտական Խալիլներու և ճէվաթներու վըրէժինդիւր կատարութիւնը, այլ մա-

պարպուէր, երբ քեզի օգնութեան շտապող հայկական լէգէոնները կը ստիպուէին ընկրկիլ քու սահմաններէդ... «Նահա՞նջ», կը հրամայէր կովկասի Ռուս Սպայակոյտը, և քանի որ կովկասի ու Արտասահմանի Հայութիւնը չէր կըրցած ստեղծել յիսուն հազարնոց կամաւորական զօրաբանակ մը ինքնուրոյն գործունէութեան կարող, հայ կամաւորական զունդերը պիտի նահանջէին ուսական զօրասիւններուն հետեւէն, և ա՛յնքան վսեմ անձնագործութիւններով, ա՛յնքան դիւցազներգական խիզախումներով ձերբազատուած հայկական Մայր Ոստանն աւերակոյտի մը պիտի վերածուէր մէկ օրէն միւսը:

Խէչօ՛, մինակ քնացիր, Այգեստանի գերեզմաննոցին մէջ, Իշխանի և այնքան ուրիշ ըմբոստ նահատակներու, իտէալին ողջակիզուած եղբայրներու կողքին. հարկա՛ւ տաճիկ բորենիները՝ թարմ միտով յղփացած՝ չեն դպչիր քու սակորներուդ... Իսկ մենք կ'երթանք դէպի կովկաս, մեր հովին խարոյկի վերածելով պապենական մեր անուշ օճախները...

Եւ ահա՛ խուճապական գաղթի վիթխարի թափօրը կը կազմուէր Վասպուրականէն դէպի Արարատեան Աշխարհը, մէկ ծայրը Վան, միւսը՝ Երեւան: Աւելի քան երկու հարիւր հազար Հայեր, ծեր, կին, երիտասարդ, երախայ, լիւ ու ձոր ինկած, բոպիկ, կիսամերկ, հերարձակ, սովալլուկ, հալածական, հեւ ի հեւ, կը քաշկռտուէին հայրենի գերբուկներէն, օ՛ր առաջ, ժա՛մ առաջ հասնելու, տախտապարելու համար Մասիսի լայնատարած հովանիին տակ, դէպի՛ Իկաիր, դէպի՛ Էջմիածին...

Հայկական Տուամը թաւալգլոր գահավիժեր, փոխադրուեր էր կովկաս, զայն ողողեր, խափաներ էր հիմա իր ստանեցուցիչ ահագնութեամբը: Գաղ-

Թրքահայ Տուամը
կովկասի մեջ

թական Թրքահայերու ամբոխը, թըշուառութեան համայնածախ հեղեղի մը պէս, կուգար, կը խռնուէր կով-

կասահայ խօշաղ գիւղացիութեան կարեկից գրկին մէջ, կովկասահայ դարմանատար հաստատութիւններու դռներն ու ճամբաները: Հազարաւորներ մեռնելու համար հասան ապահովութեան այդ հանգրուաններուն, ուր մայրեր իրենց ձեռքերով թաղեցին իրենց ծծկեր մանուկներն, ու մատղաշ

աղջնակներ ու մանչուկներ ի զո՛ւր փնտուեցին քաղցէ, զրկանքէ, հիւանդութենէ, հիւժուժէ ինկած իրենց ծնողները, և զանոնք տեղ-տեղ գտան միայն բրգացած դիակոյտերու մէջ, զոր հողին յանձնելու չէին բաւեր գերեզմանափորները:

Ռուսահայն ըրաւ իր կարելին Հայաստանի վերապրող խելեակներն հնարաւոր մեծագոյն մասամբ փրկելու համար: Մօսքուան անգամ մը եւս ասպարէզ եկաւ ազգանուէր զո-



Խուճապագալորի նամբուն վրայ

հողութեան սքանչելի ժէսթերով: Տփղիսի կեդրոնականը, Էջմիածնայ Եղբայրականը, Պաքուի Կուլտուրականը, և դեռ ուրիշ տասնեակ կոմիտէներ հսկայական գործ կատարեցին մարդկային տառապանքի այս գերմարդկային դիմագրաւումին մէջ:

Ի՞նչ ըրինք մենք, հոս:

Հայաստանի երկրորդ ու անհամեմատ աւելի աղէտալի գաղթը մեզ առաջինին չափ ալ յուզելու և պարտաճանաչ

գործունէութեան մղելու պատճառ մը չեղաւ, դժբաղդարար: Հայկական ռազմաճակատի ոչ-անակնկալ ձախողուածներուն հրասթափիչ ազդեցութեան տակ կարծես սմբած, այս անգամ կորսնցուցած կը թուէինք գարնանային ժպտուն օրերու մեր կտոր մը շնչատ եռանդն ալ:

Դարձեա՛լ, պարտականութեան ու զոհաբերումի հրաւիրող կոչերը չէին որ պակսեցան: Եգիպտահայ նիւթազօր զասակարգին, գէթ անոր ներկայացուցիչներուն հետ դաշնակցող գործիչներ իսկ, սկզբնական խարխափումներէ ու խնայումներէ յետոյ, ճարահատ պոռալ սկսան: Եգիպտահայ կրեօտները կեանքերնուան մէջ չի լսած եղանակներնին լսեցին, և որոնցմէ՞, — նո՛յն իսկ իրենց լիսրներէն կամ անոնց հնարած մէկ շեփորէն: Իրրիւ «գաւաճաններ» ազգային ընտանիքէն արտաքուտելու սպառնալիքին տակ՝ բազմիցս թախանձագին զիմոււմներ եզան իրենց Հայու խղճմտանքին: Արդի՞՞նք:

Ձերօ՛ւ:

Եւ ինչո՞ւ զարմանալ: Ներկայ ճգնաժամին առաջին վայրկեանէն գործը ծուռ բռնուեր էր, ու մարդիկ ազատեր էին իրենց օձիքը: Բարոյական անտեղիտալի ճնշումին փոխարէն զօր անոնց վրայ բանեցնել չէին գիտցեր ձախակողմեան կամ արմատական տարրերը միահաղոյն, մեր ջոջերուն ճրիւբար ընծայուեր էր կանխաւ իրենց աններելի ու անմոռանալի ոճիրին քաւութիւնը:

Ձայն մը, սիրտ մը վրիպեր էր ըսելու. «Ապրի՛ք, տղաքս, շուտով կատարեցէ՛ք հայ կամաւորներուն համար ձեր ձեռնարկը, յետոյ ամենքս միասին պէտք պիտի ունենանք գործելու...»:


Մնացածը՝ կեղծիք էր, քաշքշուք, կարկտան, բոլոր գիծերուն վրայ:

Սխաշներ կան որ չեն դարմանուիր:

Եգիպտահայ մեծահարուստներն երազած ու չի յուսացած պատրուակնին գտեր էին, առտու մը, խուժգուժօրէն խուլ մնալու համար հայ հոգեվարքի հոնդիւններուն:

Ֆրաղներո՞վ պիտի վախցնէիք կամ պիտի ամչցնէիք զիրենք, թէ իրենց վրայ ազգել պիտի երեւակայէիք տարօրինակ «համազօրձակցութիւն»ներով, անկարելի «համաձայնութիւն»ներով և այլ գլուխ բերուած կասկածելի սակարկութիւններով:

Անհատական մեծագործութիւններու սին ակնկալութեան մէջ յուսախար, մտածուեցաւ գէթ եգիպտահայ ազգային կալուածէն վերցնելով անմիջական նշա-
 Ֆիասֆո նակելի օգնութիւն մը տրամադրել Ազգին ազգակող կարիքներուն: Եւ առ այդ Եգիպտահայ Երեսփոխանական Համագումարն հանդիսաւոր նիստ մը ունեցաւ Աղեքսանդրիոյ մէջ. բայց այս «պատմական» ժո-



Սեպուհի իր վաճառականներով

ղովն ալ իր պաշտօնական ու անպաշտօն նախաձեռնողներուն անիմանալի մէկ տնօրինութեամբը՝ մարդկօրէն կանխատեսուած իր նպատակէն բոլորովին տարբեր և իր իրաւասութեանէն անսահմանօրէն դուրս բաներով զբաղիլ ճարտարութեցաւ, Ն. Վ. Պօլոս փաշա Նուպարի «Հիմնադրամ»ի Յանձ-

նախուճքին գործունէութիւնն անբաւական ու անզոհացուցիչ գտաւ, և այդ մարմինը լայնօրէն ու մակերեսապէս վերակազմելու ձեռնարկեց, ընտրելով «Նպաստամատոյց» մը, զոր չի թերացաւ օժտել սոսկ «բաղձանքներ» արտայայտելութեան կազին ու սրտաշարժ լիազօրութեամբը... Գալով այդ համբաւաւոր նիստէն սպասուած միւս դրական արդիւնքին, տարտամօրէն իմացանք թէ այդ մասին կայացած էր որոշում մը, որուն գործադրութիւնն արձանագրել կը համարձակինք յուսալ թէ վիճակուած ըլլայ 1917ի «Եգիպտահայ Տարեցոյց»ի հեղինակին, եթէ քրոնիկագրական այդպիսի երանելի ժառանգորդ մը թողուցած ըլլանք հոս:

Վերջացող տարեշրջանի եգիպտահայ ամենասիրուն խըլըրտումներէն ու հազուադիւր հրապոյրներէն մին եղաւ Աղեքսանդրիոյ, Սուտանի, Շարքիէյի Հայ Կարմիր-Պաշերու, այլ մասնաւանդ Գահիրէի մեր Կարմիր-Պաշին կազմութիւնը: Ասիկա գերազանց պատեհութիւնն ընծայեց Եգիպտահայուհին դուրս գալու իր սովորական այլուրութենէն, հանրային իրին, հայրենի աղէտներուն հանդէպ իր մեկուսի, գրեթէ կղզիացեալ անդորրութենէն, և ազգային ամօքման գործին մէջ արժեցնելու իր փափուկ սրտին կարեկցական ընդունակութիւնները:

Գահիրէի մէջ, հայրենակցական, բարեգործական, կըրթական ու քաղաքական տասնընորս մարմիններու և հաստատութիւններու նախաձեռնութեամբ և ժողովրդային-համերաշխական գետնի վրայ կազմակերպուած


Եգիպտահայ Կարմիր-Պաշը կտրճօրէն Կարմիր-Պաշը ճամբայ ելաւ ազուր առաջադրութիւններով, որոնց ամենագլխաւորն ու ազ-

նուագոյնն էր Եգիպտահայ «Սանիտարական» Առաքելութիւն մը կօվկաս փութացնելու դադափարը: Առ այդ պէտք եղած հիմնադրամն ստեղծելու համար ազգային իշխանութեան կողմէ արգելուած ըլլալով իրեն հանգանակութեան ձեռնարկել՝ Եգիպտահայ Կարմիր-Պաշը կարող չեղաւ ցարդ իր սկզբնական այդ գեղեցիկ ծրագիրն իրագործել: Բայց սպասելով որ Եգիպտահայ Երեսփոխանական Համագումարին սահմանած նիւթական միջոցներն իրեն տրամադրուին, մեր Կարմիր-Պաշն իր դոյութեան իրաւունքն արդարացուց, նուիրագործեց իսկ, միակ եգիպտահայ մարմինն հանդիսա-

Աւեփային
Բոր-Սայիս

Նալով որ իր սրտոտ ու կորովի ջանքերուն շնորհիւ պիտի կազմ ու պատրաստ գտնուէր գիմագրաւելու ստիպողական կարիքները մեր այն 4200 հերոսական ազգակիցներ-

Ֆրանսական ազատարար Վարսանաք, որ Մուսա Լեւան բարձունքին ծածանող կարմիր-խաչակիր դրօշակը նշանակով՝ օգնութեան փութաց հերոսական Աւեփայիններուն



րուն, զոր ֆրանսական խնկելի ասպետութիւնը Մուսա-Լեւան վերցուցեր ու Բոր-Սայիտ բերեր էր մեր խանդակաթ ու բարոյապէս երախտապարտ ազնապատանքին յանձնելու:

Սուէտեան դիւցազնավիպային այս վերջին գրուագը — որուն մէջ Հայ կարմիր-խաչն ա՛յնքան պատուաբեր, ի՞նչ կ'ըսեմ, պատուափրկիչ դեր մը կատարել կոչուած էր — այս հատորէն իրաւամբ ակնկալուած առանձին էջեր գրաւելով, կը փակեմ ներկայ տարեկան տեսութիւնը, առանց կանգ առնելու եզրպտահայ կեանքի այն բոլոր մանր-մունր այլ բնորոշ երեւոյթներուն շուրջ որոնք յառաջ կկան քաջարի Սուէտիացիներուն մեղի ելած յանկարծական այցելութեան հետեւանքով:

Աւելորդ չեմ սեպեր, սակայն, անցողակի դիտել տալ թէ եզրպտահայ ազգային-սեղական գործերը, որոնք նախորդ տարեշրջանին այնքան յուզումներ, Ազգային-Տեղա՛յան նո՛յնիսկ մէկ քանի փոթորիկներ Գործերու Բնրացքը յարուցած էին թէ՛ Աղեքսանդրիոյ և թէ Գահիրէի մէջ, այս տարի ստուերածուծի, գրեթէ մոռացութեան մատնուեցան: Եզրպտահայ կամաւորացու երիտասարդներու հարիւրեակ մը քանիցս վրդովել թուեցաւ Ապու-Տարտարի չըջափակը, բայց Պուլազն ու Պէնի-Սուրէնը բոլորովին գերծ մնացին «ժողովրդային» խռովակոծումներէ: Ո՛չ Առաջնորդի խնդիր ունեցանք և ոչ ալ Տնօրէնի կռիւ: Դպրոցական, գերեզմանոցային, աղքատախնամ, կալուածական և այլ այս կարգի տեղական հարցերը նսեմացան, կորսուեցան համազգային կլանիչ հարցերու միահեծան ազդեցութեան տակ, ու մեր վարչական հաստատութիւնները խաղաղութեան աննախընթաց շրջան մը բոլորեցին այս տեսակէտով: Ներքին բարեկարգութեան ա՛յնքան մեծադորդ կերպով ծանուցուած, խոստացուած ձեռնարկներ պարզապէս յետաձգուեցան, և ո՛չ ոք բողոքարկու կամ դատախազ կանգնիլ փորձուեցաւ ազգային իշխանութիւններու գլխուն: Պայմանաժամն անցած երեսփոխանական ընտրութիւններն իսկ տեղի չունեցան, և կոտրակուած ժողովականութիւն մըն էր որ մէկ քանի հեղ նիստի գումարուեցաւ, առանց սակայն ո՛ր և է ակնբերելի շղայնատութիւն կամ դժգոհութիւն յառաջ բերելու իր շուրջը, առանց տեղական պայքարի դուռ բանալու:

Այս տողերը գրուած պահուն՝ Եզրպտահայ Գաղութը վերադառնալ կը թուի հասարակական իր բնականոն վիճա-

Նորէն Լեւոնով
քե Լուիս Երկունգ

կին: Ամէն խմբաւորում իր «պատնէ-
շին» վրան է կամ ետին, բայց աղմուկը
զգալապէս նուազած է եգիպտահայ
կրկէսին մէջ: Երբեմնակի դեռ կը

լսուին հանդիսաւոր ըլլալ նկրտող ձայներ, բայց անոնք ժո-
ռատ շեշտ մը կը հնչեցնեն յաւէտ, որ կիրքինը չէ, ոչ ալ
խորարմատ համոզումինը: Դեռ աւելի կամ նուազ փարթամ
ու լուսաշող սրահներու մէջ մնչկատակային շարժումներ
կ'ըլլան, դեռ անկիւններ կը փոթորկուին «կացութիւններ
փրկելու» սգորումներով: Բայց յոգնութեան ու պատրանա-
թափումի հասարակաց գիծով մըն է որ կը յատկանշուի՝ սա՛
վայրկեանիս՝ եգիպտահայ հոգեբանական ընդհանուր կեր-
պարանքը:

Անոնք որ պիտի կրնային այս ակներեւ սմբածութեան
մէջէն զգաստ ինքնամփոփումի մը և լուին երկունքի մը
հաւատքը ներշնչել, չեն փորձուիր վերգնահատել իրենց
վերջին փորձառութիւններն ու ըստ այնմ սրբագրել իրենց
կարգ մը սխալները, չեն մօտենար իրարու, և կը յամառին
ամուլութեան դատապարտել իրենց անհատական ու խմբական
ներքին արժէքները, կամ կը գոհանան դոյզն, գրեթէ այ-
պանական արդիւնքներով... Գիտակցութիւններ չեն պակսիր,
անշուշտ, վերջացող եգիպտահայ տարուան հաշուեկշիւին
նստելու և ձեռնհասօրէն ճշգրտով բոլորուած շրջանին դրա-
կան ու բացասական ազդակներն ու արգասիքներն՝ աւելի
բանաւոր ու նպատակայարմար ուղեգիծ մը որդեգրելու:
Բայց ազգեցութեան խնդիրն ու անհատական ճղճիւմ հաշիւ
ները կը գերակշռեն տակաւին եգիպտահայ հանրային տե-
սակէտներուն ու մտահոգութիւններուն մէջ:

Այս հրատարակութեան բնոյթը չի վերցներ քարոզներ
հրամցնել անով կամ զայն փրօփականտի իրրեւ միջոց մը
ժառայեցնել: Բայց այլուր այդ մասին
Թրքահայութեան
Այսօրն ու Վաղը
թէ՛ Թրքահայութեան այսօրին ու վաղ-
ուան հարկադրած անեղ հարցերուն շուրջ անկեղծ ու վրճ-
ուական համաձայնութեան մը գալէ խուսափելով՝ ունայն ու
պարզամիտ բանաձեւերու, անկարելի դաշինքներու, խարե-

պատիր ցոյցերու կառչելնին աստիճանաբար պիտի ջլատէր,
պիտի անդամալուծէր զիրենք, և պիտի առաջնորդէր բա-
ցարձակ հրաժարումի մը իրենց ամենէն անդրժելի պարտա-
ւորութիւններէն, իրենց կոչումէն իսկ:

Ազգին մեծագոյն ճգնաժամին մէջ համերաշխիւ, համա-
գործակցիւ գլտցած չըլլալնիս զուցէ այնքան աններելի ոճիր



Անդրանիկ իր իմբապետներէն շրջապատուած

մը պիտի չի համարուէր Պատմութիւնէն՝ որքան եթէ այս ազգը
վաղը վերապրեցնելու յեղափոխական վիթխարի գործին
առջեւ ամե՛նքա ալ, զաս-զաս, անկարողութեան մասնուած
զգայինք ինքզինքնիս...

Հո՛ր է վտանգը՝ բարոյական իր մահացու արհաւիրքին
մէջ՝ որ մեր աչքին կը նսեմացնէ ցեղին կրած ներկայ բո-
վանդակ զարհուրանքը: Եւ առո՛ր կ'երթանք, այդ անարգու
ինքնասպանութեան կը դիմենք մինք հիմա, թեթեւ քայլե-

րով ու կոկոզավիղ տատանումներով...

Թրքահայութիւնը չէ՛ մեռած, հակառակ իր գլխուն տեղացող ահուկի փորձանքներուն, հակառակ զայն մեր խղճմտանքին մէջ թաղելու մեր ալ տարապայման փութկո-

ՌՈՒՍ-ՀԱՅ ՇՔԱՆՇԱՆԸ



Հայկական ուղ-
մաբեմին վրայ
նշանաւոր հան-
դիսացող հայ ֆա-
ջերուն ուս կա-
ռաւարտ էր եան
կողմէ տրուած շը-
քանք, որուն վը-
րայ ֆանդակա-
գրուած է՝ հայե-
րէն եւ ռուսերէն
գրեւով. «Տէ՛ր Կե-
ՅՈՒ ՉՀԱՅՍ» :

տութեան: Թրքահայութիւնը, տանջանքի դողգոթաներուն ու տարագրութեան դժոխքներուն մէջ քաշկռտուելով, արիւններով, կոշկոճուելով, մեռնելով իսկ կ'ապրի՛ ու պիտի ապրի՛, որպէսզի մենք զայն վաղը սպաննենք...

Արտասահմանը Հայ Յոյսին ու Հայ Տառապանքին ընդ առաջ անհամերաշխօ՛րէն ալ կրցաւ երթալ քիչ-չատ խանդավառութեամբ, գէշ-աղէկ զոհողութիւններով: Բայց երբ մենք այսօր ինքզինքնիս հիւժուած, սպառած, ընկճուած կը գտնենք այսքան մը ճիգով, ի՞նչ պիտի ընենք վաղը, երբ Հայ Հոգի՛ն պէտք պիտի ըլլայ փրկել իր գերազոյն նաւարեկութիւնէն... Նոր «հանգանակութեան» պիտի ձեռնարկենք, նոր «հիմնադրամ»ներ մուրալու պիտի ելլենք...

Անօթին՞ը պիտի կշտացնենք, որբն՞ը պիտի նայինք, աւերնն՞ը պիտի վերաշինենք, ձգելով որ Տաճիկը մարտէ՛ մեր արիւնին հետ՝ մեր պղծուած պատիւը, մեր սատկած հաւատքը, մեր վրէժին նեխած, որդնոտած սաղմնա-գիակը:

Բայց նախ, ըսէ՛ք, խնդրե՛մ, պիտի թող՞ւնք որ, այս անգամ, Տանկահայր սանկրնայ . :

ՎԻՐԱՒՈՐ ԹՈՉՈՒՆՆԵՐ

Կը դառնային կրօններէն հեռաւոր՝
Հին կեանքին հետ բոյներն իրենց գրքներու,
Եւ յիշելով արեւն անցեալ օրերու,
Կը սպասէին, մեծ քրոջուններ վիրաւոր ..

Բայց ան չէր գար, Հայրենիքի սրգաւոր
Վրսեմ հոգին սուած էր զայն, ապրելու,
Սնոր լոյսէն կանսնչ դափնին ֆաջերու
Պիտի ծըլէր, պիտի մեծնար ամեն օր :

Բայց իրենց վերէն արիւնալի կը բացուէր,
Իբրեւ գարնան բոսորափայլ ծաղիկներ,
Զոր պարս ենք սալ Հայրենիքի մեհեանին,

Եւ օր մըն ալ կարօտալի քրոխչով՝
Մեծ քրոջունները վիրաւոր, արմերով,
Երկնից աստղերն ողջունելու կ'երթային...:

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ



ԿԱՄԱԻՈՐՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

Պիս՝ ուզեի որ ան ըլլար մեր հոգին
Ազատութեան կրակին մէջ լուսարբած՝
Անոնց համար՝ որոնք մեռան ժրպատգին,
Ինչպէսզուցնեմ խառնուրդներու մէջ ինկած:

Ու պահեցին դրօշը վեր՝ աստուծուն,
Հայրենիքի փառքին համար լուսեղէն,
Ու զոհուեցան, նահատակներ անանուն,
Շրնչելով խունկն Անմահութեան խորանէն:

Անոնց համար մահը կեանքն էր՝ ուր նորէն
Պիս՝ տարեին գեղեցկացած աւելի,
Ու քաղցին վարդակարմիր դաւեսերէն՝
Երազելով գալիք հունձներն ոսկելի:

Ոչ մէկ ասեմ վրհասեցան. քրճամբին
Անոնց բասուերը սեսնելով՝ կը դողար.
Հիմա չի կան .. Հանգի՛ս անոնց անխնին
Առանց խաչի փոսերուն մէջը խաւար:

Հոն՝ ուր ինկան, Հայրենիքն է որ կ'ապրի,
Եւ հոգին վրան անոնց արեամբ ներկրւած,
Յաղքանակն է հրաւազեղ, լուսալի,
Որ կը հրակէ ներմակ թեւերը բացած:

Շաս քիչ էիք, բայց մեր ցեղին արիւնոս
Պատմութեան մէջ արժանացաք փառքերու,
Ի՛նչ որ անցաք՝ իսկալով երազկոս՝
Ողջունելով ծիրանի շողն աստուծու:

Ո՛վ մեռելներ, ո՛վ հերոսներ անմոռաց,
Խաղաղութի՛նն ձեզ մահուան մէջ յաւիտեան,
Ձեզ՝ որ մեռաք դեռ ժրպատգիմ, անձնուրաց,
Ձի դեռ կ'ապրիք, ու դեռ կ'ապրի՛ Հայաստան...:

Ա Ր Ս Ե Ն . Ե Ր Կ Ա Յ

ՏԱՐՈՒԱՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐԸ

ՅՈՅՍԻ ՈՒ ԱՆԴՈՂԻ ՀԵՒՔԵՐ

(1915Ի ԳԱՐՈՒՆԵՆ ՄԻՆՉԵՒ ԶՄԵՌՆԱՄՈՒՏ)

ԵՐԿՆ ՈՒ Ա Ծ ԱՐ Շ Ա Լ Ո Յ Ս Ը

Երեւաքքի, 25 Մայիս, 1915. — Վանը գրաւուած...
Վասպուրականը նուաճուած... Հայաստանի սիրտն ազա-
տագրուած զինք տրորող գարաւոր անարգ լուծէն... Ար-
հաւիրքներու և աւերումներու մէջէն վերածնող Հայրենի-
քին առաջին լուսապայծառ ժպիտն է, երազուած ու երկ-
նըւած արշալոյսին աղիխարչ նախաշառափը, զոր հեռագիրը
կ'աւետարերէ մեզի...

Ողջո՛յն քեզ, Վա՛ն, ո՛վ Մայր Ոստան Հայ Աշխարհին,
ողջո՛յն քեզ, ու համբո՛յր, համբո՛յր քու Ծովակիդ աղու
ափերուն, քու Այգեհոտանիդ արգաւանդ հողերուն, քու
Վարազիդ նուիրական կողերուն, քու Աղթամարիդ եղերա-
կան ժայռերուն:

Բովանդակ Հայութիւնն երանութեան արցունքներ կու-
լայ այսօր քեզի համար, Վա՛ն, ո՛վ անառիկ ու անվկանդ
միջնաբերդ մեր ազգային ինքնապահպանութեան, ո՛վ խոր-
հըրդաւոր ու նախասահմանեալ հայաքաղաք, որ ցեղին
կենտական ներուժութիւններուն տաճարակիրն հանդիսա-
ցար, անոր ազգային սրբութիւններուն աւանդապահը, անոր
մթազնած գիտակցութեան փարոսը, անոր հայրենասիրական
զարթնումին կոչնակը, անոր ազատասիրտը մաքառուովին
ռահվիրան...

Քու հսկաներուդ երազն է, Վա՛ն, որ անա՛ կ'իրական-
նանայ, քեզմով տարփողուած իտէալն է որ կը յաղթանակէ,
քու ծոցիդ մէջ ու ճամբաներուդ երկայնքը թափուած դիւ-
ցազնական արիւններն են որ կը բեմնաւորուին, ո՛վ խոչ-
տանգուած այլ անընկճելի սիրտ Հայաստանի... Ողջո՛յն

քեզ, Վա՛ն, ողջո՞յն քու հերոս-նահատակներուդ, որոնք Հայ Ուխտին ուրուաթափօրը կը պարզեն հիմա մեր խոսովուած մտածումներուն... Զիրար շնորհաւորելէ առաջ՝ ծունկի գա՛նք, եղբայրնե՛ր, վասնզի իմանասորէն խուժող յաղթական ռազմիկներուն հետ մեր անմահ մեռելներն ալ կը յանեն Բարթողիմէոսի գերեզմանադաշտէն, — Աւետիսեանները, Պետօները, Մարտիկները, ու անոնց կը միանան Վազգէնները, Սեպուհները, Ռափայէլները, Իշխանները, — և ամենքը մէկ կը փութան ներկայ գտնուելու պսակմանը քսան տարուան մեր յեղափոխական մարտնչութիւն:

Ողջո՞յն, քեզ, Վա՛ն, մայրական բիւրիցս օրհնեա՛լ արգանդ, որ երկնեցիք ու ծնար որբացած Հայութեան նոր ժամանակներու հրաշալի հայրը, Հայրիկը, Տառապակոծ Հայաստանի առաջին բողոքարկուն, Հայկական Գաղտնի Հիմնադիրը, Հայ Ազատութեան Մարգարէն... :

Ա՛հ, Վարազի Արծիւին սակօրները կը սարսուան հիմա էջմիածնայ իր տապանավէմին տակ, կարծես թէ լսէր Վասպուրականէն՝ զուլումի օրերուն զինք կանչող որդիական ձայնը, որ յաղթանակի ցնծատօնին պիտի հրաւիրէր զինք, այս անգամ:

«Ասոս եմք սեպիդ,
«Հայրի՛կ ջան,
«Իւրծի՛ր դեպի Վան...» :

Ու Արծիւիդ հետ, Վա՛ն, անոր արծուիկներուն ալ յիշատակութեան օրն է այսօր, քու երախտաւոր զաւկընե-րուդ, քու մտաւորական մեծ սերունդիդ աստուածացումին օրը... :

Ալաշկերտէն դէպի Վան, Անդրանիկին հետ այս պատմական ժամագրութեան ամհարշաւ հասնող Համազասպ Սրուանձտեանցին — մեր Համօին — անունը կրնա՞յ հայ սիրտերը թունդ չի հանել նաև յուշածումով իր հօրեղբոր՝ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանցին, որ հայկական հայրենասիրութիւնն արծարծեց, հմայեց՝ հայրենի հողի, քերուարի «համ ու հոտը» ճաշակել տալով գրական իր շարք մը զմայլելի էջերուն մէջ:

Ու դեռ, անշո՛ւշտ, պիտի չի մոռցուին՝ Վանի գրաւման առթիւ տեղի ունենալիք մեր գոհարանական Երար-

դութիւններուն ու բերկրանքի համախմբումներուն մէջ՝ սրտագրաւ անունները Վանի մեր միւս մտաւորական գործիչներուն՝ եղերարադդ Արսէն Թօթմախեանէն մինչեւ վաստակաւոր Համարձում Երամեանը:

Վասպուրականը նուաճուած, Վանը գրաւուած... 1915 Մայիս 22ի շարաթ օրն անմոռանալի թուական մը պիտի մնայ մեր յիշողութիւններուն մէջ, բերած ըլլալով հայկական ազատագրութեան առաջին աւետիսը:

Հայրենի շղթայազերծման այս ապերասան ու սքանչելի թափին առջեւ՝ ատեն է որ Արտասահման իր պարտադիր ու պատուաբեր դերին մէջ մտնէ: Հայ կուրն ու Հայրենաշինութեան կենսական Գործը մենէ կը պահանջեն մեր բոլոր կորովները, զոհողութիւններն ու բարեկամեցողութիւնները:

Հայկական ինքնատիրացման վճռական խոյանքին դէմ ամենէն բրգածեւ արգելքներն ալ պիտի հարթուին, և վերածնող Հայրենիքը պիտի չի ներէ մեզի՝ եթէ զիտցած չըլլանք մեր բոլորանուէր բաժինը բերել գերագոյն պատարագի սեղանին:

Ու հիմա, հրճուի՛նք, հայրենակիցնե՛ր, ու մեր ցնծութիւնը թո՛ղ դուրս ալ ելլէ մեր տուներէն ու անկիւններէն, հաղորդուի ուրիշներուն, ծաւալի մեր շուրջը: Հանդիսութիւններ սարքենք, օրհներգներ հնչեցնենք, զգանք ու զգացնենք թէ ազգային մեր հպարտութիւնը կ'ապրինք, մեր փառքը կը պանծացնենք... :

Վանը գրաւուած... Վասպուրականը նուաճուած... Կեցի՛ր, զարի՛ր ընկե՛ր, ու գինովնա՛նք միասին այս իրիկուն, վասնզի ա՛լ մօտ է մեծ սփոփանքին օրը, ուր անցեալին ու ներկային բոլոր դառնութիւնները պիտի թաղենք... Արեւուն տակ մե՛նք ալ պիտի ունենանք տեղ մը, ուր հայ գեղեցիկութիւնը պիտի ծաղկի անարգել, ուր հայ ազատ խօսքին ու ազատ մտածումին դէմ ո՛չ մէկ դաւանիւթ ձեռք պիտի կրնայ շարժիլ, ուր հայ հասարակական մթնոլորտը պիտի մաքրագործուի, ու հայ խղճմտանքը պիտի բիւրեղանայ. պիտի ունենանք միջավայր մը, ուր ընկերական վատութիւնը, էնթրիկը, նենգութիւնը պիտի չի յանդգնին մուտք գործել, որջանալ, յենարան ու զօրավիզ

գտնել, ուր մատուցուած ծառայութիւնները, տարուած մաքառումները, կրուած տաժանքները, անխարդախ արժէքները, ապացուցուած անձնութիւնները պիտի ըլլան հեղինակութեան տիտղոսներն ու յարգանքի չափանիշները, պիտի ունենանք, վերջապէս, հայ քաղաքացիութեան հարազատ, ամուր ու անպիղծ կռուանք:

Ողջո՞յն քեզի, վա՛ն, վսե՛մ վանկ, որ կը համադրես Հայաստանի վայրավատին զաւկըներուն բոլոր իղձերն ու մաղթանքները, ողջո՞յն քեզի, ու քու զուլալ աղբիւրներէդ սա՛ վայրկեանիս իրենց ծարաւն յագեցնող մեր առիւծներուն, որոնք այնքան արիւններով երկնուած ազատագրութեան առաջին արշալոյսը ցաթեցուցին սէգ Սիփանիդ ու վեհափառ Վարազդի կատարներէն...:

Ա Ի Ե Տ Ա Ի Ո Ր Ա Հ Ա Ջ Ա Ն Գ Ը

Երեւոսքի, 29 Յունիս, 1915. — Պէ՛տք է գիտնանք, թէ՛ ո՛ւր կ'երթանք, պէ՛տք է գիտնանք, թէ՛ յաղթանակներու ճամբան շուտով պարտութեան ու կորուստի գահավէժի մը կը փոխուի, եթէ՛ առաջին յաջողուածքներուն գինովութիւնը մոռցնէ վաղուան բոլոր պատահականութիւններն ու թուլցնէ անոնց գիմադրաւորութիւն կազմ ու պատրաստ գըտնըւելու կամքերը, վտանգին դէմ միշտ լարուած, արթուն, գործօն կորովները:

Պատիկ ազգ մըն ենք, հեռուն ինկած մեր Հայրենիքին փրկագործութեամբ խանդավառ: Չի՛ կարծենք, վայրկեան մը անգամ, որ ուրիշները կը մտածեն կամ կը հոգան մեզի: Սեւ-լեռցիներուն դէպի Շքօտրա յառաջխաղացքը շատ աւելի ուշադրութիւն կը գրաւէ Արեւմուտքի մէջ՝ քան թէ վանի առումը, որուն հազիւ արձագանգ տուաւ եւրոպական մամուլը: Եթէ եղաւ ժամանակ մը, ուր աշխարհի զօրաւորները մեզմով զբաղելու, հետաքրքրուելու իսկ տրամադրութիւն չունին, ա՛տ ալ ներկայ ըսպէ՛ն է:

Մենք ենք որ մեր գլխուն ճարը պիտի նայինք: Մեր նիւթական, ֆիզիքական, բարոյական ուժերն են որ մեր ճակատագիրը պիտի վճռեն:

Առի՛նք վանը, և յետո՞յ...:

Ի՞նչ կ'ընենք հիմա:

Կը զգա՞նք, թէ պատմական այդ խոշոր դէպքը, այդ փառաւոր նուաճո՞ւմն իսկ մեզ գրած է ամենամեծ պարտա-

ւորութիւններու և պատասխանատուութիւններու տակ... Կը զգա՞նք, թէ Հայ Հայրենիքին դէմ գերագոյն դաւաճանութիւնը պիտի ըլլար թերանալ ո՛ր և է նուիրումի մէջ որ պիտի նպաստէր ձեռք բերուած դիրքերն ամրապնդելու, ապահովելու և տակաւին ձեռք բերուելիքներն հետապնդելու ոգի ի բուն... Կը զգա՞նք, թէ Հայ Գաղափարին դէմ գերագոյն սճիրը պիտի ըլլար խնայել ո՛ր և է զոհողութիւն՝ ամոքելու վերապրող եղբայրներու ցաւերը, ամէն տեսակ օգնութիւն հասցնելու աղէտեալ ու տառապակոծ բնակչութիւններու, յեղին հիմերը վերանորոգելու և զօրացնելու իր ազատագրուող հողին մէջ, զայն հոծացնելու, կազմաւորելու և տէր դարձնելու իր կորսնցուցած ստացուածքներուն... Կը զգա՞նք, թէ մեր կողմէն գերագոյն անզգամութիւնը պիտի ըլլար մինչեւ մեր վերջին առոյգ տղամարդուն բազուկը չի գինել՝ ստուարացնելու համար մեր կամուտը շարքերը, ինչպէս նաև դէպի Հայաստան չի վազցնել կարմիր ընդհանրապէս խումբեր...:

Երէկ, մենք դեռ կրնայինք տնտնալ. վարանիլ, յամենալ: Այսօր իրաւունք չունինք երկվայրկեան մը իսկ կորսընցնելու: Պէ՛տք է ազգովին գիտնանք օգտուիլ ներկայ պատեհութեան՝ Հայրենիքն ողողելու համար ամէն տեսակ ուժի մեր կրցած գերագրական քանակովը: Վաղը, շա՛տ ուշ մնացած պիտի ըլլանք, եթէ թշնամի յարձակողական վերադարձ մը մեր առջեւ խափանէ օգնութեան հնարաւոր ճամբաները, ինչ որ անկարելի վարկած մը չի թուիր ինքնին: Արեւմտեան մեծագոյն ռազմարեմերուն վրայ տեղի ունեցող դէպքերը բաւական համոզիչ ու թելադրական են այս մասին: Եւ Հայ կռիւին դեռ վճռական բաղխումներ վերապահուած են անկասկած:

Գործի՛, ուրիմն, ամէն ոք թո՛ղ իր բաժինը բերէ հայրենաշէն աշխատանքին: Ազգին արտակարգ կացութիւնը անսովոր ճիգեր կը պահանջէ ամենքէս: Թո՛ղ հեղ մը զոնէ ամենուս սիրտերը մէկ զարկով բարբախեն... Առաջնորդ, տէրտէ՛ր, մտաւորական, բանւո՛ր, վաճառական, միլիտանատէ՛ր, ԿԱՆԱՅ, երիտասարդնե՛ր, և կիներ՛ը մանաւա՛նդ, թո՛ղ մէկ անդոհով սարսուղին՝ ասպարէզ իջնեն, եգիպտահայ «սանիտարական առաքելութիւնը» և «կամաւորական հարիւրեակը» կազմակերպելու:

Վանեցիի մը այնքան բան պարտական մնացած այս գաղութը պիտի չի կրնա՞ր իր ծոցին մէջ թաղուած հիմնադրամներէն կարելի եղածին չափ նշանակելի գումար մը փոխադրել Վան... Լայն օրերու մէջ պերճանքի գործունէութեան համար դրամ պահելն աններելի է, երբ այսօր քանի մը տասնեակ հազար սկիւն հրաշք կրնայ գործել Հայաստանի մէջ:

Գործի՛, գործի՛, ամենքդ ալ, ամենքս ալ: Գինովնալու և քնանալու ժամանակ չէ՛, այլ արթուն հսկելու և անդուլ գործելու:

«Ռուսը կը հոգայ, Կովկասը կը նայի» ըսելով ինքզինքնիս չի՛ խաբենք, և խղճմտանքնիս չի՛ լռեցնենք, վատօրէն:

Կարգացէ՛ք Կովկասէն եկող ազգարարութիւնները: Արտասահմանի Հայութիւնն իր ամենանուիրական պարտականութիւններուն կատարումին կը հրաւիրուի «զգաստութեան» այդ կոչերով որ կը հնչեն աւետաւոր ահագնագի մը հանգոյն:

ՊՈՌՌԵՎԱՅԷ՛Ք, ՀԱՅ ԿՈՐՈՎՆԵ՛Ր...

Հինգօգոստի, 22 Յուլիս, 1915. — Հայրենի հորիզոններէն հասնող ազգանշաններն ուրի՛շ հրամայական պարտականութիւններու անտեղիտալի աղերսովը թունդ կը հանեն մեզի:

Հայրենիքի թրքաղերծուած մէկ մասին ազատագրումովն հրճուելու, գինովնալու ատեն չէ՛... Անդին, ամբողջ թրքահայութիւնը դէպի սպանդանոց քշուելու վրայ է այս պահուս: Կախաղաններու եղերական շարքը կ'երկարաձգուի և կը սպառնայ համատարած սեւ անտառի մը կերպարանքն առնել... Վասպուրականէն Տարօն մղուող մեր կամաւորական ամենի մարտնչումը դիւցազնական թափեր կը պահանջէ տակաւին... Մուշ-Սասունի անկումը կ'ուշանայ... Տիգրանակերտէն Կիլիկիա, Հայրենիքը քար ու քանդ, իր գաւկիւղները կը ջարդուին կամ զանգուածովի կը տարագրուին... Մեր պայքարող մտաւորականութեան ծաղիկը մահասիւններուն ստուերին տակ կը քաշկուտուի ատեանէ ատեան ու զնտանէ զնտան... Արթիւր Եասըեան ճիւղը, զոր շան-սատակ ընելու ջիղը չունեցան երբեմնի իր ընկերները, դատախազ կը կանգնի այսօր հայ յեղափոխական կալանաւորուած

մտաւորականութեան դէմ... Իթթիհատի խելագար ճեմերը կը մոռնան թէ ահարկելիներու ժողովուրդի մը հետ է որ կը խաղան այսօր, բայց մենք ալ կը թուինք չանդարդանալ թէ միայն հայկական ռազմարեմին վրայ չի սահմանափակուիր մեր տանելիք մաքառումը, և թէ անդրժելի պարտաւորութեանը տակ կը գտնուինք մենք վերագառնալու մեր դաւադրական կարմիր օրերուն: Մեր ամէն մէկ գաղափարի ազիզ ընկերին կերուած գլխուն տեղ Իթթիհատը պիտի վճարէ՛ մեզի իր գլխաւորներուն քանի մը գլուխներովը... Մեր անունն «Իթիլաֆ» չէ՛, Թալէաթճը՛կ...

Ատեն է, ընկերներ, վրիժառու դաստակները պրկելու, ատեն է քաւելու մեր ութնամեայ մեղկացումն ու դասաւրբութիւնը... Մենք Ասանա մը ունէինք արդէն մեր խըղճմըտանքին վրայ, և հիմա Զէյթունը, Տէօթ-Եօլը, Հաճընն ու ամբողջ Տաւրոսը կը լեռնանան հոն... Զէ՛, մեր սերունդը դեռ չէ՛ ծերացած անագորոյն ու անխնայ պայքարին համար, և մեր կրտսեր կորիւնները կան որ արիւնոտ նայուածքներով ահա՛ կուգան մեր կողքին շարուելու... Զեր հոգո՛ւն մատաղ, Հայու լամուկներ, եկէ՛ք, վազեցէ՛ք, դեռ դահիճներու արի՛ւն կայ խմելիք, որպէս զի զոհերու արիւնին ծովը ցամքի...

Ոտքի՛, հայ տղաքներ, ոտքի՛, վրէժի մուրացքով սարուագին, ձեր ալեւոր վարպետները, ձեր առաջնորդները տարին, ձեր Իշխանները մորթեցին, ձեր Փարամազներն ու Աչըզպաշները կախեցին, ձեր Ակնունիները, Զօհրապետները, Խաժակները, Վարդգէսները, Վառսեանները, Զարգարեանները, Վարուժաններն ու Սիամանթօները աքսորեցին ու դո՛ւք դեռ նստե՞ք էք անշարժ... Ոտքի՛, ոտքի՛, ո՞վ հայ նորահաս երիտասարդութիւն, որ Հայ Գաղափարը սորվեցար ու պաշտեցի՛ր, անոր համար տանջուելու, անոր համար կռուելու է որ կը կոչուիս ահա, քու անդրանիկներուդ կողքին, ոտքի՛...

Ու ա՛լ Արտասահմանի մէկ ծայրէն միւսը թո՛ղ հնչէ «Մեկն իր կեանքը, միւսն իր դրամը» կարգախօսը: Պէ՛տք է մեր միջակորեարը վերջ տայ ազգային-բարոյական սնանկութեան տեսարանին զոր կը պարզէ նո՛յնիսկ այս գերագոյն ճգնաժամուն:

Մեզի համար մահացու ամօ՛թ է, որ նուաճուած հայրե-

նիքը վրայ տալու համակերպինք՝ սո՛սկ դրամի պակասին առջեւ խոնարհելով... Մեր ազգային համերաժխտութիւնն անկարելի է մինչեւ որ այս եական հարցին շուրջ մեկ անողոք ու անհատ կեցուածք չի բռնեն ամե՛նքն ալ :

Պէ՛տք է, սակայն, աճապարել : Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, և ահա՛ ձմեռը կը մօտենայ, և հայրենի ճամբաները նորէն կը գոցուին : Անհրաժեշտ է որ Երկիրն սղոզենք, օ՛ր առաջ, ֆիզիքական, ռազմական ու մտաւորական ուժի գերադրական քանակովը զոր կրնանք տրամադրել : Մեր կամաւորական շարքերը պէ՛տք է ստուարացնել հնարաւոր մեծագոյն չափով : Ազատագրուած հայրենի հողամասերը պէ՛տք է լեցնել ռազմամթերքով, և «սանխտարական» բոլոր կազմակերպուած միջոցներով :

Զի խաղա՛նք մեր ազգային ճակատագրին հետ : Հասկընա՛նք թէ ահաւո՛ր է մեր պատասխանատուութիւնը, և քաղաքացիական կտրիճութեամբ տիրութիւն ընենք անոր, դիմագրաւելով ամէն զոհողութիւն : Յոյց տա՛նք աշխարհի թէ «մարդե՛ր եմք», ինչպէս կ'ըսէր Վիվիանին, ազատ սպրելու արժանի մարդեր :

Օ՛ն, պռթկացէ՛ք, հայ կորովներ...

Յ Ա Ի Ա Գ Ի Ն Մ Տ Ա Լ Լ Կ Ո Ւ Մ Ը

Երեքաբքի, 10 Օգոստոս, 1915. — Ազատագրուող Հայաստանին ռազմաճակատն է որ՝ իր առջեւ լեռնացող ահեղ անատուգութեամբն ու իր ետեւ ծովացող կարօտանքներու անասանման անձկութեամբը՝ կը խռովէ, կը գալարէ, կը մտալկէ մեզի :

Այսքան մօտ ըլլալ մեր դարաւոր իտէալին իրականացման, և ա՛յսքան հեռու՝ անոր հասնելու անհրաժեշտ պայմաններն ու միջոցները լրացնելէ... Երբէ՛ք, երբէ՛ք մեր ազգային գոյութեան ընթացքին ներկայացած չէր մեզի այսպիսի եղերական կացութիւն մը :

1877-78ի ռուսո-թուրք պատերազմին՝ ստրկական խորքունի մէջ էինք, երբ փրկութեան հրաշալի պատեհութիւնը սաւառնաթեւ կ'անցնէր մեր վրայէն... Առիթը փախցուցինք, բայց ատոր համար այլապէս էրուելու, աւողելու պատճառ ու իրաւունք չունեցանք, վասնզի քաղաքացիական ո՛չ մէկ ճիգի, ռազմական ո՛չ մէկ անձնագոհութեան կորուստներն ունեցեր էինք ողբալու. սպանդանոց քշուող տաւարի պէս

ջարդուեր էինք սոսկ, թրքօ-քիւրտ հրոսներու ճաւրուն վրայ, ու մինչեւ էրդրում յաղթական խուժող ռուս բանակին հայ զօրավարները տիրացուական համակրութենէ ու բերանարաց հիացումէ աւելի ու տարբե՛ր բան չէին գտեր թրքահայ զանգուածներու ծոցին մէջ... Մեր կրած աղէտներն ալ, այն առեւն, համեմատական եղան մեր ցաւագար կրաւորականութեան, ու մենք վերապրեցանք, հազիւ կրճատուած... Բասենի, Ալաշկերտի, Պայազիտի դաշտերը քիչ մը եւս ամայացան Վանի շուկան անգամ մը ևս այրուեցաւ... Հայ գրականութիւնն Հայրիկին «Վան-Գոյօժ»ն ու Բաֆֆիին «Խինթը» շահեցաւ ատկէ, ու Հայրենիքը՝ զարթնումի, խմորումի նոր ու հզօր ազգակիներ :

Բայց հիմա՞, բայց այս անգամ... Ա՛հ, ո՛րքան աւելի աղնուացած, գեղեցկացած Հայութիւն մըն է որ իր կեանքը վտանգած է ներկայ համարադիտումին մէջ, և ո՛րքան անհուճօրէն աւելի մեծ են բխէրը զոր ան կամովին յանձն առած է իր ազգային ազատագրական իտէալին իրազօրծման համար... Երեսուն տարուան մեր արիւններուն ու տուայտանքներուն գերագոյն բեղմնաւորութիւնն է որ ահա՛ կը հրաշագործուի հայկական ռազմաբեմին վրայ, Կովկասէն Տարօն մեր կամաւորներուն դիւցազնական խոյանքն է, Աստուած իմ, որ յաղթանակի ամպածրար գագաթներէն կորուստի անյատակ անդունդները գահավիժիլ պիտի դատապարտուի, եթէ մենք չի գիտնանք անոր կռնակն ապստապարտուի, եթէ մենք չի գիտնանք անոր կռնակն հովել, անոր հաին զանգուածանալ ազգովին, եթէ մենք վրիպինք անոր պահանջած պահեստի ուժերուն անսպառ շտեմարանն ըլլալէ : Վեց դարերէ ի վեր մեր երկնած լաւագոյն սերունդին ամենավսեմ սիրագործութիւնն է որ ընդունայն գացած պիտի ըլլայ. ապստամբ Վանի փառապանծ դրուագն է որ պիտի քանդուի, չքանայ, հոյսկապ գեղեցկութեան մը պէս, որուն կորուստն ամբողջ ազգի մը բնաջնջումէն աւելի դառնակսկիծ ու անսփոփելի պիտի ըլլար : Մենք արդէն ահագին Զէյթուն մը վրայ տուինք այս ճակատագրական փոթորիկին մէջ, Զէյթուն մը, որ Հայուն հպարտութիւնն էր խորհրդանշած, անոր անպարտելի կամքին ապառա՛ժն էր ցցած...

Ու հիմա՛ մեր հերոսական թափին մէջ՝ կա՞նգ պիտի առնենք Սասունին ստորտը, պիտի չի կրնանք ձեռք տալ

Տալուորիկի, Կէլիէ-Կիւզանի, Անտոքի, Փոֆուքարի սեպու-
թիւններուն վրայ կռուող Տարօնցի մեր հազարաւոր կտրիճ-
ներուն, դէպի ե՞տ պիտի ընկրկինք Մուշի ու Բաղէշի
դուռներէն...

Բայց, Անգլիանի՛կ, Վարդա՛ն, Քեոի՛, Դրօ՛, Համօ՛ ջան,
դէպի ետ ճամբան ամբողջ Հայաստանի գերեզմանին ճամբան
է այլեւս, ձեր հոգո՛ւն մատաղ, լանջք տուէ՛ք Տիւօմանին,
ո՛րքան ալ զարհուրելի ըլլան ձեր առջեւ անոր հանած կրակէ
պատուարները...

Ու տեսէ՛ք, ո՛րքան վատոգի, ո՛րքան աներես ենք
մենք, Արտասահմանէն, այլ մանաւանդ Եգիպտոսէն հայկա-
կան ռազմարեմը գիտողներս... Քանի մը զրուշ զրկիցինք
մեր կամաւորներուն, և ելեր անոնցմէ կը սպասենք, գրեթէ
կը պահանջենք, հայրենի փրկագործութեան տպահովութիւնը,
և քանի՛ վտանգն աւելի սպառնական կը գծագրուի հորի-
զոնին վրայ, ա՛յնքան խելայեղօրէն կը կառչինք անոնց
մտածումին...

Բայց ի՞նչ կ'ընենք անոնց ետեւէն մեր բոլոր տղաքը
վազցնելու, անոնց նօսրացող շարքերն ստուարացնելու,
ինկողներուն տեղ նորեր հասցնելու, ու մեր ազատարար
գունդերուն նիւթական ու ռազմական պահանջներն անխնայ
ու լիուրի հոգալու համար...

Ոչի՛նչ, ոչի՛նչ...

Ա. Հ. Ա. Ի. Ո. Ր. Վ. Ա. Յ. Ր. Կ. Ե. Ա. Ն. Ը.

Հինգաբքի, 9 Սեպտեմբեր, 1915.— Վանը պարպուած...
Հարիւր հազարաւոր աղէտեալներու մարդկային հեղեղն է որ
Հայաստանէն փրթեր Կովկաս կը թափի, խելայեղ ու խե-
լայեղիչ գահավիժումով մը:

Մայրեր իրենց երախտներն են կորսնցուցեր խուճապա-
կան փախուստի ճամբուն երկայնքը, և ուրիշներէ — սըրտ-
ցաւ բաղդակիցներէ—վերցուած որբուկներուն թիւը հազարի
կը հասնի, միայն Իկտիրի և Էջմիածնայ շրջափակին մէջ... Քա-
նի՛ հազարներ, ապաւէն-սահմաններուն դեռ չի հասած, ինկած
են ուժասպառ, կամ քիւրտ դաւաճանութենէն գնդակա-
հար... Եւ սակայն Վասպուրականը միայն աւելի քան
200,000 սովալուկ բերան զրկեր է կովկասահայ գիւղացիու-
թեան ու հանրային հաստատութեանց վրայ... Պէ՛տք է
կշտացնել եղբայրական այս վիթխարի անօթութիւնը, պէ՛տք

է պատսպարել, ամօքել, սփոփել այս անսահման, արհաւ-
րալից թշուառութիւնը... Վիճելի խնդիր չէ՛ ասիկա, եր-
կու կարծիք չի կրնար կենալ այս մասին... Անյեղլի, ան-
տեղիտալի վճի՛ւն է հայ անողորմ իրականութեան... Բայց
մարգիկ խենդեցեր են հոս, ու թունաւոր վէճ մը կը հանեն
այս ահուկի, այս անագորոյն ճակատագրականութենէն...
Հայկական ռազմարեմին վրայ առաջին յաջողութիւնները
քիչ մը զգաստութիւն բերեր էին, տառապանքի ու մաքա-
ռոււթի սահմանագծերէն դուրս, հայկական մթնոլորտին մէջ,
և ահա՛ դժբաղդ այլ ոչ-անակնկալ ձախողուածքներ մէկ
օրէն միւսը կը պղտորեն հաղիւ սփռուող պայծառութիւնը:

Ու ասիկա ամենէն ողբալի ու դժնդակ կողմն է ազգա-
յին մեր ներկայ եղբրական կացութեան:

Կարծես թէ ընդհատուած վիճաբանութեան մը մէջ
իրարու դէմ իրաւունք ունենալու յետագարձ կատաղու-
թենէ մը բռնուած ըլլայինք մէկէն ի մէկ:

Կարծես թէ լուելիայն կայացած ընդհանուր համաձայնու-
թեան մը ստուերածուծին մէջ նսեմանալէ նախամեծար հա-
մարէինք շփոթութեան, յուսալքուծի, անբարոյացուծի հո-
սանքներուն առջեւ ցցուիլ՝ դատախազի «առաջնակարգ»
դերին կամ «մարգարէ»ի կեցուածքին մէջ:

Գթութիւն այս արիւնազանգ ցեղին համար, թո՛ղ չը-
նէին, թո՛ղ չընեն այս մէկ բանը, և մենք վազ կ'անցնինք
մեր հաշտոյն, իրաւունք ունենալէ մեր հասցէին շարտուած
ո՛ւ և է ամբաստանութեան դէմ:

Չէ՞ որ, դեռ երէկ, մեծով-պղտիկով, մենէ աւելի ջեր-
մօրէն տիրութիւն կ'ընէին կամաւորական գործին, համակ-
րութիւն ու հոգածութիւն երգուըննալով անոր:

Հայ ռազմաճակատին տարուբերումներն, իրենց աղէ-
տալի հետեւանքներովս իսկ, կրնա՞ն երբէք արգարացնել
մեր կողմէն ո՛ւ և է ուրացում:

Հայ մտաւորականութիւնը գոնէ ինքզինքը չի կորսն-
ցընէ՛ր, ապգային գոյութեան այս մուսլ ու զարհուրելի
տագնապին մէջ, չի կորսնցնէ՛ր իր գիտակցական հաւատա-
րակչութիւնը... Գերմարդեր չենք, անտարակոյս, բայց
ողորմելի խամաճիկներ ալ չըլլայինք պատմական այս գե-
րագոյն վայրկեանին... Չէ՛, փոխադարձ յարգանքի ու վըս-
տահութեան խօսքն իսկ չենք ըներ. աւելո՛րդ պերճանք է

ատիկա մեր սա՛ բարքերուն մէջ: Ամենուս հոգին ալ խո-
րան մը կրնայ կրել, և փոյթ չէ՛ թէ փլչի անիկա: Անդին
զանգուածներով կը մեռնի՞ն կոր, ամէն օր... Բայց ս՛վ
պիտի հոգայ ցեղին ծով կարիքները, ս՛վ պիտի կանխէ
անոր սպառնացող շարաշուք պատահականութիւնները, ս՛վ
պիտի զօրավիզ կանգնի ազատագրական անդառնալի մար-
տընչումին, եթէ կովկասի ու Արտաստանմանի մէջ հայ մտա-
ւորականութիւնը, անխղճօրէն, իմաստակօրէն, խելագարօ-
րէն, վէճի ենթարկէ անվիճելի՛ն անգամ...:

Յ Ա Ն Ա Խ Ա Ն Ք

Շաբաթ, 11 Սեպտեմբեր, 1915. — Մինչ կովկասն ու
Արտաստանմանը խռովակոծ կը փոթորկին գաղթային նոր
աղէտին անդհուլը, մինչ զգայացունց հաւարներն ու օգ-
նութեան գորդագին կոչերն իրարու կը յաջորդեն, իրար կը
խաչաձեւեն և ամբողջ գրականութիւն մը կը ձեւացնեն՝
Հայաստանէն փախստական հարիւր հազարաւոր արեւակից-
ներու անստանման տառապանքին նկատմամբ, մեր մտածումը
միւսներուն ետեւէն կը վազէ հեւասպառ, միւսներուն,
զանգուածային տարագրութեան եղերական զոհաթափօրնե-
րուն ետեւէն, և անոնց այլապէս մտայլ ու զարհուրելի ճա-
կատագրովը կը տագնապի...:

Ի՞նչ ամպարիշտ բաղդատութիւն է ստիկա, որուն կը
մղուինք, անգիմադրելիօրէն, ի՞նչ անհնարին զուգակչիւ է
որ կը յաճախէ մեզի, ու կը չոքի մեր մտքին վրայ:

Մեզի կուգայ թէ բարոյապէս անիրաւուեցան անոնք,
թէ բաւական չի խօսուեցաւ, բաւական անձկութիւն ու
վշտագին աղապատանք չարտայայտուեցաւ անոնց մասին
որոնք բաղդին ամենէն անագորոյն հարուածներուն ենթարկ-
ուեցան, հայկական ներկայ արհաւիրքին մէջ:

Հայաստանէն փախստական հարիւր հազարները կովկասի
գիւղը կ'ապաստանին: Ու ո՛րքան ալ ահաւոր ըլլայ իրենց
ներկայ կացութիւնը, անոնք գէթ կուտակուած վրէժի
բուն յագուորդներ, յաղթանակի հոգեպարար զինովու-
թիւններ ունենալէ կուգան... Վանի ժողովուրդին ապրած
մէկ քանի օրերը դարեր չէ՛ին արժեր... Եւ յետոյ, իրենց
փախուստն իսկ ինքնապաշտպան նահանջի մը բնոյթը չունի՞,
որքան ալ աղէտաւոր ըլլայ հայրենի հազիւ սկսող վերա-
կանգնումին տեսակէտէն... Հայ կամաւորական գունդերն

իրենց կռնակն ու կողերը կը պաշտպանեն թշնամի հրոսնե-
րու արիւնխանձ յարձակումներուն դէմ... Գիտնա՛լ թէ
իրենց ետեւէն և իրենց քովը ի վեր կանգնած են Անդրա-
նիկը, Դրօն, Քեռին, Համօն, թէ Քիւրտին ու Թուրքին
կրակն ու եաթաղանը չեն կրնար իրենց մերձենալ, առանց
խորտակելու հայ անձնուէրներու պողպատէ շղթան... Եւ
գիտնա՛լ, վերջապէս, թէ իրենց կարեկից եղբայրներուն —
կովկասահայ կտրիճ ու խանգաղատագին եղբայրութեան
— ծոցը կ'երթան, իրենց տիրական Արտատին, իրենց
նուիրական էջմիածնին անպատիր ապուէնը կը դիմեն...:

Իսկ միւսները, — ա՛հ, բիւրի՛ցս քամբաղգ մեր այն
միւս եղբայրներն ու քոյրերը, — ի՞նչ տեսան անոնք...
Չուլ՛ում, քանդո՛ւմ, մորթոտո՛ւմ, երկնքի ու երկրի խուլ,
խուժգուժ, կարծես մեղսակից լուսթեանը մէջ դաւադրուած
ու գործադրուած... Երեւակայեցէ՛ք, անգամ մը, Տրապի-
զոնի 15,000 հայութեան յուսահատական, խենդեցնող խոզ-
խողումը, որ ականատես խաւացի հիւպատոս Կօրինիին
մղձաւանջը կը դառնայ ամիսներով, և ըսել կուտայ անոր
թէ աշխարհիս բոլոր մարդակերներն ու աստուածասպան-
ներն Սթապուլ նստած են, իթթիհատի եղեռնազանգ որջե-
րուն մէջ, ուրկէ կուգան կոտորածի կրկնակի հրամանները,
դահիճներն իսկ սասանեցնող...:

Ու համատարած այս գեհնային զարհուրանքին, այս
անծայրածիր սպանդանոցին վերեւ մխիթարական գէթ խու-
սափուկ ի՞նչ երեւոյթ, ի՞նչ տեսիլք կը յաճի, զոհերուն
մթին հոգեվարքը պահիկ մը լուսաւորելու, անոր մէջէն
սփոփի փայլակ մը անցնելու համար... Հազիւ դարաւոր
Ջէյթունն իր կարապի երգը — անէ՛ծքը — կ'արձակէ հուսկ
կարճատեւ դիմագրութեան մը մէջ, ու կ'իյնայ անյարիր...
Անդին, Սերաստացի Մուրատը միայն, իր հազարեակ մը
քաջերով, Գարահիսարը — Անդրանիկի ծննդավայրը — թուրք
արիւնով կ'ողողէ, ու վերջին անգամ Տէրսիմի բարձունքնե-
րէն ձայն կուտայ... Ու դեռ Սասունը կայ, որ, Մուլի հա-
յութեան ալ ապաստան դարձած, հերոսաբար կը մաքառի,
վայրկեանէ վայրկեան սպասելով ազատարար լէգէոններուն,
որոնք մինչեւ իր ստորոտն հասեր էին երէկ...:

Իսկ հայրենի այդ կատարէն գահավիժող մեր նայուած-
քին՝ երկու աղէտակոծ ու աղիողորմ թափօրներ միայն կը

ինչ վիճակ կը վերապահէ մեզի ապագան: Սիրտ չունինք քաղաքականութեամբ զբաղելու, եթէ նոյնիսկ մեր գոյութեան հարցն ըլլար այդ քաղաքականութեան առանցքը... «Ինքնավարութիւն», «կցում», «բաժանում», ինչ կ'ուզէ թո՛ղ ան ըլլայ... Արիւն ունեցողներն արիւնին պիտի քաւեն շեշտակի... «Պիտի երթամ», կ'ըսէր առջի օր մեզի տարագիր աշխատաւոր մը... «Ո՞ւր, հոգի ջան, ի՞նչ բանի համար»... «Բանի մը հատ ալ ես սպաննելու միայն, ա՛լ անկարելի է ապրիլ», եղաւ պատասխանը...

Ահաւասի՛կ, այսպէ՛ս, ու մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք սերունդ, կէ՛ս դար, մէ՛կ դար, եթէ պէտք ըլլայ, բոլոր դահիճներուն հոգիին մէկիկ մէկիկ եզան կարգալու համար:

Թո՛ղ մարդիկ համբերութիւն քարոզեն մեզի հանգստաւէտ իրենց անկիւններէն... Դուն չի՛ պիտի հասկնաս զանոնք, մտիկ չի՛ պիտի ընես անոնց ունայն ու զառամած խրատներուն, ո՛վ վերաւոր, ամենի, անարեկիչ սերունդ, որ մարդկային վատութիւնն ու վայրագութիւնը ճանչցար իրենց խոժգուժ ու եղեռնազանգ մերկութեանը մէջ. բոլոր ձրի տեսլապաշտութիւններն ու գրքունակ իմաստասիրութիւնները պիտի տժգունին, նսեմանան քու հմայաթափ ու դաժան մտածումիդ առջեւ, ու միմիայն վրէժին, անյագ, անողոք, ապերասան վրէժին կարմիր արամբանութիւնը պիտի առաջնորդէ քու անվկանդ քայլերդ՝ ա՛յլապէս քեզի համար անարգու դարձած գոյութեան ճամբաներուն մէջ:

— «Դէպի՞ վրիժապահանջ Հայրենիքը»...

Այս թո՛ղ ըլլայ, այժմէն, բոլոր հարագատ Հայորդիներուն վերախմբումին կարգախօսը... Ուրիշ ոչի՛նչ...:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՎՇՏԱՀԱՐ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Շաբաթ, 16 Հոկտեմբեր, 1915. — Սրտէդ զարնուած, ամենէն մտերիմ համակրութիւններուդ, ամենէն խանդակաթ գործիքներուդ մէջ խոցոտուած, ընտանեկան երազներուդ փլուզումին տակ ընկճուած, ո՛վ հէզ նժդեհ Հայ, կ'երթաս գլխիկոր ու դանդաջուն, օտարութեան ովկիանին մէջ տարուբեր, նաևու մը պէս սարուածակորոյս օր ալ օգնութեան պիտի չի սպասէր, իր մօայլ նսեհին անձնատուր... Աչք չունիս հորիզոններուն համար որոնց աւետաբեր ժպիտներն իսկ — եթէ դեռ ցաթին — չեն կրնար քեզի խոստանալ վերականգնումը սեփական անփոխարինելի կո-

րուստներուդ... Անդին, հեռո՛ւն, հայրենի օճախդ է պարպուներ, պապինական ծխանդ է քանդուներ, խորտակուներ, ու ցեղին հսկայական ողջակէզին մէջ քու հոգեհատորներդ են այրուներ, ամխացելու Հայութեան զանգուածային մարտիրոսացումին անագորոյն ալիքները քու սիրելիներդ են աւեր տարեր, խնկարոյր քուրիկ մը, մեղրամսի պէս մաքրենի ու կարօտով տժգունած մայրիկ մը, կտրիճ եղբայր մը, ալիւոր հայր մը ու մատղաջ, անմեղուկ, անուշիկ ձագուկներ, որոնց համար կը տատէիր, և որոնց վերադարձի ու վերագտումի անձկայրեաց ակնկալութեանդ մէջ տարագրութեան բեռը կը թեթեւար յոգնած ուսերուդ վրայ...

Ի՛նչ, քամբա՛ղդ Հայորդի, որ՛ զուրպէթի ցուպը ձեռքիդ՝ մինչեւ Ամերիկաները քաշկուսուեցար հայրենի երգիկդ կանգուն ու պայծառ պահելու համար, որ քաղաքակիրթ համայնակուլ ոստաններու բանւորական գեհնին մէջ, մարդախօշոջ հնոցներու ու նենգաւոր մեքենաներու առջեւ քու կանանչ արեւդ խամբեցուցիր, սեւցուցիր, տարիներով, տարիներով, Երկիր դրամ զրկելու, արտիդ պատերն ամրապնդելու կամ հարկերը վճարելու համար, ի՛նչպէս խօսիլ քեզի հետ հիմա, երբ դառնամորմօք կսկիծիդ մուխը կ'ելլէ ունեզերէդ, երբ մթնցած աչքերդ հողը միայն կը փորեն և ուրիշ բան չեն ուզեր տեսնել...

Բայց կա՛նք առ, աղբե՛ր ջան, դէպի յուսալքման վիհերն այդ խելայեղ ու գահավէժ գնացքիդ մէջ, կա՛նք առ, ու լսէ՛ Հայ Կուրին որտը, որ կուգայ Հայուն գոյութեան պէս անջնջելի ու յաւիտենական Արարատին միւս կողմէն, և որ կը թուի ըսել.

— Պիտի յաղթե՛մ, փոյթ չէ՛ թէ Ձէյթունն իյնայ, Սասունը պարտուի, վանը տասն անգամ պարպուի, պիտի յաղթե՛մ...

Ի՛նչպէս պիտի տանէինք լեռնակուտակ մեր վիթխարի վիշտը, եթէ մեր տուած նորագոյն բիւրաւոր զոհերուն ծով արիւնին առջեւ, դասալքօրէն, վատօրէն, հրաժարէինք մեր գերագոյն իտէպէն, եթէ չօգեւորուէինք այլևս հայ կամաւորական խոյանքին, հայ մաքառումին մարտագոռ շեփորներովը, որոնք անտեղիտալիօրէն կը հրամայեն.

— Ի զէ՛ն, արտասահմանեան Հայութիւն, ի զէ՛ն, մին-

չեւ վերջին տղամարդը, մինչեւ վերջին եղունգն ու ակ-
ռան...

Բայց դուն կը հեծկլտաս, ո՞վ ազիզ ընկեր, գլուխդ
վեր չես առներ, չես ցնցուիր, չես պրկուիր, նայուածքդ
չես սեւեռեր ի լուր նուիրական, անդրժելի պարտակա-
նութեանց այդ կոչերուն, կարծես թէ յաղթանակներն իսկ
պիտի չի սփոփէին, չի խանդավառէին քեզ այսուհետեւ...

Ի՞նչ, այս անգամ ալ պիտի ուրանայիր դուն տառա-
պանքին մեծ ու հրաշագործ եղբայրութիւնը, այս անգամ
ալ գեղեցկորէն ու արգաւանդօրէն տառապելի պիտի չի
գիտնայիր, ինչպէս ինեսունական անիծապարտ թուական-
ներուն... Ո՛չ, ո՛չ, մեր անդաւաճան սուգը, վեհօրէն, հը-
պարտօրէն պիտի ծառանայ անբարոյացումի պղտոր հոսանք-
ներուն դէմ, պիտի հոգեւին տարամերժէ պառակտումնե-
րը, ու պիտի ստիպէ որ ամենքը պատկառանքով խոնարհին
իր առջեւ: Իւրաքանչիւրն իր վէրքը պիտի փաթթէ ընդ-
հանուր ցաւին մէջ և անկէ պիտի քաղէ միակ հնարաւոր
ամոքումը որուն կ'անձկայ.. Ճակատագրին անողորմ վճիռը
Հայութեան վերապրող մասնիկներն աւելի՛ ու աւելի՛ պի-
տի զօգէ իրարու, բեղմնաւորելով վաղուան մեր կրկին
զանգուածաւորման անխափանելի գործը, անկասելի եր-
կունքը:

Եւ եթէ տակաւին չես գօտեպնդուիր այս անպատիր
թելադրանքներէն, եթէ ազգային հաւաքականութեան վերջ-
նական յաղթանակին և Հայրենիքի վերնուաճման սխրալի
հեռապատկերն՝ այսօրուան ազջամուղջներուն կամ կարմիր
ու եղերական արհաւիրքներուն մէջէն՝ չի կրնար առինք-
նել քեզի, ո՞վ յուսահատութեան խորը ուխտաւոր, գէթ
ճանչցիր արժանաւոր կեցուածքն առնական յուսահատու-
թիւններուն:

Դարձի՛ր, նայէ՛ սեւեռաբիր դէպի ահաւոր ու ամայի
ճամբաները, ուրկէ անցան մահասարսուռ կարաւաններն
եղերաբաղդ քուկիներուդ... Տե՛ս անպատանք կմախքնե-
րու թափօրը որ անընդհատ ետ կը դառնայ սպանդի ու սո-
վաբեկ կորստեան այդ անվերադարձ սահմաններէն... Չե՞ս
լսեր աղեխարչ, խենդեցնող, երգուընցնող աղաղակը, զոր
քեզի կ'ուղղեն բոլոր այդ սուրբ ու խռովատանջ ուրուա-
կանները.

— Մեր վրէժը, մեր վրէժը, մեր վրէժը...:

ՓԱՌՔ ՊԱՐՏՈՒԱԾՆԵՐՈՒՆ...

Հինգուաբթի, 4 Նոյեմբեր, 1915. — «Բարոյական մը
կա՞յ, թէ ոչ», կը հարցնէր տարիքով ու իմաստութեամբ
ալեւոր ու բարձրօրէն բարեպաշտիկ հոգի մը, հայկական
աղէտքին ահագնութենէն ու անոր հանդէպ համամարդկային
վեհագոյն սկզբունքներու փլուզումին անդոհովն ահաբեկ,
սասանած, ուղեկորոյս:

«Բարոյական մը կա՞յ, թէ ոչ»...

Ո՞վ պիտի տայ պատասխանը խղճմտանքի այս խելայեղ
աղաղակին:

Աշխարհի հզօրներէն չէ՛ որ պիտի գար, այս ըօպէիս,
սրտապնդող ու բացարձակ վստահացումը՝ մեր իմացակա-
նութիւններն ընկճող այս անխուսափելի տարակոյսին դէմ:
Անոնք իրենց տիտանեան գոյամարտին մէջ իսկ չեն դադրիր
բոլորովին բարոյական զիջումներ, վերապահումներ, զար-
տուգութիւններ ընելէ՝ դիւանագիտութեան պարտադիր կա-
նոններուն, կասկածելի պահանջներուն ու պղտոր թելադ-
րանքներուն հպատակելով:

Բարոյական մը կա՞յ, այո՛, և զայն պահպանող ու յա-
ւերժացնող միա՛կ ուժը ջախջախուող մարդկութեան արիւ-
նագանդ տառապանքն է: Գրաւուած Պելճիքան, տրորուած
Սերպիան, այլ մանաւանդ այրեացաւեր, արհաւիրակոծ Հա-
յաստանը, — ահա՛ անվիանդ միջնաբերդերը տիեզերական
բարոյականութեան:

Պէտք էր տկար ըլլալ ու բռնաւոր ահեղ զօրութիւննե-
րուն դէմ ցցուելէ, ծառանալէ չընկրկիլ՝ ազատութեան ու
արդարութեան իտէալին սիրուն: Մեծերն իրենց շահերն ու
հսկայական տիրոջները պիտի պաշտպանէին իրարու դէմ,
դրեթէ հաւասար ուժերով: Փոքրերն իրենց գոյութիւնը
պիտի վտանգէին՝ իրաւունքին նուիրական դատը պաշտ-
պանելու համար:

Փա՞ռք պարտուածներուն...

Վասնզի այս պարտութիւնը բարոյական մեծագոյն յաղ-
թանակն է արդէն, ու անպատիր գրաւականը՝ վաղուան
անվրիպելի հատուցումներուն:

Թո՛ղ ողջակէզին անհունութիւնը չի խանգարէ հաւատքը
մարտիրոսացող ժողովուրդներուն: Քաղաքակիրթ մարդկու-
թիւնն երախտապարտ պիտի մնայ իրենց առ յաւէտ, վասն

զի իրե՛նք եղան որ համաշխարհային գերագոյն տալանապին մէջէն փրկեցին մարդկային բարոյականը :

Ու փա՛ռք քեզի, ո՛վ խաչուած ու խոցոտուած Հայութիւն, որ նենգ ու շահամոլ Արեւելքի մէջ, ուր անբարոյութիւնն իր գազաթնակէտին հասաւ, չի դաւաճանեցիր դաւաւոր վսեմ տեսլապաշտի քու սրբազնասուրբ աւանդութիւններուդ, դասալիք չեղար քու ուխտիդ ու կոչումիդ եղբրական ճամբէն, ու անգամ մըն ալ, անվարան խիզախումով, ճակատդ ու լանջքդ տուիր սանձարձակ բռնութեան ամենէն ապերասան մոլուցքին դէմ... Ի՛նչ հոյակապ վերելք է ան, որ քեզ անա՛ տտուածացումի ամպածրար բարձունքներուն կը տանի, մինչ ասդին մէկ քանի սարկատես աչքեր կոչկոճամահ քու քաշկուտումդ միայն կը թուին նշմարել :

Փա՛ռք քեզի, անմահ ու դիւցազնական ցեղ, որ հակառակ կուրծքիդ իջնող հարուածներուն ու կոնակէզ սագրըւած դաւերուն, հակառակ քեզ շրջապատող մատնութեան, ուրացումի ու չարակամութեան մուսլ ուժերուն, տիրաբար ապացուցիր թէ շա՛տ վեր էիր ու անհամեմատօրէն աւելի արժանաւոր քան փրկութեան ճակատագրական ուղիին մէջ քեզ կանխող ժողովուրդները :

Գուե՛ղ չեղաւ՝ տիեզերքն իր պորտէն փրթած դաւանող Հելլէնին ունայնամիտ ու անարի վարմունքը, քուկդ չեղաւ եսական ու շիացած Բուժէնին առնազուրկ կեցումքը, դուն պիտի չի կրնայիր երբէք հաշտուիլ այն հայրասպան ապերախտութեան հետ, որուն Պուլկարը տարուեցաւ, արկածախնդիր իշխանէ մը մոլորեցուած :

Դո՛ւն, հալալ հացի, մայրական հարագատ կաթի ու անխորդախ բարեկամութեան բարոյականին ամէ՛ն գնով հաւատարիմ, կտրիճ, ազնիւ, վեհա՛նձն Հայութիւն, անգամ մըն ալ մեծցար, հսկայացար քու տանջանքներուդ մէջէն, եւ քու հոգեկան լուսաչող հմայքիդ առջեւ Արեւելքը տըժգունեցուցիր ու Արեւմուտքն անա՛ ամօթահար ու խղճահար կը շիկնեցնես :

Վե՛ր առ, հպարտօրէն, չարչարանքով գեղեցկացած գլուխդ, ո՛վ մեր սիրական ցեղը, սրբէ՛ աչքերէդ սուգի, դաւանութեան ու կատաղութեան արիւն-արցունքներդ, ու քու պողպատէ կամքիդ պրկումներուն, քու գերմարդկային

մաքառումներուդ մէջէն գօտեպնդուէ՛ լսելով մարդկային խղճմտանքին ձայնը, որ վաղուան յաղթանակդ կ'աւետէ քեզի .

— Փա՛ռք պարտուածներուն... :

ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԶՈՀԱԿՈՅՏԻՆ ԱՌՁԵԻ

Շաբաթ, 8 Նոյեմբեր, 1915. — Խօսքը չընենք, ըսինք, մեր ներսիդին կոտորացող այս գերագոյն կսկիծին, հարիւր հազարներով մարտիրոսացող ամբողջ ցեղի մը հոգեվարքին հանդէպ քանի մը տասնեակներու նսեհօվն առաւելապէս անդհուել, խոչտանգուող եղբայրներու եղբրական ամբոխին մէջ եղբայրակիցներ փնտուել ու անոնց մասնաւոր սուգովը սեւաւորուիլ՝ գուցէ ամպարշտութիւն պիտի ըլլար, մտածեցինք... Ու մեզի թուեցաւ թէ բիւրաւոր ուրուականներ մեր խղճմտանքին դէմ պիտի ցցուէին, դառնօրէն բողբելով . «Մե՛նք ալ հոգի ունէինք, մեզի՛ ալ մեղքցէք...» :

Բայց ի՛նչպէս լուի, և ի՛նչպէս պիտի չի ներէիք մեզի, ո՛վ մեր անհամար, անմոռաց, նուիրական նահատակները, ի՛նչպէս պիտի չի ներէիք մեզի, որ՝ առանց ձեր արիւնն աչքերնէս ու ձեր վրէժը կուրծքերնէս թօթափելու՝ մեր ու ձեր սիրելի այն գերընտիր հոգիներուն զոհակոյտին վրայ սեւեռէինք պահ մը մեր խելայեղ մտածումը :

Մարդիկ, կիներ, մանուկներ հարիւր հազարներով կը տանջուին, կը քաշկուտուին, կը կոտորուին, և ասոր համար պէ՛տք է որ լանք, ողբանք, գալարուինք ցաւով, բայց երբ ազգին ընտրանին է որ կը յօշոտուի, կը խաչուի, կը չքանայ, խենդենալը բան մը չէ՛ :

Գուժկան մը կ'ըսէ . «Սեւակն սպաննեցին, վարուժանն ալ, որ անոր հետ էր, կը կարծուի թէ սպաննած են... Ակնուներն, Խաժակը, Զարդարեանը, Մինասեանը՝ Տիգրանակերտ, Օտեանը՝ Հալէպ, ուրիշներ՝ Զանգըրը քուեցան, չի գիտցուիր թէ ո՞րչ են կամ մեռցուած»... Զօհրապին մահաբօթն ունէինք արդէն, վաւամեանին սպաննութիւնն ալ այս օրերս հաստատուեցաւ Տփղիսէն հասած տեղեկութիւնով մը... Եւ դեռ ո՛րքան թանկագին գլուխներ կան որոնց վերապահուած բաղդին համար մեր սիրտերը կը դողան :

Հայութիւնը տառապանքի դարերուն մէջէն ո՛րքան տաժանեղէ, ինքն իր մէջ զտուել, բիւրեղանալ նկրտելէ յետո՛յ էր որ իր տրորուած, պղտորուած էութեան խորէն

իր Սահակ-Մեսրոպներուն, իր Նարեկացիներուն ու Շնորհալիներուն ոսկի հրակը վերագտեր, ու վարուժան մըն էր յղացեր իր ամենասուրբ, ամենալսեմ գեղեցկութեան աղբիւրը վերստին հոսեցնող, իր վեհագոյն գանձը, իր լեզուին փառքը վերականգնող... Եւ երբ՝ ըղեղին մէջ ազրէ ու գիջութենէ ուրիշ բան չի կրող տաճիկ գաղանի մը աստուածասպան վայրագութիւնն եղեռնի ճամբաներուն քարին, ժայռին դէմ ցրեխ-ցրեխ կ'ընէ հայ հանձարը, ինչպէս չի պոռալ անդարմանելի կորուստին գոհուակ մորմոքէն աղեղալար... Ի՞նչով ազգ մը ազգ է, իր թուական հոծութիւններովը, թէ իր ծնուցած մեծ տաղանդներովը... Ժողովուրդ մը ո՞րքան տաժանք պէտք է քաշէ Զօհրայ մը, Ակնուհի մը հասցնելու համար միջակութիւններու, շնչատութիւններու անպակաս շարքերուն մէջէն, ու միթէ մեր աւելի բազմաւոր հարեւաններն ունեցա՞ն այդ քալիպոսով գործիչներ, որպէսզի մեզի մեղադրուէր անոնց անհետացումին մեզ առթած ահաբեկումը:

Բայց հասկցա՞նք, արդեօք, ամե՛նքս ալ, թէ ի՞նչ տարին մենէ, երբ թրքահայ մտաւորականութիւնը զանգուածով տարազրեցին, դէպի սպանդանոց քշեցին...

Որո՞նք ըսել, որո՞նք հետ բաժնել այս վիշտը, եթէ ոչ՝ ամենէն առաջ՝ հայ վերապրող մտաւորականութեան, որուն ցանցառ մնացորդները պարզ դիպուածի մը կը պարտին իրենց եղբարբաղդ եղբայրակիցներուն ահաւոր վախճանէն զերծ մնացած ըլլալին:

Բայց դո՞ւք ալ, ընկերներ, ինքզինքնիդ չէ՛ք շնորհաւորեր, անչո՛ւշտ, այս դիպուածական վրիպումին համար, որ անխուսափելի խղճահարութեամբ մըն ալ կը համակէ ձեր վշտահար հոգին:

Ըսէ՛ մեզի, դո՛ւն, պատուական ու վաստակաբեկ Երամեան, որ մեր մէջ, մեր հագիւ ալլալող լճացումին մէջ ես այսօր, որբի մը պէս մեկուսի, ըսէ՛ մեզի, դուն որ աղեխարշ ճիչերովդ մեզ կը խշխշացնէիր երէկ «Արմէնիա»ի էջերէն կոծելով վանի ու վանիդ աւիրին վրայ, ըսէ՛, ո՞վ դժբաղդ վտարանդի, պիտի չի նախընտրէր հոն ըլլալ, քուկիներուդ կողքին, աղէտի ու զահանդանքի օրերուն... Մենք կը տեսնենք քեզի, որ քու աչքերուդ անստաման գիշերին մէջէն ճամբայ կ'իյնայիր գահավիժօրէն, գաղթի

ցուպը ձեռքիդ, հայրենի առապարներէն հեռասպառ կը քաշկոտուէիր, փոսերն ի վար կը դարահոսէիր, ու դարվերներէն կը մագլցէիր... Խուճապի մէջ քեզ կորսնցուցած աշակերտներդ յանկարծ քեզի կը գտնէին փախուստի ճամբուն վրայ, շուրջդ կը բոլորուէին, թեւերէդ կը բռնէին, և երբ պարտասած զգայիր, դո՛ւն, անխոնջ քալո՞ղ, քեզ ուսամբարձ կը տանէին դէպի Արարատի ամենընկեալ ապաւէնը... Ըսէ՛ մեզի, մեծարելի՛ Երամեան, միթէ՞ նուազ անագորոյն պիտի չըլլա՞ր տանջանքի այդ թափօրին մէջ հայրենի քայքայումին համար զգացած վիշտդ՝ քան հոս, ապահովութեան հանգրուանին վրայ, ուր բոթարեր կուռնկներուն կը սպասես մխալով, մխալով...

Չէ՛, հայ մտաւորական զոհակոյտին առջեւ, թո՞ղ մեր եղբայրակիցներուն անգթօրէն չի վերագրուի իրենց մորթին աղէտագերծման ներքին եռական գոհունակութիւնը: Ի՞նչ մնաց անոնց, — մեծ յոյսէն գատ որ ամենուս դեռ ուժ կուտայ «քալելու մինչեւ իրիկուն», ինչպէս կ'ըսէ Պօտլէր,— ի՞նչ մնաց անոնց որ իրենց շատ տեսնէիք իրենց կաշիներուն պահպանումը, ի՞նչ մնաց հայ կեանքին և հայերէնին այդ բանտարկեալներուն:

Երէկ, անոնց աչքերը ձերբազատուած վանին դարձեր էին անձկայրեաց ու երանաւէտ յառումներով: Հայրենի մեծ ոտտանը կը ժպտէր իրենց մայրական բարեգութ ու պաշտելի ժպիտով մը. ի՞նչ յոգնաբեկ գլուխներ երագեցին երթալ, հանգչիլ հոն... Հայ Գաղափարին ուխտաւորներուն համար ի՞նչ հոգեպարար ծոց էր որ կը բացուէր՝ Հայաստանի մտաւորական վերածնութեան խորհրդակիր վարագրին ստորոտէն...

Հայ մտաւորականութեան այս որբացումն ապրած պիտի չըլլան անոնք որ Հայ Գաղափարն իրենց քրտինքովը պայծառացնելէ ետք՝ իրենց արիւնովը ալ զայն օծեցին, անմաճառացնելէ հետք՝ իրենց արիւնովը ալ զայն օծեցին, անմաճառացնելէ հետք իրենց հաւատքի հուսկ խանդաղատում մը եղաւ, գերագոյն սփոփովը այն մտածուածին թէ իրենց ետին անկորնչելի սրբութիւններ կը մնային:

Տարսոնէն իրենց գիւղերը վերադարձող Սուէտիացիներ, որ յետոյ Մուսա Լերան դիւցազներգութեան պիտի մասնակցէին, Ատանայի դաշտին մէջ Զօհրային կը հանդիպին, որ կառքով կ'երթար ոստիկաններու հետ: Կ'ուզեն

խօսք ուղղել իրեն, բայց Զօհրապ մատով նշան կ'ընէ իրենց որ լռեն: Բայց երբ կառքը Հայերու կարաւանէն բաւական կը հեռանայ, Զօհրապ չի դիմանար, ու աչքերն արցունքով լեցուած, կը ցցուի ետին կը դառնայ ու կը պոռայ. «Մնաք բարձր, Հայեր»...

Ատանայի դաշտին ամայութեան մէջ կորսուած այս ազազակը դարերով պիտի չարձագանգէ՞ հայ հոգիին մէջ... :
Յ Ե Ղ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Ը

Շաբաթ, 27 Նոյեմբեր, 1915. — Թրքական գեհնէն անվթար դուրս եկող մըն է, հայ ամերիկեան քաղաքացի մը, որ կը պատմէ.

— Աֆիօն-Գարահիսարի մէջ հանդիպեցայ անոնց, Պարտիզակի, Իզմիտի, Ատաբազարի շրջաններու հայ տարագրեալներուն, որոնք քանի մը օր կանգ առնել թոյլատրուելէին հող, իրենց Գողգոթայի անձանօթ ճամբուն այդ հանգրուանին վրայ... Ճանչնորներ ունէի մէջերնին, ու շատերու հետ տեսակցելու պատեհութիւն ունեցայ, երբ՝ կաշառքի փոխարէն՝ պահ մը արտօնուելով ոստիկանական հսկողութենէ զերծ մնալ, կը հիւրասիրուէին տեղացի ազգայիններէ, որոնք՝ իրենց կարգին՝ երկու շաբաթ վերջը պիտի քուէին քաղաքէն, իրենց այցելուներուն բազմն երթալ բաժնելու... Է՛յ, ի՞նչ պիտի ըսէք, եթէ ձեզի յայտնեմ, թէ զանգուածային այդ անագորոյն մարտիրոսացումին մատնուած Հայերը բնա՛ւ ընկճուած, բարոյալքուած չէին, հակառակ իրենց կրած անհնարին զրկանքներուն ու տառապանքներուն... Բայց դուք պիտի սահմուկիք, գիտե՛մ, եթէ աւելցնեմ, թէ անոնք ուրա՛խ էին, ուրա՛խ, խուլ, թագուն, անզուսպ ուրախութեամբ մը, որ տարօրինակ շառափ մը կը գնէր, երբեմնակի, անոնց նուազկտ ու փոսացած աչքերուն խորը, և որ խենդեցողներուն ահաւոր ուրախութիւնը պիտի թուէր ինձի, եթէ չի բղխէր անդունդի չափ խորունկ — փոյթ չէ՛ թէ անդունդի պէս ալ դատարկ ապացուցուելիք — հաւատքէ մը, զոր շօշափեցի, շնչեցի, ապրեցայ, և որուն հոգեպարար սփոփանքին անձնատուր եղայ իրենց հետ... Անոնք կը տրամաբանէին ինձի, թախանձագին. «Թուրքը մեզի չի պիտի ընէր այս սոսկալի զուլումը, զոր Համիտն անգամ չերազեց, Թուրքը մեզի չի պիտի հասցնէր այս գարհուրելի պատուհասը, եթէ կովկասի ու Հայաստանի

Հայերէն մահացու հարուածներ ստացած չըլլա՛ր իր գըլխուն... Հապա՛, չի լսեցի՞ք, հայ կամաւորներու բանակը մինչեւ Կեսարիա հասեր է յաղթական, բոլոր ներսի հայաբնակ քաղաքները գրաւե՛ր է... Հարկա՛ւ, ճանր՛մ, բանն ասանկ չըլլար նե, Թուրքերը մեր տունը-տեղը քանդելու կ'ելլայի՞ն»... Ու այս խօսքերն արտաբերած ատեննին՝ կայծկլտող ըրբերու ի՞նչ հեշտագին քթթումներ, Աստուած իմ, ի՞նչ սարսուղին ու աղեխարշ ժպիտներ... «Մեզի մէ՛կ բան կը մնայ ընելիք, կը կրկնէին անոնք շարունակ, մեզի կը մնայ ապրի՛լ, ապրի՛լ, տեսնելու համար Թուրքին վախճանը, որ մօ՛տ է, մօ՛տ է... Այո՛, ամէն ձեզ պիտի թափե՛նք որ ապրի՛նք, ու Տաճիկին կործանու՛մը տեսնա՛նք»... Ու այս ինքնարաւ, անվկանդ, անպարտելի վստահութեամբ է որ անոնք շարունակեցին իրենց տուայտանքի ճամբան, քաշկուտուեցան կայանէ կայան, վայրագ ոստիկաններու մտրակներուն ու կիցերուն քամակ տալով, մինչեւ դաժան հեռուներն ու մարդակուլ խորերն Անապատին... Քսան տաբի առաջ, Պապ-Ալիի ցոյցին, Երջանիկ Մեռնողներն ունեցեր էինք, անո՛նք՝ որ Կեղրոնական Բանտին արիւնազանգ սալարկներուն վրայ հոգինին աւանդեցին՝ «Մարտանաւերը մտա՛ն, մարտանաւերը կը մտնա՛ն կոր» հոնդալով... Այսօր դարձեալ հազարներով խնդումներս նահատակուողներ ունինք որոնք Անատոլուի առապարներուն ու Միջագետքի տափաստաններուն վրայ կ'իյնան՝ «Թուրքը կը կործանի՛ կոր, Հայը յաղթե՛ց» հեւալով...

Այս պատմութիւնը ծունկի չի՞ բերեր քեզի, ո՞վ սկեպտիկ եզրիպտահայ, խելայեղ խանդաղատումով՝ ծունկի չի՞ բերեր քեզի՝ ցեղիդ խնկելի, երկրպագելի, անմահագործ հաւատքին առջեւ... :



Ո՞Ր ԺԱՅՈՒՆ ՎՐԱՅ...

Լայն ու խորունկ ձորահովիտ մը կրճտին,
Լեռանցամեջ դաշտի մ'անկիւնը ծածուկ,
Ուր դրժնիկները կ'անին ա'յնքան հեշտին,
Կայ թրժարան մը բռուտի հին ու ցածուկ.

Իր պատրասած կողերէն՝ ծուխն ու շոգին
Ներքին հրաբխի մը հե'ւքը դուրս կ'առքերեն,
Խանձողներու մինչ լափլիզող բոցն ուժգին
Վեր կը խուժէ յասակին լայն ծերպերէն:

Բիլ երկինքին սակ կը մըխայ հնոցն անվերջ,
Անհունութեան այս ժրպսուտին առջեւ պերն
Ըսպառելով ուժերու մթերք մը հրանուս:

Այսքան վասնում գեղեցկութեան ու ջանքի
Պիտի յետոյ ուրեմն, աւա՛ղ, հո՞ն յանգի՝
Որ այդ կրակէն ծնին անօթներ բեկանուս...

* * *

Լուռ մենութեանը մեջ հոգւոյն իմ շխուր,
Տրխելո՞՞ մարմնոյ այս ծածկոյթին սակ խաւար,
Զոր կը խոցեն վիշտի սլաֆներ ա'յնքան սուր,
Երագներու հրդեհն մը կայ բոցավառ.

Խաչուած յոյսեր հոն միշտ իմ սիրտը կ'ըլկեն,
Բայց հաւաստիս կը յառնէ միշտ բոցն հրճոր,
Ու բրտնաբոր եռանդի բո'ւորն կրակէն
Կը ջրդեղուի կամֆիս մեհաղն օր քան զօր.

Ու մինչ օրերն իրենց վազֆին մեջ անհետ
Ամեն ժամ մաս մ'անձեւ կ'սանին իրենց հետ,
Ապագային յառած՝ կ'ըսեմ իւրովի.

Յոյսով՝ սերով թրժուած դրժխեմ այս հոգին,
Օր մ', երբ յանկարծ առկայծի բոցն իր նրագին,
Ո՞ր ժայռին վրայ պիտի արդեօք փրճորուի...:
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

“ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԾԱՌԸ”

Գարեռու բեռան սակ կրքած, վասո՛յժ,
Ինչպէս ծերունի մը կորաքամակ,
Հինաւուրց ծառն հոն կանգնած է մինակ
Զոյգ անբացուպերն իր բրնձած, ըզոյշ.

Արմաս՝ բուն՝ նիւղեր գերծած է համակ
Այցելուներուն հաւաստք սնոսի.
Ու ծամ՝ ծոպ՝ ծըւէն թլացֆներու հնոսի՝
Կ'ծածկէ մերկութիւնն ըզգես մը գրգրեակ.

Բայց կ'ապրի ան դեռ այդ կիզիչ սօրին
Մեջ կեղեւազուրկ. (մօտք, քայլ մ'անդին,
Իր գրոյցին կանգնած սահարն կ'երեւի):

Ու գօս մարմնոյն ծայրը բարձրականգուն,
Ուր չը հասնիր բնաւ կրտրոցը մարդուն,
Կը շարժի դալար փունջ մը սերելի:

* * *

Ու ես կը խորհիմ այն բազմադարեան
Եւ պատկառելի երկնաբերձ ծառին,
Զոր մարդիկ կրօնք կը կոչեն, որ հին
Է որչափ այս կեանքը երկրիս վըրան.

Որուն վրայ ամեն ցեղ՝ սերունդ՝ աղանդ
Երկաթի նանկով իր կիրքն է գրծեր,
Եւ կեղեւաքափ մարմինն անոր ծեր
Ծածկեր իր ձեւին բողովն հընաւանդ.

Որ սակայն այդքան կրտսանֆներու սակ
Անմեռ՝ մարդկային ազգաց բովանդակ
Կ'ընծայէ մեհաղիւր միշտ քաղցր հովանի.

Զի երկնաճաղորդ ծայրն իր բարձրութեանց,
Անմասոյց մարդոց հեռին մոլեխանձ,
Ասուծոյ շո'ւնչն է որ կը ծածանի...:
ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՆՈՐ ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ

Ազգային վերերան գործիչ մը եւ հայ բանասիրութեան ամենահեղինակաւոր դեմքերէն մին, որ իր վասակաբեկ կեանքին վերջալոյսը կ'ապրի անդրասլանեան փերուն վրայ, Հայ Կուիլին հեռաւոր «փայլակնացայ» գեղեցկութեան խանդավառուած, Հայուն նոր «Հաւասամբ»ը՝ ոսկեգարեան ընկիր գրաբարով՝ գրեր ու ինձի դրկեր եր վերջերս, անձնական սիրուն նամակի մը հետ, որմէ չեմ կրնար չարսագրել հզօր հաւասփի սա՛ կազդուրիչ խօսքերը. «Մեզ կը մնայ միանալ ու արիանալ «ընդհանուր աղէտին դէմ: Քաջալերեցե՛ք, վառեցե՛ք, «եղկերացուցե՛ք սիրտերը: Հայոց աշխարհին վրայէն «բաս են անցեր այսպիսի վայրկեաններ: Յուսալից եմ «որ ասոր ալ պիտի տկանք: Կը հաւասամ որ այս ազգը «ապագայ ունի, եւ չկայ իշխանութիւն, գօրութիւն որ «արգիլէ հազարաւոր սարիներու պատմական ընթացքին «այս անվկանդ յառաջիադացումը: Միայն քէ գիտե՛ «նա՛նք մենք մեր ամբողջութիւնը չխրամասել»: (Մ. Հ.)

Հաւատամք ի սուր փայլակնացոյտ, յամենաբաւն, յամենակալն որ զիդձս ընու, որ զսիրտս մխիթարէ, որ զվրէժս լուծանէ, որ զամօթ և զնախատինս բառնայ, որ զբռնութիւն վանէ, որ զազատութիւն թագաւորեցուցանէ: Որ դատ առնէ որբոյն և այրւոյն, որ զիրաւունս պաշտպանէ զգրկելոյն, որ զարտասուս սրբէ զանիրաւելոյն. որ անգործ տայ խոշտանգելոյն, յոյս՝ լքելոյն, և հոգի նուաղելոյն: Որ էրն, որ է և որ միշտ լիցի ապաւէն հալածելոց, արգար դատաւոր իրաւանց և անքոյթ ապաստան նեղելոց:

Հաւատամք ի հրազէնս, ի հրանիւթս, ի հրացիրս և յամենայն որ ինչ միանգամ հուր իցէ և հրացոյտ և ոգի և շոգի, ևս և հնարք ազգի ազգիք եթէ տարրեղէնք և եթէ արուեստայօղք:

Հաւատամք յամենայն ազգողական զօրութիւնս, եթէ ընդ օգս սաւառնիցին, եթէ յերեսս երկրի սուրայցին, եթէ ընդ երկրաւ զօղեալ և կամ ընդ ջրով սուղեալ յայտնիցին:

Հաւատամք և ի հոգի զօրութեան, յերկնածիրն ազգեցութիւն որ վառէ զսիրտս, որ ամբառնայ զբազուկս, որ ուղղէ զընթացս: Որ մղեաց զՄովսէս սատակել և ընդ աւազով թաղել զՅփապտացին որ խուէրն զիսրայէլ: Որ զօրացոյց զԴաւիթ միով չնչին պարսաքարիւ զճակատ հերձնուլ զանարդիւն Գողիաթայ: Որ վառեաց զՄամիկոնեանն վարդան փոքու զնդաւ զգիմի հարկանել բիւրուց բիւրաւորաց Յազկերտի, և զՎահան՝ երեսուն և եթ արամք ընդդէմ ելանել երկից և չորից հազարաց Սիւնի գնդին Գրիհոնի և խորտակել ցրել զզօրութիւն Արեաց: Որ և զարդիս շարժէ զկորովի բազուկս քաջարի մանկուոյն Հայոց խնդրել զկուտակեալ լեռնացեալ վրէժս դարուց:

Իսկ որք ասեն եթէ զառանցանք են այս ամենայն և եթէ մարթի առանց իսկ սրոյ և հրոյ հասանել ի կէտ նպատակի, ի ձեռն ողբքանաց և պաղատանաց և ստորաքարչ զալարմանց առաջի մեծամեծաց, նոքա յիմարք են և կոյրք և ի դիւէ իջարամանուոյ հարեալք: Որոց խաւար են միտք նոցա և անդգայ սիրտք. որոց ոչ զմարդկութենէ ինչ փոյթ է և ոչ զմարդկապէսն կելոյ. այլ անձնգիւրք, վեհերոտք և զօշաքաղք, գաշինս գողցես կուեալ ընդ անարգ ստրկութեան, զամենայն հնարս հնարին զի մի՛ ինչ իւրք ստնանիցէ ամօթապարտ անգործութեան իւրեանց. նմին իրի և զամենայն բաջաղանս կարկատեն զի մի՛ գուցէ վտանգ ինչ ուստեք անիծակուռ արկեղ իւրեանց հասանիցէ:

Չայնպիսիսն նզովէ ընդհանուր համօրէն ազատ մարդկութիւն և Հայաստան աշխարհ գլխովին:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս զօրութիւն աստուածեղէն որ զամենայն յամենայնի ազգեցուցանէ ի վայելս աստուածապարգենս ազատութեան, երկիր պազանելով սրոյ և հրոյ և ամենայն զինուց և սարուց յորոց միայն ակն ունիմք կեալ տեւել և բաւել ազատ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Կեցցէ՛ ազատն Հայաստան:



ԵԳԻՊՏԱՆԱՅ ՊԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ԱՐՇԱԿ ՖԵՐՄԱՆԵԱՆ

Յստակ ու յանկուցիչ դիմագծութիւն մը՝ որ եգիպտահայ ընկերական ու հանրային շրջաններու ընթացիկ համարումին պիտի յանձնարարէր — «չնորհքով» երիտասարդը, «փայլուն» գործի մարդը՝ «յարգելի» երեսփոխանին մէջ, բայց որ զիս կ'առնէինքնէ բոլորովին տարբեր ու մտերիմ հրապոյրով մը:

Եգիպտական հողին վրայ, առաջին յատկանշական հանդիպումներէս մին է որուն կ'անդրադառնամ, յանձին Արշակ Ֆերմանեանի, գոհունակութեան անձնական, գրեթէ եսական շարժառիթով մը:

Եթէ քովս գտնուէր այս լեզուէն հասկցող մը, պիտի ըսէի անոր, մատնանշելով Քոտաքի արեւելեան ընդհանուր տնօրէնը.

- Ահա՛ մէկը որ մեր դատը շահեր է...
- Ո՞ր դատը...
- Մեր մտաւորական սերունդին դատը, parbleu !...

Բացատրե՛մ: — Թրքահայ առեւտրական դատակարգը բրտորէն վարժեցուցեր էր մեզի վերէն նայելու մեր մտաւորականութեան վրայ և ինքնարաւ մեծամտութեամբ մը դաւանելու թէ մինք ի ծնէ ու անդարմանելի տիրացուներ էինք, անընդունակ էապէս իր նիւթական նուաճումներուն, թէ մեր մէկ կողմը սախաս էր, և հետեւաբար անկարող պիտի ըլլայինք՝ թուղթի աշխարհէն դուրս՝ իր տիրապետած գործի ասպարէզին վրայ՝ անսայթաք քալելու, «գիրք»ի մը հասնելու, «մարդ ըլլալու»... Մենք նախասահմանեալ ռաբէներ էինք՝ մէկ խօսքով՝ մեր հին ու նոր կոկողավիզ ազայութեան աչքին՝ որ «վերացական» բաներու համար մեր տածած տարփանքը ցաւագարութեան անվրիպելի ախտանիշ մը կը համարէր մեր կողմէն: Կարծես թէ մեր հասարակութեան մէջ անվիճելի հեղինակութեան մը անունով օրինագրուած ըլլար թէ «գրական մարդ» կոչեցեալներու քարեկորին բարոյա-հոգեբանական կեանքին սահմաններէն պէտք է տարամերժուէր մտաւորական ամէն հմայք ու համակրութիւն...

Եւ յետոյ, դէմդ ելող որեւէ շուկայիկի մը կողմէ վրադ ձգուած զիջողական, գրեթէ շնորհաբաշխ նայուածքը կայ, որ կարծես ըսել պիտի ուզէր. «Դուն հարկաւ չէի՞ր կրնար ինձի պէս խաւակալ մը ըլլալ... Անշո՛ւշտ, ես բարթին ոսկիի մը քավլու խաղալու, զոյգը քավարիի մը գուլպայ հագնելու,

և կասպարինաթօ (?) ճաշելու իրաւունքն ունիմ... Դո՞ւն ալ պիտի փորձուէիր, պիտի յանդգնէիր այս յաւակնութիւններէն մին կամ միւսն ունենալ... Բայց ես ուրիշ խմորէ եմ, սիրելի՛ս, վերի յարկին...» Զէ՛ք կրած, աչքերնուդ, լաթերնուդ կամ փողկապնուդ վրայ, այս հոյակապ ու ցնորատուօրէն պարապ նայուածքը մեր կարգ մը աղաներուն ու միւսիւներուն, որոնք մարդավայել կենցաղի ամէն մենաշնորհ իրենց կը վերապահեն, և սահմակելու ձեւեր կ'առնեն երբ մտաւորական մարդը չի խոնարհիր, չի խպլիկնար իրենց առջեւ, այլ հաւասարէ հաւասար կը վարուի իրենց հետ... Գասն տարի առաջ, տղայ ըլլալէ հազիւ դադրելու վրայ, Մանչէսթըր, Սիթիի նշանաւոր մէկ ճաշարանը, յաճախ, ամբողջ շաբթուան մը ապրուստս մէկ-երկու նիստի մէջ կը վառնէի, պարզապէս որովհետեւ ցորեկները հող կուգային մեր մեծահարուստ վաճառականները, մէյ-մէկ սանտուիչով փորերնին խարելու: Ես՝ գինիով օծուած սարդանաբաղեան ճաշի մը կը բազմէի իրենց առջեւ, ըմբռնանա՞մ հիւթազեղ համադամներովս, ձեռքիս կարմիր բաժակովն ու գրեթէ պատառաքաղովս աչքերնին կը մտնէի, զիրենք գայթակղեցնելու, շուարեցնելու, ահաբեկելու այս կեցուածքիս մէջ գերերջանիկ վայելք մը գտնելով... Իրիկունը, այս տեսարանը միասին քնարերգօրէն վերարտագրելով, կը ցատկըռտէինք, կը թուրուրայինք Շաքլլին հետ, իմ վաղածուրիկ անմոռաց բարեկամիս, այն զմայլելի տիրացուն, որ՝ գրագէտի իր անգուգական տաղանդով՝ վրդովիչ առեղծուածը դարձեր էր մանիֆարուբայի ու պիզնետի այդ դաժան միջավայրին, և որ, ան ալ, մտաւորական միեւնոյն վառարանէն — Պէրպէրեանէն — կուգար, ուրկէ պիտի գային Արշակ Ֆերմանեանները, ուրկէ եկեր էր Լեւոն Բաշալեանը, ուրիշ հմայքոտ տիրացու մը, որ այնքան երես գործի-մարդ մը պիտի ապացուցանէր ինքզինքը՝ Տիկին Գրականութեան հետ խզուելէն յետոյ...

Այս վերջիշումներու շարքը պիտի կրնայի երկարել, պիտի կրնայի տակաւին անուններ յիշատակել, որոնք պիտի աւելի՛ իրաւունք տային ինձի պնդելու, այո՛, թէ մենէ ամենէն գրքունակն իսկ պիտի կրնար գործի մարդին մէջ բան մը ըլլալ, եթէ հայկական կեանքի ամեհի յորձանքներն իր մտաւորական ու հոգեկան խանդաղատումներէն օգտուելով՝ զինք ուրիշ ուղղութեամբ անդարձ քշած չըլլային: Ինձի համար, կը խոստովանիմ, ո՛չ միայն հաճոյք մը, այլ տեսակ մը բովանդէ էր՝ կենսապայքարի փոթորիկի մը մէջէն՝ հանդիպիլ հոս իմ մտաւորական զարթնումի պարտէզէս — «Մարքօին պախչայէն» — եկողի մը, որ այս հրատարակին վրայ այնքան տիրաբար հասած և վայելուչ դերք մը բռնած ըլլար մերիններուն և օտարին ալ առջեւ:

Արշակ Ֆէրմանեան եգիպտահայ մեր այն հաղուագիւտներէն է որոնք՝ առանց բռնապրօսիկ ծեփծեփումներու՝ մտաւորականը կ'ապրեցնեն առեւտրականին մէջ, զուրգուրտ նախանձախնդրութեամբ մը կը պահեն իրենց իմացական շահագրգռութիւնները, նիւթը մագիստրարար կը ձեռնեն, բայց չեն դադրիր իտէալով — «վերացական»ով — ապրելէ, կեանքին նպատակը չեն տեսներ սոսկ անհատական բարձրութեան այլամերժ հետապնդումին մէջ, այլ հանրային այլասիրական մտահոգութիւններուն կը բերեն ինքնամատոյց ու սրտագին մասնակցութիւն մը:

Կը հասկնամ որ Ֆէրմանեան մեր տեղական ազգային ընացումէն ծայր տուող անակնկալ յայտնութիւններէն մին եղած ըլլայ: Եգիպտահայ «պատկառելի» ժողովականութեան կանաչ սեղաններուն շուրջն իր մերձեցումով զգալի դարձող գիտակից, տրամաբանող ու յստակատես ուժի մը ներկայութիւնն անտարակոյս ոմանց պիտի առթէր «Ա՞ս ուրկէ բուսաւ»ին զարմանքը: Բայց Արշակ Ֆէրմանեաններու — եթէ իրապէս յոգնակի ըլլային — աշխատակցութիւնը կազմուելի չունէ մը, բարեկարգիչ մեթոտներ, արեւմտեան հով մը պիտի բերէր արեւելեան գիւանակաւն բուքինի ծթած մթնոլորտին մէջ որ Պուլազն ու Պէնի-Սուրէնը կը կազմեն «ի սկզբանէ անտի»:

Մալե՛՛, այդ հրաշափոխութիւնը մէկ օրէն կամ մէկ տարիէն միւսը չի կրնար կատարուիլ, տրուած ըլլալով մեր տեղական բարքերուն եզադանգաղ հոլովոյթը, կը բաւէ սակայն որ ան սկսի գոնէ:

Մեզի կը մնայ, այն ատեն, մազթել, որ Եգիպտահայն իր վարչական տիրոյթէն ներս հետզհետէ շահի անհատական արժէքներ, որոնք Երեսփոխանական թէ՛ Քաղաքական, Կարմիր-Պաշի թէ՛ որ և է Հոգաբարձական պատասխանատու գիրքերու մէջ մեզի չընծայեն դասական «ազգայինճի»ին աւելի կամ նուազ նոր ու համակրելի նմոյշները, այլ համայնքն օժտեն — ինչպէս Արշակ Ֆէրմանեանի պարագային — իր շահերուն անձնուէր ու զանոնք տիրաբար վարելու ձեռնհաս ներքմեկի տիպարովը:



Ի Խ Ո Ր Ո Յ Ս Ր Տ Ի (*)

7 Դեկտեմբեր, 1914.—Վա՛խ, զաւակս, վա՛խ, վահրամս: Ի՞նչ ըրիր, անուշս: Չէիր գիտեր...

Հիմա, ուրեմն, ալ չկայ: Վահրամս այլևս չապրիր: Ալ իրիկուան, ժամը 4ին ատենները, դպրոցէն տուն չպիտի դառնայ՝ քանի մը գիրք կամ տետրակ ձեռք բռնած, բարձրահասակ, նրբաւարտ, օղային, խոշոր սև աչուրները յոգնած՝ բայց ժպտագին: Ա՛լ առտունները չպիտի համբուրէ մայրը, զիս, քոյրը, մտք բարով ըսելու: Գթութիւն:

3 Յունվար, 1915.— Բարձր, բարձր, լայն, լայն դարաւոր մեծատարած ծառերով գիշերուան պէս հովանաւորուած դարաստանի մը ստորոտէն կ'անցնէի:

Իրիկուան դէմ էր: Կ'անցնէի մինակ, այն տպաւորութեան տակ զոր կ'ունենայ մարդ մը որ շատ հին գերեզմանատունի մը քովէն կ'անցնի, ուր գիտէ թէ կը հանգչին իր բոլոր սիրելիները, և որուն մտքին մէջ հաստատուն զաղափարը բոյն դրած է թէ այլ ևս բնաւ ոչ ծանօթ, ոչ բարեկամ, ոչ սզգական ունի աշխարհի վրայ, զի ամենքն ալ մեռած են:

Յանկարծ լայնատարած ու ստուերամած դարաստանին եզերքը գլուխներ երեւցան, որ աչքերնուն ծայրովը, առանց զարմանքի և առանց կարեւորութիւն տալու՝ ինձի կը նաշէին ու կը խօսակցէին. ինձի կը նայէին՝ ոչ թէ զիս ճանչնալով կամ զիս իրենց խօսակցութեան նիւթ ընելով. ոչ. այլ ինչպէս որ մարդ կարեւոր ու կնճռոտ բանի մը վրայ խօսած ատենը, միտքը ամփոփելու համար՝ խօսակցին ետեւէն դէպի մէկ կողմ կը ծռէ նայուածքին սլաքը՝ առանց այդ կողմը եզածը տեսնալու:

(*) Իր վաղամեակի գաւկից, զգօն ու եղերաբաղդ Վահրամի, դառնակսկիծ սուգին մեջ բանաստեղծին գրի առած այս խոհերն ու անդոհներն ուղղուած, գրեթէ վստահուած էին ՓրօՖ. Յ. Ք. Գայտեանին, որ գրական մեր ալեւոր ու սիրելի վարպետին կողմն ի վեր գնուեցաւ, իր հայրական Գողգոթայի վերելին: (Մ. 4.)

Ան ալ հոն էր, ան ալ, ան ալ, յաւիտեան անմոռա-
նալին, ան զոր անդադար կ'ողբամ. զաւա'կս, Վահրա՛մը,
Վահրա՛մը...

Ան ալ կը խօսէր մէկու մը, պահ ընդ պահ դարաստա-
նին ստորոտէն անցնող տրտում տխուր մարդուն նայելով,
առանց զարմանքի՝ իբրեւ մէկու մը որ անձանօթ անցորդի
մը կը նայի, առանց խօսքին թելը կորսնցնելու:

Բոլորն ալ գոգցես ծանր, լուրջ, պիտի ըսէիր վերացա-
կան նիւթի մը վրայ կը բանակցէին, որ աշխարհի չեղող բա-
ներու կը վերաբերէր. և ինձի այնպէս թուեցաւ որ, անէու-
թեան ծոցէն վայրկեան մը երկրաւոր գոյութեան դժոխքին
մէջ մտնելէ յետոյ՝ վերստին անէութեան մէջ մխրճած, ա-
սոր անչափելի երանութիւններուն վրայ կը ճառէին, տեսակ
մը արգահատանքով նայելով անոնց վրայ որ ապրելու եկած
էին և կամ դեռ կ'ապրէին:

Կատարեալ ըլլալու ձգտող մարդկութեան, կեանքը
խաղաղ ու գեղեցիկ յօրինելու աշխատող, արուեստը իր
բարձրագոյն տեսլականին, ընկերութիւնը իր դրախտերա-
զին, մարդը գերամարդին յանգեցնելու ճարտարութեամբ
բանաւոր արարածներու տեսարանը արգահատանք կը ծնու-
ցանէր իրենց լանջքին մէջ: Աստուած կարծես ինքզինքը
ճանչցուցած էր անոնց, ու հիմա ամեն բան գիտէին: Ոոր-
հուրդը քօղազերծուած, գոյութեան և վախճանին գաղտ-
նիքը մերկացած էր: Յաւիտեանական աստղերով ասղնագործ-
ուած երկնային վարագոյրին ետին՝ արարչագործական գի-
տութեան հաղորդութիւնը ճաշակած էին, ու ճաշակած էին
այն անձկալի ու գերերջանկաւէտ խաղաղութիւնը, որով հոս
կը մկրտուի հոգին հաւատացեալներուն որ նոր կը հեռա-
նան սեղանին առջեւէն ուր կենաց հացը բաշխուեցաւ իրենց:

Գիտուններու պէս էին, որոնք բարեհամբոյր կարեկ-
ցութեամբ կը նային իմաստակներու վրայ որ շատ բան
գիտնալ կը կարծեն ու շատ քիչ բան գիտեն. իմաստուն-
ներու պէս՝ որոնց շրթունքներուն վրայ ողորմած ժպիտ մը
կը փթթեցնէ յիմարներուն յաւակնատութիւնը:

Բարի անուն մը, յետոյ օրհնարան երախտագիտու-
թիւնը, անմոռաց յիշատակ մը, դարերու մէջ յաւերժացող
գիւցազնի համբաւ մը, մարդկային ազգին կեանքին յարա-
կից ախտերը և չարիքները բարձողի գովուած ու փառա-

բանուած գոյութիւնը, ասո՛նք ալ կշիռ բնաւ չունէին այն
նժարին մէջ, որուն հակադիր նժարը կը ծանրացնէին
գոյութեան ահելի աղէտներն որ անբուժելի էին և ան-
հուն չարիքներն որ անբառնալի էին:

Ասոր համար է որ ճակատին վրայ նսեմ քօղ մը կ'իյնար
անտարբերութեան և անկարեկրութեան, նսեմ քօղ մը նման
մենաստաններու և վանքերու մէջ ապրող մոնազներու կամ
միանձնուհիներու կնգուղին:

Ու Վահրամս անոնց մէջ էր. ու պատը չափազանց բարձր
էր որպէսզի կարենալի ձայնս հոն հասցնել, ու հարցնել...
Ի՞նչ. թէ ինչո՞ւ հոն էր. թէ ե՞րբ պիտի գար...

Այսու հանդերձ, անունը պոռալ սկսայ, խեղդուելու մօտ
եղող նաւարեկեալի մը աղեխարշ կերպով յուսահատ աւազովը,
որ կը տեսնայ ծովափունքին մարդիկը որ զինքը չեն տես-
նար, ու իրեն չեն նայիր... Ու լալով արթնցայ:

22 Յուլիւս. — Ի՞նչ երազ, ի՞նչ երազ: Վերստին
գտած զանի, կը համբուրէի, կը համբուրէի, կարօտէն
դողացող և ամիսներու հեռաւորութեամբ տեղերէ քա-
լելով ուխտատեղի մը եկած ուխտաւորի մը նուազ սըր-
տատրոփումներով հատնող շրթունքներով՝ իր ճակատը,
դէմքը, շրթունքները. ու կը կարծէի չնչել անուշ ու կեն-
սատու բոյրը վարդերու, շահաքրամի, կնգուղի, կտախայի,
զվուռսի, հալուէի, և Արարիոյ ու Հնդկաստանի ծանօթ և
անձանօթ բոլոր խունկերուն. բոյր որ կը յիշեցնէր ինձի
մատաղ երախայի մարմինի այն թաւաղակալով միւսնա-
թուրմ հոտը զոր, երբ Եղիա աւազանին առջեւ իր գիրկը
առաւ զանի և՝ քահանային նորածինին ըրած հարցումներուն
պատասխանելէն վերջը՝ տուն բերինք, առի զաւկիս զլու-
խին դրոշմած համբոյրներուս մէջէն...

Եղիա՛, ինչո՞ւ համար Եղիային անունը եկաւ՝ այս վայր-
կեանիս՝ վերածնուցանել անցած ամբողջ աշխարհ մը իմ
մէջս, համօրէն տիեզերք մը առ յաւէտ կորսուած թաղ-
ուած անուշութիւններու և յուզումներու:

Ինչո՞ւ դուն կնքեցիր զանի, Եղիա՛, ինչո՞ւ, երբ հար-
ցուցինք թէ անունը ի՞նչ պիտի դնէիր, Յոբ գնել ուզելդ
յայտնեցիր, ու երբ կինս չարագուշակ անուն մը ըլլալը
առարկեց, այն ատեն միայն մեր ընտրած անունով մկրտ-
տեցիր:

Յո՞ր, ինչո՞ւ Յոր: Միթէ չէ՞ր կարդացած սա բառերը՝
 «Եւ Յոր ոտքի ելաւ, ու պատուեց իր վերարկուն, ու
 գլուխը ածխեց, ու ինկաւ վար հողին վրայ, ու երկրպա-
 գութիւն ըրաւ, ու ըսաւ.—Մերկ ելայ մօրս արգանդէն, ու
 մերկ պիտի դառնամ հոն: Աստուած տուաւ, ու Աստուած
 առաւ. օրհնեալ ըլլայ Տիրոջ անունը:»

Ասոնք ու դեռ ասոնց յաջորդող տողերը չէ՞ր կարդա-
 ցիր, խեղճ Եղիա, որ զաւկիս անունը Յոր դնել ուզեցիր:

Այո, շատ ու շատ տեսեր էիր այդ յաւիտենապէս վշտա-
 բոյր ու յաւիտենապէս ճշմարիտ տողերը: Շատ կանուխէն
 նշմարեց հոգիդ երկինքը պարածածկող անգձելի քօղը, ու
 հոգիդ պոռաց Յորին նման. «Ինչո՞ւ ծնայ, ինչո՞ւ դուրս ե-
 կայ մօրս որովայնէն:»

Այո, շատ կանուխէն դառնացար կեանքին, անոր անխ-
 րաւութեանց, անոր դառնութեանց, մարդոց չարութեան ու
 անզգամութեան դէմ: Տեսար, բաւական խեղացի էիր տես-
 նալու համար, ամեն ինչ որ կայ միջին ու ցած ու երկրա-
 քարչ և աղտեղի նոյն խոկ այն էակներուն մէջ՝ որ գեղեցիկ
 ու զմայելի երկեր կ'արտագրեն, և որոնք իրենց նմաննե-
 րուն սքանչացման առարկայ կը դառնան: Շօշափեցիր գի-
 տունին և արուեստագէտին, ու ճարտարին, ու պերճախօ-
 սին, ու քարոզիչին երիկամունքին ճանձախարիթը և անոնց
 համբոյր ժպիտին ետին դարանամուտ մաղձը: Դուն, ինձի
 պէս, լսեցիր ականջովդ որ գրեթէ ըսին մեզի թէ բարու-
 թիւնը, հեղահոգիութիւնը, մեծանձնութիւնը, միամտու-
 թիւնը ծիծաղելի բաներ էին, և թէ, յաջողելու համար,
 պէտք էր՝ ի հարկին՝ ցածնալ, ստել, չարախօսել գիտնալ,
 խորամանկութեան հետ միացնել զրպարտութիւնն և ստա-
 խօսութիւնը, չվախնալ անպարտին գլխուն պատուհասի
 էջքին պատճառ ըլլալէ, խիղճ չընել գէշ հասկցուած և կեղծ
 ու անզգամ հպարտութեան մը հարուածներուն տակ ճվելու
 ան որ ուղղամիտ է՝ վասնզի ճշմարտապէս հպարտ, խոնարհ՝
 վասն զի ճշմարտապէս մեծ, հեղձ՝ վասն զի ճշմարտապէս
 արժանաւոր: Եւ արգահատանքով խառն պժգանքի դառն
 ծալք մը ծամածուց շրթունքդ, երբ հաստատեցիր որ անոնք
 խոկ որ՝ մինչեւ երիտասարդութեան դուռներուն առջեւ
 հասնելին՝ պարզամիտ, բարեսիրտ, անկեղծ էին և ան-
 խարդախ հոգի ունէին, թունաւոր օրինակներու առջեւ:

իրենց ճամբան փոխեցին, և իրենք ալ եղան չար, վատ և
 ցած, միմիայն ծաղրելի ըլլալու և ճախողութեան դատա-
 պարտուելու երկիւզովը լցուած:

Ասոր համար է որ ուժացար, դառնացար կեանքին դէմ,
 աշխարհի դէմ, գոյութեան դէմ. ու հնդիկ վարդապետու-
 թեան մէկ սկզբունքին փարեցար սրտագին, Նիրվանային
 խոստացած քաղցրութիւնները ճաշակել բաղձացիր, և, մոգ
 դժգոհ և արհամարհոտ, ժանտ ու մահասարուռ կանեփեայ
 օձը պլլեցիր վզիդ...

Եւ անունդ, վախճանէդ յետոյ, մեծցաւ ա՛լ աւելի, պի-
 տի մեծնայ ևս քան զիւս, և ամեն անոնք որոնց կուրծքին
 տակ սիրտ մը կը բարսխէ՝ անհուն տխրութեամբ, բայց և
 անսահման մեծարանքով պիտի դիտեն ժամանակէն անջըն-
 ջելի յոգնատխուր դէմքդ:

10 Մատթ.— Վաղը երեք ամիս կ'ըլլայ: Ո՛ր բարեկամս,
 առաջին օրերը ինձի ըսիր որ ամիսէ մը կսկիծս չէ թէ կը
 փարատէր, այլ կը մեղմանար. կը հաւաստէիր:

Չէ՞ք բարի ազնիւ սիրտ. ոչ միայն հաւաստիքդ իրա-
 կանութեան գոյն չառաւ, այլ հետզհետէ աւելի դառն ար-
 ցունքներով և յուսահատութեամբ կուլամ: Բանի կը հեռա-
 նայ ատելի, սոսկալի, չըլլալիք օրը, այնչափ աւելի կը յա-
 ճախեն ու կը ծովանան աղի կաթիլները որ կ'առուակին
 աչքերէս:

Այնչափ լացի, այնչափ լացի, որ շիւ եղան աչքերս, և
 անոնց մէկը կը նայի բանի մը, և միւսը՝ ուրիշ բանի մը:
 Մէկը անտարբերութեամբ կը տեսնայ կենդանի, արեւոտ
 աշխարհը, մարդիկը որ կը շարժին, կը գործեն, կը դա-
 տին, ու կը հանգչին գիշերը: Միւսը սեւեռած է հազիւ եր-
 կու հարիւր քառակուսի մեզր տարածութեամբ հողի մը
 վրայ, ուր մեռելները կը հանգչին յաւիտեան: Գոյութեանս
 կէսէն աւելին անոր, այդ գետինին կապուած է: Հոգիս
 արեւածաղիկ, Մարմինս արեգակ:

Ո՞րքան ծանօթներ, ո՞րքան բարեկամներ այդ հողին
 տակ պառկած են... Ու այդ բարեկամներուն վրայ աւել-
 ցաւ նաև, գթութիւն, լաւագոյն բարեկամս, զաւակս, վահ-
 րամս...

Եւ այդ բարեկամներուն կը նախանձիմ հիմա. անոր
 հետ են, անոր մօտը, յաւիտենապէս...

Տարիներով ծոցս պառկեցար գիշերները, դաւակոս, չորսէն մինչեւ ութ տարու: Հիմա՞:

Վա՛յ ինձի, վա՛յ մեզի, վա՛յ մեզի:

Ու կը հսկէի հրեշտակի քունիդ վրայ, վախնալով որ անզգոյշ մէկ շարժումս, անգիտակից մէկ հառաչանքս նինձդ չխուզէր: Քունիս մէջ իմ վրաս կը հսկէի՝ տատարակի հանգիստդ չխանգարելու համար, թեթեւ շնչառութեանդ մէջ լսելով անցեալ յաւիտենութեան և ապառնի յաւիտենութեան մէջ ապրած ու ապրելիք բոլոր անմեղութիւններուն շուշանի բողբոջումը:

Եղո՛ւկ, հոգիիս ծաղիկը ինձմէ առաջ անյատակ հորին մէջ ինկաւ...

Քայց, ո՛վ կսկծագին դառնափուշ մխիթարութիւն, ո՛վ հայհոյութեան նմանոգ սփոփանք, թերեւս Անմահին մէկ գթած ակնարկը կանչեց քեզի. ո՛վ գիտէ թերեւս ազատեցար մահուանէ հազար անգամ չարաչար տառապանքներէ զոր, եթէ մնայիր, պիտի տառապէիր: Եւ յետոյ, միթէ չըսին. «Աստուած իր սիրածները կանուխ իրեն կը կանչէ:» Ասի չէ՞ մի որ անոր համար ըսին որ անոնք չչարչարուած, լեզին չքամած, յուսախարութեանց օշինդրը չճաշակած, անիրաւութեանց, բռնութեանց, լլկանքներու փշաքաղիչ տեսարանէն չսահմուկած, կ'երթան կը հանգչին անէութեան բազուկներուն մէջ, ուրկէ ելանք և ուր պիտի դառնանք, ուրկէ ելան ամենքն ալ, չարչարուեցան, յոգնեցան, տուայտեցան, սոսկացին, և ուր վերագարձան:


Քայց, ո՛վ չարաբաստիկ էութեանս, բայց ես կը սիրէի քեզի, սիրեցի քեզի այնպէս որ չէի ուզեր որ քեզմէ ուշ մնամ:

Ձի հիմա դարձայ եղայ ծառ մը շանթէն ճեղքուած, որ ա՛լ տերեւներ չպիտի ընծիւղէ. ջրհոր մը որուն անյիշատակ ժամանակէ ի վեր ցամքեցաւ զով ալիքը և որ անուն չունի այլ ևս. մագաղաթ մը գիրերը սրբուած, որուն մէջ չեն կրնար կարդալ թէ ի՛նչ սրբազան քերթուած գրուած է. առաւօտ մը որուն արևը չի ծագիր ու չպիտի ծագի յաւիտեան. քահանայ մը որուն աղօթագիրքը կորսուեր է և շուարած մնացած է թէ ինչպէս աղօթէ. կալանաւոր մը որուն բանտին պատուհանը այնչափ բարձր է և ուղղածիք՝ որ չի կրնար պատու մը կապոյտ անգամ տեսնալ և սպասել որ թերեւս արծիւ մը անցնի. մոլորած ճամբորդ մը որ ովասի-

սին ճամբան կը փնտռէ ու չի գտնար, վասն զի անապատին սիմունը աւազին տակ թաղեր է զայն:

Ձի դուն ա՛լ չկաս, ո՛վ իմ ովասիս, ո՛վ իմ արեւս, ո՛վ իմ զովարար անո՛ւշ ջուրս, ո՛վ իմ աղօթքս, ո՛վ իմ արծիւս, ո՛վ իմ դաւարաւէտ սաղարթս, ո՛վ իմ բանաստեղծութիւնս:

Չ Մայիս. — Այս ամսուն մէջ ծնաւ. կնքահօրը պէս: Մայի՛ս... Վարդերու ամիսը, կապոյտին ամենէն սուրբ



Գծեց՝ Երանոս Տեֆեան

Յովն. Սեբեան իր վահրամ որդւոյն մահասնարին

եղած ամիսը, երկինքին երկրիս ամենէն աւելի մօտեցած ամիսը. աստուածային շնորհալի ու ողորմած նայուածքին ամիսը. ամիսը բնութեան ճոխագոյն ժպիտին, յոյսերու փթթումին, սիրտերու առ Ամենակալը վերթեւումին ու ճախրանքին, ամեն ցաւերու և թշուառութեանց կրակը մեղմելու համար վերէն վար իջնող շունչերու սահարկումին, շափիւղայ, զըմ-

րուխտ, յակինթ, մեղեսիկ, սարգիոն, ոսկեքար, տպագիոն աստղակաճառներուն՝ դաշտավայրին մէջ ու լեռներուն ու բլուրներուն վրայ բըշումին. ամիսը առանց պատճառի լացող զգայնիկ լանջքերու հեւքերուն, եղանակը նորահիւս բոյներուն օդածածան սարսուռներուն, և նորափետուր սիրավրդով լանջքերուն աղեճմլիկ երազներուն:

22 Մայիս. — Բանի անգամ մտածեցի որ Աստուած անո՛ր համար այս անլուր կերպով սոսկալի օրերուն մէջ կարգադրեց այս անաւոր բանը՝ որ գրուած էր որ պիտի կատարուէր, որպէս զի քիչ մը պակաս զգանք հարուածին կոչտութիւնը:

Բայց, աւա՛ղ, ի զո՛ւր եղան մեր բոլոր ջանքերը՝ կըսկըծալի օրինակներուն անբաւութեան և արհաւիրքին վրայ նայելով քիչ մը սփոփուելու: Ի զո՛ւր երեւակայեցինք որ թիւին մէջն էիք այն անթիւ անհամար կենսալից երիտասարդներուն որ աշխարհի ամեն կողմերէն եկան, կուգան, պիտի գան՝ յաճախ զարհուրելի և դառնակոշկոճ վախճան մը գրկելու: Ի զո՛ւր փոսերուն, ջուրերուն, կրակներուն, ծծումբներուն մէջ խեղդուող կտրիճ գոյութիւններ նկարեցինք մեր մտքին մէջ: Ի զուր վանի մէջ, ասդին անդին մեր Հայրենիքին մէջ դիւցազնացող մեր արեւակիցներուն շարքերուն մէջ երեւակայեցինք քեզի. ու հնթադրեցինք, ուղեցինք որ անոնցմէ մէկը եղած ըլլաս, սեւ աչքերդ ձերմըկած, շրթունքներդ անարիւնութենէ նըբացած, այտոսկըրներդ ցցուն, յոգնած գլուխդ յորսայս կործանած, վերջին վայրկեանիդ համառօտութեանը մէջ խտացնելով բովանդակելով, ինչպէս որ ասի կը պատահի շատ անգամ օրհասականներու ուղեղին մէջ, կայծակի արագութեամբ առջեւէդ անցնող համապատկերը բովանդակ կեանքիդ իրադարձութիւններուն, բարեկամներուդ, սիրելիներուդ, յոյսերուդ, երազներուդ, կուրծքիդ վրայ ընդունած հարուած մը որ փթթեցուցած ըլլար հոն, իբրեւ բոսորավառ շքանշան մը, արիւնազանգ վարդ մը, թօշնած վարդ մը որ պատմէր քու հերոսի անվեհերութիւնդ, վտանգին արհամարհանքդ, տառապակոճ Հայրենիքիդ սիրոյն համար մահուան ծարաւդ, որ յագեցած էր...

Ի զո՛ւր, ի զո՛ւր:

Աւելի պիտի հաւանէինք որ արեւը մարէր, ու քու արեւդ՝ ոչ:

30 Մայիս. — «Օրօ՛ր. օրօ՛ր, օրօ՛ր.

«Բնանայ պիտի զաւակս վարդին հոտերուն.

«Օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր.

«Արթնայ պիտի վահրամս պիւլպիւլին ձայներուն:»

Այնպէս կ'երգէր, հիմա յաւիտենութեան չափ հեռու ժամանակի մը մէջ, եղկելի մայրդ, երանիկ երջանիկ մօր

թրթռուն անուշ աղեճմլիկ ձայնովը, ամառուան երկայն ցերեկները, ճոխ արեւին տեղացած լոյսի անբաւութեան մէջտեղ, տխուր, տխուր, տխուր, ո՛վ գիտէ ինչու այնչափ տխուր: Ու ժանեակները, ու ժապաւէնները, ու մարմաշները որ կը պարուրէին վարդ մարմինդ ու համբոյր մազերդ, ասոնք ամենը կը վերթեւէին օդին մէջ. ու քանի մը շփացած թռչուններ բաց պատուհանին կը մօտենային՝ բարի դրացնութեան բարեւը գողցես տալու համար այդ գերերդրացնութեան բարեւը գողցես իրենց փշրանքներ նեշանիկ ընտանիքին, առտու իրիկուն իրենց փշրանքներ նեշանիկ ընտանիքին, — որուն՝ սակայն՝ վերջէն չպիտի տող ողորմած ընտանիքին, — որուն՝ սակայն՝ մտիկ ընելու ողորմէր Յաւիտենականը — կամ աւելի մօտէն մտիկ ընելու համար այդ նորօրինակ դայլայլիկը որ կը հրապուրէր, կ'ահաւանէր, կը դիւթէր, կը կախարդէր զիրենք, դայլայլիկ ունեցէր, որո՛ւն, արցունքներով, անուշ տըրտոր այնչափ լեցուն էր, ո՛հ, արցունքներով, անուշ տըրտոր մուլթիւնով և բարօրութենէ հեշտանքէ գինովցած մօր դող ելած երջանկութեամբ...

Ու իմ ալ կը լեցուէին, կ'առատանային ականողիքս անբացատրելի աղի կայլակներով՝ ի լուր այդ անլուր մեղեդիին, իբրեւ թէ նոր ոմն կասանտրա և նոր ոմն Երեմիա, այր ու կին նախազգայինք, հեռուէն, հեռուէն, նախազգայինք գալիք բանը:

Օրօ՛ր, օրօ՛ր, օրօր...

Օրօ՛ր յաւիտեան, անո՛ւշ զաւակս, Մարմինայի հողերուն տակ, կանուխ կանուխ. վա՛հ հասակիդ, վա՛հ եռանդիդ:

22 Յունիս. — Իրիկուն է: Քիչ ատենէն մութը պիտի կոխէ: Ստուերները կ'իջնան, կ'իջնան, կ'իջնան աշխարհի վրայ. ստուերները կ'իջնան, կ'իջնան, կ'իջնան հողիտ մէջ: Երկինք մթնշաղով, աչուրներս արցունքներով կը վարազուրուին:

Էլիզաս ներս կը մտնայ, դուրս կ'ելլայ: Նորէն ներս կը մտնայ, նորէն դուրս կ'ելլայ: Եղկելի՛ աղջիկս, կը կռահէ հօրը սրտին սեւ փոթորիկը: Ա՛խ, այս փոթորիկը, ձմեռ իրիկունները, հիւսիսի մարզերուն մէջ, ժայռի մը բարիկունները, հիւսիսի մարզերուն մէջ, ժայռի մը բարիկունները վրայ կանգնած և ուշացող ձկնորս այրիկին մակոյձունքին սեւ ալիքներուն մէջէն երեւնալուն սպասող կնոջ նայած փոթորիկին կը նմանի: Փշրող ալիքները աղի կաթիլ-նեղ կը սրսկեն երեսին, աղի իմ արցունքներուս պէս: Կը կլլէ զանոնք, ինչպէս ես կը կլլեմ իմիններս: Յուսահատութեան ճգնաժամի պատանքը մօտ է անոր հողիին փաթթուելու, ինչպէս սիրելիս պատանքին սառ ձերմակութիւնը կը պատատի իմ կուրծքիս:

Ստուերները կ'իջնան: Հիմա մթնցած կապոյտին մէջէն կը սկսին հոսիլ համատեղութիւնները, արիւն-արցունքներ որ կուլան մէկու մը վրայ: Եւ այն մէկը...

Այն մէկը, երկար տարիներ բնակակիցս, անուշիկ հիւր մը, չեմ գիտեր ո՛ւր կէ կիրակի օր մը, աղուոր պայծառ զարնազուարճ անուշահոտ կիրակի օր մը եկած նստած մեր տունը, և որ այլ եւս չգնաց: Հապս՞, չէի՞ք գիտեր. այլեւս չգնաց: Մնաց մեզի շարաթներով, ամիսներով, տարիներով. այնպէս որ այլեւս իբրեւ հիւր չէինք վարուեր հետը, այլ իբրեւ երկար երկար տարիներէ ի վեր մեր քովը եղած, մեր ծնած ժամանակ ծնած, մեր մէջը, մեզի հետ ապրած օտարականի մը հետ, որ քսան ու երկու ամառներ ճերմակ շուշան դրախտ մը ըրաւ մեր տունն ու կեանքը, որ մեզի այնչափ երջանիկ ըրաւ՝ որ շատ անգամ լալերնիս կուգար, և որ օր մը, բոլոր դժոխքներէն աւելի խաւարին օր մը, առանց բան մը ըսելու մեզի, ելաւ գնաց:

25 Յունիս.— Ո՛հ, այս ջուրերը, այս ջուրերը. այս յաւիտենական շառաշը որ ականջներուս մէջ կը հոսի խոխոջելով: Ի՞նչ մեծաշառաչ, ի՞նչ անհատահոս Նիակարա: Ո՛հ, անյիշատակ, նախապատմական ժամանակներէ ի վեր եկած գացած մարդկութեան հոտանքն է որ, ծովուցած, ովկիանացած, կը գահավիժի անսահմանութեան մէջ:

Բռնաւորութեան բոլոր զոհերը, թագապսակ մարդասպանները, բոլոր եղբայրասպան և որդեսպան իշխանները, բոլոր խաբուածները, բոլոր խաբողները, ե՛ւ յափշտակիչները որ «ճարպիկ» կը կոչուին, և հեղերը որ «չս չօղած» կամ «բարի», այսինքն, ըսա «ճարպիկ»ներուն, «կով» կամ «ապուշ» կ'անուանուին. կայէնէն, Յուդայէն, Ներսէն սկսեալ մինչեւ մեր օրերուն մասնիչներն ու ամենակարող կատաղի խինթերը, ու Աբելէն, Յիսուսէն սկսեալ մինչեւ մեր ժամանակներուն արդարներն ու անպարտ զոհերը. բոլոր եսքիլեան սոսկումներն ու արհաւիրքները, Ասուածային կասկեղեցուքեան բոլոր պատժապարտները, և շէյքսբիրեան ստեղծագործութեան բոլոր հրէշներն ու հրեշտակները. մեծ գաղափարներու, արդար գատերու բոլոր վեհանձն ու պաշտելի պատարազները. բոլոր մարդ-պատուհասները, և բոլոր մարդ-օրհնութիւնները. անա այս բոլոր բազմութիւնն է որ կը դարահոսի, կը դարահոսի, անհուն սափորին մէջ, որ սափորն է անցեալ և ապառնի մարդկութեան աճիւններուն:

Եւ ինչպէս որ անեզր անբաւ համաստեղութեանց լոյս անձրեւը գիշերները կը հոսի յաւիտենականութեան անծանօթ և անճանաչելի մարդերուն մէջ, բանաւոր էակներու հեղեղն ալ կ'իյնայ կ'անհետանայ մեծ անդունդին մէջ, առանց որ կատարեալ ըլլալու ձկտող և սահմանուած մարդկութեան ժպտի յաջողութեան որ և է յոյս, առանց որ երկնակամարը պատասխան մը տայ գիտութեան անձկոտ հարցումներուն:

30 Յունիս.— Վանք մը ըլլար. մենաստան մը ուր առանձնանայի: Մօտերս բնակէին թարշամած դէմքով ու փոսացած ակնակապիճներով միայնակեացներ, խոտամբեր Սիմէօն սիւնակեացներ: Ընդարձակածաւալ թէրայիտ մը, ուր քաշուած ըլլային, երկար, երկար տարիներէ ի վեր, ինծի պէս վշտացածներ և խաչակիրներ, զոր չճանչնայի, և ուր ապրած ըլլալս մոռնայի.. Այդ անձերէն մէկ քանին ինծի մօտենային, ու դաշն, շտա դաշն ու ծանր բարբառով մը խօսէին ինծի: Ըսէին ինծի թէ կենդանի աշխարհը, զոր երկար ժամանակէ ի վեր մոռցած էին, ա՛լ գոյութիւն չէր կրնար ունենալ, քանի որ շատ հինաւուրց էր. հին բաները միթէ այլեւս կ'ապրի՞ն:

Խորապէս համոզուէի անոնց ըսածներուն՝ առանց պատասխանելու կարողութեան: Տեսակ մը մեծարանքով ըրջապատէին զիս, առանց ըսելու ինծի իրենց յարգանքին շարժառիթը. և ես մտրմօքէի անոնց ինծի մատուցած գերազանցութեանը պատճառաւ, որուն բոլորովին անարժան հաշուէի զիս:

Աստուծոյ դոյութեան, տիեզերքին անծայրափակ յաւիտենութեան, հոգւոյ անմահութեան վրայ հազիւ հասկանալի բաներ մը խօսէին ինծի, որ աչքերս մեծ մեծ բանալ տային..

Ի՞նչ հոգւոյ անմահութիւն...

Այն բա՛նը որուն ո՛րչափ ժամանակ առաջ — հիմա այս ամենը մոռցուած երազի մը պէս է — հաւատալ փորձեցի, չյաջողեցայ, միւս ա՛գամ փորձեցի, դարձեալ ձախողեցայ, հակառակ Սոկրատի և այնքան ուրիշներու հաւատքին ու հաւաստումներուն:

Հոգւոյ անմահութիւն: Բայց, կեցէք նայի՛մ. ի՞նչպէս եղաւ որ օր մը, օրհնութիւններով օծուած վարդ ու շուշան օր մը, երբ պատանութենէ հազիւ դուրս ելած էի, օր մը, մեզի դրացի Աստուծոյ տունին վրայ վերէն նայելով, և անոր մէջ սաղմոսուած հոգեհանգստեան մեղեդիներուն ականջ դնելով, ի՞նչպէս եղաւ որ օր մը ուղեղս ամրապինդ գրկեց այդ դաւանանքը, համբուրեց այդ լոյսը, իր ծոցին մէջ պահեց անգին գանձի մը պէս, ու երբու՛մ ըրաւ ա՛լ բնաւ յաւիտեան չբաժնուիլ անկէ:

Ի՞նչ եղաւ որ հիմա...

Ա՛խ, դարձուցէք, դարձուցէք ինծի իմ գանձս, ետ տուէք ինծի իմ ճառագայթս զոր կորսնցուցեր էի: Տղու մը պէս որ իր սրտին ամենէն թանկ խաղալիկը տեղ մը ձգեր է ու սիրտմաշուքով կը փնտռէ, տղու մը պէս լալով, երեսանկեալ, ծնրադրած, հեծկլտանքներով կը պաղատի՛մ, դարձուցէք ինծի իմ միակ, իմ անզուգական հարստութիւնս, իմ կեանքս, իմ գոյութիւնս, իմ հաւատքս, իմ յաւէրժա-

կան անգրաւ յոյս: Ետ տուէք ինծի իմ լոյս... Հիմա ամեն ժամանակէ աւելի պէտք ունիմ անոր...

12 Յուլիս.— Սեւ քառաթեւին վրայ, հագա՞ր եղուկ, ճերմակ տառեր կը գծեն անունդ, անուշ զաւակս, և երկու թուական. 1892-1914... մեծ ուրախութեանս ժամանակը, և մեծ կսկիծիս ժամանակը:

1892-1914: կեանքիս մէջ ամենահեշտալի փոփոխութեան մը սկիզբը. և կեանքիս — խորտակումին ու դատարկացումին սկիզբը: Մէկը, լոյսը որ ծագեցաւ ու հոգիս շլացուց երկնային անճառ ճառագայթով մը. միւսը՝ խաւարը որ իջաւ փաթթուեցաւ լանջքիս, ու մտիլ սկսայ: Մէկը՝ ներուած ուրախութիւններուն սաստկագունին օրը, միւսը՝ ծնողի մը համար աններելի պատուհասին գահաժիթումին օրը:

1892-1914: կեանք մը. աւա՞ղ. կեանքդ. քու կեանքդ, անուշս. այսինքն իմ ճշմարիտ կեանքս, իմ հարսզատ գոյութիւնս, իմ անզուգական ժամանակս. դրախտին դուռին բացումը, և արտաքսումին ահաւոր վայրկեանը:

Մն՞դք գործեցի: Ի՞նչ մեղք:

Հայր եղայ: Երջանիկ հայր: Զաւակս դիս երջանիկ ըրաւ, երկար ժամանակ: Գուցէ այսչափ երջանկութիւն ներուած չէ:

Հայր եղայ, մահուան ամբողջ դառնութիւնը, մահերուն ամենէն ժանտագունին սոսկումը ու տանջանքը ճաշակելու համար:

Հայր եղայ, տիեզերքի կարգադրութիւններուն դէմ ըմբոստանալու համար:

Հայր եղայ, փափագելու համար որ աստղերը թօթափին ու ամեն կեանք զրաւեն:

Հայր եղայ, մաղթելու համար որ Պաթմոսի մարգարէին տեսին իրականանար. «Եւ աստղին անունը Օշինդր էր. ու ջուրերուն երրորդ մասը Օշինդր դարձաւ. ու շատ մարդիկ մեռան ջուրերէն, վասնզի ասոնք դառնացած էին:»

16 Յուլիս.— Երէկ իրիկուն ըսի ինքնիրենս. «Ելլալ երթալ, մինակ, մթնշաղին, մութին, գիշերուան մէջ, առանց չորսդիք նայելու. տուներուն լուսաւոր պատուհաններուն նայել, ու զգալ որ հայրեր ու մայրեր կան իրենց զաւակներով չըջապատուած. այդ հայրերուն մայրերուն մէջ ճանչնալ զոյգ մը որ դուն ու կինդ եղան, որ մանչ մը և աղջիկ մը ունէին, որոնք առաջ չորս հոգի էին, ու հիմա երեք են. սեղան նստած են և ուրախ են, վասն զի մանչ զաւակնին զուարճալի բան մը տեսեր է ցերեկը ու կը պատմէ. լամպարին պայծառութիւնը կը լուսազարդէ մօրը երեսը. լամպարին պայծառութիւնը կը փայլեցնէ հօրը երեսը. տակաւին երթալ ճամբաներէն, պողոտաներէն, փողոցներէն, միշտ մինակ, մինչդեռ պատուհաններուն լոյս աչքերը

մէկիկ մէկիկ կը դոցուին, ու բնակիչներուն աչքերը մէկիկ մէկիկ կը փակուին. տակաւին երթալ, ժամերով, ժամերով, մինչդեռ ճամբաները կ'ամայանան, անազանամաց սակաւաթիւ անցորդներ կ'երագեն իրենց քայլերը, տունին երգը կը մարի, մանուկներուն ձայնը կը մեռնի. տակաւին երթալ, երթալ, հին ու մութ տուներու քովէն, խարխուլ պատերու եզերքէն, մուցուած խղիկներու մօտէն, դարաւոր ծառի մը տակէն, որ երթիցած բազմաթիւ բազուկները պարապին մէջ կը կարկառէ յուսահատօրէն՝ կարծես անցած գացած դարուները վերստին ըմբռնելու համար. երթալ, երթալ՝ մինչեւ հասնիս երկայն ու բաւական բարձր պատի մը առջեւ սրուն ետին... օգնութիւն, կը քնանայ կոր ան. բաղխել աղերսիկ ձակատգ պատին քարերուն, և անոր անունը պուռալ. ահա ինչ որ կը մնայ քեզի ընել:

30 Յուլիս.— Է՛հ, ս'ըջափ երկար տեւեց այս ճամբան. ա՛լ չչարունակենք:

31 Յուլիս.— Պիտի աղաչեմ X Մին — կը յուսամ որ պիտի կատարէ խնդիրքս — որ անոր քովը հանգչեցնել տայ զիս, երբ որ դադրիմ:

Քով քովի, արմաւենիներուն մօտ, վարդենիի մը տակ...

Քով քովի պառկիւնք, զաւակս, ինչպէս որ երկար տարիներ պառկեցանք. թողլով որ մարդիկ շարունակեն զարգանալ, յառաջդիմել, սիրել, կատարելագործուել, իրար ուտել, ատել, նախանձիլ, վայելել. թողլով որ նորանոր հանճարներ լոյս աշխարհ գան, նորանոր հրաշակերտներ, այնչափ հոյակապ, ի՞նչ կ'ըսեմ, թերեւս աւելի հոյակապ քան իրենց նախորդները, ծնին, աշխարհը զարմացնեն, ու զրաւին. թողլով որ մարդիկ շոգիին, էլեկտրականութեան և ուրիշ նորանոր տարրերը իբրեւ էլարան գործածեն թերեւս մինչեւ լուսինը բարձրանալու եւ արարչագործութենէն նորանոր գաղտնիքներ խլելու համար...

Քով քովի պառկիւնք, արչալոյսներուն քրքումին տակ, անապատներէն եկած փոշիին տակ, ծովէն եկած շունչերուն տակ, ամպերուն բամբակին տակ, վերջալոյսներուն արիւնին տակ, թերեւս խառնուին օր մը ոսկրներս քուկիւններուդ, ու միակ զանգուած մը յօրինենք, ինչպէս որ միակ արիւն մը և մարմին մը եղանք մեր կենդանութեանը, ո՞վ կեանքիս կեանքը, արիւնիս արիւնը, հոգիիս արեգակը, բովանդակ սիրոյս բեւեռը, դէպի փրկութիւնս առաջնորդող աստղս, անմահութեան տենջանքներուս սկը, ո՞վ իմ յաւիտենականութիւնս:

4 Ոգոսոս. — Հասակդ սափոր մը. երթալէդ ի վեր քանի՛ անգամ լեցուցի զայն արցունքներովս:

Այսուհետեւ, և միշտ, ցորչափ տեսնամ լոյսը, խորհուրդներս քեզի, երազներս քեզի, սրտատրոփումներս քեզի:

հոգիին նայուածքը քեզի — Գեզլի՛ բոլոր մտածումներս արշալոյսին խողազուծեան ու տատամտող ձայներուն ու վարանող սիւքերուն առջեւ. քեզի՛, սիրականս, բոլոր մտածումներս գիշերուան լուս և երկայն ժամերուն. քեզի՛ բոլոր մտածումներս երկիրը ջեռուցանող և կենսաւէտող սատղին կրակ նայուածքին տակ. քեզի՛ բոլոր սասանումներս երբ, տունջեան մահուան մօտ, թուշունները, անձանօթ սաղարթախիտ ոստերու խլրտումներուն մէջտեղ, պատրաստուելին թեւերնուն տակ զօղել իրենց յոգնած գլուխները. քեզի՛ բոլոր հրճուանքս գեղարուեստի և բնութեան հրաշակերտներուն պարգեւած վայելումներուն մէջտեղ. քեզի՛ բոլոր զօղս և սարսուռս փոթորկախռով ծովուն մսեցնող փրփուրին տակ. քեզի՛ բոլոր յուզմունքներս երբ աստղերը, բարեկամ ու խորհրդալից աչքեր, ինձի նային հեռուէն, երբ Ապրիլ իր սահանքները խոխոջածայն թափէ քաղաքներուն և դաշտերուն վրայ, երբ աղանեստունը մնչէ իր հրայքօտ ու նուազկոտ գուրգուրանքները, երբ կլուն իր քուքերուն ողբերգը հեծեծէ, երբ երկիւզալից գիշերին մէջ բուն վայէ, երբ տարագէժ հեռացող նաւին լուրջ ու բամբ սոյլը իր արկածներով գուցէ յղի ապառնին գոգցես ողբայ: Գեզլի՛ բովանդակ ցերեկներս ու համօրէն գիշերներս: Գեզլի՛ բոլոր արցունքներս՝ երբ տեսնամ մատաղամայր մը որ իր դեռածին զաւակը սրորէ, երբ տեսնամ մատաղ մանուկ մը՝ զոր կղկաթ կաթոգի հօր մը երջանկութենէ դողդոջուն բազուկները վեր վեր կը նետեն օդին մէջ և յետոյ կ'ընդունին՝ մանուկը ցնծութենէն և ապահով երկիւղէն, իսկ ծնողը հրճուանքէն հեւալով և ծիծաղելով. երբ տեսնամ պատանեակի մը ուշիմ գլուխը քովքի ծռած գիրքի մը կամ տետրակի մը վրայ, երբ տեսնամ երիտասարդներ որ՝ դասական պիտոյքներու պայուսակը անութներնուն տակ կ'երթան դըպրութեան ու գիտութեանց հացը ճաշակելու:

Ա՛խ, բոլոր անցեալը, բոլոր կեանքդ:

12 Oqnosnu. — Քսաներկու երկար ամառներ, քայլ առ քայլ, հետեւեցայ քու օրերուդ աղուորութեանը. մատղաշ մանուկ, առի քեզի գիրկս, և երջանկութիւնս ինձի տալով ձայնի անուշութիւն մը և գաշնակութիւն մը զոր չունէի՝ այնպէս քաղցրալուր երգեր երգեցի, որ դրացիները աւելին կամ ասեղնին կամ գրիչնին կամ վրձիննին կամ մսահաննին վայրկեան մը վար դրին մոռցան, ու պատուհանները և դուռները ելան մտիկ ընելու համար, հրեշտակի քունիդ վրայ ծռած, հրճուանքէս լացի, ու գացի, ուրախութենէ թրթռուն հայր, թուզթին յանձնեցի զգացումներս. ցերեկուան աշխատանքէս վերադարձիս, մէկ ժամուան ճամբան հրաշքով իմն հինգ վայրկեանէն կտրեցի՝ որ-

պէսզի շուտ հասնիմ համբոյրիդ... Վերջէն՝ երբ պատանեակ եղար, լուսապայծառ աչքերուդ մէջ կարգալով խոստմնաշատ արշալոյսը անուշ իմացականութեանդ, մտքիս ու հոգիիս ընտրագոյն մասէն գրի՛ զայն գեղազարդելու համար. աւելի վերջը՝ զգայուն սրտիդ հոգեպարար փափկութեան և զեղումներուն ի տեսիլ, եղայ մէկու մը պէս որ հանդարտ առուակի մը հայլին վճիտութեանը մէջ կը նայի թափանչոյլ կապոյտին մէջ այերանկարուող ու դողդոջուն իր պատկերին. վերջը՝ երբ երիտասարդութեան սեմին վրայ ստք կոխեցիր, քովդ կեցայ, ու գեղարուեստներու և գիտութեան համար ունեցած սէրդ ու զմայլանքդ սիրեցի ու զմայլեցայ. գրահաշիւի ու եռանկունաչափութեան կնճռոտ խնդրի մը վրայ խոնարհած գլխուդ խոնջութիւնը սփոփել կարծելով, առանց աղմուկի, գողի պէս քալելով, եկայ ետեւէդ պագի սեւ փողփողուն մազերդ որոնց իւզոտ փայլը մօրմէդ առած էիր, ու դուն, քեզի խանգարելուս համար սրտնեղելով, թերի իմն զսպուած ժպիտով մը յայտնեցիր գործ ունենալդ ու մտացիր ըլլալ չուզելդ. դողալով քնքշեցի քու ուղղամիտ ու լուրջ վարմունքդ ամենուն և ամեն բանի հանդէպ. ճըմարտութեան և գիտաստութեան լուսաշաւիղ հորիզոններու մէջ թեւակոխումդ գիտեցի նայուածքովը ծնող թուշունին որ նորափետուր ձագուկին առաջին ճախրանքը կը դիտէ, կեանքի պայքարին մուտքին մօտենալդ ու ժգին բարախումներ դրու լանջքիս տակ. այսպէս սիրեցի պաշտեցի քեզի, խանգաղատեցայ քու վրագ, սիրական որդեակս, որպէս զի օր մը, ժամանակին ու յիշոցին անեզրութեան մէջ անխճուած հինգշաբթի օր մը, առտուն դպրոց երթաս և ալ չգաս...

Վա՛խ վա՛խ, վա՛խ:

Իրաւ, ուրեմն հնարաւոր չէ վերադարձը... Այնպէս է:

Ի՞նչ գնով, Աստուած իմ, պիտի տայիր ինձի այդ անկարելի իրականութիւնը: — Բայց Դուն անկաշառ ես, աւա՛ղ... Գթա, և ներէ. վիշտը յիմար ըրաւ զիս: Ես աղքատս, ի՞նչ կրնամ տալ Գեզի. Դուն ամենէն հարուստն ես. զի յաւիտենութիւնը ունիս, որուն մէջ պիտի առնես մեզ ամենքս:

Զի ամենքս ալ Գուկդ ենք, Դուն ենք:

Գու կամքդ ըլլայ:

15 Oqnosnu. — Ո՞վ ըսաւ ինձի, կարծեմ քունիս մէջ.

«Տարաբա՛խ մահկանացու, ընտրէ սա երկու խորհուրդներէն մէկը և ազատէ».

«Կամ ըսէ քեզի. — Դուն ալ պիտի երթաս այսօր վաղը: Անոր քովը պիտի երթաս: Կարելի է որ գտնաս ու հոգիդ խօսի անոր հոգիից:» Ու այսպէս մխիթարուէ:

«Եւ կամ ըսէ ինքնիրենդ . — «Ես այնպիսի որդի մը չեմ ունեցած երբե՛ք, երբե՛ք : Սուտ կը խօսին անոնք որ հակառակը կը պնդեն : Ես Վահրամ անուն զաւակ մը չունեցայ , որ մինչեւ չորս տարու եղած ատենը՝ գորշ շագանակագոյն բարակ , բարակ երկայն մազերու կնգուղ մը դրած ըլլար՝ որմէ արտաբուրէր , երբ վազվուտէր , քրտինքի բոյր մը աղօթատեղիին խունկը յիշեցնող . որ թոմարու լիկ վարդ սրունքներովը զիս դիմաւորելու վազէր տուն վերադարձիս , և զոր վեց անգամ օդին մէջ վերարձակէի և նորէն ժողուէի բազուկներուս մէջ , երբ ան իրար անցած , ծիծաղելէն մարելով , թափէր գիրկիս մէջ ամեն մէկ անգամուն : Չէ , ես այնպիսի զաւակ մը չունեցայ , որուն երբ՝ պատանի՝ դաս տայի , դասերէս հաճոյք զգալով՝ աչքերուս մէջ բեւեռէր իր գոհունակութենէ ժպտուն աչքերուն խնկելի զուարթութիւնը : Չէ՛ , ես չունեցայ քսաներկու տարու որդի մը որ , լուրջ ուսումներու անձնատուր ըլլալով հանդերձ , քանի քանի անգամ Տօտէի ժաֆը կարգար , գաղտնի սրտատրուփումներու մատնուած , նայուածքը երազուն , տեսակ տեսակ յուզմունքներէն դէմքը քիչ մը նիհարնալով ու տժգունելով , լուսոյ լիճերը լայննալով . . . Չէ՛ , ես այնպիսի զաւակ մը չեմ ունեցած երբեք :»

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Եւ հիմա , սիրելի , պատուական բարեկամս , ձեռքդ տուր ինձի , ու երթանք :
 Կը յիշես , խոստացար ինձի օր մը մէկտեղ երթալ . . . հոն :
 Օրհնեալ ըլլաս այդ խոստումիդ համար :
 Երթանք :
 Հողակոյտին ու սեւ խաչին առջեւ հասած , թեւերնիս ծալլած երկու վայրկեան կանգուն մնանք :
 Արցունքի կաթիլ մը . մէկ հատիկ , ինչայ անօր վրայ . ու թափած տեղը ծաղիկ մը բուսնի . անմահութեան ծաղիկը :
 Դուն հոգւոյ անմահութեան կը հաւատաս : Ես ալ կը հաւատամ հիմա :
 Երթանք :

Յ . Ս Ե Թ Ե Ա Ն

Ե Ր Ո Ի Ա Ն Դ Ս Ի Ր Ո Ի Ն Ե Ա Ն

ՓՈՐԱԳՐԻՉ ՈՍԿԻՒ ԵՒ ԱՐԾԱԹԻ ՎՐԱՅ

Շքեղ մօճկբամներ , սկրնատառեր՝ ժամացոյցի կափարիչի , գաւազանի գլուխներու , ծխատուփերու , փոխկապի ասեղներու և թեւնոցի կոճակներու : Ալիսնսի մատնիկներ կը զարդարէ : Ոսկի և արծաթ բերէ՛ք և հրաշակերտուած ետ առէ՛ք : Աշխատանոց՝ Պողար Մուրուր , Ժ . Բարվիսի քովը :

Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ը Ա Ս Ե Ր Ա Շ Խ Ո Ի Թ Ի Ե Ն Ը

. . . Գրող և ընթերցող , ինչ գոյնի ալ որ պատկանին , ինչ դասի ալ որ վերաբերին , յարգելի են այնքան և գնահատելի են այնքան , որքան որ անկաշառ և անկաշկանդ են իրենց դատողութեան մէջ : Ո՛վ որ հոգւով ստրկացած է՝ չի կրնար ազատութեան մասին գաղափար կազմել : Ո՛վ որ իր յարաբերութեանցը մէջ շղթայուած է՝ չի կրնար համերաշխութեան մասին կարծիք յայտնել :

Ամէն բանէ առաջ , համերաշխութիւնը իշխանութենէ մը չկրնար բղխիլ : Քաղաքական կամ կրօնական , միապետական կամ ռամկապետական , համերաշխութիւնը իշխանութիւն չի ձանչնար : Ո՛չ մէկ հրաման , ո՛չ մէկ սպառարարութիւն , ո՛չ մէկ սաստ կամ սպառնալիք , իշխանութեան ուէ ձեւի ուէ գործածում կամ զեղծում , ուժի ուէ տրամագրութիւն կամ արտայայտութիւն , յանուն և յօգուտ համերաշխութեան կարելի չէ ըմբռնել : Կարելի չէ նոյն իսկ ենթագրել , ի պատիւ և ի նանիւր պիտի երթար այդօրինակ ուէ քայլ կամ փորձ : Ի վրաս և երբե՛ք ի նպաստ պիտի ընթանար այդգունակ ուէ ուղղութիւն կամ ձեռնարկ : Համերաշխութիւնը կոյր հնազանդութիւն չի ձանչնար : Հակառակ պարագային , հրամայողի ընթացքը բռնութիւն պիտի նկատուէր , հնազանդողի ընթացքը՝ վատութիւն : Համերաշխութիւնը ոչ մին և ոչ միւսն է : Համերաշխութիւնը համաձայնութիւն կը նշանակէ և համաձայնութիւնը՝ հաւատարմութիւն : Անհամերաշխ միջոցներով կարելի չէ համերաշխութիւն գոյացնել և մանաւանդ կարելի չէ զայն պարտագրել : Համերաշխութիւնը զօրք չունի , զօրանոց չունի և ոչ ալ զօրապետ : Բանտ չի ձանչնար և ոչ ալ բանտարկեալներ : Համերաշխութիւնը ազատութիւնն է ազատութեան մէջ : Հակառակը պնդել և իշխանութեամբ հետապնդել զայն՝ կը նշանակէ անկէ աւելի հեռանալ և զայն աւելի հեռացնել : Ո՛վ մեծա-

մեծներ, մի՛ դարձանաք, և մանաւանդ մի՛ զայրանաք: Համերաշխութիւնը ամէն բանէ առաջ համեստութեամբ կը սկսի: Կ'ուզէ՞ք խորհիլ և խորհրդակցիլ, կ'ուզէ՞ք համոզել և համոզուիլ, ուրեմն պատրաստ գտնուեցէք փոխադարձ ամէն բացատրութիւններու և անհրաժեշտ բոլոր լուսաբանութիւններուն: Համերաշխութիւնը համագործակցութիւն կ'ենթադրէ և համեմատական զիջողութիւններ և զոհողութիւններ կը պահանջէ: Այս է ճշմարտութիւնը: Համերաշխութիւնը հրամանէ մը չի կրնար բղխիլ:

Համերաշխութիւնը ամբոխէն չի կրնար բղխիլ: Ծովերու ոչ մէկ ալիքին և հովերու ոչ մէկ հոսանքին կը նմանի: Բազմախուռն և բազմախուռ ամբոխի մը առջեւ հռչակուած և փառաբանուած համերաշխութիւն մը համերաշխութիւն չէ: Եթէ նոյն խոսքը սաղմոսը և խօսուած քարոզը խորանի մը բարձունքէն բարբառին: Համերաշխութիւնը քահանայի մը խաղաղութիւն ամենեցունով չի սկսիր և ոչ ալ անոր պահպանիչով կը վերջանայ: Ոչ մէկ քոչոյ, ոչ մէկ ցնձոյ, ոչ մէկ բուրվառ կարելի չէ օգնութեան բերել համերաշխութեան: Ոչ մէկ հոետոր իր հմայիչ խօսքերով, ոչ մէկ քարոզիչ իր պատգահիկ ձայնով, ոչ մէկ ամբոխավար իր ամպրոպորոտ գոռումով, ժողատ կամ ճաղատ ոչ մէկ վսեմութիւն, տիտղոսաւոր կամ անտիտղոս, պէտք չէ և իրաւունք չունի ազդելու, լարելու, գրգռելու, քշելու ամբոխը դէպի շինձու ու թափձու միաբանութիւն մը: Համերաշխութիւնը բնական հետեւանքը պէտք է ըլլայ ազգի մը մտածող և գործող ուժերուն, ցեղի մը դրական արժէքներուն: Արաբիոյ բոլոր հաշիշները գեր չեն կրնար կատարել ամբոխային շիդերու վրայ: Հայաստանի բոլոր ծաղիկներէն քամուած, հազար ու մէկ աղօթքներով օրհնուած Մեռոնը չի կրնար ազդել ի բնէ անզուսպ և անսանձ տարրերու վրայ: Ո՛վ որ կը շոյէ ու կը շահագործէ ամբոխը՝ պիտի ենթարկուի անոր քմահաճոյքին և անոր քարկոծման: Համերաշխութիւնը ազատ և հաստատ գիտակցութիւն մը կ'ենթադրէ: Միայն և միայն անկախ քաղաքացիներ կրնան անխարդախ դաշինք մը ստորագրել, ինչպէս որ միայն ազատ ցեղերը կրնան հարազատ հայրենիք մը ստեղծել: Համերաշխութիւնը ամէն բանէ առաջ դաշնագրութիւն մըն է, պատուոյ խօսքն ու կապն է ան, բայց պատիւը ամբոխէն չի կրնար բղխիլ:

Համերաշխութիւնը սոսկ կուսակցամու հաշիւներէ և կամ դասակարգային շահերէ չի կրնար բղխիլ: Կուսակցական ոչ մէկ դրօշ, ըլլա՛յ պահպանողական, ըլլա՛յ յեղափոխական, ո՛ր աշտարակի ծայրէն ալ ծածանի, ո՛ր գեղեցիկ գոյնին ալ պատկանի, չի կրնար խորհրդանշանը համարուիլ համերաշխութեան: Խոստովանինք, կուսակցական պայքարը եթէ միջոցն ու ազգակն է ընկերային յառաջդիմութեան, եթէ կենսատու և կազմուրիչ հոյն է նեխաշաղիղ զանգուածներու և մահաթմբիր լճացումներու, սակայն սնափառ և անփորձ ղեկավարներու ձեռքին կրնայ մեծագոյն պատուհասը և ազէտը դառնալ ընկերութեան մը գլխուն, կրնայ վտանգել անոր գոյութիւնն իսկ: Ազգ մը, ցեղ մը, եթէ պէտք է որ շարժի ու յառաջդիմէ, սակայն պէտք է միանգամայն որ անդ շարժումը իր չափն ու կշիռը, իր յանգն ու դաշնաւորումն ունենայ: Համերաշխութիւնը դրօշներու հաշտութիւն, դաշնակցութիւն կը նշանակէ և ոչ թէ դրօշի մը տիրապետութիւնը: Մենք իրաւունք չունինք նոր սերունդները շղթայելու մեր հաւատամքին: Բռնակալութիւնը ատելի է ամէն ժամանակներու և ամէն ձեռքի մէջ: Ինչպէս որ մենք ազատօրէն ընտրեցինք մեր աշխարհահայեացքը, մեր յաջորդները ազատ պէտք է թողունք իրենց հորիզոնները տեսնելու, որոշելու: Մեր նախորդները բռնացան մեր խղճին, մենք բողոքեցինք անոնց դէմ: Ձի կրկնենք մեր նախորդները որպէս զի մեր հետեւորդները չի կրկնեն մեր բողոքը մեզի դէմ: Ո՛վ յեղափոխական ընկերներ, համերաշխութիւնը կարելի չէ գաղտնի ժողովներով գոյացնել, ոչ ալ գաղտնի քուէարկութիւններով վաւերացնել: Համերաշխութիւնը գոց դռներ չի ձանձնար և գոց սրտերէ չի կրնար բղխիլ:

Համերաշխութիւնը կեղծ հանդէսներէ և մանաւանդ կեղծաւոր հանդիսականներէ չի կրնար բղխիլ: Համերաշխութիւնը սրտերու մէջ պէտք է տեղի ունենայ և ոչ թէ սրահներու մէջ: Շաղաւաչութիւն խօսքեր, սուտակասպաս փսփսուքներ, լիահագագ և լիաթօք քրքիջներ կրնան նոր Եասընաններ պարտկել: Զգո՛յ՛: Համերաշխութիւնը վճիտ և յստակ հոգիներ կը պահանջէ, հորձառու և ճարտար բազուկներ կ'ուզէ, ողջախոս և խելահաս մտքերու կը կարօտի: Համերաշխութիւնը խօսք մը չէ, այլ գործ մը և գործերուն ամենէն դժուարինը գոր իր յատուկ գործաւորներուն պէտք

է յանձնել: Իրաւունք չունի և պէտք չէ յանուն համերաշխութեան խօսի այն կուսակցականը որ միայն աթոռ մը փնտռելու ջանաց, այն երեսփոխանը որ քուէներ գնեց և աստիճաններ ծախեց, այն խմբագիրը որ թերթին մէկ անկիւնը վրէժ լուծեց փողոցին անկիւնը հանգիւյսած մարդէն, վերջապէս այն պնակալէզը որ խոնարհեցաւ, երկրպագեց, լիզեց, շոյեց, շողօքորթեց իր ամբողջ կեանքին մէջ: Իրաւունք չունի և պէտք չէ յանուն համերաշխութեան խօսի սաղիմական այն կրօնաւորը որ չի հաւատաց բայց ազօթեց ուրիշին համար, որ փառաբանեց Տէրը որպէսզի ինքը փառաւորուի, որ համբուրեց սկիհը իր ձեռքը համբուրել տալու համար, որ պակսեցուց օրհնէնքը երբ պակսեցաւ նուէրը, որ մեղք գործեց և սակայն անմեղներ դատելու ելաւ: Իրաւունք չունի և պէտք չէ յանուն համերաշխութեան խօսի մանաւանդ այն մեծատուն ազգայինը որ իրեն ինկած բաժինը զլացաւ և սակայն ստիպեց աղքատը իր տուրքը տալու, որ իր ամենէն քիչը տուաւ Ազգին և սակայն ամենէն շատը ակնկալեց անկէ, որ գլուխ կեցաւ համազգային համերաշխութեան և սակայն համազգային պառակտումի պատճառը եղաւ: Ո՛չ, համերաշխութիւնը կեղծիք չի ճանչնար և բռնազրօսիկ ու արուեստակեալ միջոցներէ չի կրնար բղխիլ:

Համերաշխութիւնը չէզոք յորջորջուող և կամ անտարբեր տարրերէ չի կրնար բղխիլ: Ազաւնիւ միամտութիւն և ազուէսի չարամտութիւն պիտի նկատուէր այդ գունակ ու կէ կարծիք: Յայտարարենք բարձրաձայն: Ազգի մը խաղաղ, սովորական, բնականոն պայմաններուն և ժամանակներուն մէջ չէզոք կամ անտարբեր տարրերը կրնան օգտակար չըլլալ ընկերային յառաջգիմութեան առանց անպատճառ վնասակար դառնալու: Սակայն Ազգի մը վճռական և ճգնաժամային վայրկեաններուն՝ անտարբեր և անորոշ ընթացք մը՝ աններելի պիտի ըլլար և մեղքերու անքաւելին: Տգիտութիւնը երբեք այդքան խոր ու թանձր խառով ու խաւարով կարելի չէ ենթադրել: Բացատրենք: Ամենքս ալ ստրուկ ցեղի մը գաւազներն ենք: Ոչ ոք կրնայ խոստովիլ Հայութենէն: Ո՞վ կրցաւ ծածկել իր ինքնութիւնը, ծագումը: Մեր ճակատին Հայ անունը գորշմուսած է: Ո՞վ կրցաւ խեղաթիւրել զայն: Մենք մեզ կարենանք թերեւս խաբել, սակայն օտարը երբեք չէ խաբուած: Մենք Հայ ենք, Արմէն: Բոլորս ալ կապուած ենք գերութեան նոյն շղթային: Մեզմէ ոմանք իրենց կամքը կը գնեն և իրենց կեանքը կը զոհեն շղթան խորտակելու և բոլորիս ազատութիւնն ալ ապահովելու: Ուրիշներ գեռ կը մրափեն, գեռ կը յամենան և իրենց թմրութեամբ և ծանրութեամբ կը ծանրացնեն առաջիններու ճիգն ու պայքարը: Անոնք բացասական մտք կը

կազմեն շարժումին, ազատագրումի շարժումին: Յեղին ցեխն են անոնք: Յեղին ցեցն են անոնք: Համերաշխութիւնը չի քնանար: Մշտարթուն պահակն է ան բոլոր թշնամի սահմաններուն վրայ: Մշտափառ փարոսն է ան ալէկոծ և ողբակոծ Ազգի մը գլխուն: Համերաշխութիւնը անշարժութիւն չենթադրեր և հետեւաբար անտարբեր տարրերէ չի կրնար բղխիլ:

Համերաշխութիւնը դիպուածին ու զէպքերու բաղխումէն չի կրնար բղխիլ: Սպասել, որ գեղեցիկ օր մը արեւը համերաշխութեան ողջոյնով մը ծագի հայ ազգին վրայ, յիմարութիւններու ծիծաղելին պիտի ըլլար և խենթութիւններուն ամենէն ողբերգականը: Որովհետեւ ոչ ոք պիտի երաշխաւորէր թէ նոյն օրը նոյն արեւը արիւնոտ չպիտի իջնէր հայ հորիզոնին վրայ: Սպասել, որ ամէն ոք իր դրան առջեւ մաքրելով հայրենի բոլոր քաղաքները և ճամբաները մաքրուած ըլլային, երազներու երազը պիտի սեպուէր և յոյսերու անյուսալին: Որովհետեւ ոչ ոք պիտի երաշխաւորէր թէ առանձինն, ամենքն ալ, ձեռնհասութեամբ, գիտակցութեամբ և իր ժամանակին պիտի կարենային կատարել մաքրութեան գործը: Սպասել, որ ամէն Հայ, անհատապէս և անջատաբար կրթուէր, ազնուանար և տարր դասնար համերաշխութեան, յանցանքներու ամենածանրը պիտի համարուէր և սխալներու անդարմանելին: Պէտք է սորվիլ համերաշխութիւնը, ինչպէս որ կը սորվինք ուրիշ ուէ բան: Պէտք է անհրաժեշտ դաւանինք և ընդունինք զայն մեր հաւաքական գոյութեան համար, ինչպէս որ անհրաժեշտ կը համարինք մեր իսկ մարմնոյ արեան բնականոն շրջանառութիւնը: Պէտք է անկեղծօրէն և յամառօրէն իւրացնենք և աստուածածացնենք զայն, որովհետեւ պատրանքներու աղէտալին պիտի ըլլար կարծել թէ համերաշխութիւնը սոսկ պարագաներու բերումէն և կամ բախտի խաղերէն կրնայ բղխիլ:

Համերաշխութիւնը սկիզբն ու վախճանն է մարդկային արդարասիրութեան: Կորիզը և խարիսխը միանգամայն բոլոր օրէնագրութեանց: Յեղ մը համերաշխած չէ ինքն իր մէջ, կը նշանակէ թէ երաշխաւորած չէ իր յաղթանակը: Բազուկը որ կը շարժի շղթայագերծ ըլլալու, կ'ենթադրէ անմիջականօրէն կամքի և ջիղերու համագործակցութիւն մը:

.....
 Ո՞վ իմ շղթայակից եղբայրներս, կ'ուզէ՞ք ազատ ապրիլ, ինքնավար և ինքնակամ կեանք մը ունենալ, պէտք է պատրաստ գտնուիք ուրեմն ամէն զոհարարութեանց, և զոհագործութեանց գերագոյնին, սրբազնագոյնին, վերջին ձեւին, արեան և կենաց նուիրումին: Որովհետեւ, լսեցէ՛ք, միայն արիւնն է որ կրնայ մկրտել և հաստատել ճշմարիտ համերաշխութիւնը:

ԳԱՐԵԳԻՆ ՏԻՒՐԿԵՐԵԱՆ

ԵԳԻՊՏԱՅԱՅ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ԳԱՐԵԳԻՆ ՏԻՒՐԿԷՐԵԱՆ

Վենետիկի մէջ շաղուած ազնիւ խմոր մը, որուն վրայ ժընէֆը իր անեղծ կնիքն է զարկեր:

Անոնք որ՝ մեր նոր սերունդին մտաւորական կազմաւորման տեսակէտէն՝ այդ երկու օտար ոստաններու հայկական դերը ճանչցան, պիտի հասկնան թէ ի՞նչ ըսել կ'ուզեմ:

Երկու դպրոցներ՝ որ զիրար ամբողջացուցին, յաճախ, անկախաբար իրենց վարիչներուն կամքէն կամ կանխատեսութիւններէն:

Մխիթարեանութիւնը հայ գիրին ու գրականութեան արդիական անդրանիկ դպրոցն էր արդէն: Ժընէֆականութիւնը իտէալիսթ գործողութեան առաջին դպրոցն հանդիսացաւ մեր մէջ:

Ըսել չէ թէ այդ երկուքէն անցնող բոլոր Հայորդիներն ալ գրական մշակներ կամ միլիթրան գործիչներ եղան: Բայց անոնցմէ քիչեր են, գրեթէ բացառութիւններ, որոնք խորթ մնացած ըլլան Հայ Գաղափարին ու Հայ Պայքարին շերտնուանդ համակրութիւններուն:

Գարեգին Տիւրկէրեան վենետիկեան ուսանողի իր ամբողջ խանդաղատանքը կը պահէ Հայ գրական ստացւածքին նկատմամբ, բայց՝ Բագրատունիներու, Հիւրմիւզներու, Ալիշաններու շունչով աւագածուն մթնոլորտէ մը իրեն թափանցած, իր մտաւոր դիմագծութիւնն օժող պայծառութիւնը կը բարդուի, երբեմն թեթիւ իմն կը խոժոռի, տեսակ մը հանդիսաւոր արտայայտութեամբ, որ եթէ ժագօպէն տիպարին ծամածուռ դաժանութեանը չերթար, սակայն աղանդաւորի տարապայման լրջութիւն մը կուտայ իրեն ու վարդապետական շեշտ մը՝ իր խօսքին, գրեթէ ամեհի կշռոյթ մը՝ իր շարժուձեւերուն:

Ու այն ատին կը զգաս նաև թէ գուցէ իր բնական ճամբէն շեղած քնարերգութիւն մըն է որ Դանիէլ Վարուժանի երէկուան այս դասընկերին խառնուածքէն կը յորդի ընկերական խօսակցութիւններու և ընկերարանական հարցախուզութիւններու մէջ, ուր քիչեր իրեն չափ ողորկ ու

հնչական բառամթերքով մը, սահուն ու վայելչապերճ հայերէնով մը կ'արտայայտուին, կ'արտագեղան:

Մուսաներն երգնկայի այս հարազատ զուկին ընկերացած են Վենետիկէն Զուլիցերիա, ու Լէմանի եզերքն ալ

Գարեգին Տիւրկէրեան իր պատանեկան և րազներէն սիրուն ու ներգաշնակ տաղեր հիւսած է, ի տալական քան ցօնեքքաներուն գոգարիկ մեղանուշութեամբը թրթռուն:

Բայց զուլիցերական համալսարանաւանական ու հայ մտաւորական միջավայրը վեհերոտ մեկուսացում մը հարկադրած է վենետիկեան պուէտին, ու անոր հասարակական ձրգտումներն ու ընդունակութիւնները զարգացնելու ձեռնտու եղած է առաւելապէս:



Մեր Գարեգին Տիւրկէրեան

Գարեգին Տիւրկէրեան տարիներով առօրեայ հպուսի մէջ եղած է հոն ուստահայ մտաւորական ընտիր տարրերու հետ, այլ մանաւանդ հմայքին տակ ապրած է Քրիստափոր Միքայէլեանի, Սիմոն Զաւարեանի, Պաշտուր Մալումեանի, Միքայէլ Վարանդեանի պէս ուստահայ ականաւոր գործիչ

ներու, որոնք Եւրոպայի հայ ուսանողութեան քաղաքացիական դաստիարակումին արգաւանդ գործն ալ հետապնդելէ չի դադրեցան իրենց յեղափոխական ներուժ ճիգերուն ու կլանիչ մտահոգութիւններուն մէջ:

1911ին՝ Լիսաբնի ան Տրուաի վկայականը ծոցին՝ Եգիպտոս եկած, Մէթր Գարեգին Տիւրկէրեան չաճապարեց կենսապայքարի ասպարէզը նետուելու, անմիջական տիրացումներու և հնարաւոր նուաճումներու անձկանքովը: Անոնցմէ էր — այն բաղաւորներէն — որոնց ապրուստի հարցին համար կեանքը միշտ առձեռն լուծում մը կը վերապահէ:

Մէթր Տիւրկէրեան շունչը յաջողած փաստարանի մը գրասենեակը չառաւ, իր սրածն ընելու և ո՛ր առաջ «մարդ ըլլալու» յաջս անոնց որոնք մարդ բառը հակառակ կողմէն միայն կրնան կարգալ:

Աղեքսանդրոյ Ազգ. Վարժարանին տեսչութիւնն ըստանձնեց՝ Ապու-Տարտարի ամենափոթորկայոյզ մէկ շրջանին, և — զարմանալի պարագայ — Մէթր Տիւրկէրեան եգիպտահայ իրականութեան մէջ գրեթէ աննախընթաց օրինակն ընծայեց իր վրայ գէշ-խօսեցնել չի տալու, և ասիկա՛, առանց խըղձմտանքի որեւէ սակարկութեան, առանց արժանապատուութեան ամենադոյզն զիջումին:

Կատարելապէս ուղղամիտ ու forrէք պաշտօնավարութեան մը վերջ որ կրնար դեռ երկարաձգուիլ, այս «կուսակցական»ը առանց իր շուրջ որեւէ «խնդիր» յարուցած ըլլալու, կամովին հրաժարեցաւ Պօղոսեան Վարժարանի տնօրէնութեան և ինքն իր մէջ ամփոփուեցաւ, հակիրճ այլ համոզիչ փորձառութեան մը ընթացքին հաւանաբար հաստատելով որ եգիպտահայ պաշտօնական տիրոյթը այլապէս ընկալուչ ու բեղուն ծոց մը չէր բանար թեքուիլ չուզող իր նկարագրին:

Մէթր Գարեգին Տիւրկէրեան, թէև հակամէտ ինքնաստուերածումի, բայց անոնցմէ է որոնք չին կորսուիր ցանցառ արժէքներով կէտկիտուած եգիպտահայ հանրային մարզին մէջ: Ան իր անկողնութիւնը չի սակարկեց արդէն ընկերական գործօն տարրերուն:

Պարագաներու բերումով, Մէթր Տիւրկէրեան ցարդ փոյթ չունեցաւ արժեցնելու՝ վիճետիկ տաշուած ու Զուցերիա թրծուած իր գրիչը, որմէ բղխած կուռ արձակի նմոյշը — «Համազգային Կազմակերպութիւնը» անուն իր անտիպ գործէն քաղուած — «Տարեցոյց» իս ընթերցողներուն մտածել պիտի տայ, զարմացախառն հաճոյքով մը, անշուշտ, թէ եգիպտահայ գրական կաճառներէն դեռ չի դատուած մէկն ալ կայ եղեր որ տիրաբար զրուցելիք իր խօսքն ունենայ տակաւին...:

ԲՕՐ-ՍԱՅԻՏԻ

Կիլիկեան Զօրագաղութը

Ե Ի

Եգիպտահայ Կարմիր-Խաչը

Վերջացող տարուան Սեպտեմբեր 14ին, Բօր-Սայիտէն, Տօքթ. Արշարունի, լակոնական հեռագրով մը, կ'իմացնէր Ազգային Առաջնորդարանին, թէ 5,000 հայ զաղթականներ Բօր-Սայիտ հասած էին:

Այս անակնկալ լուրն անմիջապէս կը տարածուէր եգիպտահայ Գաղութին բոլոր խաւերուն մէջ, և թունդ կը հանէր բոլոր սիրտերն ու խղձմտանքները:

Անստուգութեան քանի մը օրերէ յետոյ, կը տեղեկանայինք, թէ այս զաղթականները Սուէտիոյ քաջարի գիւղացիներն էին որոնք ընդհանուր տեղահանութեան կառավարական հայջինջ հրամանին դէմ ապստամբելով՝ Մուսա Լեռն ապաստաներ էին, և յիսնօրեայ դիւցազնական դիմադրութենէ մը վերջը, սուէտեան եղերքներէն անցնող Ֆրանսական մարտանաւի մը ուշադրութիւնը գրաւեր էին՝ իրենց բարձունքներէն կարմիր-խաչակիր հակայ դրօշակ մը ծածանեցնելով: Ասպետական Ֆրանսան իր փրկարար օգնութիւնը չէր սակարկիր իր «փոքրիկ դաշնակցին»՝ Հայաստանի այդ կտրիճ զաւկըներուն, ու Արեւելեան Միջերկրականի Ֆրանսական նաւատորմիլէն յաճանաւեր զանոնք ձէպէլը-Մուսայի ծոցէն Բօր-Սայիտի աւազուտքը փոխադրեր էին:

Սուէտիացիներուն յեղակարծ ժամանումը հոգեբանական ներուժ խոռվքի վայրկեան մը եզաւ մեղի համար:

Սուէտիոյ մեր գեղջուկ եղբայրներն ինքզինքնին չէին փրկիր միայն, այլ Հայութեան բարոյական վարկը փրկողներէն, բարձրացնողներէն եղեր էին: Եւ ասոր համար Ազգն երախտապարտ կը մնար իրենց:

Երբ հարիւր հազարներ անդիմադիր ու գլխիկոր կ'ըլնային տարագրութեան մահաշուք ճամբան, շատերն իրենց զէնքերն յանձնելէ յետոյ, Սուէտիացի այս կտրիճները գլուխ բռներ էին, իրենց ազատաշունչ լեռներուն ձայնին մտիկ ընելով... Ստրկութեան աւետարանը քարոզիչ չէր ունեցած իրենց մէջ... Չօք-Մարզուանն ի՞նչով արգիօք վար կը մտար իրենցմէ, այն Չօք-Մարզուանը որ երկիցս կուրծք տուեր էր թրքական արիւնխանձ գրոհներուն, ու յաղթականորէն վերապրեր... Միթէ՞ ծովէն նախախնամական օգնութիւն մը անյուսալի էր իսպառ տարարող Տէօրթ-Յօլին համար... Բայց վերջին տարիներն ի՞նչ պղտոր ու բռնագրօսիկ հոսանքներով խաթարեցին կիլիկեան մեր ամենէն անուական ու անընտել տարրերը... Արգիօք քանի՞ «առաջնորդող» բերաններէ նորէն արտասանուեցաւ «Յանձնուեցէ՛ք, յանձնու ի՛նք» կարգախօսը... Տարօնցի ՄխօՇահէն մը ամէն անգամ չի պատահիր գանուիլ հոն, ուր հակա-յեղափոխականութիւնն ալ բտեր է ու կը ծաղկի՝ վեհափառ ու վսեմափայլ հովանիներու տակ...

«Մենք չի՛ պիտի յանձնուինք», ըսեր էր Սուէտիացին անո՞նց որ համակերպութեան կը յորդորէին զինքը։
 Ու փոթորիկէն դուրս եկեր էր հսկայական, աղէտքէն վերապրեր՝ անմահացած, կիլիկիոյ դահիճներէն հողարեակ մը շանսատակ պառկեցնելով Մուսայ լեռան կիրճերուն մէջ... Ի՞նչ հոյակապ գաս էր ստիկա, ի՞նչ զգայացունց ու ջախջախիչ ապացուցում՝ որ կուգար մեզ վշտահար գալարել երէկուան մեր ճիգերուն, մեր թախանձագին կոչերուն ու հեւասպառ հետապնդումներուն անբաւական արդիւնաւորմանը մասին։


Սուէտիացիները կը մխիթարէին, կը սրտապնդէին մեզի, իրենց բերած արիական հովերովը, իրենց ծոցեր ու ձննդարեր կ'իններոջն ու իրենց երեխայ-կորիւններովը։

Կամաւորական ու ապստամբական մեր շարժումներուն հետ որոնք հայկական բարոյականը բարձր ու ամուր բռնեցին, կիլիկիոյ այս առիւծասիրտ գեղջուկները մեզի կուտային ցեղին ապագային հաւատալու անհրաժեշտ ուժը։

Մուսա Լեռան դիւցազնավէպը ծանօթ է մեր ընթերցողներուն, եգիպտահայ մամուլին տակէն մէկէ աւելի «Նկարագրութիւններ» լոյս աշխարհ հանած ըլլալով արդէն։ Հայ-

կական քնարը, օր մը, անշուշտ, զայն շքեղօրէն պիտի երգէ... Եգիպտահայ Տարեցոյցին կը մնայ արձանագրել այն փաստերը որ նախ ժխտական, ապա դրական ու հետզհետէ մխիթարական կերպով բնորոշեցին մեր վերաբերմունքը Բօր-Սայիտի կիլիկեան Զօրագողութին հանդէպ։

Հայկական ներկայ ճգնաժամին վաղուան պատմագիրը՝ հայրենի արհաւիրքներուն հանդէպ Արտասահմանի մեր հոգեբանական կերպարանքն ուրուագծած ատեն՝ խռովագին



Կարմիր-խաչակիր դրօշակը որ Մուսա Լեռան բարձունքէն Ֆրանսական սապետութիւնն առիւնցնեց։

Կանգ պիտի առնէ Բօր-Սայիտի կիլիկեան դրուագին առջեւ։
 Անիկա ի գուր պիտի փնտռէ եղբայրական ու քրոջական աղապատանքի անզուսպ ու անմիջական ժէսթեր, որոնցմով 1915ի երջանիկ եգիպտահայերը փութացած ըլլային գիմաւորել իրենց կտրիճ ու նաւաբեկ ցեղակիցները, նախախնամական աջակցութեամբ մը իրենց գերկը — ո՞տքը — բերուած նետուած...
 Գի՛րկ... Ա՛հ, բառերուն հեզնանքը, ո՞ւր էր այդ գիրը

կը, և անոր ետին բարախող սիրտը՝ որ հայրենի բոլոր անօգնական նահատակուածներուն կարօտն ու ներողութիւնը Սուէտիոյ վերապրողներէն պիտի վազէր առնել, անոնց աչքերուն արցունքը խմելով, և անոնց երեսներուն վրայ ցաթեցնելով անխառն ու անպատիր սփոփանքին ժպիտը:

Չէ՛, եգիպտահայ հոգին ընդառաջ չի շտապեց սուէտեան մեր հերոսական փախտականներուն: Անոնք՝ Բօր-Սայիտի աւազուտքին վրայ տախտապարած՝ միմիայն օտար մարդասիրութեան շնորհիւ սովամահ չեղան և հակառակ իրենց անուշով կատարուած պաշտօնական ու անպաշտօն այցերու և երթեւեկներու՝ անոնք եգիպտահայ հաւաքական ազգու հոգածութեան մը առարկայ չեղան բաւական տտեն:


Սպասելով որ բարեխնամ իշխանութիւնները 4,200 բերաններու տաք կերակուր հայթայթելու համար անհրաժեշտ կարգադրութիւնները լրացնեն, անոնց գոյութիւնը պահպանող ճիթապտուղ կամ պանիր-հացը գաւաթ մը թէյով թըրջելու շնորհքը չունեցանք մենք շարաթներով:

Գիտնի վրայ թողուցինք հազարաւոր կիներ ու երախաներ, ու թեթեւ վերմակներ անգամ չի կրցանք նոյնհետայն ճարել գիշերուան պաղերուն դէմ զիրենք պատասպարելու համար:

Արեւուն մայրամուտին հետ՝ մութին մէջ սմբիլ, իյնալու, աչքերնին գոց մեզի նայելու մասնեցինք զիրենք, և ճառագայթ մը լոյս չի կրցանք ապահովել իրենց — գէթ քանի մը անտուկ մոմով — որպէս զի գիշերային իրենց տաժանքը տեսանելի դառնար իրենց, որպէսզի իրենց ցաւերուն կարենային նայիլ, գոնէ, անոնց դարման մը, ճարճարակ մը հասցնելու համար չի ստիպուէին արշալոյսին սպասելու...

Մեր քողքենի չափաւոր, խելօքիկ, պարկեշտունակ կարեկցութիւնը մանկամարդ յղի մայրերուն համար իսկ թունդ չեղաւ այլապէս. չի գնաց, չի փարեցաւ անոնց կաթոգին գուրգուրանքով, ցեղին կենսունակութեան այդ պայծառ ու պաշտելի աղբիւրները, այդ արիական ու նուիրական քոյրերը, գորովագութ ու ջերմուանդ թեւերով չի վերցուց աւազին ու ցեխին մէջէն, ու թոյլ տուաւ որ Սուէտիոյ հպարտ ու անընտել Հայուհին՝ ծննդաբերութեան գալարումներէն բռնուած՝ աչքերէն լուռ արցունքներ հոսեցընելով, լեզուն ակռաներուն մէջ սեղմէ, ու լռիկ դուրս սո-

ղակի վրանին տակէն, ու գիշերուան խաւարին մէջէն քաշկըռտուելով՝ իր արգաւանդ արգանդն առնէ երթայ՝ Քեմբէն քիլօմէթը մը հեռու, անապատին ամայութեան խորը, ա-



1. Ֆրանսական ազսարար մարսանաւերէն մեկը:
2. Փրկուբեան ծովեզրէն լասափայտով նաւամուսքը:

ւազներուն վրայ միւ-միմակ իյնալ թալթիւլու, գեղջուկի զմայելի ամօթխածութեամբ մը կրցած չըլլալով հանդուր-

ժել, որ տղաբերքի իր աստուածային մանջանքը ցուցադրուի միեւնոյն վրանին տակ պատսպարուած համագիւղացի էլերու աչքին... Քեմբլին պահապան հրեշտակը, Միսիս էլկուտ այս տեսակի մէկէ աւելի պարագաներու առջեւ գըտնըւեցաւ և անապատին աւազները տակնուվրայ բրաւ, փախըտական ծննդաբեր մայրերը գտնելու և զանոնք հիւանդանոց փոխադրելու համար, իրենց նորածիններուն հետ...

Բարեբաղդաբար, եգիպտահայ այս անկարելի վերաբերմունքը չի յաւերժացաւ Բոր-Սայիտի մեր Զօրագաղուն թին հանդէպ, շնորհիւ մասնաւորապէս Հայ Կարմիր-Պաշին, որ Սուէտիացիներուն գալուստէն առաջ կազմակերպուած էր արդէն, հայկական ռազմաբեմի մեր վերաւոր կամաւորներուն ու պատերազմի այլ վերաւոր զոհերուն օգնութիւն փութացնելու նպատակով:

Արաբկիրի կրթասիրաց, Նարեկեան կրթասիրաց, Միացեալ Որբախնամ, Գալուստեան Շրջանաւարտից և Հ. Ե. Ք. Ընկերակցութեան եգիպտահայ մարմիններն իրենց հիմնադրամներէն մէյմէկ համեստ գումար տրամադրելով և մեր յարանուանական, բարեգործական ու քաղաքական հաստատութիւնները խորհրդակցութեան հրաւիրելով՝ գովելի նախաձեռնութիւնն ունեցած էին եգիպտահայ բոլոր շերտաւորումները ներկայացնող հետեւեալ անձերէն Հայ Կարմիր-Պաշի վարիչ Մարմինը կազմելու. — Տեարք՝ Արշակ Ֆէրմանեան (Ատենապետ), Փրօֆ. Յ. Թ. Գայեան (Ատենադպիր), Թորգոմ Ֆիշէնկճեան (Գանձապահ), Վեր Հ. Խանդամուր, Տօքթ. Ա. Տէր-Մարգարեան, Արտաշէս Նետուրեան, Ղազարոս Բոլատ, Միհրան Աժտէրեան, Կարապետ Գանարեան, Սեդրակ Օտապաշեան:

Հայ Կարմիր Պաշի վարիչ Մարմինը գործի սկսաւ անմիջական աջակցութեամբը Տիկնանց Յանձնախումբի մը, որ կը բաղկանար խումբ մը սրտոտ ու ժրաջան Հայուհիներէ. — Տիկնայք՝ Նետուրեան (Ատենապետուհի), Ֆէրմանեան (Ատենադպրուհի), Բոլատ (Գանձապահ), Տէմիրճեան, Միհանօֆ, Շամլեան, Տէօքմէճեան և Օր. ք Պաթմանեան և Օգոստինոսեան, որոնք Պուլտքի Մանկապարտէզը տենդային գործունէութեան «Մեղունոցի» մը կը վերածէին ճերմակեղէն, վերակապ, ևն, պատրաստելու գոր-

ծին մէջ խտացնելով քաղաքին հայ իգական սեռին լաւագոյն կորովները:

Միեւնոյն ատեն Հայ Կարմիր-Պաշն ունեցաւ իր Բժշկական Յանձնախումբը, որուն երկու անդամները՝ Տօքթօրներ Պ. Սերոբեան և Մ. Շամլեան, եռանդուն կամաւորութեամբ մը, ստանձնեցին անձնուիրութեան դաշտին մէջ երթալ ծանայելու փափաքող հիւանդապահութեան թեկնածուներ պատրաստել:

Երկու պատուական բժիշկներուն այս տուած դասերուն կանոնաւորապէս հետեւելով՝ տասնըվեց երիտասարդներ քննութիւն անցուցին և արժանացան Անգլիական Կարմիր-Պաշի St. John of Jerusalem աստիճանի վկայականին:

Մինչ այս մինչ այն, Հայ Կարմիր-Պաշի վարիչ Մարմինը դէպի կովկաս օգնութեան հասնելու կոչով մը հագիւ Եգիպտահայ սրտերն ափ առած՝ Սուէտիոյ հերոսական չորսհարեակը Բոր-Սայիտ կը հասնէր իր վերաւորներով, հիւանդներով և ամէն սեռի ու հասակի աղէտեալներով:

Հայ Կարմիր-Պաշը՝ առանց հրաժարելու իր սկզբնական նպատակէն՝ իր պահեստի համեստ ոյժերով, այլ ժողովրդային անվերապահ ձեռնտուութեան ապաւինած, յառաջ նետուեցաւ և կտրճօրէն վերցուց Բոր-Սայիտի փառաւոր ապաստանեալներուն հոգածութեան գործէն կարեւոր բաժին մը:

Եւ ահա՛ եգիպտահայ ուխտագնացութիւնն սկսաւ դէպի Բոր-Սայիտի կիլիկեան Քեմբը, առաջին ուխտաւորներն ըլլալով Հայ Կարմիր-Պաշի վարիչ անդամներն ու անդամուհիները: Ասանցմէ Նետուրեան բարեկամս, իր առաջին այցէն վերադարձին, կ'ըսէր ինծի.

«Երբ նաւը Լազարէթ հասաւ, հարիւրաւոր կիսամերկ, տկլոր, այլ առոյգ ու գեղանի փոքրիկներ՝ աւազներու մէջ իրենց անմեղ նայուածքները մեզի յառած... Կարելի չէր անտարբեր մնալ այս սրտաշարժ տեսարանին առջեւ, ու արցունքներն ինքնին ժայթքեցան այցելուներու աչքերէն, ու Կարմիր Պաշի Տիկնաններուն հետ գրեթէ հեկեկալով էր որ մօտեցանք վրաններուն... Հոն էր Քեմբլին պահապան հրեշտակը, պաշտելի Անգլուհին, Միսիս էլկուտ պէյ, որ նախախնամութիւնն եղած էր մեր ապաստանեալներուն... Տիկնաններն անոր դիմեցին, ու անոր ձեռքերն արտասուագին


համբուրելով՝ երախտագիտութիւն յայտնեցին իրենց գըժ-
բազդ քոյրերուն անունով... Միսիս էլկուտ համեստօրէն
պատասխանեց. «Մօրս օրինակին կը հետեւիմ, ա՛ն ալ շատ



Ընտանեկան ընթրիքի մը պատասխանը ֆեմիլին մեջ :

կը սիրէր Հայերը, որոնք ամէն շահագրգռութեան արժանի
ժողովուրդ մըն են»... Յետոյ՝ անձկոտ ժպտով մը Տիկին-
ներուն դառնալով հարցուց. «Պիտի մնա՞ք ինձի հետ, այն»

պէս չէ՞, և յիասին պիտի աշխատի՞նք այս թշուառներուն
ամօքուսին»... Իր ձայնին մէջ կարեկից տրտմութեան ու
ակամայ տարակոյսի խորհրդաւոր ու խռովիչ շեշտ մը կար,



Խումբ մը Սուէսիայ 628 ազատուած կորիւններէն :

մեզի համար չափազանց հասկնալի, վասնզի դերագնիւ օտա-
րուհին ընդերկար սպասած էր Գահիրէէն ու Աղէքսանդ-
րիայէն գալիք անձնուէր Հայուհիներու, և յուսախաբ եղած...

Հայ Կարմիր-Պաչի մեր երկու կամաւորուհիները, Օր. ք Պաթմանեան և Պէրպէրեան, եգիպտահայ իգական սեռին պատիւը փրկեր էին Միսիս Էլիուտի և բարեխնամ իշխանութեանց մօտ, իսկ Գահիրէէն խումբ մը հայ տիկիւններու այցը բաւական բան զարմանեց այդ իմաստով...

Եգիպտահայուհւոյն այդ առաջին ուղղակի հպումը հայ տառապանքին հետ՝ սկիզբն եղաւ կնոջական անձնըւթիութիւններու շքեղ փթթումի մը որուն կարելի չէ զմայլանքով չանդրադառնալ այս էջերուն մէջ իբրեւ վերջացող տարուան եգիպտահայ ամենէն միսթրական երեւոյթներէն մէկուն:

Բօր-Սայիտի մեր տպատանեալները ձերմակեղէնի, զգեստի, վերմակի և այլ անհրաժեշտ պիտոյքներու



Օր. Ռօզ Պարմանեան



Օր. Ազնիւ Պերպէրեան

կողմէ այնուհետեւ կարօտ չի մնացին, շնորհիւ Գահիրէի Հայ Կարմիր-Պաչի Տիկնանց և Աղեքսանդրիոյ Հայուհեաց Կարմիր-Պաչին, որուն նախաձեռնարկ եղած էր Այրի Տիկին Գալֆահան Խան: Հաւաքական շանքերէ զատ, անհատական ժէսթեր ալ չի պակսեցան՝ եգիպտահայ իգական սեռին բարոյական վարկը բարձրացնող: Գահիրէէն՝ Տիկին Ա. Մելքոնեան, Աղեքսանդրիայէն Տիկնաւք Մաթոսեան ու Մութաֆեան, Մանսուրայէն

Տիկին Պալըքճեան, Նշանակելի զոհարերութիւններով, ուխտաւորուեցան գէպի Բօր-Սայիտի Քեմբը:

Պէտք չէ մոռնալ նաև տեղւոյն վրայ առջի օրէն կազմուած Տիկնանց Մասնախումբը, որ աւելի քան 4,00 սուկիի գումար մը հանգանակեց, Օր. Գալֆահանի և Տիկին



Միսիս Էլիուտ պէյ, Հայ Կարմիր-Պաչի երկսեռ անդամներէն եւ աշակիցներէն շրջապատուած, Բօր-Սայիտի Հայ Քեմբին մէջ:

Մասրաֆի եռանդուն հետապնդումներովը, և որուն անդամուհիներէն Տիկին Արշարունի, Բօր-Սայիտի մեր երախտաւոր Տօքթօրին կողակիցը, Քեմբին մէջ այնքան հողածու կը զանուի մինչեւ այսօր Հայ Կարմիր-Պաչի զարմանատար գործին:

Բայց ամենէն ուշադրաւ ու յանկուցիչ պարագան այն ազնիւ տիկիւններուն եղաւ որոնք չի շատացան միայն զարկ


տալով նպաստի՞ ու նուիրահաւաքութեան գործին, այլ՝ իրենց ընտանեկան յարկը, իրենց հանդիսան ու զաւելները թողլով՝ գացին, իբրև Հայ Կարմիր-Պաշտի կամաւորուհիներ, Քեմբին մէջ, օրերով, շաբաթներով, ծառայել, եղբայրական տառապանքի այն մթնոլորտին մէջ ապրել, բոլոր ցաւերուն ու զրկանքներուն վրայ խանդաղատօրէն ծռել, բոլոր վէրքերուն խնամատար ձեռք դպցնել, բոլոր խեղճութեան կեդտերը մաքրել...



Ս. Առաջնորդ Հայր Բօր-Սայիտի Հայ «Քեմբ»ին մէջ, աջ կողմն ունենալով Տիկին Նեսուրեանը եւ Տօքթ. Տօկլէքեանը, իսկ ձախ կողմը՝ Փրօֆ. Յ. Թ. Դայաեանն ու Տօքթ. Արշարունին:

Կնոջական այս արի հոգիներուն եգիտահայր մասնաւոր պրաժօ մը կը պարտի: Ասոնց կարգին՝ Տիկին Նեսուրեան միախնարուհիի մը կարօնը ու ջերմեանդութիւնն ապացուցուց: Տիկին Տէմիրճեան, Տիկին Միհանօֆ և ուրիշներ ոչ նուազ բուխտիրա ու անձնուէր կեցուածքներ ունեցան Բօր-Սայիտի Կիլիկեան Զօրագաղութին մէջ:

Հայ Կարմիր-Պաշտ ազգային իշխանութիւնէն արտօնուած չլլալով գեռ ընդհանուր մեծ հանգանակութեան մը ձեռնարկել, ամսական շուրջ 150 ոսկիի իր պիւտճէն ցարդ հասարակչոց պատահական նուէրներով և իր Տիկնանց



Հայ Կարմիր-Պաշտ այս խուֆրդպատկերը յայտնուած է Տիար Մ. Կիւրեղեանէն որ գալի՛ գործարկել տար իսպանացու ճարտար Ն. Տեմիրճեանին՝ 1000 օրինակ նուիրած է (ինչպէս նաեւ «Կիլիկ»ն ու «օրթիմաթը») Հայ Կարմիր-Պաշտին, ծախուելու նամար ինպաս անոր Օքեմալի մէջ սարճուած երեկոյթին:

Մասնախումբին վիճակահանութեան արդիւնաւոր ձեռնարկովը, որ՝ մինչև ձիպութիւնները, Ատիս-Ապոստոլներն ու Մասաուտները՝ այնքան ջերմ ընդունելութիւն մը գտաւ ամբողջ Ափրիկեան Հայութեան կողմէն:

Առանց վարանելու, կարելի է ըսել, թէ Հայ Կարմիր-
Ոսկի գործունէութիւնը ժողովուրդի սրտին ամենամօտիկն
է հրապարակին վրայ: Բոլոր համակրութիւններն ու բարե-
կամեցողութիւններն ապահովուած են անոր: Փահիրէի մեր
երկսեռ երիտասարդութիւնն՝ այս սողերը գրուած միջոցին՝
անոր շուրջ բոլորուած է մեծաշառափ յաջողութիւն մը ընե-



Տե՛ր եւ Տիկի՛ն Նե՛սու՛րեան, որոնք այճման եռանդով ու
անձնուիրութեամբ մասնակցեցան Հայ Կարմիր - Խաչի
աշխատանքին, Փահիրէի ինչպէս եւ Բօր - Սայիտի մէջ:

լու համար անոր օգտին Սուլթանական Օրերայի Թատրոնին
մէջ Դեկտեմբեր 18ին արուելիք գեղարուեստական երեկոյթը,
որուն էլուն պիտի կազմեն հայկական պարերը:

Նորին Բրիտանական Վեհափառութեան եգիպտոսի Բանա-
կին Հրամանատար Զօր. Մաքսուէլի բարձր հովանաւորու-
թեան տակ տեղի ունենալիք այս շքեղ հանգէսը, որուն
Փահիրէի ամբողջ միջազգային հայ-լայձը ժամադիր եղած է,

և որմէ երեք-չորս հարիւր սօկիի հասոյթ մը կ'ակնկալուի,
եգիպտահայ ընկերական երկունքի մը նկարագիրն առաւ իր
պատրաստութեանը մէջ: Զայն կանխեցին տենդային ոգե-



Տիկ. Նեկիպ փառա Պուրոս Ղալի (Ծնեալ Օր. Աննա Ասլանեան)
Նախագահուհի Հայ Կարմիր-Խաչի Տիկանց Մասնախումբին:

ւորութեամբ հաւաքոյթներ, ուր հայկական պարերն ու
յայտագրին հայ-երաժշտական կտորները փորձուեցան, և
որոնցմէ յիշատակ մը, ի՞նչ կ'ըսեմ, գէ՛մք մը անջինջ պիտի

մնայ մեր մտքին մէջ: Արդարեւ, ազնուական ու զմայլելի դէմք մը, որ խտացած բարութեան, մաքնիսական քաղցրութեան խռովիչ պատկերի մը պէս, այդ խանդավառ համախմբումներուն մէջ, ամենքը գրաւեց, թովեց, հմայեց յանձին Հայ Կարմիր-Պաշխի Տիկնանց պատուակալ նախագահուհի Տիկին Նէկիպ փաշա Ղալիի, որ անսահման աղապատանքով



մը փարեցաւ հայ գեղեցկութեան ու գթութեան այս գործին: Ընկերային ու ընտանեկան պարագաներու բերումով՝ ցեղէն մեկուսացած, զայն գրեթէ կորսնցուցած, հարագատ Հայուհին էր ան, որ կարծես վերագտեր էր, հոգ, մայր-ցեղը, և անոր կը կառչէր սուղ սուղին կարօտով ու գորովանքով, անոր բարբառը կը խօսէր նախանձոտ մտքբախընդրութեամբ, իր բառերը փնտռելով և չի զիջանելով մէկ հատիկ

Տիկ. Ասրիէն Տեմիրեան, Հայ Կարմիր-Պաշխի եռանդուն անդամուհիներէն եւ Քեմբիլն մէջ անձնուիրաբար ծառայելու գացողներէն: Ինքզինքն անխնայ վատնեց Հայ Կարմիր-Պաշխին կալան յաղթանակ մը ընելու համար, անոր սպահովելով իշխաններու, մեծամեծներու և մայրաքաղաքիս գիւսանագիտական մարմնոյն ու գրեթէ բոլոր երեւելիներուն ներկայութիւնը,

մինչեւ վերջին վայրկեանն անձամբ հսկելով ու անձկագին հնչնալով, որ երեկոյթին հայկական բաժինը պատուաբեր ու վայելուչ ըլլայ կարելի եղածին չափ:

Այսքան թանկագին աջակցութիւններով ու հոգածութիւններով շրջապատուած, Հայ Կարմիր-Պաշքը, անտարակոյս, լաւագոյն արգիւնքներով պիտի պսակէ ի մօտոյ իր վրայ գրուած յոյսերը, մանաւանդ, երբ Աղեքսանդրիոյ, Շարքիէի, Սուտանի ու Եթովպիոյ քոյր մարմիններն ալ՝ օգտուելով կառավարութենէն պաշտօնապէս ճանչցուած ըլլալու իր էական հանգամանքէն՝ ձուլուին իր մէջ և կազմին միացեալ ու միակ եգիպտահայ Կարմիր-Պաշքը:




Սուէիացի հայ մայրը իր զաւկներուն հետ

ՌԱՀՎԻՐԱՅ ՄԸ

ԶՕՐԱՎԱՐ ԿՈՆՍԱՆԴԻՆ ԿԱՄԱՐԱԿԱՆ

Վերջացող տարուան դարունին, խելայեղ յոյսերու և անձկոտ խանդավառութեան օր մը, եգիպտոս ժամանեց այս պատուական ու պատմական ծերունին, հիւր մնալու, առնել, իր սրտամերձ ազգականներուն՝ կամսարական եղբարց մօտ, որոնք — ըսենք փակագծի մէջ, քանի որ առիթը ներկայա-



Զօրավար Կոնսանդին Կամսարական

նշանաւոր հրապարակագիր ու հասարակական գործիչ Արգար Յովհաննէսեանի քրոջ հետ ամուսնացած, և երիտասարդ տարիքէն ուսն զինուորական-ղեկանաբետական ասպարէզը մտած: 78ի ուսո-թուրք պատերազմին, իբրեւ սպայ, ուսն բանակին հետ, մինչեւ կարին կ'երթայ: Հաշտութեան բանակցութեանց համար իբրեւ պատուիրակ կը զըր-

ցու — եգիպտահայ ունեւոր դասակարգին միակ սփոփիչ բացառութիւնը պիտի հանդիսանային այս տարի՝ զահարութեան իրենց սրտոտ ժէսթովը:

Զօր. Կամսարական, համանուն գերգաստանին կովկասեան ճիւղաւորման գլխաւոր անգամակէն է հանգուցեալ

կըլի Պոլիս, և թուրքերու կողմէ կարնոյ յանձնուէն յետոյ կը դառնայ էրզրումի Բաղաքապետ մինչեւ Ռուսաց մեկնումը: Պատերազմէն վերջը, Վանի Ռուսական Հիւպատոս կը նշանակուի, և 7-8 տարի այդ պաշտօնին վրայ մնալով՝ մեծ դեր կ'ունենայ Հայաստանի քաղաքական ու քաղաքացիական գիտակցութեան զարթնումին մէջ, Խրիմեան - Բօրթու-



Դեղապետ Կամսարական՝ Կարնոյ Բաղաքապետ

գալեան գործունէութեան ամենաթունդ շրջանին, և այսպէս մեր յեղափոխական ռահվերէն մին կը հանդիսանայ: Տակաւին գանակ մը անգամ չունեցող վանեցին իր օրով կը սկսէր զինավարժութեան, և ինքնապաշտպանութեան գաղափարին հետզհետէ կը փառէր հոգեւին:

Զօրավար Կամսարականի ազգեցութեան շնորհիւ էր որ Վանի եզիւռագատ Ատեանէն անպարտ կ'արձակուէր առաջին Հայը որ Բիւրտ մը սպաննած էր իր կեանքն անոր ետեւ թողանին զէմ պաշտպանելով: Այսպիսի միջադէպեր առանգավիպային բնոյթ մը ապահովեցին Զօրավար Կամսարականի հմայքին որ ցայսօր անվթար կը մնայ վանեցիներուն մէջ:

Զօրավար Կամսարական, իբրեւ Համայն Ռուսական Ընդհանուր-Հիւպատոս ալ, իր ազգասիրական զգացումներուն սրտառուջ ապացոյցները տուած է, չի փախցնելով ո'ւէ սրտառուջ ապահար ըլլալու համիտեան բէժիմի հայ աքսորականներուն, մանաւանդ Աքքիա տարագրուածներուն:

Գահիրէի վանեցիները Ազգ. Առաջնորդարանին մէջ անոր մտերմական ընդունելութիւն մը ըրին, ուր ներկայ էին՝ Համբարձում Երամեան և Տ. Աւետիս քհնյ. Շաղոյեան, Զօրավար Կոնստանդին Կամարականի հայրենասիրական գործունէութեան կենդանի վկաներէն:

Եգիպտահայը, լուսազոյն օրերու մէջ, այլապէս չքեղ հանդիսաւորութեամբ պիտի չըջապատէր, անշուշտ, այս մեծարելի ու երախտաւոր վէթէրանը:

“**Ռ Օ Ս Ի Ա**”
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Cie d'Assurances "Rossia,"

Ա Ր Տ Օ Ն Ո Ւ Ա Վ

ՌՈՒՍԻՈՅ ՎԵՂ. ԿԱՅՍԵՐ ՀՐՈՎԱՐՏԱԿՈՎ՝ չՕ ՄԱՐՏ 1881ԻՆ
Կեդրոն Ընկերութեան — Փերոկբաս, իր սեփական շէնքեր
Դրամագլուխ (ամբողջապէս վճարուած) Բուպլի 5,000,000
Երաւխաւորութեան գումար Գրանի 273,000,000
Ապահովագրեալներուն ցարդ վճարուած » 933,162,266
Բեխմէ սոկոս՝ ստացուած 1912 ՏԱՐԵՐՉԱՅԻՆ » 160,684,178
Ընկերութիւնը խիստ նպասաւոր պայմաններով կը կնքէ
կեանքի ապահովագրութիւններ — Փոխադրութեան վճանգնե-
նելու դեմ ապահովագրութիւններ — Կեանքի ապահովագրու-
թիւններ շոգեկառնով ու շոգեմաւով նամբորդութեան ար-
կածներու դեմ — Ապահովագրութիւններ ապակիներու կոտ-
րուելուն համար:

ԱՄԷՆ ՏԵՂԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՐԾԵՆ
ԳԱՀԻՐԷ՝ Ընկերութեան եգիպտոսի Մասնահիւղին, Բլաս
սը լՕթբա, Ապսել Հակ-էլ-Սոմպարի փողոց, բիւ 2: Նամակա-
սուփ 10-24: Թիւթօն 13-13:
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՒՄ՝ Ընկերութեան Ընդհանուր Գործակալու-
թեան, Էնիքերն Պոնսրս Ուերհաուզ Լիմիթթըս ընկերութեան մօտ:
Նամակասուփ՝ 482: Թիւթօն՝ 10-87:
Գաւառական բոլոր գլխաւոր քաղաքներուն մեջ՝ Ընկերու-
թեան Գործակալութիւններուն:
Ընդհ. Գործակալութիւն Սուրիոյ Էւ Պաղեսիցի:
Պէրուք, նամակասուփ բիւ 161:

ԵԳԻՊՏԱԶՅ ՂԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ԱԼԻՔՍԱՆ ՊԵՏ ԶԷՎԱԶԻՐՃԵԱՆ

Բնիկ եգիպտահայութեան ամենածանօթ ու ամենահա-
մակրելի գէմքը, ապահովարար, զոր երախտագիտութեամբ
պիտի յիշէին 96ի աղէտներուն հետեւանքով եգիպտահայա-
ցած երբեմնի գաղթականներէն շատեր՝ եթէ Նեղոսի ափե-
րուն վրայ ապաշնորհ ապաստանութիւնը տարապայման աճու-
մով մը չի փթթէր:

Ողբացեալ Պերճ Օհանեանին և Զարեհ Սըվազլըին հետ
—երկուքն ալ Իզմիրցի— Ալիքսան պէյ հոգին եղաւ Գաղ-
թականաց Յանձնաժողովին, որ աղէտեալներու եղբայրական



կարաւանները գիմաւորեց այնքան
բոլորանուէր ազապատանքով մը:
Աղեքսանդրիոյ տեղացիները, մաք.
սային շրջաններուն մէջ, «Բարբիխ
իւ Արմէն» պատուանուծով մկըր-
տեցին զինք, այդ օրերուն, ի տես
այն վաղնիկագ փութկոտութեան,
որով ձէվահիրճեան պէյ գիշեր-ցորեկ
ինքզինք կը վատնէր ո՛ւնէ կերպով
օգնութեան հասնելու համար իր նո-
րեկ գժրադգ ազգակիցներուն:
Ա. ձեվահիրճեան պիյ Ի՞նչպէս կ'ըլլայ որ այս պիլիսին
ցեղին տառապանքով աւելի խորա-
պէս կը թրթուար քան հազար բնաշխարհիկ հայրենակից:
Առեղծուածին գաղտնիքն Ալիքսան պէյի զմայլելի մօր
հոգիին մէջ պէտք է փնտռել... Արդէն ո՞ւր Հայունին չէ
եղած Հայութիւնն ապրեցնողը...

Զաւակ ոսկերչապետ ձէվահիրճեան Մկրտիչ աղայի, որ՝
1854ին՝ Խտիվ Սախա փաշայի հետ՝ Պոլսէն հոս ժամանած
է, Ալիքսան պէյ 1860ին Աղեքսանդրիա ծնած, իր տոհմային
գաստխարակութիւնը կը պարտի միմիայն իր առաքինի մօր-
կան, որ՝ 96ի գաղթային հոսանքէն առաջ՝ եգիպտոսի մէջ
երկնց հալութիւնն անխաթար պահող, անոր վրայ գուրգու-

րանքով դողացող երեք-չորս հայ ընտանիքներէն գլխաւորն ու ամենահարազատը պահպանել գիտցեր էր:

1877ին, առաջին հանդիսանալով այնքան օտար աշակերտներու մէջ, prix d'honneurով շրջանաւարտ կ'ըլլայ Ֆրէններու վարժարանէն և անմիջապէս կը մտնէ մաքսային վարչութեան մէջ, ուր հետզհետէ յառաջանալով՝ 36 երկար տարիներու անստգիւտ պաշտօնավարութեամբ մը հասած է contrôleur de la douaneի ներկայ կարկառուն գիրքին, պէյութեան տխրոսով, զոր այլապէս այնքան վայելցուցած է:

Աղեքսանդրիոյ աժմու Քաղաք. ժողովին Ատենապետը վարի մեր ազգային հաստատութիւններուն մէջ ունեցած է իր պատուոյ տեղն ու գործօն դերը, թաղական, հոգաբարձու, երեսփոխան, անդամ ամէն բարենպատակ յանձնաժողովներու, միշտ գտնուած է եզրիպտահայ հանրային պատնէշին վրայ: Երկրորդ անգամն է որ կ'անդամակցի ազգային վարչութեան 1909 թուականէն սուրին, յորմէ հետէ Աղեքսանդրիոյ մէջ ալ սահմանադրապէս Քաղաք. ժողովի կազմութեան ձեւնարկուեցաւ: Առաջին շրջանին ատենապետութիւնը թողած էր իր պաշտօնակցին՝ վաղամեռիկ ու անմուռանալի Գառնիկ Զպուքին:


Սրբմեան Հայրիկի՝ իբրև նորընտիր կաթողիկոս՝ Երուսաղէմէն էլժիածին ուղեւորութեան ընթացքին, Աղեքսանդրիա ժամանած ատեն, ձէվահիրճեան պէյ — որ եղբայրն է նախկին Պատրիարքական Տեղապահ ձէվահիրճեան Գաբրիէլ Սրբազանի և մօրաքեռորդին Նորատունկեան Գաբրիէլ էֆ. ի — մեծագոյն ընդունելութիւնն ըրած է անցորդ վեհափառին, որուն համար մասնաւոր շնորհակալութեան կոնդակի մը արժանացած է:

Հակառակ աշնանային «ձիւնաբեր հողմանց» որոնք իր առնական գլխուն մազերը փայփայելով սահած են, գարնան կենսականութիւնն է որ կը յորդի միշտ Ալիքսան պէյի սրտին մէջ: Իր բարեձեւ ու գեղուղէշ հասակին տիրակալութիւնը, Եզրիպտոսի արեւուն—չուքի մէջ—եփած իր ցորենագոյն դէմքին վրայ՝ ոսկի ակնոցներուն տակէն պճլտացող ու սեւեռուն աչքերուն կայծը շատ մը երիտասարդներու նախանձը կրնան շարժել տակաւին:

ԳՐԶԱՆԿԱՐՆԵՐ

ԳԵՈՐԳ ՎԷՅ ՄԵՐԱՄԷՔՃԵԱՆ

Իր շինած շէնքերուն պէս տոկուն մարմին մը, մարզիկի մը ճկունութիւնը և երիտասարդի մը աւիւնը, լայն ուսերու վրայ առնական գլուխ մը՝ վեր ցցուած պիտերով՝ որ քաղքենի



տարազի տակ գործօն սպայ մը կարծել կուտայ զինք, և չես կրնար հաւատալ թէ Քաղաքական ժողովի Գանձապետը 1860ին ծնած ըլլայ:

Օտարներու մօտ ամենէն աւելի յարգուած և ներկայանալի Հայերէն մին է Մէրամէթճեան պէյ: Ստիվ Իսմայիլ փաշայի ճարտարապետ՝ հանգուցեալ Զինոր պէյի անդրանիկ գաւակը, Պոլիս ծնած՝ բայց եզրիպտոս եկած տասը տարեկանին, ինքզինքը տեղացի Հայ կը համարի, և քիչ մը խորթ աչքով կը նայի նորեկներուն, մանաւանդ ամէն անոնց որոնք սեէ կերպով ազգային տեղական հարստութենէն բան մը պակսեցնել ուզին, ինչ նպատակի համար ալ ըլլայ:

Հայրը, Զինոր պէյ, որուն քով արուեստին սէրը ամէն բանէ առաջ էր, ուզելով որ իր անդրանիկ գաւակը իր արուեստին հետ ժառանգէր նաև իր գեղարուեստի ճաշակը, տասնևվեց տարեկանին Բարիզ Լիսէ Շարլմաներ զրկած է զինքը, ուր ուսումն աւարտելէ յետոյ, մտած է Գեղարուեստից վարժարանը և աշակերտած Ainé Ginin համբաւաւոր ճարտարապետին:

Գեորգ պէյ Մերամքիբեան

Քսաներեք տարեկանին ճարտարապետի վկայականը գրպանը՝ Աղեքսանդրիա կը վերադառնայ երիտասարդ Մէ-

բամբակեան, և Միջազգային Դատարաններու կազմութեան ճարտարապետական ճիւղին Expert կը նշանակուի:

1891ին, nostalgiet բռնուած, Պոլիս կը մեկնի: Վոսփորի աղուոր ափունքը կը հմայեն զինքը, և հինգ տարի կը մնայ հոն, աշխատակցելով Պալատան և Ծովային Նախարարութեան ճարտարապետ Եանքօ պէյին: Շիշլիի Անկելանոցը, Նշան Թաշըի Զօրանոցը, Չիֆթէ Սարայները, մանաւանդ Չինիլի Բէօշքը, գոհար մը ճաշակի և արուեստի, ուղղակի իր հսկողութեան տակ շինուած են: Այս ամէն աշխատութեանց համար Օսմ. կառավարութիւնը իրեն կուտայ զանազան աստիճաններ, մինչև Միւթէմայիզ, և Օսմանիէ, Մէհրաբիէ, Գեղարուեստից պատուանշանները:

— On m'a donné des titres et des décorations, mais peu d'argent, կ'ըսէ քմծիծաղով մը՝ Մէրամէթեան պէյ: Այս ամէն պատիւները, սակայն, չեն չլացներ զինքը: Պոլսոյ վրայ խաւար ամպերու կուտակուելը կը տեսնէ և կը նախընտրէ եգիպտոսի պայծած երկինքը:

Հոս վերադառնալով կը ստանանէ նորէն իր Expertի պաշտօնը Միջազգային Դատարաններու մօտ, միեւնոյն ժամանակ պաշտօնական ճարտարապետ կարգուելով բազմաթիւ ընկերութեանց. ի միջի այլոց՝ Գրէտի Լիօնէի, Պօնտէտի, Սանգրայ Պիլտինկի, Բրէսսաժի շէնքերը իր ձեռակերտներն են, և Շէրիֆ Բաշա գլխաւոր փողոցին մէկէ աւելի շէնքերը իրենց ծնունդն իրեն կը պարտին:

Ազգային կեանքի մէջ Թեմականի անգամ եղած է միշտ և նախորդ ու ներկայ Բաղսքական Ժողովներու անգամակցած: Բայց իր բուն գործունէութիւնը կը սկսի իր ներկայ Գանձապետի պաշտօնէն, և կ'արժէ զայն վեր առնել:

Գործի մարդ՝ որչափ հաշուի, լուրջ բարեփոխումներ մտցուցած է Մնտուկի հաշիւներուն մէջ, թերեւս հիմէն փոխէր՝ եթէ ինքնագլուխ կարենար գործել: Իր մեծ մտատանջութիւնը նոր փոխառութեան համար վճարուելիք տոկոսն է, և միակ զբաղումը՝ խնայողութիւն: Ամէն վճարում Ազգային Մնտուկէն՝ ամսոյն 28ին կ'ըլլայ՝ Մէրամէթեան պէյին տոկոսը վաստակելու համար ըրած innovationներէն է այս՝ որմէ եթէ ուսուցիչները և պաշտօնեաները կը գանգատին լռելեայն, Ազգը գանգատելու պատճառ չունի, ընդհակառակը: Մէրամէթեան պիյի նշանաբանը ազգային կեանքի մէջ. «խնայողութիւն և միտ խնայողութիւն:»

Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ա Յ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՆԸ

Երբէք պիտի չի փորձուէինք գրի առնել պատմութիւնը շատ պզտիկ ու աննշան գաղութի մը, Եգիպտահայ Աւետ. Ժողովուրդին նման, եթէ համայնքի մը արժէքը իր թուական առաւելութեան ու նիւթական ճոխ պայմաններու մէջ պէտք ըլլար փնտռել:

Մէկ մարդ ցեղ մը կ'արժէ, և ցեղ մը մէկ մարդ չարժեր, պիտի ըսէի, սպահովաբար, եթէ սակայն այդ մէկ մարդը գոյութիւն ունեցած ըլլար տեղւոյս Հայ-Աւետ. Հասարակութեան մէջ, որ Նուպար մը, Գալուստեան մը, Եղիայեան մը չի համրեր իր տարեգրութեանց ամբողջ ընթացքին:

Հսկայ ու հասութաբեր կալուածներու չէ տիրացած իր եկեղեցին ու երբեմնի դպրոցը:

Սրտով ու քսակով ալ մեծահարուստ դէմքեր չէ ունեցած: Ժողովրդական եկեղեցի մը, ժողովածոյ ժողովուրդ մը, ժողովավար դրութիւնով ու վարչութիւնով: Ամենքն ալ հաւասար, ամենքն ալ քուէատու, առատօրէն կը մասնակցին իրենց կարողութեան համեմատ, առ հասարակ, կրօնաբարոյական ու ազգային նպատակներուն ու պահանջներուն:

200-300ի մօտ ճղճիմ թիւ մը և 40-45 տարուան անցեալ մը ունի որ համեմատաբար դաստիարակուած, զարգացած, կրօնասէր և . . . ազգասէր ալ է, պիտի ըսէի, եթէ ազգասիրութիւնը մէկ կերպով միայն չի հասկցուէր, և ամէն մարդ ազատ զգար իր յատուկ ըմբռնումովն ու միջոցներովը սիրելու ազգը:

Գրեթէ ամենքն ալ, այր թէ կին, դրել կարգալ գիտեն: Բաւական կարեւոր թիւ մը կը կազմեն նորերուն մէջ, անոնք որ գոլէճական կրթութիւն մը ստացած են:

Մտաւորականութեան ընդհանուր միջին մը կը ներկայացնէ որ ծայր չունի:

Արդէն ընդհանուր Հայ-Աւետ. Համայնքը, հաւաքականապէս, աւելի զարգացած ու մտաւորական միջակ չափանիշի մը հասցուած ըլլալով, շատ քիչ թուով գերընտիր փայլուն անհատականութիւններ կը թուէ իր մէջ:

Այս յառաջաբան տեսութենէն վերջը, վստահ ենք թէ «Եգիպտահայ Տարեցոյց»ին համակրելի ընթերցողները յուսասխարութեան մը չպիտի մատնուին մեր համեստ ու համառօտ ուսումնասիրութիւնը կարգալով:

ԱՆՅԵԱԼԸ.— Հազիւ քանի մը հայ-աւետարանական ընտանիքներ՝ տարբեր գաւառներէ եկած՝ 1865—1870ին Գահիրէ կը հաստատուին, որոնք զուրկ մնալով կրօնական մխիթարութենէ և դպրոցէ, իրենց տուները կը գործածեն իբր եկեղեցի և իրենք իրարու քարոզիչ եղած են, մինչեւ որ տեղական լեզուին ծանօթանալով զպտի աւետարանականներուն պաշտամունքներուն կը մասնակցին, և գործերով լըսուած Հայ-Աւետարանը արաբերէնով մտիկ կ'ընեն, և այնքան կը դպսխաւան, որ իրենցմէ սարկաւազ իսկ կ'ըլլան զպտի եկեղեցիին մէջ:

Ուժացումի, այլասերուժի այս շրջանը, բարեբաղդաբար, շուտ կը վերջանայ, շնորհիւ նորեկ փախստական Հայերուն որոնք 1895ին հայասպան կոտորածին՝ լքելով իրենց հայրենի օջախը, սիրելիները, եկեղեցին ու դպրոցը, գէթ կրօնական մխիթարութեան սուրբ կարօտովն առլի, արտասուելից աչքերով կը փնտռեն հովիւ մը, Աւետարան մը, բեմ մը որ Հայ ըլլայ, որ հայերէն ըլլայ, որ իրենց դարուոր տառապանքն ու վիշտը ճանչցած ըլլայ:

Եւ անա՛ իրենց հետ տարագրուած եղբայրներուն մէջէն կը գտնեն յաջորդաբար երկու պատուելիներ, որոնք կարճ միջոց մը, մինչեւ 1897, երկու տարիի մօտ, կը յաջողին 8-10 ընտանիքներէ բաղկացած փոքրիկ խմբակ մը իրարու քով բերելու: Ասոնք 1898ին եկեղ. կազմակերպութեան մը առաջին հիմնաքարը կը դնեն, կազմելով առաջին վարչական ժողովը, որուն անդամները կ'ըլլան Տեարք՝ Հաճի Փիլիպպոս Եազուպեան, Սարգիս Մելիքեան, Կարապետ Գարբրինեան, Պետրոս Երուանդեան և Գրիգոր Գմգմեան, որոնց վերջին երկուքը դեռ ողջ և վերջինը մինչեւ հիմա իբր եկեղ. ժողովին մէկ պատուական անդամը կը գործէ անձնուերաբար:

Բայց իրապէս եկեղեցական այս սաղմնային, տկար կազմուածքը պիտի չի կրնար իր գոյութիւնը ապահովուած ըզգալ, եթէ Նախախնամութիւնը օգնութեան չհասնէր յանձին վեր. Մ. Գնաճեանի, որ ինքն ալ տարիներ առաջ հալածուած մը համիտեան ըէժիմէն, ատեն մը Անգլիոյ մէջ գործելէ վերջը, մխիթումով մը Աղեքսանդրիա մեկնած էր:

Վեր. Գնաճեան, Այնթապու Գոլէճէն ու Սկովտիական Աստուածաբանականէն շրջանաւարտ մը, իբր կարող բեմասաց մը, պատուական Հայ մը, 1899-ին, իր անգլիացի ազնիւ կնոջ հետ կը ստանձնէ այս պրզտիկ հօտը հովուելու դրժուար տար պաշտօնը, և անձնուէր զհոգուութիւններով կը վարէ ու կը խնամէ մինչեւ 1911, 12 երկար տարիներ:



Վեր. Հ. Ս. Խաճիգյան

Այս ժամանակամիջոցին չորս տարիի չափ, երկսեռ վարժարան մըն ալ վարե-

լու կը յաջողի, սակայն նիւթական դժուարութիւնները կը հարկադրեն զինքը դպրոցը փակելու:

«Վտանգը»ին հեղինակը. շատ աշխատած է նաեւ սեփական եկեղեցիի մը կառուցման համար, և թէեւ հանգանակութիւն մը կատարելու մտքով Անգլիոյ մէջ բարեկամներու մօտ, դիմումներ կատարած է, բայց հազիւ 100 ոսկիի աննշան գումար մը հաւաքած ըլլալով՝ ժողովուրդէն չէ քաջալերուած կարեւոր գումարով մը մասնակցելու խոստումներով, թէեւ կառավարութենէն կէս գնով արուելու հող մը նշանակուած է Սապթիյէի շրջանակին մէջ: Եւ ասիկա ամսինէն մեծ պակասն է ժողովուրդի մը համար որ տարիներով հիւր կը մնայ օտարին տունը:

Ներկայ.— Հակառակ որ այսքան պղտիկ եկեղեցի մըն է, իր անդամները այնքան խայտարղէտ ու այլազան, երբե-

մըն մինչեւ 24 տարբեր գաւառներէ եկած , հազիւ կը կազմեն 30-35 ընտանիք , 250-300 անդամներով . Ասոնք , առհասարակ , բացի մէկ երկուքէ , համեստ դիրքէ մը վեր բարձրանալու չեն յաջողած , և այս պայմաններուն տակ անիրաւութիւն պիտի ըլլար ազգային մեծ գործունէութիւն մը սպասել իրենցմէ :

Համայնք մը՝ որ հազիւ իր ուրոյն գոյութիւնը պահելու կարող է , և սակայն նորէն առատածեռն կը գտնուի միշտ ազգային ու բարեսիրական բոլոր ձեռնարկներուն ու գիմուններուն :

ՎԵՐ . Հ . ԽԱՆԴԱՄՈՒՐ , 1912ին իբր քարոզիչ պաշտօնավարելէ վերջ , 1913ին երէց կը ձեռնադրուի ժողովուրդին փափաքին համաձայն : Իր ջանքերուն մեծագոյնը եղած է միշտ սիրալիր ու բարւոք յարաբերութեան մէջ դնել Լուսաւորչական ու Բողոքական Հայերը , և վերջինները ծանօթացնել իբր Հայ , իբր քրիստոնեայ Հայ և իբր ազգասէր Հայ : Այս ջանքը իրաւամբ գնահատուած է շատերէն , որոնցմէ ծանօթ , յարգելի ազգային մը կ'ըսէր խօսակցութեան մը մէջ . «Պատ . Խանդամուրի գալէն առաջ չէի գիտեր թէ հոս Հայ-Աւետարանականները եկեղեցի ունին» :

Ասոր մէկ գեղեցիկ ապացոյցը իրմով սկսած՝ Հ . Ե . Ք . Ընկերակցութիւնն է , որ իր մէջ յարանուանական ուղղութիւնով ու ազգային ոգիին ու կեանքին տուած կարեւորութիւնով առիթը ստեղծած է երկու քոյր եկեղեցիներուն իրար ճանչնալու , իրարու քով գալու և իրարու օգնելու :

Իր համոզումն է թէ երկու եկեղեցիներուն միութեան գիծը կրնայ ըլլալ սոյն ընկերակցութիւնը , որուն զարգացած երիտասարդութիւնը շատ գիւրութեամբ կրնայ մշակել ճշմարիտ եզրայրութեան և կրօն . լայնամտութեան ոգին :

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ . — Հայ-Աւետ . Եկեղ . Վարչութիւնը՝ կազմակերպութիւնով շատ պարզ է . կը բաղկանայ եկեղ . ժողովէ մը , զոր կը կազմեն նախագահը , որ միշտ հովիւը կ'ըլլայ , սարկաւազը , որ միշտ բնական անգամ մըն է , եւ հինգ ուրիշ անդամներ , ամէն տարի վերընտրելի :

Վարչական ժողովին ամենէն մեծ գործունէութիւններէն մէկը պիտի կազմէ ներքին կանոնադրի մը կազմութիւնը որ մինչեւ այսօր անտեսուած էր : Պէտք չէ մտնալ թէ Հայ Աւետ . Հասարակութիւնը պաշտօնապէս ճանչցուած չըլլալով եգիպտական կառավարութենէն՝ ստիպուած է Ղպտի Բողոք . Ազգապետարանի միջոցով յանձանձնել իր կտակային , ամուսնական և ուրիշ գործառնութիւնները :

Հ . Ե . Ք . ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ . — Հայ-Աւետ . Եկեղեցին ցաւալի է որ ազգային , կրթական կամ բարեսիրական ս է է հաստատութեան մը չէ կրցած ծնունդ տալ . մխիթարական երեւոյթ մըն է միայն Հ . Ե . Ք . Ընկերակցութեան գոյու-

թիւնը , որ չորս տարիէ ի վեր իր 30-40 անդամներով շատ նշանակելի դեր մը կատարելու կոչուած է Հայ-Աւետ . Եկեղեցիի զուտ կրօնական մթնոլորտը քիչ մը ազգայնացնելով : Ամէն կիրակի կատարուած ազգասիրական , գիտական , բարոյական ու աւսողապահական լուրջ ու շինիչ դասախօսութիւնները և տարեկան ու տօնական օրերու համար սարքուած հանգիստուր բանախօսութիւնները եգիպտահայ Գաղութին ծանօթ ու սիրուած մտաւորականներու կողմէ , ազգային խանդարտը ոգեւորութիւն մը , շարժում մը յառաջ բերած են Հայ-Բողոքական նոր սերունդին մէջ :

ՀԱՅ-ԱՎԵՏ . ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ . — Հայ-Աւետ . Հասարակութիւնը չունի այնքան մեծ թուով մտաւորական գէժքեր , թէեւ համեմատաբար , պէտք է ընդունիլ թէ , շատ կարեւոր գուժար մը կը ներկայացնեն անոնք , երբ նկատի առնենք թէ ամբողջ ժողովուրդին վեցէն մէկը կամ 40է աւելի երկսուտ գէժքեր բարձր ուսում մը ստացած են ամերիկեան և եւրոպական գոլէճներու և դպրոցներու մէջ : Շատ երկար պիտի ըլլար անոնց ցանկագրութիւնը ընել հոս , բայց միայն կարեւորագոյններէն մէկ քանին իսկ բաւական են գաղափար մը տալու Հայ-Աւետ . Համայնքին մտաւորական կեանքէն :

ՓՐՕՑ . Յ . Թ . ԳԱՅԱՆԱՆ , Գահիրէի Ազգ . երկս . վարժարաններու պատուական տնօրէնը , որ իբրեւ գրչի ծանօթվարպետ մը , կրթական գործիչ մը և ճարտար խօսող մը , համիտեան ու ժիւժի օրերուն կախաղանի տակէն հազիւ ազատուած , տարիներով Եւրոպայի կարեւոր կեդրոններու մէջ իր մտքի



ՔրօՑ . Յ . Թ . Գայանեան


ու սրտի պաշարը ճոխացնելով , 1910ին , Եգիպտոս իր ոտքը դըրած է Ազգային Վարժարանին տնօրէնութեան պաշտօնով , և երեք տարուան օգտաշատ պաշտօնավարութիւնէ մը վերջը , մեծ բաղգաւորութիւնն ունի Գահիրէի Հայ Գաղութը , անոր պէս բազմակողմանի ձիրքերով օժտուած մտաւորականի և խանդավառ ու յոգնաջան հայրենասէրի մը գործունէութիւնը վայելելու :

ՎԵՐ. Գ. ՃԵՃԻՉԵԱՆ, Աղեքսանդրիոյ Հայ-Աւետարանա-
կաններու բարեջան հովիւը, բնիկ Ատաբազարցի ու ՃԵՏԻՂ-
եաններու շառաւիղ, որ Անգլիոյ մէջ լրացուցած ըլլալով իր
աստուածաբանական ընթացքը, տարիներով կը գործէ իբր
ճշմարիտ, անկեղծ Հայ մը Աղեքսանդրիոյ պզտիկ հասարա-
կութեան մէջ և ազգային բոլոր ժողովներուն ու մարմին-
ներուն կ'աջակցի:

ՎԵՐ. Թ. ՄԿՐՏԻՉԵԱՆ, որ 20 երկար տարիներէ ի վեր
Տիգրանակերտի Անգլ. Հիւպատոսարանի բազմաշխատ թարգ-
մանը՝ Թուրքիոյ պատերազմի մասնակցութեան առաջին օրէն՝
նախախնամական զարմանալի զուգադիպութիւնով մը կը հաս-
նի Գահիրէ, ուր անմիջապէս պաշտօնի կը կանչուի Պատե-
րազմական Պաշտօնատան ներքին քարտուղարութեան մէջ:

ՎԵՐ. ՄԿՐՏԻՉԵԱՆ կարճ ժամանակի մէջ ազգային ու հանրա-
յին բոլոր շրջանակներուն մօտ ամենուն համակրելի ու ծա-
նօթ դէմք մը
կը դառնայ:

Իր պաշտօ-
նին ու անձնա-
կան ընդունա-
կութիւննե-
րուն բերու-
մով, ինչպէս
Տիգրանակեր-
տի մէջ, հոս ալ
իբր ճշմարիտ
ազգասէր Հայ
մը թերացած
չէ օգտակար
ծառայութիւն
ներ մատուցա-
նելու իր տա-
ռապող ցեղին,
որուն մէկ ա-
պացոյցը դեռ
չատ թարմ է
չատերուն մտ-
քին մէջ, երբ
նկատի առ-
նենք այն յա-



ՎԵՐ. Թովմաս Մկրտիչեան

ջողութիւնը՝ որով անգլիական իշխանութիւնները պաշտօ-
նապէս թոյլ կուտայ Հայ-Կարմիր Խաչի մը գոյութիւնը և
գործունէութիւնը:

Իբր բանասէր միտք մը, թանկագին ուսումնասիրու-
թիւններ կատարած է Տիգրանակերտի և Խարբերդի շրջաննե-



Յակոբ Գույումեան

րու բնակչութիւններու մարդահամարի, տնտեսական վիճա-
կագրութիւններու շուրջը:

Մեզի տրուած սահմանը թոյլ չտար ուրիշ կարեւոր մտաւորա-
կան ուժեր եւս ծանօթացնելու, բայց թերեւս ներուէի մեզի

գէթ անոնց յիշատակութիւնն ընել: Գեղեցիկ սեռէն սկսելով՝ ունինք բաւական թուով ուսուցչուհիներ՝ Ազգային Վարժա-
րանին մէջ. Օրիորդք Փ. Աժաէրեան, Ե. Գուրեան, Սար-
գիսեան, որոնք բաւական տարիներէ ի վեր յաջող շրջաններ
բոլորած են ուսուցչական սասարէզին մէջ: Տիկնայք Մ.
Նազուպեան, Մ. Յովսէփեան, Մ. Խանդամուր, Ա. Գաբա-
մամեան, Բ. Պարոնեան, Հ. Կիւզէլեան, Ճէճիկեան, Ն.
Դարբինեան, Ա. Գուրեան, Տէրունեան, Բ. Սախեան, Օ-
րիորդք Ք. Գայեան, Մ. Մաղիկեան, Է. Իշխանեան, Ս.
Նազուպեան, Ա. Նազուպեան, Շ. Գրմազմեան և ուրիշներ:
Իսկ այրերէն՝ Տեարք Խ. Կիւզէլիմեան, Տօքթ. Վ. Եա-
զուպեան, Ս. Նազուպեան, Մ. Աժաէրեան, Յ. Թըզըրեան,
Ա. Գաբամամեան, Ն. Ղազիկեան, Լ. Տարազճեան (Տար-
տանէլ), Խ. Գուրեան, Մ. և Մ. Սիրակոնեան. Տօքթ. Չիւ-
րիկեան (Բօրթ-Սայիտ), Գ. Աւագեան (Թանթա), Հ. Ուզուն-
պօղոսեան, Պ. Յովսէփեան, Տօքթ. Ս. Մարգարեան, Լ.
Կիւզէլիմեան, Զ. Գալուստեան (Աղեքսանդրիա) և ուրիշներ:
Եգիպտահայ Աւետ. Համայնքն ալ իր զոհն ունեցաւ՝ իր
մտաւորական կարեւոր ուժերէն մէկին՝ սղրացեալ Յակոբ
Գույումճեանի եղերարազդ մահովը, որ անդի ունեցած է Ա-
ղեքսանդրիոյ հիւանդանոցին մէջ Սեպտ. 17ին, ուր իր «Կա-
րօտի Արցունքներ»-ուն վերջինը՝ կարապի երգին պէս աղու
և սրտակեղեք, երգած էր երիտասարդ բանաստեղծը, «Յու-
սաբեր»ի էջերուն մէջ: Ինքը բնիկ Ատիեամանցի, Այն-
թապու կեդր. Գոլէճէն շրջանաւարտ և Բարիզի մէջ քանի
մը տարիներ օրէնագիտութեան դասերուն հետեւելէ վերջ
հոս եկած էր, շարունակելու համար իր արուեստը: Վեճերս
Անգլ. Բանակին հետ Տարտանէլ կը մեկնի իբր թարգման,
ուրիշ կը գրէր իր նամակներէն մէկին մէջ. «Դարերու վը-
րէժը լուծելու համար կ'երթամ դէպի Պօլիս...»: Հոն ուսմ-
բէ մը վերաւորուելով Աղեքսանդրիա կը բերուի, ուր դար-
մանուելէ վերջ, նորէն կը մեկնի պատերազմի դաշտը, սա-
կայն անողօք ախտ մը զինքը կը հարկադրէ դառնալ ետ
հիւանդանոցը, առ յաւէտ փակելու համար իր նուազ ու
«կարօտի արցունք»ներով լեցուն աչքերը: Յարգասնք իր
անձանօթ գերեզմանին, բայց միշտ ամենէս ճանչցուած բարի
յիշատակին:

Վեճ. Ս. Վ. Բ. Թրոպրիճ — Մեր համայնքին այս
ամփոփ պատկերացումը թերի պիտի մնար եթէ մոռնայինք,
այս առթիւ, յիշատակել մեր օտար բարեկամներէն՝ Վեր.
Ս. Վ. Բ. Թրոպրիճը:— Ազգութիւնով Ամերիկացի, ծնուն-
դով Թուրքիացի, սրտով Հայ, Այնթապի կեդր. Գոլէճի և
Հիւանդանոցի հիմնադիր-նախագահին զաւակը՝ Մր. Թրուպ-

րիճ, եգիպտահայ տարեգրութեանց մէջ ալ արժանի տեղ մը
կը գրուէ իրաւամբ, երբ յիշուի թէ օտարօտի շրջանակի
մը մէջէն յանկարծ կը յայտնագործուի իբր հայ տառապան-
քին հին բարեկամ մը, որ գրքոյով մը Սուէտիոյ ձերբա-



Վեր. Ս. Վ. Բ. Թրուպրիճ

զատեալներու քաջութիւնը կը տարփողէ բոլոր անգլիախօս
ազգութիւններուն և ուժգին կոչով մը Ամերիկայէ և ուրիշ
կեդրոններէ ձեռք կը բերէ 1600 ոսկիի գումար մը, որ իր
կարգադրութեամբ յանձնուած է անձամբ մատակարարելու:
Բայց Մր. Թրուպրիճ, որ ընդհանուր կիրակնօրեայ
դպրոցներու ընկերակցութեան կողմէն եկած է հոս իբր

գործիչ մը, բոլոր հիւսիսային ամերիկեան շրջաններուն կիրակնօրեայ դպրոցներուն մէջ շատ աւելի մեծ ու անձնուրաց ծառայութիւններով արժանի եղած է, իրաւամբ, հայ ցեղին երախտագիտութեան ու յարգանքին:

Իր մանկութեան տասնընչորս տարիներու ուսանողական կեանքը, Այնթապ և Պոլիս, միշտ մտերիմ ու գիտակ պահած է զինքը հայ ցեղին հոգիին ու ցաւին հետ: Եւ թէեւ Ամերիկա տասնըմէկ տարիներու շրջան մը կը բոլորէ Նիւրնսթընի Համալսարանին և Հարթֆըրտի Աստուածաբանականին մէջ, սակայն, նորէն, հայրենակարօտի բողոքներով մը, կարծես, թողլով ամերիկեան ճոխ կենցաղն ու մտաւորական բարձր յարաբերութիւնները, կը դառնայ Կիլիկիա, իբր շրջիկ միսիոնար մը, որուն նախախնամութիւնը վերապահեր էր ուրիշ կարեւոր առաքելութիւն մը — Ատանայի աղետահաններուն բարերար հրեշտակն ըլլալու:

Միսիոնարական շէնքը ապաստանող հայ աղէտահանները պաշտպանած ատեն երկու անգամ թուրք խուժանին զենդակներէն մաղապուր ճողոպրած է, գլխարկէն վարնուելով: Իր ընկերներուն հետ միասին հերոսական քաջութիւնով մը 1200ի չափ Հայեր փրկած է մահունէ: Ասով չվերջանար իր անձնուիրութիւնը: Ութը երկար ամիսներ հայ կարօտեալներուն հաց: դրամ բաշխուելու և հրկիզուած եկեղեցիներն ու դպրոցները վերաշինելու համար միշտ Այնթապէն Ատանա, Սուէտիա, Քէսասպ, հոս հոն կը փութայ Տօքթ. Շէփըրցի հետ: Ամերիկեան կարմիր-Պաչը գնահատելով իր կողմէն գործող այս արի ու անձնուէր մշակին անգին ծառայութիւնները, շքանշանով մը կը պատուէ զինքը, պատիւ մը, զոր Ամերիկեան կառավարութիւնը ոչ մէկ բարձրաստիճան անձնաւորութեան կ'ընծայէ առանց մարդասիրական կարեւոր ծառայութեան մը:

Մր. Թրուպրիճ, որ լաւ թրքերէն կը խօսի, և որուն քոյրերը հիանալի հայերէն գիտեն, տաղանդաւոր բանաստեղծ մըն է նաև, արուեստի ու զգացումի նրբութիւններով օժտուած: Եւ հիմա իրեն արժանի ազնիւ տիկնոջ հետ արարերէն կը սորվին իրենց տակաւին կորովի ու առոյգ աշխոյժն ու գործունէութիւնը նուիրելու եգիպտացի մանկութեան բարոյական ու կրօնական զարգացումին:

1915 Նոյեմբեր 25

Հ. Ս. ԽԱՆՆԻՍՏՈՒՐ



ԱՆՈՆՔ ԵՒ ՄԵՆՔ

Հեռագիրները, շարաթներ առաջ, մեզի բերին մանրամասնութիւնները անգլիական դահլիճէն Պ. Չըրչիլի հրատարականին:

Առանց իսկ գաղափար ունենալու պետական այս մեծ մարդուն անցեալ գործունէութեան վրայ, կարդալով պարզապէս իր հրատարականին ընկերացող նամակը, մարդ կը տեսնէր թէ բարոյական ի՞նչ բարձր յատկութիւններով օժտուած մէկն է ան: Այդ նամակին պարունակութեան մէջ շատ մը յատկանշական կէտեր կային, բայց ես պիտի զբաղիմ անօր երկու ցայտուն գիծերովը միայն:

«Որովհետեւ, կ'ըսէր Պ. Չըրչիլ, կառավարութեան մեջ այլեւս իմ պաեսօնս լրացած կը նկատեմ, դիտել կուսամ քե սպայ մըն եմ ես, եւ իմ գունդս Ֆրանսա կը գտնուի, հետեւաբար անվերապահօրէն ինքզինքն կը դնեմ զինուորական իտալանութեանց տրամադրութեանը տակ:»

Նշանաւոր պետական մարդը, որ տարիներու ընթացքին աշխարհիս մեծագոյն ծովային պետութեան ճակատագիրը վարեր էր, անօր պարծանքի առարկան եղող ծովային ուժերուն գերագոյն վարչութեանը մէջ, չէր վարաներ, այսօր, երբ ազգային ներկայացուցիչ մարմինը ուրիշ կերպ կը տնօրինէր, երթալ, իբր պարզ սպայ մը, կռուի դաշտին վրայ շարունակել ծառայելու իր Ազգին: Ահա՛ հայրենասիրութեան վսեմ ժէսթը, զոր պիտի չի կրնայինք իսկ հասկընալ մենք, արեւելցիներս, մեր չապացուցուած դիւանագիտական արժանիքները հարկադրելու յաւակնութեամբը միայն գինովցած: Եւ մեծ մարդը ո՞րչափ աւելի կը մեծնայ իր գործածած այնքան համեստ լեզուին մէջ:

Բայց միթէ այս այսպէս չէ՞ ամբողջ քաղաքակիրթ Արեւմուտքին մէջ: Տակաւին երէկ, Պ. Վիվիանի, Ֆրանսական Հանրապետութեան նախարարապետը, կը հրատարէր՝ յաջորդ դահլիճին մէջ շարունակելու համար ծառայել իր Հայրենիքին իբրեւ դատական նախարար պարզապէս: Խոստովանեցէ՛ք, կ'աղաչեմ, ինձի հետ, թէ ասոնք ուղիղ չեն սովանեցէ՛ք, կ'աղաչեմ, ինձի հետ, թէ ասոնք ուղիղ չեն համեմատիր մեր սնամէջ փառամոլութիւններուն հետ: Մեր մէջ գաւառական ո՛ր է երեսփոխանական ժողովի ատենապետը երբէ՛ք պաշտօն պիտի չստանձնէր՝ եթէ նախապէս

զինք կրկնակի ապահոված չըլլային թէ ինքը, և ինքը միմիայն, պիտի ըլլար ատենապետը: Եւ սակայն, մենք սրչափ պղտիկ ենք մեր այս բարքերովը: Եւ ինչո՞ւ այս բաներն այ փարիզէն և Լոնտոնէն օրինակ չենք տաներ մեր հանրային կեանքին մէջ, մինչ, ամէն անգամ, չենք մտնար մեր աչքերը հոն դարձնել, երբ խնդիրը տեսական համագործակցութեան մը շուրջն ըլլայ:

Երկրորդ կէտը նոյնքան և աւելի թելագրական. «Ինքզինքն կարող չեմ գգար, կ'ըսէ Պ. Չըրչիլ, անառիտս լեցուն ամառկաններ ստանալու, ասանկ ասեցներ, հետեւաբար կը խնդրեմ ընդունիլ իմ հրաժարականս:»

Անխնէք մարդ, պիտի խորհէինք մենք, 16 ամիսէ ի վեր օրական 4,350,000 սակի պատերազմական ծախքի վիթխարի պիւտճէէն իրեն տանելիք մէկ-երկու հարիւր սակի ամսականը չկրնար կր մարտել, խորհելով որ ասանկ ժամանակներու մէջ խղճի դէմ է անաշխատ կերպով ամսական ստանալը... Արդեօք այս խօսքերը բան մը չեն ըսեր մեր այն աղնիւ հոգիներուն որոնք մեզի պէս խեղճ ու կրակ աղբի մը հանրային հաստատութեանց հիւծախտաւոր պիւտճէներէն չեն խղճահարիւր շարունակել ամսական քանի մը տասնեակ ոսկիներ գանձել, ի՞նչ կ'ըսեմ, ո՛չ թէ միայն շարունակել այլ և յաւելում պահանջել և ստանալ, ասանկ ժամանակներու մէջ:

Դո՛ւն ալ ինձի չափ իրազեկ ես, ընթերցող, որ եթէ մէկ կողմէն պարկեշտութիւն և միւս կողմէն քիչ մը կորով չի պակսէին, միայն Եգիպտոսի մէջ «անաշխատ կերպով մճարուած դրամներէն» կարելի կ'ըլլար շատ դիւրութեամբ տարեկան 2-3000 սակի գումար մը խնայել, որպէսզի մեր կամուրջները բազիկ չի մագլցէին Մայր Հայաստանի քարքարուտ լեռները, հարիւրաւոր փախստականներ սոխաման չի մեռնէին կովկասի մէջ, կամ մեր ցուցադրած Սուէրիացի քաջերը կէս-անօթի չի մնային Բոր-Սայիտի աւազներուն վրայ...:

Ա. ԳԱՐԱՄԱՆԻԱՆ

ՎԱՀԱՆ ՄՈՄՃԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ - ԳԱՒԱԶԱՆԱԳՈՐԾ

Թիւ 5, Շարա Ապս-էլ-Ազիզ, Բարաֆօլին դիմաց

Արուեստին վերջին բառը: Արժաթէ ու սակիէ չքեղ գաւազանագլուխներ կը պատրաստէ: Գահիրէի մէջ անմըրցելի, թէ՛ աշխատանքին գերազանցութեամբը և թէ՛ գիներուն չափաւորութեամբը:

ԵԳԻՊՏԱԶԱՅ ԴԻՍԱՍՈՒԵՐՆԵՐ

ԱՐԹԱՔԻ ԳԱՐԱՄԱՆԻԱՆ

Հոգիներ կան որոնք՝ կարծես՝ ներողութիւն խնդրելու ձեւ մը ունին՝ կեանքի հասարակաց ճամբուն վրայ քովէք անցնելուն համար, աղնիւ, ինքնամիտի, անձնուէր հոգիներ, որոնք պարտականութեան ուխտաւորի անսպառ կամաւորութեամբ մը կ'երթան ընկերային ժխտին մէջէն, ըստուերը նախընտրելով ուշագրաւ, արժեցնող լոյսերէն, և իրենց գոյութեան իրաւունքը փնտռելով իրենց մատուցած այլասիրական ծառայութիւններուն մէջ միայն:

Այս հազուագիւտներէն է իմ Գարամանեան բարեկամս: Եգիպտահայերէն շատերուն—և ամենէն տիտղոսաւորներուն—գուցէ դեռ անձանօթ մը, նշանաւոր անցորդէ մը նշմարուեր էր արգէն, և Ակնունին «համերաշխական» սեղանի մը շուրջը, իրիկուն մը, սղջուներ էր Արթաքի Գարամանեանին մէջէն «բոլոր համեստ ու անանուն գործողները որոնք երկրիս աղն են և մեծ գործերու անշուք այլ գերազնիւ ստատարները»:

Բայց այսքանը չի տար իր լրութեանը մէջ բարոյական կերպարանքը մարդուն գործօտէն սերտելէ յետոյ՝ անկարելի

է խղճիխայթը չուրնեալ իր անսահման բարութեան:

Պէտք է կենսապայքարի տաժանակիր մաքառողը ճանչնալ, ընտանիքի գորովապսթ հայրը, զոր բաղդը չի շփացուց, գմայլելու համար ապա հասարակական իրին հանդէպ ինքնամոռացումի իր արտակարգ ընդունակութեանը վրայ:

Այս կեդրոնականցին նուաճող մը չեղաւ: Ու կը թուի թէ պակսեցաւ իրեն այն տեսակ մը յարձակողական ամենութիւնը որ իր ըն-



* Արթաքի Գարամանեան

կերները յատկանշեց գործունէութեան բոլոր մարզերուն մէջ :
 վեհերոտ հեզութիւն մը, ինքնաստուերածուսի հակում մը
 տարաւ մեր դասարանէն, ու պտտցուց կովկասէն եգիպտոս :
 Ես հոս վերագտայ զինքը, ընկերական շրջաններու մէջ,
 ամէն տարապարհակի յանձնառու, գաղափարի գործին բու-
 լորանուէր, բայց անընդունակ աղանդաւոր կիրքերու, բիւ-
 րեղէ խղճմտանք մը պահելով՝ կուսակցական ու միջկուսակ-
 ցական տենդոտ ու գահալէժ իրադարձութիւններուն հանդէպ :
 Իրեն հետ ունեցած անձնական յարաբերութիւններուս
 մէջ էր, սակայն, որ Արթաքին հոգեպարար յայտնութիւն մը
 եղաւ ինծի համար :

Կեղծ բարեկամութիւններու, գիմակաւոր նկարագիր-
 ներու, ժպտուն մախանքի այս միջավայրը, ուր ո՛չ ոք բարի
 կը կամենայ ոչ ոքի, ուր մէկը միւսին բարերադուլթեամբը
 դժբաղդ կը զգայ, ուր ամենէն մտերիմդ կարծուածն իսկ բա-
 րօրութեան հաղիւ տարրական չափ մը կը ներէ քեզի, ուր
 ամենօրուան ընկերդ կը տժգունի, կը միտայ, երբ բերանդ
 հիւթեղ պատառ մը և ձեռքդ պերճանքի կաթիլ մը տեսնէ,
 դաժան, անուելի եսականութեան այս միջավայրը, կ'ըսեմ,
 եթէ՛ նեղ օրերնուդ՝ ձեր առջեւ հանէ անշուք ու բարե-
 մայն աշխատաւոր մը—արհեստով այցելու-հաշուակալ—որ ի-
 րեններուն բեռն ուսերէն նետելով ձեր հոգը, ձեր տրտման
 շալկելու փութայ, ուշագի՛ր եղէք, այդ մէկուն անունն ան-
 պատճա՛ռ Արթաքի Գարամաճեան պիտի ըլլայ . . . :

Վ. Թ. ՊԱՐԾԱՆՔԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ Ա Ն Ի Յ Ա Ք Ո Ւ Ի Ր Ա Յ Ի

ՇԱՐԱ ՍԻԿԿԷ Է՛, ԿԷՏԻՏԱ, ԹՂԹԱՎԱՃԱՌ-ՀԻՆՏԻ ԴԻՄԱՅ

Մանիֆարուրաի վերաբերեալ ամէն տեսակ ապրանաց
 վաճառում, մեծաքանակ և փոքրաքանակ : Մեր վաճառա-
 տան մէջ կը ծախուին ճերմակեղէններ, կտաններ, կանանց
 զգեստի համար կերպասեղէններ, տպածոներ ու ֆանէլաներ
 ևւն, ևւն :

Ի վիճակի ենք մեր բոլոր յաճախորդներուն լիուրի գո-
 հացում տալու թէ՛ մեր ապրանքներուն լաւութեամբ, տո-
 կունութեամբ և թէ՛ մեր գիններուն վերջնական ու անմրցելի
 աժանութեամբը :

ՇՈՂԵՆԱԻԻՆ ՄԷՋ

Ա՛լ Անհունի՛նն ենք . Ուժը մեզ կ'օրօրէ . . .
 Նաւը՝ խըլեա՛կն՝ Անեղրին գոգը թաւալ,
 Անհունի՛ն դէմ Միտքի՛ ժըպիր՝՝ զոր ծաւա՛լ
 Ծովուն կարծես երախը՝ բաց՝ կը կըլլէ . . .

Փոթորի՛կ . խո՛րն կը պատռի ա՛լքը ջուրին,
 Երկինքն ի վեր կ'եռայ յորձանք մահամոռնն՝
 Որուն տամուկ գիրկին մէջ լոյսը փունջ փունջ
 Ծաղկի փըրփուր՝ մարգարիտներ կը ցանէ :

Կոհակ կոհակ կ'ուռենայ ծովը խըռով,
 Ու կոծահեւ կը պօռայ կիրքն անդունդին,
 — Արհաւիրքի՛ երգ՝ որուն ծոցը ցըրտին՝
 Նաւը, խըլեա՛կ, մահուան նինջով կ'օրօրի . . .

* * *

Կը լըռէ մտածումս . ու կը սեւնայ մէ՛ջըս գիծն ու սահման,
 Իմ հոգիս՝ անդո՛ւնդ մըթար՝ կ'ունկընդրէ Անդունդի՛ երգին,
 Ու կը գինոյ՛լայ լեզի հոծութեամբն իր արհաւիրքին . . .

Ո՞ւր, ո՞ւր, այս անափ սարսափին վրայէն՝ որ մոլուցքն իր լա՛յն
 Կը թօթուէ մըրբիկն իր մէջ երգելով՝ մարդուն հեւքը կոյր
 Զիս ո՛ւր կը տանի, ի՞նչ երազներու, ո՞ր ափունքն անդոյր . . .

Ա՛հ, անպարագիծ այս խըռովքին մէջ թող նաւն հեռանայ . . .
 Այս անէական օրօրքին մէջ նաւն յաւէտ տատանի՛
 Լոյսին՝ ճամբայէն՝ որ շե՛շտ արեւի սիրտին կը տանի . . .

* * *

Կամըրջակին վրայ ալիք մը փըրփուր
 Մինչեւ ինծի . հոյ՛ն ու անդունդ կը պօռան
 Հոգիիս մէջ . . . Գինո՛վ՝ կ'ըմպեմ ես ծարա՛ւն
 Աղաղակի՛ն . . . Այս չէ՞ Անհունն անանդող . . .

Ծո՛վ, լո՛յժ անհուն, ազի կիրքով մոլեգնած,
կը պղտորի՛ մէջըդ երազը գարուն
Իրկուններուն՝ ուր լոյսին հեւքն անդորրուն՝
Ծոցիդ կուլար, կ'օրրէր կարօտն իմ սիրտիս:

Ծո՛վ, իմ հոգի՛ս ես դառնակոծ. աչքերուդ
Գիշերին մէջ ծիր-կաթիններ կը ծընին,
Քու սարսափիդ աչերս անդ՛որր կը ժըպտին,
Եւ Անդունդի՛դ կը հակի սի՛րաբս, ծո՛վ, ծո՛վ...:

1915

ԳԵՂԱՄ ԳՈՒՇԱԿԵԱՆ

ԵԳԻՍՏԱՅՑ ՊԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Գ Ե Ղ Ա Մ Գ Ո Ւ Շ Ա Կ Ե Ա Ն

Անկուշտ Մարմինան, մօտալուտ լքուսի, կամ սոսկ պե-
լեխներու և արմատացած ապրտեսներու վերջին հանգստա-
րանը մնալու իր նախազգացումին մէջ, ազիզ գիտիով մըն
ալ հարստացու վերջացող տարուան Օգոստոսին:

Գեղամ Գուշակեանը, հո՛ն, կունծիկ Արեղային մօտիկ-
ները թաղուեցաւ, նոյն անողորմ ցաւէն կերուած-լմնցած,
աւելի մատաղ—քսանը մէկ տարեկան—հատակին մէջ, մը-
տաւորական նոյնքան խոտմնալից ձիւրքեր գերեզման իջե-
ցընելով իրեն հետ:

Իր յուզարկաւորներէն շատեր չէին ճանչցեր հանգուց-
եալը. եկեր էին ի յարգանս իր հօրեղբոր, Առաջնորդ Սըր-
բազանին, որ ճշմարիտ հայր մը եղաւ իրեն համար, և հայ-
րենի տունին կողմէ իբր միակ սգակիր պիտի հետեւէր իր
ձերմակ դագաղին:

Բայց՝ բոլոր պաշտօնական պատշաճութիւններէն անկա-
խարար՝ եզրպատահայ սրտցաւ մտաւորականութիւնը՝ գե-
րեզմանոցի ճամբուն վրայ՝ մինակ պիտի չի թողուր Գեղամին
մեռելը, եթէ նոյնիսկ բոլորովին որբ մնացած ու պատն ե-
րեսին շիջած ըլլար հոս այդ մաքուր ու պայծառ հոգին:

Այս օրերուն, երբ մահն իր իմաստը կորսնցուցած, մի-
լիոնաւոր երիտասարդ ամեհիներու արհամարհանքին ու
հեգնանքին առարկայ կը դառնայ ամէն վայրկեան, տակաւին



Գեղամ Գուշակեան

Գեղամ Գուշակեանի
անվերադարձ մեկ-
նումն անտարբեր
պիտի չի թողուր
մեզի:

Վասնզի այս յան-
կուցիչ ու ցաւագին
տղսն մեր մօտ նը-
մոյնն ու յուշածուն
եղաւ այն նորահաս
սերունդին, որ ամե-
նէն խորապէս կրեց
հայ գաղափարի վեր-
ջին ու թնամեայ ազ-
դումներն, ու հա-
միտեան ըէժիմէն
խպառ ստրկացած
ու արտասահման-
եան այլասերումէն
վարակուած հասա-

րակութեան մը մէջէն լաւագոյն ու ամենէն բեղմնաւոր գե-
տինն ընծայեց մեր ազգային վերածնութեան նուիրական
սերմնացանքին:

Երբ մենք ամենուրեք յուսալքութիւն ու դասալքու-
թիւն կը տեսնէինք, Զաւարեաններն այս սերունդին կը մեր-
ձենային, անոր կոյս հոգիին խորհրդաւոր ու քրմական թե-
լադրանքներ կը հծծէին... Հայրենի երկրին մէկ ծայրէն
միւսը, քաղաքներու և աւաններու անշուք այլ անպղտոր
անկիւններուն մէջ, անոնք շուկայիկներ կամ տիրացուներ
չէին վնասուեր, հաւաքեր, այլ այս անարատ ու խանդավառ
պատանիները՝ որոնք միայն ընդունակ պիտի հանդիսանային
առաքելական մեծ ուխտին բոլորանուիրուելու... Գեղամին
եղբայրակիցները վանի պատնէշներուն ետին և կամաւորա-
կան մեր շարքերուն մէջ լէգէոն կազմեցին. անոնցմով է որ
այսօր կրակը նետուելու պատրաստ յեղափոխական նոր սե-
րունդ մը ունենալու վստահութեամբ կը գօտեպնդուինք:

Գեղամ Գուշակեանի գիւրաբեկ առողջութիւնը չի պիտի
գիմանար, սակայն, գաղափարական գործունէութեան տեն-

զին որով կլանուած էր, իր ծննդավայրին, աղու ու կտրիճ Պարտիզակին մէջ: Կայծերն իր ներսիդին լափլիզող հրգեհի պէս կը բոցավառէին, խանձելով, կրծելով աղածրի պարմանի իր փխրուն կուրծքը: Անիկա պարտաւոր կը զգար ինքզինքը վատնելու. գիւղին թերթը պիտի պճնազարդէր իր արձակովը կամ քնարերգութեամբը. ընկերական ոչ մէկ հաւաքոյթէ բացակայ, ոչ մէկ շարժումէ ետ պիտի մնար. պիտի քրտնէր, պիտի պաղէր, ու անկողին պիտի իյնար... Քանիցս ինքզինքը վերագտեր էր, և բժիշկը պատուիրեր էր իրեն զգուշանալ Ֆիզիքական ու բարոյական ամէն նոր սպառումէ: Բայց անօգուտ հրահանգ: Գեղամ չէր կրնար հրաժարիլ իր գաղափարական հետապնդումներէն, իր ընկերական յարաբերութիւններէն: Այսօր՝ վերին Արտերը վազք մը, վաղը՝ Սուրբ Մինաս հեւասպառ վերելք մը, գիշերը՝ յօդուած մը կամ քերթուած մը, առտուն՝ կուսակցական աշխատանք մը... Ու հէգ Գեղամին ծնողքը յուսահատութեամբ կը դիտէին իրենց սիրասուն զաւկին այլափոխումը, հիւժումը, գունաթափումը: Անոր անուշ, կապոյտ աչքերն հետզհետէ աւելի մուսլ ու հիւանդագին նայուածք մը կ'առնէին, շնորհալի ճակատն ու դէմքն երթալով աւելի տժգոյն ու վտիտ կը դառնային:

Ստուեր մընչէր արդէն երբ իր հօրեղբօրն, ու մեզի, եկաւ: Լսեր էր Հէլուանին մոգական բուժողութեան սին համբաւն, ու Եգիպտոսի դաժան ու պատրիչ արեւէն կուգար կհանք խնդրելու: Չէր գիտեր, թէ Հէլուանը գերեզմանն եղած էր յաւէտ իրեն դիմող հիւժախտաւորներուն... Հոն, իր ամենէն դժնդակ գիշերներն ապրեցաւ մէկ-երկու ամիս: Ապա Գահիրէն նախընտրեց: Ու իր լսին ու երբեմն քաղցրօրէն ժպտուն հոգեվարքն երկար ու անամօքելի հոգեկրկում մը եղաւ նաեւ իր հօրեղբօր համար սր անոր մոմի պէս առկայծիլն ու հատնիլը դիտելով պէտք էր կուլ տար իր կսկիծը, ու՝ ինքն ալ՝ ժպտիլ, ժպտիլ սիրելի գատապարտեալին...

Պարտիզակը, ուր այլապէս կը ճանչնային զինքը, պիտի լար իր Գեղամին վրայ՝ սր «արդիւնք մը կը ձգէր հոն, իր ետին», ինչպէս ըսեր էր իր մէկ մտերմին, մահամերձի սըրտաշարժ ու արգար հպարտութեամբ մը... Օգոստոս 13ի շաբաթ օրը, Ս. Աստուածածնայ տաճարին մէջ տեսնելով երիտասարդ ընկերներ որ իր դագաղն ուսամբարձ կը տանէին

մեռելակառքը դնելու, ես միւսներուն մտածեցի, Պարտիզակցիներուն... Արդեօք անոնցմէ քանինե՞ր, ճիւան տղաքներ, զնտաններու մէջ կամ աքսորի ճամբաներուն երկայնքը, կը քաշկռտուէին հիմա, բայց որոնք պիտի մոռնային իրենց տանջանքը, և Գեղամին համար կաթիլ մը արցունք պիտի թափէին, եթէ անոր մահագոյժն հասնէր իրենց (*)...

Ա՛հ, բոլոր բօթերը զոր դեռ չենք գիտեր, որոնք կը սպառնան մեզի, և որոնք օր մը ամենքը մէկ պիտի պայթին մեր գլխուն, երբ արգելքները վերնան և՛ գուժական և՛ աւետաւոր խապրիկներուն առջեւէն...

Այս մտածումին մէջ միայն պիտի մխիթարուէին Գեղամին սուզով վշտահարները:

Մարմինայի ծոցին մէջ, Արփիարին, Կունծիկին, Մուշեղին գրացնութիւնը գէթ տանելի ընծայէր իրեն գերեզմանին տարագրութիւնը...:

(*) Այս տողերը գրուած ասեմ դեռ Պարտիզակը չէր պարտաւոր: Գեղամ Գուշակեան—երեկ Իրեն—մեկնեցաւ խապաւ, իր հայրենի գիւղին աղէքը չի լսած...: (Մ. Հ.)

ԳԵՂԱՐԱՆ “ՐԱՄՍԷՍ”,

ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐ՝ ՎԱՀԱՆ Ն. ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Վ. ԿԱՅԵԱԼ ԳԵՂԱԳՈՐԾ)

Շարա Շեյխ-Ռիհան, Ապսին, Թեքեօնի քիւ 26-51

Գեղարանս երկար տարիներէ ի վեր բազմաթիւ յաճախորդներու վստահութեան և Առողջապահական Վարչութեան մասնաւոր գնահատման արժանացած է:

Գեղագիրները փութով և խնամքով կը պատրաստուին թարմ և զուտ դեղերով: Գիրները՝ դիւրամատչելի:

Իբրեւ միակ ներկայացուցիչ Անգլ. հռչակաւոր Տաքէնս (Dakin's) եղբարց գեղավաճառատան, մեր քով կը գտնուի Chemical Food լաւագոյն զօրացուցիչ օշարակը, ինչպէս նաև նոյն տան ուրիշ սրբախալիքները:

«Րամսէս» Գեղարանը կը գտնուին ֆրանսական և անգլիական սրբախալիքներ, անուշահոտ նիւթեր, Vin Tonal անուն ուժի գինին:

Collyre Ramses, մեր մասնաւոր պատրաստութիւնն է աչքի ցաւերուն դէմ:

Գեղարանս կը յաճախեն՝ ակնարոյժ-վիրարոյժ Տքթ. Ա. Տէր-Մարգարեան, ներքին հիւանդութեանց մասնագէտք՝ Տքթ. Շիրինեան և Տքթ. Շամլեան, մորթային-վեներական ախտերու մասնագէտ՝ Տքթ. Ապտէլ-Մէկիտ Ռուշտի:

Կ Ա Մ Ս Ա Ր Ա Կ Ա Ն



Ե Ղ Բ Ա Ր Ք



GAMSAKAGAN FRÈRES

TABACS & CIGARETTES

Յարգելի Հասարակութեան

ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԻՆ ՄԱՍՆԱԻՌԱՊԷՍ

Կ Ա Մ Ս Ա Ր Ա Կ Ա Ն Ս Ի Կ Ա Ր Է Թ Ն Ե Ր Ը

Ե Ի

Ա. ԳՈՒՆԻԿՄԷ Ծխախոտը

ՈՐ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ ՏԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ Է

ԳՈՐԾԱՏՈՒՆ ԶԱԿԱԶԻԿ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԳԼԽԱԻՌ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՋ

Օ Ք Ե Ր Ա Յ Ի Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Ի Ն Վ Ր Ա Յ

Գ Է Ո Ր Գ Ի Փ Է Կ Ե Ա Ն

KEVORK IPEKIAN

Egyptian Cigarettes



ԾԻԵՑԷ՛Ք ԻՓԷԿԵԱՆ ՍԻԿԱՐԷԹՆԵՐԸ

Իփէկեան սիկարէթները գնահատելու համար չի բաւեր անոնց լաւագոյն թրքական ծխախոտներէ պատրաստուած ըլլալը հաստատել, պէտք է նաև գիտնալ որ ծխախոտի առաջնակարգ մասնագէտ՝ նոյն ինքն Տիար Գէորգ Իփէկեանի հսկողութեան տակ կը կատարուի անոնց բաղադրութիւնը (խարման): Իփէկեան Գործատան մէջ ծխախոտը կը կտրուի հաւանով (և ոչ թէ մեքենայով) և բոլոր սիկարէթները ձեռեով կը պատրաստուին:

Աղեքսանդրիա մեծ մասամբ կ'ըմբոշինէ Իփէկեան Սիկարէթները, որոնք նաև Եգիպտական մեծ կեդրոններու մէջ կը գնահատուին:

Գահիրէի ամէն ծխափաճառներու մօտ կը գտնուին Իփէկեան սիկարէթները: Թոյլ տեսակներէն կը յանձնարարուին՝ Պոքճա և Սրէսիալ: — Խիստ տեսակներէն (սէրթ) կը յանձնարարուին՝ Սամսոն Մատէն և Սամսոն Սրէսիալ:

ԵԳԻՊՏԱԶՅ ՊԻՍԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ԱՐԱՄ ՎԵՅ ԱՐՇԱԿԵԱՆ

Վերջին տարիներու եգիպտահայ ամենէն ուշագրաւ դէմքերէն մին: Տեղական մեր ազատական հոսանքը կամ մակընթացութիւնը, որ Պ. Աւետիք Լաւտեանցը Պէնի-Սուրէնի վարչապետութեան բերեր էր, Արամ պէյին և մէկ քանի ուրիշ ձախակողմեաններու ալ Ապու-Տարտարի շրջափակէն ներս պաշտօնական մուտքը վճռեց:

Այդ նոյն շրջափակին մէջ ես տեսայ զինք, առաջին անգամ, ժողովրդային բողոքարկուի. ի՞նչ կ'ըսեմ, ամենի ցուցարարի գերին մէջ, Մէթր Ա. Թիւթիւնճեանի և ուրիշ ընկերներու կողքին: Եկեր, ափ առեր էին դուռն եգիպտահայ Երեսփոխանական Համալուսմարին, որ Օրմանեանի թեկնածութիւնը թաղելով Թորգոմ Սրբազանը պիտի ընտրէր Առաջնորդ եգիպտահայոց: Վարը, Ս. Պողոս-Պետրոս ժամուն բակը, ալէկոծ ամբոխ մը կը մոնչէր... Արամ պէյ զայրացած ըմբիշի մը երեւոյթն ունէր, իր առջեւ ամէն արգելք խորտակելու, ամէն խոչընդոտի բաղխելու, ամէն հեղինակութեան հետ չափուելու պատրաստ: Մէթր Թիւթիւնճեանի նրբամտութիւնը «կացութիւնը փրկեց»... Ինքնասպանութեան հրաւերը, որ եգիպտահայ ժողովականութեան կարգացուեցաւ, այդ օր, հետեւանք չունեցաւ: Բայց փոթորիկն անփնաս անցեր էր Ապու-Տարտարի վրայէն: Փափաքուած առաջնորդական ընտրութիւնը կատարուեր և չի փափաքուած երեսփոխանական ընտրութիւններն ալ անսահմանօրէն յետաձգուեր էին... Մարդիկ, վերջէն, իրար կրնային հասկընալ՝ խաղաղութեան ու ինքնամփոփումի մէջ... Իրար հասկցան թէ ոչ, չեմ գիտեր: Բայց մեծ ճգնաժամը տեղական շատ «հրատապ» խնդիրներ մոռցուց...

Արամ պէյ Արշակեան Աղեքսանդրիոյ ազգային վարչական մարզին մէջ եթէ պաշտօնական «հանգամանք» մը միայն կ'աւելցնէր իր վրայ, չէր դադարեր ըլլալէ այն պատուական Հայը, որ ընկերային ամէն ազնիւ դատ որդեգրելու, ամէն անձնուէր ծառայութեան նետուելու իր ընդունակութեամբն

ու իր տկայօնեռ խառնուածքովը ծանօթ էր արդէն Աղեքսանդրիոյ հայութեան, որուն ծոցին մէջ անհետացած լաւագոյն քաղաքացիի մը, ողբացեալ Գալֆասեան Խանի, — իր մօրիղբօր, — թողուցած պակասն ալ կը լրացնէ հիմա:



Արամ պէյ Արշակեան

Արամ պէյ Արշակեան անոնցմէ է որոնք իրենց աջակցութիւնը չեն սակարկեր բարիքի գործին, ի՞նչ ձեռի տակ այդ օր ան իրենց ներկայանայ, և երբ կը յարին ճիգի մը, տիտղոս մը չէ որ անկէ վրանին կ'առնեն կամ խոտու մով մը չէ որ անոր հանդէպ կատարած կըսեպին իրենց պարտականութիւնը, այլ թեւերնին կը ստաթեն ու կ'աշխատին, գործ կը տեսնեն, և անձնապէս կ'ըստանձնեն որ և է պատուակալ պաշտօնի ննթադրած տարհապարհակները: Արացաւ ու խղճամիտ աշխատողի իր այս յատկութիւնն է որ իր վրայ կը ծանրացնէ այսօր հանրային պաշ-

տօններու պատկառելի թիւ մը, և դուք Արամ պէյը կը տեսնէք միաժամանակ Բաղաք. Ժողովի, Կամաւորանպատ

Յանձնախումբի, Հիմնադրամ-Նպաստամատուցի և դեռ տեղական ուրիշ Քովիթէներու անդամ: Հասարակական գործերու համար միշտ տրամագրելի ժամանակ ու կորով ունեցողներէն է Արամ պէյ, որ՝ անզբաղ հասառու մը ըլլալէ հետի՝ իր սեփական բազում գործերն ունի, և ընկերական ժամանցի սեղաններու շուրջ ալ յամենալու ճաշակը:

Արամ պէյ Արչակեան այն տարօրինակ ըլլալու չափ հազուադէպ տիպարներէն է որոնք ամենէն սկեպտիկ շըրջանները կը յաճախեն, ամենէն անտարբեր ու օտարացած հոգիներուն հետ աշխարհիկ առօրեայ շփումի մէջ կը գրտնըւին, բայց իրենց այլասիրական ու սղգասիրական բուխ ու կարեկից զգացողութենէն բան մը չեն կորսնցներ. չեն վարակուիր իրենց հանդուրժած կարգ մը գաժան էակներէն որոնք ոչինչ պիտի տեսնէին, օրինակ, Բօքէրի սեղանէն անդին: Հակոտնեայ հպումներն ու հանդիպումները չեն կրնար աղօտել կամ պղտորել այսպիսի սրտի մը բիւրեղը:

Վերջացող տարուան ընթացքին՝ անոնցմէ եղաւ որոնք եգիպտական սղգային բարոյական դասալքութիւնը որոշ չափով դարմանելու համար ամենէն աւելի սգորեցան, փոյթ չէ թէ յարակցութեան ու կուսակցական կարգապահութեան օրինակներ չի հանդիսանային միշտ իրենց կեցուածքներով:

Արամ պէյ այն բարիներէն է որոնք իրենց հուժկու բնագիւն կը հպատակին ամէն բանէ առաջ: Քաղաքականութիւնն անոնց տարրը չէ, բայց ինքնին մեծապէս օգտակար է որ այսպիսի անխտրական ու հաշտարար անհատականութիւններ գտնուին մեր չափազանց խստացած քաղաքական բանակետներուն միջեւ:

Արամ պէյ Արչակեան համոզուած Դաշնակցական մըն է, և պարծանքով կը հռչակէ իր այս հանգամանքը:

Ամբողջ մարդն այս անկեղծ ու պարզուկ հպարտութեան մէջն է:

Լ. Կ Ո Կ Ա Ն Ե Ա Ն

Մ Ե Ք Ե Ն Ա Կ Ա Ն Մ Ե Ծ Ա Շ Ե Ա Տ Ա Ն Ո Յ

Պուլազ, Լօհիլ էլ Կիլալ փողոց. Թեյեֆօն՝ 39-59

Հայթայթիչ՝ Նորին Բրիտանական Վեհափառութեան Եգիպտոսի Բանակին:

Մեծ ձուլարան: Կոպղարարութիւն: Մեքենաներ:

Հ Ա Յ Ե Ր Ը Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի Մ Է Ջ

ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Եգիպտոս ծանօթ է եղեր Հայերուն անյիշատակ դարերէ ի վեր, իբրեւ վաճառական և ամէն ասպարէզի ձեռներէց ժողովրդի մը: Հրէական յիշատակարանները կը հաստատեն Հայոց առեւտրական յարաբերութիւնները Փիւնիկէի հետեւաբար և Եգիպտոսի հետ: Աշխարհակալութեան, ինչպէս նաեւ վաճառականութեան և գեղարուեստի ու ճարտարարուեստի սիրահար Մեծն Տիգրան Բ. իր կայսրութեան սահմանները մինչեւ Փիւնիկէ և Պաղեստին տարածելով՝ Եգիպտոսի ալ կ'ըսպառնար, ըստ Հռոմի Մերակոյտի յայտարարութեանց: Մարկոս Անտոնինոսի ծուղակին մէջ բռնուած՝ յունագէտ և բանաստեղծ արքայն Արտաւազդ՝ բազմաթիւ հետեւորդներով Աղեքսանդրիա կը բերուէր իբրեւ գերարժան նուէր մը կըղէօպատրայի, որուն սակայն չուզելով նա խոնարհել իր գլուխը, հայկական հպարտութեամբ, ըստ հռովմայեցի մատենագրաց, եղերական այլ հայ ցեղին պատուաբեր մահ մը կ'ընդունէր: Աղեքսանդրիոյ մուսէօնը կամ ճեմարանը անշուշտ Խորենացիէն շատ առաջ առ ինքն պիտի ձգէր յունարէնի այնքան նախասիրութիւն ընծայող հայ ժողովրդի ուսումնասինդիր երիտասարդները, թերեւս Պողոմէանց օրերէն, մանաւանդ հռովմէական և բիւզանդական կայսրութեանց օրով՝ երբ Նեղոսէն մինչեւ Եփրատ ամբողջ Արեւելքի մէջ յունական դպրութիւններն էին գերակշռող հանդէպ լատինականին որ չկրցաւ այսր-պալքանեան Միջերկրականի ամերուն վրայ արմատ բռնել, երբ յունական քրիստոնէութիւնը Կեսարիայէն Հայաստան կը մտնէր և Աղեքսանդրիոյ ու Անտիօքի Եկեղեցիներուն ազդեցութիւնը այնքան կը զօրանար Հայ Եկեղեցիին վրայ Դ. դարու սկիզբէն: Ուրեմն Ե. դարու թարգմանիչները և մանաւանդ Խորենացին, (անձով ու թըռուականով այնքան խնդրական), իրենք չպիտի ըլլային առաջին օրինակը տուողները Աղեքսանդրիոյ յունական դպրութեանց տիեզերահռչակ միլիգեօնը դիմելու և օգտուելու: Այսպէս, Հայերը, իբրեւ վաճառական և յառաջդիմասէր ազգ, շատ վաղուց ճանչցած և թերեւս է. դարէն շատ առաջ նաեւ գաղութներ հաստատած ըլլալու են յեգիպտոս, թէև


ատոնց յիշատակը մեզ հասած չէ, Ե. դարէն առաջ հայ պատմիչներ չունենալնուս կամ եղած յիշատակարանները մեր ձեռքը չհասնելուն պատճառաւ: Եւ միթէ նմանօրինակ համագամանքներու կամ մեր յետագայ պատմիչներուն տգիտութեան և սահմանափակ հայեացքներուն շնորհիւ չէ՞ որ մեր հեթանոսական շրջանի գանձերէն այնքան զուրկ և թափուր կը մնայ մեր պատմութիւնը:

ԱՐԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆ. — Է. դարէն եգիպտահայ պատմութեան համար ապահովապէս նոր շրջան մը կը բացուի, երբ Արարները նախկին Սասանեան Պետութեան և Միջագետքի հետ Սուրիան ու Պաղեստինն ալ գրաւելով, եգիպտոսն ալ Դամասկոսի և ապա Պաղատոսի ամիրապետներուն թագին թանկագոյն գահարք պիտի կապէր: Գիտենք որ անապատի սրբիք իրենց ամայի և անմշակ երկիրները շէնցնելու նպատակաւ Հայաստանէն բխարսուր գերիներ կը գաղթեցնէին մինչեւ Արարիա և եգիպտոս, այնպէս որ ժ.Ա. դարուն Գրիգոր Վկայապետը Կաթողիկոսը Նեղոսի ամիրոսն մրայ հաստատուած կը գանէր 30,000է աւելի բարգաւաճ հայ գաղթականներ, որոնք սենէին 20-է աւելի եկեղեցիներ ու վանքեր՝ առաւելապէս Փահիրէի մէջ և շրջակաները: Հայերը ժ.Ա. և ժ.Բ. դարերուն ֆաթիմեան ամիրապետներու այքունիքն ու բռնակը կը վարէին, ընծայելով վարչապետներ, խորհրդականներ, գաւառաց կառավարիչներ ու մինչեւ իսկ կը հանէին առանձին հայ հեծելազօրք:

Սալաէտոսինի կարճատեւ Էուպեանց և ապա ժ.Բ. դարու կէսէն մինչեւ ժ.Ե. դար կիլիկիան աւրշակոյ և Ռուրինեան թագաւորութիւնը կործանող Մէմլուքները՝ բազմաթիւ հայ գերիներ բերին եգիպտոս, ուր անոնք՝ իրրեւ արհեստաւորներ և վաճառականներ և թերեւս իրրեւ պաշտօնեաներ՝ մեծ դեր կը խաղային թէ՛ ներքին կեանքի և թէ արտաքին յարաբերութեանց մէջ: Եգիպտոսէ քիչ հեռու Երուսաղէմի մէջ է. դարուն կը յիշատակուին արդէն 70-է աւելի հայ վանքեր 500-է աւելի հայ կրօնաւարներով: Արդ, երբ Պաղեստին Խաչակիրներէն Եգիպտոսի Սուլթաններուն ձեռքն անցաւ, ասոնք Երուսաղէմի հայ արքեպիսկոպոսը պատրիարք անուանելով՝ իրենց ամբողջ տէրութեան հայ հպատակներուն պետ ճանչցան զայն: Նոյնպէս երբ Օսմանցիք Սուլթան Սէլիմ Երկուրորդի օրով (1517) Մէմլուքներու կայսրութիւնը կոր-

ծանելով՝ հիւսիսային Ափրիկէն ալ միացուցին իրենց պետութեան, հայ ձեռներէցութեան առջեւ եգիպտոսի դռները աւելի լայն պիտի բացուէին, ինչպէս Գոնիայի և Բիւզանդիոնի լայնածաւալ ժառանգութիւններուն տիրացող Թուրքերու բոլոր երկիրներուն մէջ՝ Տիգրիսէն մինչեւ Դանուբ եւ Կովկասէն մինչեւ եգիպտոս: Վերջապէս ժ.Բ. դարու վերջերը Պոնաբարգի արշաւախմբին դէմ Բուրգերուն տակ մարտնչող Մէմլուքներուն պետը՝ Մուրատ պէյ, կրօնափոխ Հայ մըն էր:

Ի՞նչ եղան, սակայն, յիշատակուած բոլոր դարաշրջաններուն կամաւ կամ



Համբարձում Երամեան.

բոնի եգիպտոս եկած կամ բխարսուսը գոյութիւնը և ճոխութիւնը կը հաստատեն օտարներու ձեռք անցած եկեղեցիները, ասոնցմէ ամանց աւերակները և վերջապէս արաբ պատմիչները նոյնիսկ: Աւելցնենք նաեւ ըստ ոմանց հայկական դիմագիծեր վերին և միջին եգիպտոսի գիւղերու արաբ կամ ղպտի բնակչութեան մէջ և քանի մը տեղ հայկական գամփու շուներու սերունդները: (Արմանթ-Լուքսորի մօտ) Դեռ մինչեւ այսօր Փահիրէի և Աղեքսանդրիոյ կէս ղպտիացած պիլէի (բնիկ) Հայերը՝ խեղճուկ և ցանցառ մնացորդները չեն միթէ բունի կամ բնական ճամբով օտարացած երբեմնի ճոխ հայ գաղթականութեանց:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՐՋԱՆ. — ԺԹ. դարուն գիտենք արդէն որ Մէմլուքա Ալի և իր յաջորդները ամէն կերպով քաջաւերեցին

Հայերը, զանոնք բարձրացնելով խտրվական տէրութեան ամենաբարձր աստիճաններուն, մեծածառու կալուածներն ւր-ւիրելով Գահիրէի և Աղեքսանդրիոյ Հայոց եկեղեցիներուն և Պատրիարք աթոռոսն ընծայելով (ըստ սմանց նորոգելով) նաեւ Եգիպտոսի Հայոց Առաջնորդին: Այնուհանդերձ դեռ մինչեւ 1896 թուականը՝ Եգիպտոսեան Հայոց թիւը 3-4000ը չէր անցներ, և առանց վանցի աղա կարապետ Գալստեանի ի Գահիրէ և Իզմիրցի Պօղոս պէյի յԱղեքսանդրիա հիմնած ազգային վարժարաններուն՝ Հայութեան ազօտ ճառագայթն իսկ թերեւս մարած ըլլար հոս բոլորովին: Այնուհետեւ 96-ին համիտեան կոտորածներու երեսէն հալածուող հազարաւոր հայ փախստականները՝ Եգիպտոսի հիւրընկալ հողն ապաստանելով՝ յանկարծ իմն հայ գաղութին թիւը կը բազմապատկուի և այս անգամ Եգիպտոսայր կ'օժտուի մամուլով, բարձրագոյն նախակրթարաններով և վերջապէս ազգային մշակոյթով: Այս իսկ պայմաններն են ահա — մայրենի լեզու և ազգային մշակոյթ — որ կը պահպանեն ո՛ր և է և առաւելապէս անկախ հայրենիքէ զուրկ հայ գաղութներու գոյութիւնը օտար երկիրներու մէջ, Իրաւ է որ Հայ Եկեղեցին պահպանեց եւ կը պահպանէ Հայը, Մայր-Հայրենիքի և անոր հետ անմիջական յարաբերութիւններով կապուած երկիրներու, ինչպէս և Կ. Պոլսոյ և գաւառներու մէջ, բայց Եգիպտոսի, Հնդկաստանի, Թաթարիստանի, Լեհաստանի, Քալիֆիոյ և Հոլանտայի Հայ գաղութները՝ միայն Հայ Եկեղեցիով և առանց ազգային մշակոյթի՝ չկրցան իրենց գոյութիւնը յաւերժացընել, և զանազան ազգեցութեանց բերմամբ տակաւ ձուլուեցան տիրող կամ աւելի հոծ զանգուածներու մէջ, մինչ իրենց կանգնած՝ բայց այսօր դատարկ կամ օտարին ձեռք անցած եկեղեցիները և վանքերը մէկ կողմէ և գերեզմանատանց արձանագրութիւնները, ինչպէս և թաղերու, գիւղերու եւ մինչեւ իսկ քաղաքներու և օտարացած ընտանիքներու հայ անունները միւս կողմէ կը յիշեցնեն անոնց երբեմնի ճոխութիւնը:

Հետեւաբար Եգիպտոսի արդի Հայութիւնն ալ որքան եկեղեցիին նոյնքան եւս հայ լեզուի պահպանութեան փոյթ պէտք է ունենայ, մօտաւոր կամ հեռաւոր ապագայի մը մէջ իբրեւ կաթիլ մը ջուր տիրող տարրերու ովկիանոսին մէջ չանհետանալու համար: Դժբախտաբար Եգիպտոսեան շատ

հայ ընտանիքներու համար մայրենի լեզուն դեռ շատ աննշան կարեւորութիւն մը ունի, և անոնց մանչ ու աղջիկ զաւակները օտար կրթութեամբ կարծես տակաւ կը խորթանան, և իրենց հայրերու ու պապերու մեռնելէն վերջ՝ իրենք կամ իրենց զաւակները ապահովապէս բոլորովին պիտի օտարանան: Զանազան ախուր օրինակներէ կը փորձուինք հաստատել սոյն ցաւալի իրողութիւնը: Ես՝ իբրեւ անկողմնակալ դիտող մը՝ Գահիրէի Գալստեան և Աղեքսանդրիոյ Պօղոսեան ազգային վարժարաններէն դժգոհ ըլլալու բնաւոր պատճառներ չեմ գտներ Եգիպտոսահայոց համար. իսկ եթէ կան այնպիսիներ՝ որոնք իրենց մանչ և աղջիկ զաւակները ժողովրդի 5-600 զաւակներուն հետ խառն կրթել տալու գաղափարէն կը խորշին, անդին Մանխալեան օրիորդաց մասնաւոր վարժարանը կայ, որ պահանջուած ազգային կրթութենէն զատ, նոյնքան խնամքով կը սորվեցնէ օտար լեզուներ ալ որքան օտար մանկապարտէզներն ու նախակրթարանները: Է՛ր ուրեմն ազգայինն արհամարհել անպայման՝ իշահ օտարին:

Մասնաւորութիւններէն վեր իբրեւ նոր ժամանակուայ նշան ներկայ հայ իրականութեան մէջ, սակայն, ազգային գոյութեան պահպանման նոր բարեգուշակ ազգակ մը կը քաշալերէ զմեզ, ազգային ոգիի տեսակէտով՝ մեր երկիրները փարատելու:

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ. — Ո՞րն է այդ երեւոյթը: Նախ՝ համիտեան հալածանքներու և ապա՝ անոնց գրեթէ անմիջական հետեւանք եղող յեղափոխական շարժման արծարծած ազգային զգացումն է այդ, որ 30-40 տարիներէ ի վեր կը ճարակի և կը հրդեհէ մօտաւոր և հեռաւոր հայ զանգուածներու ընկերային ամէն խաւերը, որուն հետեւանքով կազմուեցան կրթական և բարեգործական մեծ ընկերութիւններ, լոյս և սփոփ տարածելու նպատակաւ: Մըկերութիւններ, լոյս և սփոփ տարածելու նպատակաւ: Մըկերութեան է տեսնել մանաւանդ որ որքան ներկայ համեւորական պատերազմին և հայ կամաւորական շարժման ծընեցուցած ազգային յոյսերը, նոյնքան եւս իթթիհատի անօրինակ հալածանքները՝ Թուրքիոյ Հայութիւնը բնաջնջելու մտօք կազմակերպուած, փոխանակ յուսահատութիւն բերելու, ա՛լ աւելի կը բորբոքեն և կը զօրացնեն ազգային ոգին՝ ինչպէս բովանդակ Արտասահմանի և կովկասի՝ այնպէս ալ Եգիպտոսի Հայութեան մէջ:

Բայց խնդիր է թէ Եգիպտահայութիւնը առ հասարակ և եգիպտահայ հարուստները մասնաւորապէս՝ ներկայ բախտորոշ րոպէին հանդէպ՝ լիակատար գիտակցութիւն մը ցոյց տուի՞ն նկատմամբ իրենց ազգային պարտականութեան և կոչման: Իրենց զանազան հանգանակութիւնները, յանձնաժողովները և կարմիր Խաչերը կրնա՞նք բաւարար պատասխան համարել մէկ կողմէ զոյգ կաթողիկոսներու, Պոլսոյ Պատրիարքի, Ազգ. Պատուիրակութեան Նախագահի և Եգիպտոսի Առաջնորդի սրտառուչ կոչերուն, և միւս կողմէ կովկաս ապաստանած և Միջագետքի անապատները տարագրւած մեր հարիւր հազարաւոր համարիւն եղբայրներու և քոյրերու աղեխարշ աղաղակներուն, ինչպէս և ազատագրական շաժրուածի անյետաձգելի պահանջներուն, իսկ ազգային գործիչները, մտաւորականները և զոյգ թերթերու («Յուսարեք»ի և «Արեւ»ի) խմբագիրները կրնա՞ն ձեռքերնին խղճերուն վրայ դրած երդնուլ, որ իրենց յաճախ անտեղի պայքարները չեն վտանգեր գերագոյն շահերը (առանց համերաշխութեան և համագործակցութեան վրայ խօսելու) Մայր-Հայրենիքին՝ որուն անունով կ'արտասուեն և կ'երդուրնան ամենքն ալ: Մինչ անդին կովկասի և Միջագետքի մէջ տասնեակ հազարաւորներ ի զուր սնունդ և պատասպարան աղերսելով, անարիւն կտորածի կը մատնուին, աղէտի կեդրոնէն հեռու, Եգիպտոսի հանգստաւէտ, չըսեմ այլասերող միջավայրին մէջ, ազգի փրկութեան և երբեմն օրէնքի անունով միջոցներու, մատակարարութեան եղանակի և զանազան ձեւակերպութեանց վրայ կը վիճին ու կը պայքարին դեռեւս... Ի՞նչ ցաւալի և ի՞նչ ողորմելի գործելակերպ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ. — Կարելի՞ էր 1916-ի համար սահմանուած եգիպտահայ Գ. Տարեցոյցի երկսեռ ընթերցողներուն ուշադրութեան երկարօրէն մատնանշելէ յետոյ թէ Հայ Գաղութները Արտասահմանի մէջ ի՞նչպէս կը կորսուին և կամ ի՞նչով (որ է միայն ազգային մշակոյթ) կրնան իրենց գոյութիւնը պահել պահպանել, նոր շեղումով մը չի դարձնել իրենց հայեացքն ու սիրտը դէպի Հայ Հայրենիքը: Այնտեղէն եկած են իրենք ալ: Հո՞ն կը հանգչին իրենց պապերու և հայրերու ոսկորները: Հո՞ն պիտի վճռուի Հայութեան ճակատագիրը՝ հարիւր հազարաւոր անմեղ զոհերու և տասնեակ հազարաւոր անձնագոհ հերոսներու արիւնովը: Այո՛, ազգին

ըլլալ կամ չըլլալու խնդիրը վճռելու կոչուած ներկայ անաւոր և հանգիստաւոր վայրկեանին, երբ մէկ կողմէ հայ պատմութեան մէջ գրեթէ աննախընթաց ողբերգութեան մը վերջին արիւնոտ արարուածին և միւս կողմէ դարերէ ի վեր բաղձացուած և երգուած հայ ազատամարտի դիւցազներգութեան առաջին տեսարաններուն հեռուէն հանդիսատես ըլլալու կոչուած են Եգիպտահայերը, պէ՛տք է վերջապէս համոզուին որ առանց Մայր-Հայրենիքի, մշակութային բոլոր միջոցներն իսկ թերեւս, չպիտի զօրեն իրենց գոյութիւնը պահպանելու այս օտար միջավայրին մէջ:

Մէկ կո՛ղմ դրէք, ուրեմն, ո՛վ դուք մտքով և սրտով հարուստներ, ամեն անձնական նկատում կամ հաշիւ, և օրինակ առնելով ձեզ եթէ ոչ եւրոպական՝ գէթ Յոյն և Հրեայ Գաղութները և նոյն իսկ եգիպտահայ ազնիւ հասարակութիւնը և կամսարական եղբայրները, բերէ՛ք, դրէ՛ք անվերապահօրէն և առատօրէն՝ ձեր բոլոր բարոյական և նիւթական ոյժերը՝ Հայրենեաց փրկութեան Սուրբ Սեղանին
Հ. ԵՐԱՄԵԱՆ
վրայ:

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

— Վայ, կարապետ աղա, աս ո՞ւր էք ձանրմ, սիգի կէտրէն պէյ օլուր, ի՞նչպէս էք նայինք, աս ի՞նչ աղուոր գիրցեր էք...

— Այո՛, Թաղէոս էֆօ, գիրցեր եմ, չէ՞... Առողջութիւնս ալ պատուական է: Ահա այսպէս կ'ըլլան ամեն անոնք որ միշտ կը յաճախեն

ՃԱՇԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆԸ

Շարա Մօհամէտ Ալի, հաստատուած 1882ին, որու ճօխ ու ամենաընտիր կերակուրները մարդուս աչքերուն մէջ մարգարիտներ, ու այտերուն վրայ վարդեր կը բուսցնեն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ՝ Հ. Ե. Ք. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ	
Թիւ 1	«Երգարան Կրօնական և Ազգային» գին 3 ՂԸ.
» 2	«Մանուկներու Առողջապահութիւնը» » 1 »
	Հեղինակ՝ Տօք. Մ. Շամլեան
» 3	«Սուէտիոյ ինքնապաշտպանութիւնը» » 5 »
	Հեղինակ՝ Պատ. Տ. Անդրէասեան

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՔՏԱՐԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ՎԱՃԱՌԱԿԱՆ

Ա.Ղ.ԵՔՍՍՆԳՐԻՍ.

B. P. 515, ALEXANDRIE

Աքտարեան Տունը կը զբաղի գլխաւորաբար երկաթի, չիմէնթօի, քրոմիական նիւթերու (դաշտերու պարարտացման համար) և ալիւրի ներածութեամբ:

Իր նշանաբանն է՝ Խղճմտութիւն և Ճշգրտագհութիւն: Հասցէ՝

OHANNÈS AKDARIAN

NÉGOCIANT-COMMISSIONAIRE

ALEXANDRIE

Հեռագրի հասցէ՝ Akdarian—Alexandrie

Թեխնօն՝ 27-19

ՎԱՀԷ ՃԵՐՐԱՀԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ-ՎԱՃԱՌԱԿԱՆ

ՍՈՒԷՑ

B. P. 9, SUEZ

Ճերրահեան Տունը կը զբաղի գլխաւորաբար Մանթաշէֆ Տան քարիւղի վաճառումով, հանքային իւղերու, ալիւրի, նպարեղէններու ներածութեամբ, նաւային հայթայթումով, մաքսային գործողութեամբ, թրանզիթով:

Հասցէ՝

VAHÉ DJÉRAHIAN

NÉGOCIANT-COMMISSIONAIRE

SUEZ

Հեռագրի հասցէ՝ Djérahian—Suez

Թեխնօն՝ 161

ԵԳԻՊՏԱԶՅ ՊԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ՄԷՔՐ ՄԻՀՐԱՆ ԹԵԼԵԱՆ

Կալաթա Սէրայի Լիսին մէջ ըրած է իր պաշտօն, Թովմաս Թէրզեանէն սորվելով հայերէնը զոր ետքէն ձօխացուցած է ինքնօգնութեամբ: 87ին շրջանաւարտ, 89ի վերջերը Թելեան կը մտնէ Պոլսոյ Իրաւաբանական Վարժարանը, որուն հոգին էր Ալի Շահպաղ, թրքացած ու բանադրուած Հայը, որուն մէջէն հայութիւնն անպարտելիօրէն կը պոսթկար, և որուն դասաւանդութեան եղանակը հայրենասիրական հուրն արծարծեց, աճեցուց իր հայ ուսանողներուն ներսիզին: 93ին իր վկայականն ստանալով, Թելեան փաստաբանական ասպարէզը կը թեւակօխէ, Ասասեանի ու Նառլեանի գրասենեակներն իր սրածն ընելէ յետոյ:

Հազիւ Իզմիրեան Պատրիարք ընտրուած, 95ի վերջերը, Դիւանապետ Թելեան Բարթող էֆ.ի թելագրութեամբ, Միհրան Թելեան կը ստանձնէ կարգ մը *soffrimanerie* թարգմանութիւններ, որոնք գնահատուելով Ազգ. Կեդր. Վարչութեան անգամ Մէթր ֆեաթիպեան էֆ.է, երիտասարդ փաստաբանը կը մղուի Պատրիարքարանի խորերը, ձեւացնելով՝ Բէլէկեանի ու Մոստիչեանի առընթեր՝ մասնաւոր զիւանմը, ուր Կեդրոնականցի մեր պատուական ընկերներէն Գաւնակերեանը — այժմ Եգիպտական Պետական Երկաթուղիներու Վարչութեան մէջ ճարտարագէտ — *surintendant* պաշտօնը կը կատարէր, Թելեանին հետ գիշերներ լուսնակելով, այդ երկունքի շրջանին...

Մեծ Փոթորիկէն վերջը, — որ ա՛յնքան պզտիկցաւ, նսեմացաւ, բարէ՛, ներկայ արհաւիրքին բաղդատմամբ, — Թելեան պահ մը, Աղեքսանդրիա, Գաղթականաց Յանձնաժողովին մէջ պատահական աշխատանք մը կը ստանձնէ: Ապա կը մեկնի Պրիւսէլ, ուրկէ առաջին անգամ կ'առնէի իր ձայնը՝ Լօնտօնի Վերակազմակալ Կեդրոնին մէջ որուն հետ Թելեան թղթակցութիւններ ունեցաւ՝ պելժ մամուլին Հնչակեան քաղաքական մանրիքեք մը հաղորդելու և այդ առթիւ հայ փրօփականտի արծարծման աշխատելու հրաւիրուած ըլլալով մեր կողմէն:

Ինքիվերսիթի Լիպրէն իրաւագիտական doctoratն անցընելով՝ 1901ին կը վերադառնայ Աղեքսանդրիա, և պառօն կ'արձանագրուի 1902ի Ապրիլին: 1901-1908 Աղեքսանդրիոյ ազգային վարչական գործերուն նուիրուած է, վայելելով միևնոյն ատեն իր ասպարէզին ծառայելու ազատութիւնը: Իր նախասիրութիւնները, սակայն, վարչական մարդին հակած են միշտ, որուն մէջ «ատենագրութիւնը» միշտ իր ուսերէն պակաս չէ եղած, թէև ինք շեշտուած ճաշակով ու գրեթէ բիւռիսք բժախնդրութեամբ մը ստանձնած է այդ ասպերախտ պաշտօնը: 1912էն ի վեր ազգային երեսփոխան, հոն ալ թեմականին Ատենագրար, արժեցնել գիտցած է միշտ այդ դերին հմայքը:

Պիտի ուզէի դաժան, գէթ տարտամօրէն յարձակողական գիծեր գտնել այս յանկուցիչ, կակուղ, գրեթէ միևնոյն դէմքին վրայ, հաշտեցնելու համար զայն բօսիէտօնօսցէվեան դերին հետ զօր անօր վերագրեցին՝ երէկուան մեր յեղափոխական պայքարին տաժանքներէն խելօքիկ մը մեկուսացած մարդիկ, երբ հոս իրենց համար առձեռն ու անվտանգ «յեղափոխութիւն» մը կը սարքէին:

Միհրան Թեւեան տօնավաճառի ռամկավարութիւններուն համարումին խոշոր ու դողահար հոգը չունեցաւ, ոչ ալ խնամքը՝ քառուղիներու վրայ կամ ժամուր-բակերուն մէջ ժողովրդականութիւն հետապնդելու, ինչ որ, սակայն, չարգելեց զինք եգիպտահայ ամենէն համակրելի ու ժողովրդական ազգայիններէն մին ճանչցուած ըլլալէ այսօր:

Եթէ ազաներու, պէյերու և փաշաներու այս երկրին մէջ ռամկավար ու սահմանադրական սկզբունքներն իրենց ամենէն ենքրանգիման կարծուած ջատագովներուն կողմէ իսկ պիտի զոհուէին անհատական «հմայք»ներու և «հեղինակութիւն»ներու, ես պիտի նախընտրէի որ զիջումը եղած ըլլար Բարթողին պէս յօջաղ ու սրտոտ փաշայի մը ամբարտաւանութեանը, որ այլապէս կը փոխարինուէր գոնէ հանրամուէր վեհանձն ժէսթերով:

Միհրան Թեւեան, Ֆիլիպով մը որ իր էական յատկանիշներէն մին կը կազմէ, եգիպտահայ հասարակական ատեանին առջեւ փոյթ չունեցաւ իր դատը պաշտպանելու, ինչպէս անտարբեր պիտի գտնուէր — ինք, իրաւաբանութեան վկայեալ վարդապետ և արհեստով փաստաբան, — ուրիշներու դատերն ալ ստանձնելու:

Կարծես, գիտէր թէ դէպքերն, ուշ կամ կանուխ, իրաւունք պիտի տային իրեն, և մարդերը — զօր ճանչնալու և

որոնց հետ վարուելու գիտութեան մէջ գերազանցեց — իրեն պիտի վերադառնային, զինք պիտի փնտռէին, նոյնիսկ այն շրջաններէն ուր ամեհօրէն մեղադրած էին զինք...

Սկեպտիկ, բայց այնքան որքան անհրաժեշտ է, ժրպտուն սկեպտութեամբ մը, որ մինչեւ ժխտամուրթիւն, արհամարհանք և ոչնչապաշտութիւն չերթար, Մէթր Թեւեան ընկերական դառնութիւնները չի ճանչցաւ, ու միշտ պահեց իր հոգեկան պայծառութիւնը: Չեմ կարծեր որ մէկը կարե-

նայ յաւակնիլ տեսած ըլլալու իր բարկութիւնը կամ խոժուումը: Անոնցմէ եղաւ որոնք միշտ կը ժպտին կեանքին, ժպտներ քաղելով անկէ, և որոնք իրենց սովորական մտերմութիւններուն մէջ իսկ անձնատուր չեն ըլլար այլոց անխորհրդապահ հետաքրքրութեան ու պլշկող ընտանութիւններուն, առանց ոչ ոքի գլուխ բռնելու, առանց կողողալից կեցուածքներ տալու ինքզինքնուն:

Մէթր Թեւեանի դերը եգիպտահայ պաշտօնական մարդին մէջ խիստ ծանօթ է՝ որպէս զի պէտք ունենայի այդ մասին ծանրանալու Աղեքսանդրիոյ թեմականին Ատենա-



Մեքր Միհրան Թեւեան

դպիրը, դիւանական նրբութիւններու քաջավարժ և ազգային կեանքի խորապէս իրազեկ, տիպար երեսփոխանն է, որ հանդիսաւոր նիստերու միայն չի բերեր իր բանիբուն մասնակցութիւնը, այլ առօրեայ թանկագին ծառայութիւններով օգտակար կ'ըլլայ համայնքին վարչական հաստատութիւններուն, իբրև այնքան հմուտ իրաւաբան՝ որքան անձնուէր ժողովական:

Իզմիրլեանի անձնական քարտուղարութենէն — որով այնքան սիրելի եղած էր Երկաթէ Պատրիարքին — «պատմական» հով մը կը մնայ իր վրայ, զգօն ու խոհուն արտայայտութիւն մը, որ կանաչ սեղանին շուրջ իր խարտեաչ, գրեթէ վիպական դիմագծութիւնը կը զատորոշէ յարակից թանձրութիւններէ ու որևէ «անձնաւորութիւն»ներէ:

Մէթր Թելեանին մէջ մարդը անկեղծօրէն փնտռուած է իր բարեկամական ընտիր ու անպատիր յատկութիւններովը և ասիկա դոյզն առաւելութիւն մը չէ այս օրուան օրս, երբ՝ անձնազոհութեան ու ողջակիզումի կարմիր գիծերէն հեռու՝ մարդիկ, «բարեկամութեան» տասնեակ տարիներու շղթայով կապուած, Օգթավ Միրպօի մարդատեցութիւնն արդարացնող վայրագութեամբ մը, յանկարծ, իրարու կը ծամածուեն և զիրար կ'ուրանան:

Հաճոյակատար, բարեհամբոյր, ամէն ցաւով շահագրգռըւելու, ամենուն հասնելու պատրաստակամ, այլասիրական յոգնութիւններու յանձնառու, Մէթր Միհրան Թելեան անոնցմէ է որոնց ամենէն աւելի կը բեռցուին ընկերական պարտաւորութիւնները, ինչպէս նաև անոնցմէ, այն գերազանցապէս օգտակար անհատներէն, որոնք միութեան գիծ մը կ'ըլլան յաճախ անհամատեր տարրերու միջեւ, և որոնց հպումը հաճոյք մը, սրտապնդում մըն է ամենուն համար:

Ն Շ Ա Ն Դ Ա Ի Ի Թ Ե Ա Ն

ԵՖՄԵՆԻ ԲԱՀՈՒՔ ԵՒ ԻԶՄԻՐԻ ԸՆՏԻՐ ՕՂԻ

ԱՎԸՆԻԻ ՇՈՒՊՐԱ, ԹԻԻ 53, ԳԱՀԻՐԷ

Մեր վանառասան մէջ կը գտնուի Եմեհի առաջնակարգ խահուէ, անխարդախ, բարձ, ամեհօրեայ խարկուած: Նոյնպէս մեր մօտ կը գտնուի զուտ խաղողէ պատրաստուած Իվմիրի լաւագոյն օղի: Մեծաքանակ եւ փոքրաքանակ վանառում: Գիները խիստ չափաւոր:

Ճ Ա Մ Բ Ա Ռ Ի Ն Օ Թ Ե Ր

Փ Ա Ր Ա Ի Ո Ն Ն Ե Ր Ո Ւ Ե Ր Կ Ր Է Ն

Նեղոսն ի վեր մեր շոգենաւը կը յառաջանայ, խարսխելու համար Ուատի-Հալֆաի դիմաց:

Հօն, հեռու ամէն ժխորէ, հեռու եւրոպական զարհուրելի առամին արձագանգներէն, հեռու, վերջապէս, ուղեկորոյս և շփոթած մարդոց լալկան նայուածքներէն, Պարթեւեան բարեկամիս հետ, կը ճանչնանք սփոփարար վայելքն անապատի անդորր ու ամայի բնութեան:

Վեհափառ Նեղոսը կը տարածուի մեր հիացած աչքերուն առջեւ՝ ցոյն վայր մեզ համար անձանօթ իր գեղեցկութիւններովը: Իրիկունները, գետափին վրայ, յափշտակուած, կը դիտենք վերջալոյսի աննման տեսարանները, և կը մտնանք պահ մը մեր նախընթօրի յոյզերն ու վաղորդայնի մտահոգութիւնները...

Արդարեւ, կ'արժէ զիտել պատկերը. չի կայ նկարչութիւն մը որ կտաւին յանձնած ըլլայ երանգներու այդքան ապշեցուցիչ ճոխութիւն մը, այդպիսի խռովիչ ներդաշնակութիւն մը: Ի՞նչու արդեօք մեծ նկարիչներէն մին չէ փորձուած նկարել իր գլուխ-գործոցը՝ հեռաւոր Ափրիկէի այդ դիւթական անկիւնին մէջ, մե՛ղք:

* * *

Շոգենաւին կամրջակին վրայ ենք դարձեալ:

Տարբեր տեսարաններ կ'ընծայէ հիմա մեզի Նեղոսը զոր երկու կողմերէն կը սեղմեն, կը շղթայեն Նուպիոյ ժայռերը:

Քարքարուտ, գորշ բլուրներու այդ անվերջանալի շարքերը, մտացածին ժանեակներ կը ձեւացնեն երկնակամարի ջինջ կապոյտին վրայ, նեղցնելով հորիզոնն աչքերնուս դիմաց: Տեղ տեղ, ցանցառ բուսականութիւն մը, կենդանութիւն կուտայ գետափին: Հազուագիւտ արմաւենիներու լերկ բուններ, իրենց դալար գազաթը կը ցցեն ջուրին մակերեսէն դուրս, ա՛լ վարժուած կարծես այդ երկարակենցաղ վիճակին:

Յիր ու ցան բնակարաններ, ժայռերուն մէջ կորսուած, չէնցնել կը ձգտին Նուպիոյ անհուն ամայութիւնը: Սարուկ ֆէլահին ողորմուկ հիւղակները չեն անոնք, այլ հպարտ ու

ազատ ժողովուրդի մը մնացորդներուն օճախները, որոնց վրայ դեռ կը նշմարուի հին-եգիպտական մայր ճարտարապետութեան մասնաւոր գրոշմը :

Իբրամբուլի համբաւաւոր հնութեանց մօտէն կ'անցնինք, ուր՝ Հռամսէսի հսկաները՝ ապառաժին մէջ կերտուած մեհեաններու մուտքը կը պահեն : Մեծ մեհեանին արձանները 20 մէթէ աւելի բարձրութիւն ունին : Անոնք կը ներկայացընեն Հռամսէս Բ.ը որ նստած է, ձեռքերը ծունգերուն վրայ, Հին-եգիպտոսի արքայական արձաններուն սովորական դիրքին մէջ :

Ի տես այդ մարդակերպ զանգուածներուն, մտքիս առջև կը պարզուի յանկարծ բուն Հռամսէս Բ.ը, որուն զմուտած մարմինը, Փահիրէի Հնութեանց Թանգարանին մէջ, հասարակ մահկանացուի մը աճիւնը պիտի կարծուէր՝ առանց վաւերական փաստերու գոյութեան : Ո՛ւր մէկուն վիթխարի համեմութիւնները և միւսին արգահատելի համեստութիւնը : Բայց ամենուս ծանօթ այդ զմուտեալ Հռամսէսը, հեռաւոր անցեալին մէջ, սարսափեցուցեր, սահմակեցուցեր է ցեղերն ու ժողովուրդները : Պատերազմասէր, կրքոտ ու փառամուլ, Հռամսէս Բ. մինչեւ Ասիոյ խորերը տարածեր է իր իշխանութեան սահմանները : Իր բռնակալի մականին տակ հեծեր են մարդիկ՝ ստրկութեան, ճորտութեան անհանդուրժելի տաժանքներուն ենթարկուած . . . :

* * *

Հեռուէն կը նշմարենք Շալլալի նաւահանգիստը :


Ահաւասիկ Փիլէ կղզին, բոլորովին ջրամոյն, իր շուրջի կրանիթեայ բլուրներուն ձեւացուցած բնական ամբարտակներուն հովանիին տակ : Մատնացոյց կ'ընենք զայն իրարու : Լուսթիւն. հոն ուրիշ տուամ մը կը կատարուի : Ճարտարապետական հրաշակերտ մըն է որ հոն կը խեղդուի տակաւ . . . Եգիպտոսի անյագ որկորը պէտք պիտի ունենայ եղեր, օր մը, այդ թանկագին զոհին ալ . . . :

* * *

Շոգենաւին մէջ կ'անցնենք մին այն կախարդական գիշերներէն զոր մարդս քիչ անգամ կ'ունենայ կեանքի ընթացքին : Փիլէի մեծաքանակ տաճարը կը հսկէ այդ նուիրական վայրերուն խաղաղութեանը : Ո՛չ մէկ ձայն, ո՛չ մէկ շշուկ :

Խորհրդաւոր գիշերին մէջէն կարծես անհամար սերունդներու կրկինները (*) կամ բռչուն-հոգիներն են, որ պահ մը ձգելով իրենց անսասան դամբանները, կը շրջին Նեղոսի արգաւանդ ու օրհնեալ ջուրերուն վրայ, հուսկ յետոյ դարձեալ մտնելու համար լուրի՝ յաւիտենականութեան գիրկը :

Տարբեր դարերու մէջ փոխադրուած, ֆարաւոններու շրջանը կ'երազես ականայ. այնքան մեծ է միջավայրին ազ-



Փիլէ—Անդասակ

դեցութիւնը : Բլուրներուն կրանիթեայ անտաշ ապառաժներն հսկաներու կերպարանք կ'առնեն աչքիդ . անընկճելի իրաններ, անխորտակելի բազուկներ կը կախուին օդին մէջ ըս-

(*) Հին-եգիպտացիի կը զմուտէին իրենց մեռելները : Այս գործուրիւնը, որ ետքմն շաբաթներու աւխասանքի կը կարօտէր, մեծ արարողութիւններով կը կատարուէր : Յետոյ, զմուտուած մարմինը կը գետեղուէր յաւկապես շինուած դամբարանի մը մէջ, ուր կուգար ապրիլ Կրկինը զոր բեւասարած ցեծով (ibis) մը կը խորհրդանշէին :

պառնական: Հազարաւոր տարիներ անոնք իրենց նոյն գիրքը պահեր են. ժամանակը չէ կրցեր մաշեցնել, տապալել ու փոշիի վերածել այդ ահարկու տիտանները, զորոնք բնութիւնը դրեր է հոգ՝ սրբազան Գեորգի զէպի դաշտ մուտքի ճամբուն սկիզբը:

Եգիպտոսի մեծափառ անցեալին ոգեկոչումը կը գրաւէ ամառնամուտի այդ խաղաղ գիշերուան մէկ քանի հազուագիւտ ժամերս: Մթութիւնը կը փարատի տակաւ: Արշալոյսը ծիրանի ցոլքեր կը սփռէ դեռ քնաթաթաւ բնութեան վրայ: Ո՛հ, գոյներու անստգիւտ խրախճանքը զոր տարրերը կը պարզեւեն մեզի:

* * *

Այս առաւօտ երկինքն սկեզօծեր են կարծես: Անդին, ջուրին երեսը, յաւերժահորսի մը պէս, լուսաշող կը ծփալ ֓իլէի հրաշագեղ գիցուհին: Իսիս (*) և Ոսիրիս աստուածութեանց նուիրուած այդ հոյակապ մեհեանը կ'առնինքնէ զիս: Պէտք է պատրաստուի՝ ուխտի երթալու համար հեթանոս սրբավայրը:

Նաւակի մը մէջ եմ. քանի կը յառաջանամ, այնքան աւելի կը ճմլուի սիրտս: «Փիլէի Մահը» վճուած է ուրեմն...

Տարւոյն այն եզանակին, մեհեանին մուտքի հսկայ զըռնորմներուն (pylônes) գագաթի մասն ու անդաստակներուն ներգիւնածեւ խոյակները՝ իրենց թակաղաղներով՝ ջուրէն ազատ կը մնան: Երկիւղածօրէն կը մօտենամ անոնց, կ'ուսումնասիրեմ, կը սքանչանամ. կրկին ու կրկին կը գիտեմ զանոնք, և աչքերս արցունքով կը լեցուին, և դողդոջուն ձեռքերս հազիւ կը թոյլատրեն ինծի՝ տեսած հրաշակերտիս անհրաժեշտ նօթագրութիւնը կատարել...

Փիլէ նշանակութիւն կը ստանայ 26րդ Սախտեան Հարըստութենէն Ահմէս փարաւոնին օրով (ըստ յոյն մատենագրաց Ամազիս, 569-526 Քրիստ. առաջ): Կղզիին հարաւային ծայրը դեռ կը մնան անոր կառուցած տաճարին շինուածամասերը, ուր կը գտնուի նաեւ ցայսօր կանգուն փոքրիկ հո-

(*) Իսիս՝ ամուսնութեան, մեակութեան եւ բժշկութեան ասուածուհին, որ կը մարմնաւորէ եգիպտական առաջին փաղափարութիւնը, էոյրն ու կիճն եր Ոսիրիսի՝ մեռելներու պաշտպան ասուծոյն եւ Հորոսի մայրը:

վանոց (kiosque) մը, յիշակերտ Նեքտանէպօ Բ. ի: Տաճարն իր դռնորմներովը, գաւիթովը ու անդաստակներովը կանգնել կուտան Պտղոմէս Բ. և իր յաջորդները, որոնց շրջանին, մակեդոնական տիրապետութեան Եթովպիոյ դէմ մղած պայքարներուն հնոցն ու Նեղոսի հովտին բնակչութեան պատգամախօսը կ'ըլլայ Իսիսի տաճարը: Հռոմէական տիրապետութիւնը կղզին կ'օժտէ Տրահանոսի հովանոցով և այլ շինուածքներով: Յետոյ, Զ. դարուն, Փիլէ կը քրիստոնէանայ՝ իսլամանալու համար է. րդին: Թուրքերու Եգիպտոս մուտքը կ'ամայացնէ նուիրական ու բազմաձօս ֓իլէն, և անոր աւերակներուն վրայ կը բարդէ սրբապիղծ նոր քանդումներ...
ԿԱՐՕ ՊԱՂԵԱՆ



ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

— Ո՞ւրկէ կուգաս, Աւամ, ա՛ս ի՛նչ մորքի քարմուրիւն ե, ի՛նչ շեճեող երիտասարդութիւն, բայց ըսէ՛, օղափոխութեան ո՞ր հրաշալի հորիզոններէն կը վերադառնաս:

— Մի՛ գառանցե, Յովնանէ՛ս, հորիզոնը Քար-էլ-Նիլ փողոցին մէջն է. «Քրիստոս Պառ» ին փոփկը, Անկիօ-Էնիբօրն դրամասան դիմացները. ՍԱՓՐԻԶ ՕՆՆԻԿ ՊԵՅԼԷՐԵԱՆԻ ՍԱԼՕՆԸ, յաւիտեանական երիտասարդութիւն պարզեւող ածելիին գգուանքներէն կուգամ...

Աժան, մախուր եւ կասարեալ սպասարկութիւն:

Հ. ԲԱԲԱԶԵԱՆ H. PAPAŽIAN ԱՌԱԶՆԱԿԱՐԳ ՇԱՊԿԱԳՈՐԾ

Մասնագիտութիւն՝ պաշտօնական զգեստով հագուելիք շապիկներու և արանց վերաբերեալ նուրբ ձերմակեղէնի: Շարա Պուլաք, Սիքուրէլի մեծ վաճառատան գիմաց:

ՎՍՏԱՀՈՒԹԵԱՆ ՏՈՒՆԸ
ԲԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵՐ, ԳՈՂԱՐԵՂԷՆ ԵՒ ՀՆՈՒԹԻՒՆՔ
ՍՍՊՈՒՆՃԵԱՆ ԵՂՔԱՐՔ
Սուլ-էլ-Թուրք փողոց, ԱՂԵԲՍԱՆԴՐԻՍ

ԵԳԻՊՏԱՆԱՅ ՂԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

ՅՈՎՃԱՆՆԷՍ ԱՔՏԱՐԵԱՆ

Իզմիր ծնած, բայց Ադեքսանդրիա մեծցած, ուր Իտալական վարժարանն ուսած է, կեանքի դպրոցը մտնել է և ինքնօգնութեամբ իր պայքարի զէնքերը գործնել է առաջ: Իր գործի ասպարէզը սկսած է Գալֆանիան Տան մէջ, ուր իր ուշիմ կարողութեամբը մեծապէս գնահատուած է:

Սորասանճեան և յետոյ Compagnie d'Entreprises Commerciales-ի վերածուած ընկերութեան մէջ վարած է նախ Գահիրէի մասնաճիւղին տնօրէնութիւնը, յետոյ Ադեքսանդրիոյ կեդրոնական տան տնօրէնութիւնը: 1910ին՝ հրաժարելով իր փայլուն պաշտօնէն՝ հաստատուած է իր հաշուոյն և անմիջապէս ձեռք բերած է Sté. de Sambre et Moselle-ի և Sté. d'Aubrives et Villemppt հսկայ սուններուն ներկայացուցչութիւնը: Կարճ ժամանակի մէջ՝ երկաթէ կորովով մը՝ յաջողած է տիրանալ Եգիպտոսի երկաթի հրապարակին ամենէն ուշագրաւ գիրքերէն մէկուն: Պատերազմը, առ այժմ, գրեթէ խափանած ըլլալով երկաթի վաճառականութիւնը, Աքտարեան ձեռնածալ չի սպասեր նուաճումի պայծառ օրերու վերադարձին, այլ կը շարունակէ ալիւրի, նպարեղէնի, մանչէսթրիան և ուրիշ զանազան ապրանքներու ներածմամբ զբաղիլ:

Գուցէ սովորական տիպարէն առեւտրական մը կամ փայլուն դրսերեւոյթով շուկայիկ մը հնթադրես զինք, ընթերցող, որ չես ճանչնար Աքտարեանը: Անիկա ոչինչ ունի թարձր ու ինքնաբաւ «աղա»յէն, ոչ ալ տիեզերքը փողկապնուն վրայ կրել կարծող «միւսիւ»ներէն է: Աշխատաւորի ուժեղ դիմագծերով պարզուկ երիտասարդ մըն է որուն առնական երեւոյթը պողպատէ կառք մը և երկաթաձողի պէս շիտակ նկարագիր մը կ'արտայայտէ շեշտակի:

Ու կը զգաս մարդը, որ ձեռներէցութեան լարուած ջիզերով՝ կենսապայքարի խառնուրդին մէջ նետուելու միշտ պատրաստ՝ ազատագրուել է հաշուուած, չափուած, ձեռուած բարօրութեան մը — այսինքն նուիրական ու հունաւոր Ամասկանին — դողահար մտայնութենէն, ուր այնքան ուրիշներ, տեսական երբեմն աւելի խոշոր պաշարով, կ'անդամալուծուին, և յանդուգն խիզախումներու տենդէն կը քաղէ իր

հեշտանքը: Ծշմարիտ վաճառականն ալ իր կոչումին տարփանքն ունի, ինչպէս արուեստագէտը:

Յովհաննէս Աքտարեան Ադեքսանդրիոյ ազգային ընկերական շրջաններուն մէջ չափազանց ուղղամիտ ու դժուարաթեք հոգի մը ճանչցուած է՝ որպէս զի իր ներկայութիւնը միշտ փափաքելի ըլլար Ապուճարտարի պաշտօնական և կիսապաշտօնական համախմբումներուն մէջ: Անոնցմէ է որոնք «Ամէն ճշմարտութիւն չի զուրցուիր»ը չեն կրնար իրենց հաւատամքին մաս դաւանիլ...



Յովհաննէս Աքտարեան

Թրուպլը-Ֆեթ մը, որուն հետ դժուար պիտի ըլլար խղճմտանքի սակարկութիւններու մտնել: Վերջին անգամ՝ բնորոշ պարագաներու տակ՝ իր թողուցած այս թելադրական տպաւորութիւնը, ի հարկ է, իր մասին խանդավառ արամագրութիւններ պիտի չապահովէր:

Աքտարեան, այսպէսով, կ'ազատի առօրեայ իր երկրորդ կամ երրորդ նարկիլէն զսհելու անպատեհութենէն...:

ՎԱՃԷ ԶԷՐՐԱՋԵԱՆ

Նախկին կեդրոնականցի, Ադեքսանդրիա յաճախած է Իտալական վարժարանը, ուր՝ 1896ին՝ դասընկեր եղած է Յովհաննէս Աքտարեանին, որուն հետ՝ քսան տարուան ընթացքին՝ անբաժանելիներ մնացած են:

Ու թ տարի պաշտօնավարած է Օհան Ա. Տէրվիչեան Տան մէջ ալիւրի վաճառականութեամբ և գետային նաւարկութեան գործով, նախ իբր հաշուակալ և յետոյ իբր գլխաւոր պաշտօնեայ:

1911ին հրաժարելով պաշտօնէն, երկրորդ անգամ դէպի Կովկաս արկածալից ուղեւորութենէ մը յետոյ, մտած է Ամե-

րիկեան Vacuum Oil Companyին մէջ, նախ իբր գործակալ ի Բէնէ (Վերին Եգիպտոս), ապա գլխաւոր-հաշուակալ ի Պէյրութ (Սուրիա), ուր երկու տարի մնացած է և պալքանեան պատերազմի շրջանին վարած է Սուրիոյ կեդրոնական ճիւղը իբր Acting Agent: Իր խնդրանքով Եգիպտոս փոխադրուելով՝ հինգ-վեց ամիս կեդրոնական գրասենեակը իբր հաշուակալ պաշտօնավարելէ յետոյ՝ փոխադրուած է Սուէզ իբր գործակալ, ուր մնացած է երկու տարիի չափ:



Վահե ձերքանեան


Պաշտօնէութենէ ձանձրացած՝ հրաժարած է իր ապագայ խոստացող դիրքէն և իր հաշուոյն վաճառատուն բացած է Սուէզ, ուրտեղի գմայլելի կլիմային սիրահարուած է:

Վահէ ձէրքանեան եգիպտահայ մտաւորական երիտասարդութեան ամենէն համակրելի գէմքերէն է, անոնցմէ՝ որոնց մօտ կը գտնես մանաւանդ տաքուկ գուրգուրանք մը մեր գրական արժէքներուն հանդէպ: Տարփանքով հետեւած է հայ դպրութեանց վերջին քննաժողովը:

Պէտք է հայ դպրութեանց վերջին քննաժողովը չունենայ որոնք քեզ կը զարմացնեն ու կը խանդադատեցնեն: Իր ընկերական հպումն ամենէն հաճելիներէն է, և կեդրոնական շրջանակներէ իր յաճախակի բացակայութիւններն ու յանկարծական վերերեւումները զայն աւելի աւելնքնող կ'ընծայեն:

Կեդրոնականցիի գաղափարապաշտ ու անհանդարտ ոգին իր մէջ չէ նուազած մեր հասարակական ժխորներէն հեռու ապրելուն հետեւանքով: Եթէ Գահիրէ կամ Աղեքսանդրիա հաստատուած ըլլար, անտարակոյս, իր ինքնատիպ դերը ունեցած պիտի ըլլար մեր տեղական գործերուն ու «մեծագործութիւններուն» մէջ:

Բայց Վահէ ձէրքանեան այն տան պիտի գրկէր մեզի ընկերական նորութեան ու վերանորոգ մտերմութիւններու հովերէն ու հրապոյրէն, որոնք ամէն անգամ իր վերագործներն ու Քաֆէ տը լա Բէէն ներս իր անակնկալ մուտքերը կը յատկանշեն:



(ՊԱՌԱՒ ՄՕՐ ՄԸ ՊԱՏՄՈՒԱԾՔԸ)

Անոր ճահիլ հարսը տղածկան է երկու օրէ սաղին: Տընակը լեցուեր է երգով: Կեանքի մեղեդին կը հնչէ, կը դողայ, կ'անցնի անոր լոյսին մէջ: Շողերը օրօր կ'երգէ իր փոքրիկին համար, օրօրոցին քովիկը նստած: Եւ իմ չորցած ու ցամքած սիրտս անոր ձայնէն կը թրթռայ, հին խզուած քնարի մը պէս, կորսուած օրերու քաղցրութեամբը, կը լեցուի նորէն արցունքով, բարութեան, ուրախութեան արցունքով, ականակիտ աղբիւրի մը նման՝ որուն ջուրը գարնան դարձով կը յորդի:

Ի՞նչ կ'ընէ ան հիմա, հեռաւոր տեղ մը, իմ զաւակս, մէկհատիկս, երբ արդէն միւս հինգ հատը մեռան, ու գացին իրենց մեծ հայրերուն հետ քնանալու՝ այլ եւս բնաւ չարթննալու համար: Ի՞նչ կ'ընէ ան, իմ անուշ կամաւորս, իմ կարիճ զինուորս, որուն խնկելի, տարփելի պատկերը կը տեսնեմ օրօրոցին մէջ: Ու դեռ Շողերը օրօր կ'երգէ, քաղցրիկ օրօր, որպէս զի փոքրիկը ննջէ: Տնակը լեցուն է արեւով, երբ այսպէս երգը չի պակսիր ճահիլներու շրթունքին վրայ, երբ այսպէս կեանքէն կեանք կը ծնի, ժպիտէն ժպիտ, և համբոյրէն գեղեցկութիւն:

Բայց հոն ուրիշ է կեանքը, պատերազմին մէջ, արիւնոտ դաշտերուն վրայ: Հո՞ն է իմ զաւակս, Շողերին սիրականը, հո՞ն է, կրակին ու գիշերին մէջ՝ Հայաստանի փառքին և ազատութեան համար, Հայաստանի Աստուծոյն սէրը կուրծքին տակ, հողին ուժը հոգիին մէջ, այն սրբազան ուժը՝ որուն արգանդէն ոսկի հունձքերը կը ծլին, գարունը կը պոռթկայ կենսայորդ ու պաշտելի:

Անոր ազատ վերագործը կը խնդրեմ Աստուծոյն ամէն աղօթքիս մէջ: Տարիները չոքեր են գլխուս, եօթանասունը կ'անցնիմ, բայց դեռ անուշ է կեանքը այսպէս, բարութեամբ, սիրով, աղօթքով և արցունքով անցուած կեանքը: Հո՞ն, մինակ չէ ան, շատերը կան անոր պէս, շատերը մոռցեր են տուն ու հող՝ երթալ կռուելու համար, զոհելու համար Հայրենիքին իրենց ծաղիկ հասակը, իրենց սրտին վարմար Հայրենիքին իրենց ծաղիկ հասակը, իրենց սրտին վարմար Հայրենիքին իրենց ծաղիկ հասակը, իրենց սրտին վարմար Հայրենիքին իրենց ծաղիկ հասակը: Չէ՛, պիտի չի լամ, լացը ամօթ դավառ ու տաք արիւնը: Չէ՛, պիտի չի լամ, լացը ամօթ

է, երբ ան պարապ տեղը չէ ձգեր ինձի, իր ճահիլ հարսը : Նպատակ ունի ան, իմ գաւակս, իմ կտրիճ, իմ ասլան կամաւորս, նպատակներուն ամենէն գեղեցիկը՝ որ հազար կեանքի արժէք, հազար գարնան ծաղկունք, հազար երկնքի աստղեր ունի... Աստուած ազատ է երկնքին մէջ. մարգըն ալ ազատ պէտք է ըլլայ անոր պէս. երկրին վրայ : Ասոր համար զնայ իմ կարապետս. այս նուիրական խոտալին համար, երեք ամիս առաջ... Եւ հիմա անոր ձայնը կը լսեմ հոն, օրօրօցին մէջ, անոր հոգիին ձայնը՝ որ խնդարով կ'երգէ...

Գիւղերը պարպուեր են շատոնց, ճահիլները զէնք են առեր, ու նետուեր են կուռի գաշտը : Դուրպան անոնց հոգիներուն՝ որոնք աստղերու հետ գրկուեր՝ արեւ են թափեր մեր գաշտերուն վրայ : Հողը այս տարի առատ հունձք ունի. գալիք տարիներուն մեր հայրենի կարմիր գաշտերէն ոսկի հասկերը պիտի ծլին, խաչերու քով, նահատակաց լուսաճիւն մասունքներէն ուժովցած, կենսաւորուած, հասունցած :

Աստուած յոյս է, սէրը Աստուծոյ պատկերն է մարդու սրտին մէջ :

Օրերը կը սահին, ամէն չարիք շուտով կ'անցնի աշխարհքիս վրայէն. բարութիւնը խաղաղութեան մէջ կը զօրանայ : Ինչքան պիտի լեցուի հրճուանքով, երբ իր պառաւ մօրը խանդակաթ, դեռ գարունի պէս տաքուկ սրտին վրայ՝ յոգնած գլուխը ձգէ, աչքերն ազու ըլլան այն ատեն, յոյսի պտակերէն առած իրենց լոյսը, մինչդեռ Շողերը օրօր երգէ իր փոքրիկին օրօրօցին քովիկը նստած, հայրենեաց օրօրն անուշիկ :

«Օրօ՛ր, փոքրիկ, արեւ հոգւոյս,
«Օրօ՛ր, փոքրիկ, իմ Արշալոյս...»

Զուլումին գիշերը իջաւ ամէն տեղ, ամէն տունի, ամէն գաշտի վրայ իր արիւնտս վերարկուն փռելու : Տարիներու բեռին հետ ցաւը չօքեր է կուրծքիս, ու կտորած սիրտս կը փշրէ : Տղուս հարսը լալով կ'երգէ հիմա փոքրիկին համար, լալով կ'օրրէ օրօրօցը : Ո՞ւր մնացին այն զուարթ օրերը, ո՞ւր մնաց այն ոսկի արեւը, ո՞ւր մնաց այն գեղեցիկ լոյսը՝ որուն կրակէն կը տաքնար իմ հոգիս, պառաւի մսկոտ ու զառամ հոգիս : Կոչնակին ձայնն ալ կարծես հեծկտանք մըն է որ աղօթքի համար կուլայ... Սեւ շալը ձգեցի ուսերուս, քաշեցի գէձքիս ու ճերմակ մազերս ամփոփեցի անոր պատառատուն

ծալքերուն մէջ : Եկեղեցի կ'երթամ աղօթելու : Հիմա կը վախնամ, դեռ երէկ դրացիին տղան ինկեր է հեռո՛ւն, կրակին մէջ, Աստուած իմ... Հոն ինկողները վեր չեն կենար, բայց իրենց հետ արշալոյսներ կը պառկին քնանալու համար միւսնոյն փոսին մէջ... Իմ կարապետս ալ եթէ ինչայ... Սրտի վշտագին կծկումով մը կը դողամ, և յանկարծ աչքերուս առջեւ կուգայ Շողերը, փոքրիկին օրօրօցը... Կուլամ բոլոր այն տուններուն համար՝ որոնց ճահիլները մեռան, չի վերադարձան, մեծ գիշերին մէջ կորսուած, ինկած, արիւնլուայ լանջքերով... :

Եթեանասուն տարի քիչ բան չէ, անշուշտ, մարդուն սիրտը շատ յոգնած կ'ըլլայ այս տարիքին մէջ, շատ յոգնած, շատ այրած վշտին կրակէն, մանաւանդ հայ պառաւի մը սիրտը՝ որ իր սիրելիներուն հետ Հայրենիքին ցաւն ունի լալիք, Հայրենիքին վերքը սեղմելիք ուժգնօրէն, խանդաղատանքով, արտասուելից, իր ծալքերուն մէջ : Շողերը կը մխիթարեմ՝ ինքզինքս մոռցած : Շողերը քսան տարու չի կայ դեռ, մայր է ան : Մայր ըլլալ երիտասարդութեան մէջ, մայրօրէն տանջուիլ, մայրօրէն սիրել, մայրօրէն յուսալ, աւելի գեղեցիկ ու վսեմ բան մը չի կայ տիեզերքին մէջ, ես գիտեմ, շատ լաւ գիտեմ...

Կարապետս բերին երէկ գիշեր, պատգարակի մը վրայ, վիրաւոր, կուրծքէն զարնուած... Ոտքերս բռնուեցան, ինկայ ուժասպառ, անկարող ելլելու, գրկելու զայն, առնելու թեւերուս մէջ, լալով հեկեկալով : Պառկեցուցին անկողինին մէջ, գլուխը ինկաւ բարձին վրայ, թուլօրէն, ծանրօրէն, յանկարծակի, խոշոր կտոր մը կապարի պէս... Ինչ պիտի զգայի, եթէ իմ գիրկս ըլլար այն բարձը, մօր մը կուրծքը՝ որուն ոսկորները փշրուած են արդէն շատոնց, շատոնց...

— Կարապետ, խօսէ՛, Կարապետ, ի՞նչ եղաւ քեզի, ո՞ր տեղդ ցաւ կայ, իմ ճահիլ կամաւորս, իմ կտրիճ զինուորս... :

Բայց ան չէր խօսեր, պիտի ուզէր խօսիլ, եթէ կարող ըլլար : Երթները կը շարժէին կամացուկ. խօսք մը՝ զոր չէի լսեր, զոր չէի հասկնար, կը նուաղէր, մեռելական ժպիտի մը պէս, հոն, անոնց վրայ... Օրօրօցին մէջ փոքրիկը կուլար, Շողերը մոռցած էր զայն ու վիրաւորին սնարին քով ծնրադրած՝ կը սպասէր, աչքերը սեւեռարիւր սիրականին աչքերուն՝ որոնց մէջ երազներ, երազներ կ'անցնէին խորհրդաւոր լոյսի մը շրջումով... :

— Շողեր ջան, փոքրիկը...

— Բե՛ր ինձի, մայրիկ, բե՛ր ինձի:

Ու գրկեց, սեղմեց իր կուրծքին վրայ փոքրիկը՝ որ ա՛ն էր բոլորովին, ա՛ն էր, կարապետը, որուն արիւնը անոր երակները կը տաքցնէր, որուն աչքերուն լոյսը անոր նայուածքը պսակելով կը դողար խնդագին:

Կարապետը պիտի խօսէր, գլուխը վերցուց, աչքերը ժպտեցան, ժպտեցան, մարեցան... Հատաւ անոնց արտայայտութիւնը... Աստուած իմ...

— Ի՛նչ կ'ուզես, տղաս, ի՛նչու չես խօսիր...

Խնդաց... Մեռելները կը գեղեցկանան իրենց խուսափող հոգիներուն բարութեանը մէջ... Մխացող լամբարին լոյսը անոր մահատիպ դէմքը կը լուար իր տժգոյն դողդղանքով: Խնդաց նորէն...

— Մայրիկ... մայրիկ...

Կուրծքը հեւաց և արիւնի ժայթքում մը ծաղկեցաւ բուսորագեղ՝ դարնան մը պէս՝ անոր լանջքին վրայ: Խոնարհեցայ, չէի լար, ի՛նչու, արցունքներս հատեր էին... Խոնարհեցայ կամացուկ, մայրօրէն, խանդաղատանքով, իբր թէ իմ փոքրիկ կարապետս քնանար օրօրոցին մէջ... Ու տեսայ, որովհետեւ ես մայր մըն էի և ան իմ զուակս էր, տեսայ խոշոր ու տաքուկ արեւ մը, այնքա՛ն գեղեցիկ, այնքա՛ն լուսապայծառ՝ որ կը նշուէր, կը ծաւալէր, կը մեծնար անոր աչքերուն մահուանը մէջ... Անոր հոգին էր այդ արեւը, հերոսական ու ազնիւ հոգին հայրենեաց, որուն զինուոր մը տուած էի ես, կտրիճ կամաւոր մը...

Ու մինչդեռ Շողերը իր սիրականին կուրծքին ինկած կը հեծկտար, ես կ'օրրէի փոքրիկին օրօրոցը, առանց լալու, իբր թէ անոր մէջ ըլլար կարապետը վերածնած, արշալոյսի մը պէս գեղեցիկ, երգելով, երգելով.

«Օրօ՛ր, փոքրիկ, արեւ հոգւոյս...»

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱԹ

ALFA COUPE PARISIENNE

Ա Ր Վ Մ Ս Ա Ր Ա Յ Ե Ա Ն

Քար-էլ-Նիլ, Շավարպի փողոց, բիւ 2

Առաջնակարգ գերձակ՝ Փարիզէն վկայաւ: Վարպետ ձեւագէտ՝ արանց և կանանց համար:

Անստգիւտ ճաշակ և խղճամիտ աշխատութիւն:

Ամենաընտիր կերպասներ և ամենավերջէն նորութիւն:

ԵԳԻՄՏԱՅՑ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Վ Ա Հ Ա Գ Ն Ա Ձ Ն Ա Ի Ո Ր Ե Ա Ն

Յիզիքական, այլ մանաւանդ բարոյական առողջութեան կազդուրիչ տպաւորութիւն մը կուտայ առաջին հպումդ իսկ այս պատուական երիտասարդին, որ Աղեքսանդրիոյ մեր ազգային ու ընկերական կեանքին մէջ այնքան աչքառու տեղ մը կը բռնէ:



Վահագն Ազնաւորեան

Բնիկ Տրապիզոնցի, իր առողջ անձին վրայ տոհմիկ պարզութեան շնորհ մը կը կրէ՝ պատկանելով ամենափարթամ տուներէն մէկուն պոնտոսեան այն երախտաւոր ու եղերաբաղդ հայութեան, որ մեր յեղափոխական հրդեհումին առաջին վառարանն եղաւ, և որուն անագորոյն աղէտակոծումը ներկայ հայկական արհաւիրքին ամենադժխեմ դրուագը կազմեց:

Տիրար Վահագն Ազնաւորեան, իբրեւ Վարի Քաղաք ժողովին անդամ, եգիպտահայ ժողովականութեան կը բերէ լաւագոյն նմոյշն այն երիտասարդ ու

կենսունակ տարրին, որ մեզ պիտի ազատէր Պէնի-Սուրէնն ու Ապու-Տարտարն անյիշատակ ժամանակներէ ի վեր մենաշնորհ դարձուցած բրածոյ աղայութենէն, և որուն պէ՛տք է մտածուի, զոր պէ՛տք է անյապաղ առաջ քաշել, եթէ չուզուիր այս երկրին մէջ Հայուն հասարակաց ժառանգութիւնը անստոյգ բաղդի մը մատնել:

Վերջապէս ատեն է որ այս տիրոյթէն ներս ալ հինները ճամբայ բանան նորերուն, կուշտ-աչք, եռանդուն ու սրտցաւ

նոր ուժերուն, որոնք շատ բան ունին դարմանելիք իրենց նախորդներուն ապիկարութիւններէն ու անբարեխղճութիւններէն:

Տիար Վահագն Ազնաւորեան, հայրենի աւանդապահ տան զաւկի այն հարազատ խմորէն է որ օտար միջավայրէն չաւրըւիր, ուժացումի ու խորթացումի ազդումներուն անընտել կը մնայ, ու միշտ տաք-սիրտ՝ ցեղին բոլոր հաստատութիւններուն ու համակրութիւններուն հանդէպ: Եւ ինչ կաթողին հոգածութիւն զոր պիտի տածէր իր հայրենի թաղի դպրոցին կամ ժամուն, նոյնը կ'ունենայ հոս, ինքնաբերաբար, բնական պարտականութեան մը պէս, գրեթէ հոգեկան պէտքի մը գոհացումը փնտուելով ատոր մէջ:

Անշահախնդիր, ուղղամիտ, անվերապահ, եզրպտահայ ժողովականութեան կանաչ սեղաններուն շուրջ գուցէ չի բերեր խորամանկութեան որոշ չափ մը որ անհրաժեշտ է երբեմն զերծ մնալու համար կարգ մը խաբկանքներէ: Էնթրիկներու և դաւակցութիւններու էպէս անընդունակ՝ մարդիկն ու իրերն իրենց ազէկ կողմէն յաւէտ նկատելու հակում մը ցոյց կուտայ, որ իր բարեմտութիւնը կ'ապացուցանէ: Պիտի ուզէիր, անկեղծօրէն, իր լաւատեսութիւնն ու վստահութիւնը բաժնել ոմանց մասին, և կը ցաւիս որ չես կրնար...

Տիար Վահագն Ազնաւորեանի հօրեղբայրը՝ Տիար Յակոբ Ազնաւորեան, Աղեքսանդրիոյ կամաւորանպաստ Յանձնաժողովին գանձապահութիւնն ստանձնած է տարիէ մը ի վեր, իսկ կրտսեր եղբայրը՝ Տիար Լեւոն Ազնաւորեան, ընկերական շրջաններու մէջ, ամենուն համակրանքին իրաւամբ արժանացած մեր նորահաս երիտասարդութեան ամենէն մաքուր ու ազնուասիրտ անդամներէն մին է:

Ազնաւորեան Տունն ուշագրաւ գիրք մը կը գրուէ Աղեքսանդրիոյ առեւտրական հրապարակին վրայ: Բայց Ազնաւորեանները ո՛րքան ալ փայլուն գործերով շահագրգռուած ըլլան հոս, այն Հայերէն են որոնք արժատ չեն ձգեր այս երկրին մէջ, և եթէ Թուրքիոյ քաղաքական կացութիւնն արժատապէս բարեփոխուէր՝ Վահագն Ազնաւորեան առաջիններէն պիտի ըլլար գէպի երկիր սուրացող...:



ՆԵՐԷ՝ ԻՆՁ, ՀԱՅՐ...

Անձանօթէ մը ստացուած այս բանաստեղծութիւնը, զոր այլուր չէի կրցած հրատարակել, կը մնար թուղթերուս մէջ ու բեռի մը պէս կը ճնշէր սրտիս վրայ: Երբեմն ձեռքիս տակ կուգար, ողորմուկ ու վեհերոտ, ու զիս թունդ կը հանէր իրեն հանդէպ ուշագրութեան ակամայ զլացումիս խղճիխայթովը: Երկար ամիսներ յետոյ, օր մը խնդրեցի Արսէն-Երկաթէն, երթալ գտնել անոր հեղինակը Գահրէրէի կայարանին մէջ, ուր գրածախի մը աշկերտն ըլլալ յայտնէր էր քերթուածին կից երկտողով մը: Ահա՛ թէ ինչ կը գրէ ինձի, այս առթիւ, բանաստեղծ խուզարկիչս. «Գացի տղուն: Մէկ ամիս առաջ Ամերիկա մեկնէր է: Սիրտս դառնագին կծկուեմով մը սեղմուեցաւ: Չեմ գիտեր ինչ զգացում էր ասիկա: Բայց ես յամառօրէն խորհեցայ անոր մասին, և իր անձանօթ հոգիին վիշտը փնտուեցի... Չեղի կը վերագարձնեմ իր գրութիւնը, «Տարեցոյց»ին համար: Թերեւս իր ձեռքն անցնի, ու աղան զգայ թէ կ'ապրի, կ'ապրի միւսնոյն կակիծը որ ատենօք զինք տանջած է, հօր մը վրէժին անձկանքովը...»:

(Մ. Հ.)

Ներէ՛ ինձ, հա՛յր, թէ սա կարմիր ժամերուն,
Ընդվզումի շեւերով՝
Կուգամ ցընցել յախտեցի քնմբիբէն
Ասղաքընակ Բու հոգիդ:
Դուն եւրս, հա՛յր, նախնիրի սեւ օրերուն,
Ինկար դաժան հարուածին սակ ոտխիւն.
Այն օրն աստղերն արցունքն իրից լուսեղէն՝
Չոհներուն վրայ քափեցին.
Մինչ ես, որդիդ, անգիտակից ու մանուկ,
Օրհասական հրուրնդիւնեդ սարսափած՝
Ուրանիս մեջ դողացի...
Մեռցուցին էեգ, որովհետեւ, ո՛ հայր իմ,
Լացիր միայն, աղօթեցիր,
Ինչո՞ւ, որո՞ւն...
Պե՛տ էր զիմել բըռունցքիդ մեջ հայ հոգիդ,
Եւ անոնց դեմ, դանիներուն,
Վրէժի՛ն կայք նետել
Վարդակարմիր, գայրոյթով...
Բայց դուն, հա՛յր իմ, ի՞նչ հեզնական նըրիում,
Ազատութիւնդ հաւատքին մեջ յուսացիր...
Ու դանիները, վասօրէն յաղթական,


Դիակիր շուրջ խորախնամով պարեցին . . .
 Ներե՛ր ինձ, հայր, եթե կուզամ
 Նրբիւրումի եւ սիրոյ
 ճամբաներէն արիւնոս,
 Գերեզմանիդ փայլն ի վեր,
 Արբնցընել քեզ նորէն . . .
 Զայրոյթի կայծն ունիմ ես
 Լանջփիս, արսիս մեջ պահած,
 Ու սե՛ս, չեմ լար բընաւին . . .
 Վասուքին ե լացն, երբոր
 Վրեժը կայ, մեր իրաւունքը դաժան,
 Ու գերագո՛յն իրաւունք . . .
 Կ'ուզեմ առնել խրոխտ կուրծքէն Հեռայի
 Ազատութեան կարմիր շանքեր հրեղէն,
 Եւ աննցմով ցանելու
 Արարա՛ս լուսակամար բարձունքին
 Գաղափարի նոր ասդեր . . .
 Եւ այն ասեմ, ո՛ հայր իմ,
 Սօսեաց մըքին անսառի՛ն
 Եղեամարք իրենց սեւէն մերկացած՝
 Արշալոյսներ, արշալոյսներ պի՛ս՝ հագնին . . .
 Եւ փու հոգիդ, ասղաբընակ փու հոգիդ,
 Պի՛ս՝ ողջունե՛ր դողալով
 Զաւակը՝ զոր դուն ունեցար ասեմօք,
 Բու վրեժիդ համար բողուած կեանքին մեջ . . . :
 Գահիրե, 1915 Պ. Փ.

ԵԳԻՊՏԱԶԱՅ ԴԻՄԱՍՏՈՒԵՐՆԵՐ

Մ Է Թ Ր Գ. Յ. Գ Ա Յ Ա Ր Ե Ա Ն

Բնիկ իարբերդցի, տեղւոյն Ամերիկեան Եփրատ Գօլէճի 1900ի ընթացակարաններէն է, և նոյն հաստատութեան մէջ — որուն վաղեմի երախտաւոր հայ Փրօֆէսորները, Թէնէքէճեան, Սողիկեան, Նահիկեան ևն. այնքան անողորմարար նահատակուեցան այս անիծեալ տարուան սեւ օր մը — Տիար Գ. Յ. Գայարեան ուսուցչական պաշտօն վարած է 1900էն մինչեւ 1904: Ապա Զուրիցերիա անցած է, և 1904էն 1907 Լօզանի իրաւագիտական վարժարանին դասընթացքը փայլուն կերպով աւարտելէ և իրաւաբանութեան վարդապետ վկայուելէ յետոյ, տեղւոր ու մենաւոր, հասած է Աղեքսանդրիա, իրեն բոլորովին անձանօթ միջավայր մը, ուր մարդիկ ներքին արժէքէ աւելի՝ զօրաւոր բխթօններու պէտք ունին յաջողելու համար: Բայց Գայարեան իարբերդի արգաւանդ

դաշտէն իր հետ կը բերէր կենսապայքարի կրկէսին մէջ մաքառելու հուժկու կամք մը և յամառ ու անսպառ կորով: Վարի իրան Դատարանին մէջ ընդունուելով, նախապատրաստական համեստ ու անչուք պաշտօնավարութենէ մը յետոյ, կը հաստատուի ու կը ճանչցուի իրրեւ փաստաբան,



Մէքր Գ. Յ. Գայարեան

1907ի Նոյեմբերէն ըսկըսեալ: Եւ այսօր Աղեքսանդրիոյ միջազգային պատօին մէջ չաջողածի մը դիրքը չէ զոր կը գրուէ Մէթր Գայարեան, ընդհակառակը:

Եգիպտահայ ազգային կեանքին մէջ բաղդատարար նորեկ մը, Ապու - Տարտարէն իր պաշտօնական մուտքն ու ելքը կարճատեւ, այլ ուշագրաւ շրջան մը եղաւ: — Բաղաք. Ժողովէն իր մեկնումին շարժառիթը գաղտնիք մը չէ վարը: Մեծարժէք մտաւորականի մը — Գայարեանին — դէմ եղած զրկանքին ու էնթրիկներուն չի

կրցաւ հանդուրժել, ու առաւ քալեց . . .
 — «Մտաւորական» մի . . . «մտաւորական» ինչ է եղեր, պիտի ըսէին զուցէ ոմանք:
 Մտաւորականը, պարոններ, ճշմարիտ մտաւորական գործիչը, մարդն է որուն առջեւ դուք պէտք է միշտ գլուխ ձռէ՛ք, ու խոնարհի՛ք, խոնարհի՛ք . . .
 Ես Մէթր Գայարեանին համար պատուի մեծագոյն տիտղոսը կը նկատեմ իր այդ կեցուածքը:
 Բայց Մէթր Գայարեան եգիպտահայ կեանքի մէջ չի խորուած արժէք մըն է, և որքան ալ, առ այժմ, մեկուսացած ըլլայ, դեռ շատ խօսեցնել պիտի տայ իր վրայ:

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՏԻԱՐ ԲԻԻՉՈՆԻ ՄԱՍՐԱՅԻ ՓՈՐՁԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս տարի, երրորդ անգամ ըլլալով, Տիար Բիւզանդ Մասրաֆի շերամարուծական փորձը շատ յաջող կերպով յառաջ տարուեցաւ, և անգամ մըն ալ ապացուցուց թէ Եգիպտոսի մէջ շերամարուծութիւնը կատարելապէս կարող է արդիւնաւորուիլ:

Բացուած հունտի քանակը, այս տարի, այնքան շատ էր որ գործը սոսկական փորձի սահմանէն ելլելով լուրջ ձեռնարկի մը հանգամանքը ստացաւ: Բացուած չորս ունկ (once) հունտը — քառասուն կրամէ աւելի — Թուրքիոյ մէջ շատ մը շերամարոյծ ընտանիքներ չեն կարող բանալ ու հասցնել, իսկ հոս՝ լաւագոյն արդիւնքը տուաւ:

Պէտք է ըսել որ, այս տարի, երեք փորձ միաժամանակ տեղի ունեցաւ՝ կատարեալ յաջողութեամբ:

Նախ, վերջնականապէս, կարելի եղաւ հաստատել թէ Եգիպտոսի մէջ, հակառակ երկար ժամանակէ ի վեր տիրող սխալ կարծիքին, շերամարուծութիւնը կարող է կատարելապէս յաջողիլ ու երկրին նիւթական մէկ մեծ աղբիւրը կազմել:

Երկրորդ, հասկցուեցաւ որ բացօթեայ, վրանանման տեղեր պահուած շերամներէն ալ կարելի է նոյն յաջող արդիւնքը ստանալ՝ ինչ որ կը ստացուի սենեակներու մէջ պահուածներէն: Եւ այս փորձին համար յատկապէս շինել արուած երկաթեայ վանդակները բարակ կտաւով ծածկուելէ վերջ, երկրորդ քունին (mue) մօտեցած որդեր հոն փոխադրուելով մինչեւ վերջ մնացին ու գոհացուցիչ արդիւնք ցոյց տուին, հակառակ գիշերուան թեթեւ ցուրտին և ցերեկուան տաքին: Այս փորձին կարեւորութիւնն այն է որ հոս առանց հաստատուն շերամարուծարաններ չինելու — ինչ որ բաւական խոշոր դրամագլուխ կը պահանջէ — վրաններու տակն ալ կարող են յաջողիլ՝ առանց մեծ ծախքի մը:

Երրորդ՝ Եգիպտոսի օդին փոշառատ ըլլալը նկատի առնելով և փորձը աւելի ապահովցնելու համար, տերեւները մասամբ կը սրբուէին, կը մաքրուէին, իսկ այս տարի, բաւական քանակութեամբ շերամներու փոքր ատենէն սկսեալ փոշոտ, ազտոտ տերեւները առանց սրբուելու տրուեցան, և շերամներն առանց ուէէ հիւանդութեան բոժոժները (cocons) պլլեցին ու մաքրուած տերեւներով կերակրուողներու չափ արդիւնք տուին:

Իրապէս շերամարուծութեան համար Եգիպտոսը իտէալ երկիր մըն է՝ իր կարգ մը բարեմասնութեանց շնորհիւ: Եւ Եգիպտոսի ժողովրդեան համար տնտեսական նոր բարգաւաճ դարագլուխ մը կը բացուի գիւղատնտեսական այս նոր ճարտարաբանութիւն յառաջդիմութեամբ:

Ինչ են Եգիպտոսի բարեմասնութիւնները, որոնց շնորհիւ այս երկիրը շերամարուծութեան համար ամենայարմար գետինը կը դառնայ: — Թուրքիոյ մէջ, և մասնաւորապէս Պրուսայի կողմերը, ուր շերամարուծութիւնը ամենէն աւելի տարածուած է, հազիւ կարելի կ'ըլլայ Ապրիլի կէսին հունտարածուած է, հազիւ կարելի կ'ըլլայ Ապրիլի կէսին հունտարածուած է, այսինքն թթենիներու առաջին փթթումին հետ միասին: Արդ, Ապրիլի 10-15ին բացուած հունտը 10-12 օր վերջ բաւական մեծցած, երկրորդ քունին մօտեցած կ'ըլլայ, բայց այդ ատենները պատահած յանկարծակի գիշերային ցուրտ մը, և կամ տեղացող առատ ցօղը՝ առաւօտեան բարկ արեւի ազդեցութեամբ շոգիացած ժամանակ՝ տերեւները մեծ մասամբ, նոյն իսկ երբեմն բոլորովին կը չորցնէ: Հետեւաբար, շերամարոյծը որդերը կերակրելու համար այլեւս պէտք եղած տերեւը չի գտներ պարտէզին մէջ, ու պարտաւորուած կը սպասէ տերեւներու երկրորդ զարթնումին՝ ինչ որ յաճախ 7-8 օր կը տեւէ, և որու միջոցին շատ մը որդեր անօթութենէ կը սատկին, իսկ ողջ մնացողներու առողջութիւնն ալ անգամ մը որ խանգարուած ըլլայ անոնցմէ կարելի չէ սպասել նոյն արդիւնքը՝ ինչ որ կը սպասուի շարունակաբար կանոնաւոր կերպով կերակրուող շերամներէ: Իսկ շատ անգամ ալ կը պատահի — և սոսկապէս անձամբ տեսած եմ — որ մէկ-երկու անգամ, յաջորդաբար, տերեւները ցուրտէն այսպէս չորնալով՝ որդերը չափէն աւելի ժամանակ անօթի կը մնան ու շերամարոյծն ալ ստիպուած իր այնքան գուրգուրոտ աշխատատանքին պտուղը

դուրս կը նետէ: Սակայն, հոս, եգիպտոսի մէջ, ո՛չ գիշերային այն սաստիկ ցուրտը և ո՛չ ալ այն առատ ցօղը կայ՝ որ կարենան վնասել թթենիներուն: Հետեւաբար, առանց ո՛նէ վախի, Մարտի սկիզբէն կարելի է հունտերը բանալ:

Ամենակարեւոր առաւելութիւնը, զոր եգիպտոս կը վայելէ՝ օգերու չորութիւնն ու միօրինակութիւնն է: Կիզէի տիպար շերամարուծարանին (magnanerie modèle) կատարած երեք տարուան փորձերու ընթացքին ջերմաչափ (thermomètre) և խոնաւաչափ (hydromètre) գործածելով, ամէն օր կանոնաւորաբար յատուկ ցուցակներու մէջ սենեակի տաքութիւնն ու խոնաւութիւնը գրուած է. ցուցակը աչքէ անցընողը պիտի տեսնէ որ խոնաւաչափը շատ քիչ անգամ 70 աստիճանն անցած է իր առաւելագոյն չափին մէջ, իսկ նուազագոյնը՝ յաճախ մինչեւ 10 իջած է: Մինչդեռ, Թուրքիոյ մէջ և ուրիշ անձրեւային կլիմայ ունեցող տեղեր, խոնաւութիւնը 70ը չանցնելու համար զանազան միջոցներու կը դիմեն, որով աւելորդ ծախք մը կատարուած կ'ըլլայ: Նորէն ցուցակներէն կը տեսնուի որ ջերմութիւնը, հակառակ պատահած եգիպտական խամսիցին, 28 աստիճանէ վեր բարձրացած չէ — ինչ որ սովորաբար պահանջուած աստիճանն է — շնորհիւ գիտական պահանջներու համաձայն շինուած օգամուտներուն՝ (soupiraux) որոնք լաւ կերպով գիշեր-ցորեկ սենեակի օդը կը փոխեն. իսկ նուազագոյնն ալ 18է վար իջած չէ, և մշտական ջերմութիւնը գրեթէ 22-24 աստիճան եղած է՝ զոր ցուրտ երկիրներու մէջ ձեռք բերելու համար բաւականաչափ փայտ վառելու հարկը կը տեսնուի, որով՝ շերամներու համար կատարուած ծախքին քանակը կը բարձրանայ՝ նուազեցնելով չահը:

Շերամարուծութեան համար, եգիպտոս ուրիշ առաւելութիւն մը եւս ունի: Երկար տարիներ եգիպտոսի մէջ շերամարուծութիւն կատարուած չըլլալով՝ օգը, ջուրը և վերջապէս միջավայրը շերամախտ պատճառող միքրոպներով վարակուած չէ, հետեւաբար, վատահելի տեղերէ լաւ զըննըւած հունտեր (graines) առնելով ու պէտք եղած խնամքը չի խնայելով՝ կարելի է երկար ժամանակ որդեր հասցնել առանց հիւանդութեան:

Արդէն շերամներու հիւանդութիւնները երկու գլխաւոր պատճառներէ ծնունդ կ'առնեն: Նախ՝ հունտերը Բասթէօն-

եան դրութեամբ զննուած չըլլալով՝ հիւանդ հունտեր առողջներուն կը խառնուին ու որդերու ելլելէն (éclosion) վերջ հիւանդութիւնը ամբողջին անցնելով՝ կը սատկեցնէ: Այս վտանգին առաջքն առնելու համար ուրիշ երկիրներու մաքսատուներուն մէջ միքրոպներու զննութեան կ'ենթարկուին ներմուծուած հունտերը՝ ապահով ըլլալու համար թէ հիւանդութեամբ վարակուած չեն: Գուցէ, ապագային շերամարուծութեան բուսականին յառաջդիմած ժամանակ, եգիպտական կառավարութիւնն ալ այս միջոցը կիրարկէ՝ շերամարուծութեան նպաստելու համար:

Երկրորդ, օգերու շարունակական փոփոխութիւնն ու խոնաւութիւնն է. որոնց երկուքն ալ մեծ չափով բոժոժի հասոյթին վնաս կը պատճառեն: Շերամներու ամենամիսասակար երեք հիւանդութեանց — Muscardine, Pébrine և Flacherie — միքրոպները խոնաւ օդի մէջ միայն կարող են զարգանալ, իսկ չոր օդի մէջ անոնց զարգացողական կարողութիւնը գէրօլի կը հաւասարի, առանց սակայն փճանալու:

Վերը նկարագրուածներէն կ'երեւի որ եգիպտոսը շերամարուծութեան համար իտէալ երկիր մըն է. ասկէ զատ, եգիպտոսի բոժոժներէն քաղուած մետաքսը թէ՛ որակի և թէ՛ քանակի կողմանէ անղուգական է: Եւ այս պարագան Ֆրանսայի մետաքսի գործարանատէրերը յայտնած են անցեալ տարուան ձմարուած բոժոժներուն մետաքսները փորձելով, 3¹/₂ քիլօ չոր բոժոժէն մէկ քիլօ մաքուր մետաքս քաշուած է, իսկ տեսակն ու ազնուութիւնն ալ անբաղդատելի:

Եգիպտոս, շերամարուծութեան իր ծոցին մէջ զարգացումը գլխաւորաբար Տիար Բիւզանդ Մասրաֆի ջանքերուն պիտի պարտի, և ասիկա պատիւ պիտի բերէ թէ՛ անխոնջ փորձարկուին և թէ՛ Հայ Ազգին, որ ամէն տեղ յանձին իր խուզարկու գաւակներուն ցոյց տուած է որոնող, ձեռներէց ու հեռատես օգի, վաճառականութեան, ճարտարարուեստի և արդիւնաբերական այլազան ճիւղերուն մէջ:

Յ. Վ. ԳԱՐԱՍԷՖԵՆԻՍԱՆ



ԵԳԻՊՏԱՅԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

1914-1915 ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ

Վերջացող տարուան անդոհներն ու արհաւիրքները արգելք մը չեղան Նեղոսի ափունքներուն վրայ բոյն դրած հայ մտքին՝ գրական բաւական ընդարձակ գործունէութիւն մը ցոյց տալու։ Թերեւս ընդհակառակը։

Համեմատական պատերազմին աւելի քան տարիէ մը ի վեր ստացած այլազան փուլերը, Պելճիգայի ճգնաժամէն սկսեալ մինչեւ Սերպիոյ գիւցազնավայել դիմադրութիւնը և դեղեւումները, հիւսիսային մարզերուն գալարումներէն սկսեալ մինչեւ Փոքր Ասիոյ հայկական սարսափները, ապա՝ քէն հանգամանքն ունէին մեր խորհողներուն և հրապարակագիրներուն շիջերը ոտք հանելու։ և քիչ անգամ միայն պատահեցաւ սոյնօրինակ պարագաներու մէջ բաւական յաճախ յառաջ եկող սա երեւոյթը յորում լեզուն, կամ միտքը, կամ գրիչը կը կարկաժին, կ'ամլանան, գոգցես իմն դժգըմած, ընդմտատար, մսելով, զոփալով տիեզերածառաւ ձիւնէն որ կ'իջնէ մարդկային ազգին ստուար մէկ մասին և մասնաւորապէս մեր ցեղին գլխուն։

Եւ արդարեւ, ինչպէս որ դառնաղէտ կարեձմեռ մը կը ցամքեցնէ մանաւանդ թշուառ աղքատ մաղկատիկ դասակարգերուն կենսական ոյժերը, և անինչ մարդիկ մօրու երկինքի մը նսեմ վայրէջքին ճնշումը կը զգան իրենց գոյութեան վրայ ծանրացած, և խարխուլ տանիքին հեծեձագին չչիւնները՝ գիշերը, թերի իմն ամրափակուած դուռին ծերպերէն ներս խուժող սառնացուրտ քամին, պախրցիւրին ուրուականային վայնասունը, կը լքուցանեն կը փայտացընեն աղքատին կենսունակութիւնը, և արիւնը կը մերժէ իր սովորական արագութեամբը կատարել իր շրջանը, ուղեղը կը պաղի, ներքին կրակը շիջուտ կը դառնայ, շրջակայ ապարկաները մեռոտ ու մթին կերպարանք մը կը հագնին, առաստաղը կը ցածնայ կը սքքի, մարդուն կը թուի թէ տունէն դուրս ամենքը անշնչացեր են, ապրող մարդ չէ մնացեր, այնպէս ալ, ժամանակները որոնց մէջէն կ'անցնինք, տարասովոր լքումի, ցուրտի, սովի զգայնութիւններ կ'արթնցընեն մեր մէջ։ մեզի կը թուի թէ ամեն բան մօտ է վախճանին հասնելու, թէ պէտք է որ հասնի, թէ երկինքը ամառացած է խնամակալութենէ կամ ասիկա սրբողեր է մեզի դէմ, և տարտամ փափաքներ կ'ունենանք ա'լ ելլալ երթալու, կը համարինք որ մեր պաշտօնը այլ ևս կատար-

ուած աւարտած է, թէ ա'լ բան մը չկայ ընելիք... Ու աղ-
ջամուղջը կամաց կամաց, բայց անվրէպ կը փաթթուի մեր
հոգիներուն։

Մխիթարական է սակայն հաստատել որ այդ վհատու-
թիւնը և գործունէութենէ հրաժարումը գրեթէ բնաւ չեն
երեւար, 1915 թուականին, մեր միջավայրի հայ իմացակա-
նութեանց մէջ։

Հրապարակագիր, գրագէտ, քարոզիչ կամ մտածող,
ամենքն ալ նորոգ թափով մը կը շրդեղուին։ Տառապանքը
կը զօրացնէ ալ. ճնշումը կը բարձրացնէ. աղէտքը թեւեր
կուտայ։


Եւ ահա կը տեսնանք որ, չխօսելով գանազան պարա-
գաներու մէջ և գանազան առիթներով եղած ատենախօսու-
թեանց, տրուած քարոզներու, արտասանուած ճառերու
վրայ որոնք, եթէ գրի առնուէին և հրատարակուէին, հիւ-
թեղ և շինարար դպրութիւն մը պիտի ստեղծէին, չիլիա-
տակելով Եգիպտահայոց բանիբուն ու պերճախօս Առաջնոր-
դին քանի քանի հրապուրիչ և առինքնող ճառերը, Գա-
յաեանի, Պարթեւեանի, Երամեանի, Սապահ-Փիւլեանի և ու-
րիշներու յուզիչ, իմաստուն և գրաւիչ ատենաբանութիւն-
ները, մէկէ աւելի մեծ ու պղտիկ հատորներ կուգան ճո-
խացընել, Բուրգերուն ստորոտը, հայ մատենագրութեան
արդի թանգարանը։

«Արեւ» նոր թերթը կը հիմնուի, և անոր մէջ ժամադիր
կ'ըլլան գրագէտներու ընտրանիէն շատեր. Տ. Կամարական,
Լ. Մկրտիչեան, Մ. Կիւրճեան, Մ. Տամատեան, Վ. Թէքէ-
եան, Մ. Աժտէրեան, և այլք։ Անոնք, ո'րը իր նուրբ ու
հմայիչ ոճով, ո'րը կորովամիտ քննադատի իր խիզախումնե-
րով, ո'րը իր զգայուն բանաստեղծի կեցուածքով, ո'րը իր
վոյզէնեան հեզնանքի և Ալֆոնս Բառեան երգիծանքի սրա-
միտ սլացքներով, կը յարգարեն Աղեքսանդրիոյ եկեղօրեան
հանրօգուտ հրատարակութիւն մը։

«Յուսարեր», Գահիրէ հրատարակուած, նմանապէս երկ-
օրեայ հայաթերթը, ժամադրավայր կ'ըլլայ յանդուզն և
աներկիւղ հրապարակագիրներու։ Պարթեւեան, Հանըմեան,
կրկին Պալեստիններ, և տակաւին ուրիշներ կը մրցակցին ա-
նոր մէջ հայ համայնքին ոգին Հայրենիքի շահերուն և
օգուտին վրայ արթուն պահելու գործին մէջ։ Հ. Երամեան
և Արսէն-Երկաթ, որ հաւասարապէս կ'աշխատակցին նաև
«Արեւ»ին, իրենց փափուկ հայրենասիրութեան ծնուցած
պատկերներուն բաժինը կը բերեն Գահիրէի թերթին, մինչ-
դեռ՝ միւս կողմէն՝ Արսէն-Երկաթ, ինքզինքին տիրացող ու իր
թափն առնող տաղանդի մը ապացոյցները տալով, կը հրա-
տարակէ կրկին հատորիկներ, մին իր արձակին և միւսն իր

ստանաւորներուն պահարան. «Երազ ու Վիշտ»ը և «Հայրենիքիս Դափնիները»:

Մ. Տամատեան Սուէտիոյ դիւցազներգութեան վրայ «Արեւ»ի մէջ կը հրատարակէ ուշագրու յօդուածներու շարք մը, զոր հատորի մը մէջ ամփոփելու և լոյս հանելու վրայ է:



Հօգիտոսն և
Մարտիրոս
Մարտիրոսեան
Գրեց

Կ. Պալեան կը հրատարակէ իր «Եգիպտոս և Արաբական Ճարտարագետութիւնը», պատկերազարդ ստուար հատոր, պտուղ յոգնափաստկ, բանիմաց և խղճամիտ ուսումնասիրութեանց, զոր մեծ մասամբ կատարած է տեղւոյն վրայ հեղինակը, որ կը յայտնուի, այս երկասիրութեան մէջ, ոչ միայն նրբաճաշակ, դրժուարահաճ և զգայուն արուեստագէտ մը, այլ նաև մաքրասէր ու յանկուցիչ ոճով գրագէտ մը:

Սապահ-Գիւլեան լոյս կ'ընծայէ իր «Ինքնավար Հայաստան» գրքոյկը, հմտալից ու փաստակուս ուսումնասիրութիւն մը:

Պարթեւեան կը հրատարակէ «Ձայնը Հնչեց»ը, գրուագ մը կովկասահայ ազգայիններու կեանքէն, սիրոյ, անձնուիրութեան, աննկուն քաջարիութեան, հրաբորբ հայրենասիրութեան յոգնադիմի միջավէպներով համեմուած իրավէպ մը, որուն մէջ գերազգայուն հրապարակագիրը կարծես կ'ապրի իր դիւցազներուն կեանքը, և կը զգայ իր կուրծքին թոպելը անոնց մարտագոռ խիզախումներու նուիրուած սրտին տրոփիւններովը:

Ի լոյս կը հանէ նաև իր «Արիւնին Մատեանը», որուն մէջ զանազան պարագաներու և դէպքերու միջոցին ասդին անդին պարբերականներու մէջ մասամբ երեւցած երկոտասնեակ մը պատմուածքները կ'ամփոփէ:

«Արիւնին Մատեանը» բարերար սարսուռ մը կը պտըտցունէ մեր լանջքին տակ:

Կովկասի հայ-թաթար ընդհարումները, 95ի Պապը-Ալիի ցոյցին այլեւայլ գրուագները, յեղափոխական ազգայիններու ապշեցուցիչ անձնուրացութեան գործունէութիւնները, անոնց Գողգոթաները, որ հպարտութեան միանգամայն անձուկի և անդոհի բաբախումները կը դնեն ընթերցողին հոգւոյն մէջ,

զանազան թուականներու մէջ հայկական արհաւիրքին սահմուկեցընող փուլերը, բանտերու մէջ հիւժող և զրաւող երիտասարդ մեր արեւնակիցներուն աղետարչ վիճակը և անոնց անվեհեր, արհամարհոտ, վտանգին ու տանջանքներու սպառնալիքներուն առջեւ արիւնը սառեցընող պաղարիւնութիւնը և արհամարհանքը, ձմեռուան ու անօթութեան սառնամանիքէն մեռնող ամբողջ հայ գիւղի մը Ծննդեան տօնին առտուն տաճարէն բացակայութիւնը, զոր Գեղջերէցը չի հասկնար և Տիրացուին հետ թաղէ թաղ կը պտտի կեանք փընտուելու համար և չի յաջողիր. այս ամենը զարհուրելի տողանցումով կ'անցնին երեւակայութեանդ սահմուկած նայուածքին առջեւէն. ու կը դողաս հեղինակին կրած




դողը, ու կը մասնակցիս անոր սրտին մորմոքումներուն, ու կըզգաս որ երկինքին դուռները կը բացուին և հրեշտակներ սգազգեաց, բազուկներնին լուսապսակներով բեռցուած, վար կը թռչին ժպտադէմ՝ մեռնիլը մերժող ազգի մը վրայ մեռնող պաշտելի նահատակներուն բաշխելու համար զանոնք:

Ու կը հասկնաս այն ատեն կամսարականին, ու կիւրճեանին, ու Տամատեանին ամենի զայրոյթի ու ցաւի աղաղակը, կամ դառն ծալքի նմանող ժպիտը. կը հասկնաս այն ատեն Գեբ. Գուշակեանի հանդարտ լճի մը տեսարանին ազգեցութիւնը ներգործող, բայց և ահագնագոռ հրաբուխի մը պոռթկումները ծածկող պերճախօսութեան ազգականութիւնը. կը հասկնաս Գոյաեանին եղերական ճիչին տարութիւնը. կը հասկնաս Գոյաեանին եղերական ճիչին տարութիւնը՝ երբ Հայրենիքի ցաւերուն անբաւականութիւնը կը մեր ճիգերուն կամայ թէ կ'ամայ անբաւականութիւնը կը պոռայ. կ'ըմբռնես մէկուն օծութեամբ լեցուն բանին արտօնարգօծ հոսումը իր հօտին վրայ՝ երբ կը յորդորէ զանի սիրել, պաշտել իր խաչը, այսինքն իր տանջանափայտը, որ ծառն է խոտամալից ապագայի պտուղներով, համբուրել իր կողը մխուռող սուրը որ Աստուածամօր կողին վարսուող սուրն է և որ կեանք պիտի ժայթքեցնէ, — «Ես եմ յարութիւն և է և որ կեանք պիտի ժայթքեցնէ», — և միւսին աննկուն խորհողի և արիւթեամբ կեանք» —, և միւսին աննկուն խորհողի և արիւթեամբ տողորուն ազգասէրի աղաղակը, ինչպէս նաև աղաղակը վանի անզուգական վարժապետին, որուն մորմոքը կը մորմոքէ ամենէն քար սիրտերն անգամ:

Այսպէս եղաւ 1915ի եգիպտահայ գրական գործունէութիւնը. անհուն բողոքի, անծայրածիր կակիծի, անզուսպ և բուռն ցասուծի արտայայտութեան, բայց նաև անյուսաբեկ քաջալերութեան, հայրենի դժոխային տառապանքին օգնութեան հասնելու համար համերաշխ գործակցութեան հրաւերի գործունէութիւն մը, որ հաւատալ կուտայ մեզի թէ արդարեւ ճնշումի և նախճիրներու բեռին տակ կարելի չէ ձգմել և անճիտել այս ազգը:

3. ՍԵՌԵԱՆ



ԱՐՇԱԼՈՅՍԸ



Վերջալոյսի շող մը կարմիր երկնից վրայ կը փայլի,
 Բոսորագեղ նառագայրով մեծ Արշալոյսն է լրդի.
 Ամպեր, փախե՛ք, ա՛լ ների՛ք է, քո՛ղ գան լուսին եւ ասդեր,
 Լոյս-արցունքի մեջ լրալու Հայրենիքս բիւր վերեք:

Վաղը, այգուն, երկնից վերեւ քո՛ղ պասգամներ ոռոսան,
 Լուսաժրպիս հրբեցակներ մեղեդիներ փրսփրսան,
 Մեր դաւեսեուն վարդակարմիր՝ նահասակաց արիւնով,
 Կամաւորներ, ողջո՛յն սրւեք, Ազատութիւն երգելով...

Ձեզ կը յառին աչքերը մեր, ո՛վ հերոսներ անձնուբաց,
 Ձեր նակսին վրայ Արշալոյսին ծիրանի շողն է ծարած,
 Ձեզմով միայն պիտի ապրի Մայր Հայասանը նորեն.
 Ու ծաղիկներ պիտի բացուին ձեր արիւնոս կուրծքերէն:

ԱՂԻՍ ՄՍՐԼԵԱՆ

“ՄԲՕՐ,,Ը ԵԳԻՊՏԱՀԱՅՈՑ ՄԷՋ

Եգիպտահայոց մէջ Մբօրը թէպէտ 1912ին «կամք»ի հիմնարկութեամբ գործնական ուղիի մը մէջ մտաւ՝ բայց իսկապէս 1906ին մուտք գտած է՝ Յակոբ Աղասերի Պողոսեանի Վարժարանի անօրէնութեան շրջանին՝ Արթիւր Էլմասեանի մարմնամարզի ուսուցիչ կարգուելովը: Էլմասեանի վկայեալ ժուանվիլի Մարմնակրթանքի Վարժարանէն, Գաղղիական Կառավարութեան ներկայացուցիչ Աթէնքի Ողիմպական Խաղերուն, միանգամայն athlète complet մը, իր ազգակից պատանիներուն մէջ, մարմնամարզի սէրը արծարծելու համար՝ ամէն զոհողութեան պատրաստ՝ մէկ տարուան շրջանի մէջ հրաշք գործեց: 1907ի Պողոսեան Վարժարանի հանդէսը կատարեալ յաղթանակ մը եղաւ թէ՛ ուսուցչին և թէ՛ աշակերտներուն համար: Աշակերտներուն ցոյց տուած ընդունակութիւնէն քաջալերուած, Էլմաս առաջարկեց տիպար մարզարան մը հաստատել իր անձնական քրտակէն՝ եկեղեցւոյ շրջափակին մէջ գտնուած պարապ հողաբաժնի մը վրայ: Ազգային Իշխանութիւնը ոչ միայն մերժեց այդ վեհանձն առաջարկը, այլ նոյն ատենի վարժարանի հոգաբարձութիւնը՝ որ կը բաղկանար Կիւրճեանէ, Մկրտիչեանէ ևն. սկսաւ պախալի լրդուկ սակարկութիւններու մէջ մտնել հազուագիւտ ուսուցչի մը հետ, զոր օտար վարժարանները իրարու ձեռքէ կը խլէին: Էլմաս՝ ջղային մարդ՝ ինչպէս են միշտ կատարեալ արուեստագէտները, զգուանքով հրաժարեցաւ երգուըննալով թէ անգամ մըն ալ ազգային գործերեցաւ երգուըննալով թէ անգամ մըն ալ ազգային գործերու, ազգային վարժարաններու մէջ ո՛չ մէկ պաշտօն պիտի ստանձնէ: Հոգաբարձութիւնը Էլմասի յաջորդ նշանակեց յոյն մարզիչ մը, որ իրականութեան մէջ, Էլմասի հասցուցած աշակերտներուն հետ իսկ չէր կրնար բաղդատուիլ, և կարծեմ քանի մը ամիս պաշտօնավարութենէ յետոյ հրաժարեցաւ:


Բարերազգաբար Եգիպտահայութեան համար, Էլմաս իր յաջողագոյն աշակերտը՝ Պ. Ստեփան Խանճեանը առած էր իրեն իբր օգնական, իր միւս աշակերտները, վարժարանին մէջ և վարժարանէն ելլելէ յետոյ, մէկգի չէին ձգած մար-

զանքը, և եթէ որոշ մարմին մը չէին ներկայացներ, բայց մարզանքի սէրը կը միացնէր զիրենք շարաթը մէկ քանի անգամ:

1911ին, Պ. Ստեփան իսանճեան կը մեկնի Ֆրանսա և Լիօնի Մարմնամարզական Ակադեմիային առջեւ փայլուն քննութիւն մը անցընելէ յետոյ կը վերադառնայ Ադեքսանդրիա, և կը ստանձնէ իր օգնականի պաշտօնը Պ. Էլմասին քով, միեւնոյն ժամանակ ուսուցիչ կը նշանակուի Պօղոսեան Վարժարանի մէջ, և մեր վարժարանի աշակերտները միանուազ շարժումներու մէջ՝ կրնանք ըսել թէ առաջիններն են յԱդեքսանդրիա:

«ԿՍՄՔ» ԱԿՈՒՄԲԸ. — 1908ին, Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն յետոյ, Պոլիս, ի նպատտ մարմնամարզի լուրջ շարժում մը սկսաւ, որուն հոգին եղաւ Շաւարշ Քրիսեան, որ հրատարակելով «Մարմնամարզ» թերթը ա՛յնչափ օգտակար հանդիսացաւ գաւառի հայ երիտասարդութեան: Հետզհետէ Ակումբներ կազմուեցան Պոլիս և գաւառները, և քանիցս Հայկական Ողիմպիական Խաղեր տեղի ունեցան Գատըզիւղ, և հայ մարզիկները սեփականացուցին՝ Պոլսոյ միջազգային մրցումներու մէջ՝ ամէն բրժօրները: Սթօքհօլմի Ողիմպիական Խաղերուն՝ երկու Հայեր էին միայն, որ կը ներկայացնէին Օսմանեան Կայսրութիւնը: 1912ին Շաւարշ Քրիսեան ամառուան արձակուո՞ղը անցուց Եգիպտոս, և այս առթիւ ծանօթացանք իրարու: Ծանր հիւանդութեամբ մը հինգ ամիս անկողին գամուած, և հազիւ ապաքինման ճամբուն մէջ մտած, ամիսէ մը ի վեր շուէտական մարզանք կ'ընէի տունը, և այնպիսի արգիւնք մը տեսայ անձնապէս, որ ինձի համար մարմնակրթանքը հաւատքի գաւառանք մը եղաւ: Նոյն միջոցին Տօքթ. Ժամկոչեան «Բժիշկ»ի և «Մարմնամարզ»ի մէջ յօդուածներու շարք մը հրատարակած էր, և համակիր մարմնամարզի, Քրիսեան, Տօքթ. Ժամկոչ և ես խորհրդակցութիւն մը ունեցանք: Տեսայ Էլմասի աշակերտները և Մարմնամարզական Ակումբ մը կազմելու առաջարկը ըրի իրենց: Սիրով ընդունուեցաւ: 1912ին Պօղոսեան Վարժարանի մէկ դասարանին մէջ, նախագահութեամբ Տօքթ. Ժամկոչեանի, քսանի չափ երիտասարդներ ժողով մը գումարեցինք: Քրիսեան փոքրիկ դասախօսութիւն մը ըրաւ: Առաջին վայրկեանէն ապահովեցինք Պ.

Խանճեանի աջակցութիւնը իբր ուսուցիչ: Գրամ պէտք էր գործի սկսելու. մեր մէջ փոքրիկ հանգանակութիւն մը ըրինք որմէ 140 գահեկան գոյացաւ: Ահա՛ «Կամք»ի դրա-



«Կամք»ի մարզիկները եւ Ակումբի ցիփիկները

մազուիսը: Գործի սկսանք: Ակումբը կազմելու համար մարմին մը կազմուեցաւ հետեւեալ կերպով: — Պերճ Օհանեան (Ատենապետ), վահագն Ազնաւորեան (Ատենադպիր),


Միհրան Թելեան (Գանձապետ), Բարսեղ Օհանեան (Ընդհ. Տնօրէն), Նախ մարզավայրի խնդիրը կար: Եկեղեցւոյ շէր- ջափակին մէջ հինգ հազար մէթրի մօտ անգործածելի գե- տին մը, որ աղբանոցի վերածուած էր, մեր գիմուսին վրայ, Ազգ. Առաջնորդարանը մեր տրամագրութեան տակ գրաւ: Ամիս մը չարաչար դատանքով, ուր Ակուսիչին երիտա- սարդ անդամները բանւորներու պէս աշխատեցան, դաշտը մաքրեցինք: Հանդերձարան և լոգանքի սենեակ մը շին- ուեցան: Ու դասախօսութիւնները սկսան: Այս նախապատ- րաստական ամիսներուն Տօքթ. Ժամկոչեան, մեր ընդհանուր ժողովի նախագահը, հանգուցեալ Պերճ Օհանեան, Ատենա- պետ Բաղաքական Ժողովի և Ատենապետ «Կամք»ի, Վա- հագն Ազնաւորեան՝ անգնահատելի ծառայութիւններ մա- տուցին: Մասնաւոր յիշատակութեան արժանի է Ալթր Միհ- րան Թելեան: Մեր երկուքին վրայ կը ծանրանար գործօն գերը Վարչութեան մէջ. արգ, հազիւ երեք ամիս անցած, ազգային գործով մը, հինգ ամիսի չափ պարտաւորուեցաւ: հեռանալ Ազեքսանդրիայէն, և այս ամբողջ շրջանին՝ Թել- ևան միս մինակը վարեց Ակուսիչին վարչական գործերը:

1913 Մարտ 23ին՝ Ա. բացառիկ ժողովի մը հրահրելով անդամները՝ Թելեան նախապատրաստական աշխատութեանց վերջացած ըլլալը յայտնելով և ընդարձակ տեղեկագրով մը նոր և գործօն անդամներէ բաղկացած վարչութեան մը ան- հրաժեշտութիւնը ցոյց տուած ըլլալով, եօթը հոգիէ նոր վարչութիւն մը կազմուեցաւ Բարսեղ Օհանեանի ատենապե- տութեամբ, որ շարունակեց մինչև 13 Սեպտ., և որուն պաշտօնավարութեան շրջանին՝ տեղի ունեցաւ «Կամք»ի առաջին մրցահանդէսը, մեծ յաջողութեամբ: Երրորդ և չորրորդ Վարչութիւնները կազմուեցան դարձաւ նոյնին ատենապետութեամբ, իսկ ներկայ վարչութիւնը՝ որ պաշ- տօն ունի մինչև 1916 Գեկտեմբերի վերջը, կազմուած է հետեւեալ կերպով. — Բարսեղ Օհանեան (Ատենապետ), Կա- րապետ Աշըգան (Փոխ-Ատենապետ և Սբօրի Տնօրէն), Ստե- փան Փափազեան (Ատենադպիր), Յակոբ Նաւպանտեան (Գանձապետ), Լեւոն Աշըգեան (Գոյքապահ):

Ի՞նչ եղած է «Կամք»ի գործունէութիւնը:

Հազիւ 10-15 հոգիով գործի սկսուած՝ այսօր «Կամք»ին շուրջ բոլորուած են 130ի չափ երիտասարդներ և պատա-

նիններ: «Կամք»ի մարզավայրը Ազեքսանդրիոյ լաւագոյն մարզավայրն է, և ունի քեմիսի սքանչելի խաղավայր մը: «Կամք»ին մէջ Սբօրի բոլոր ճիւղերը կը մշակուին, և Շուէ-



«Կամք»ի հոգին (Բարսեղ Օհանեան) շրջապահուած «Կամք»ի կսիւն կիսերեցեալը

տական Մարզանքը իւրաքանչիւր անդամի համար պարտա- ւորիչ է: Հիմա, որ Ազեքսանդրիոյ յոյն և օտար Ակուսիչները կա՛մ քայքայուած, կա՛մ փակուած են, «Կամք»ը կը շարու-

նակէ անխափան՝ հակառակ անտեսական նեղ կացութեան : 1912 Օգոստոսէ մինչեւ 1915 Սեպտ. «Կամք»ը մօտաւորապէս 300 անգլ, ոսկիի մուտք մը ունեցած է, որմէ ուսուցիչի, պաշտօնէի թոշակները և ընդհ. ծախքերը զեղչուելէ յետոյ, ներկայիս 120 ոսկիէ աւելի գրամագլուխ մը կը մնայ : «Կամք»ի այժմու գործունէութեան վրայ խօսիլ ինծի չիլնար, ըլլալով դարձեալ Ատենապետը ներկայ վարչութեան :

Միայն պիտի ըսէի թէ՛ մեր ամսական պիւտձէն 10 ոսկիի բարձրացած է, և կրնանք ըսել թէ՛ «Կամք»ի ապագան ապահովուած է :

Ի՞նչ է «Կամք»ի յաջողութեան գաղտնիքը . քանի մը կէտեր կ'արժէ առ այս մատնանշել :

Ա. Առաջին օրէն մեր մէջ կատարեալ համերաշխութիւն տիրած է, ո՛չ մէկ անհատական կամ կուսակցական խնդիր, և եթէ զտնուած են համերաշխութիւնը խանգարել փորձողներ, դուրս նետած ենք զանոնք : Մարզանքի համար միացած՝ մարզանքի համար կ'աշխատինք և ոչ այլ ինչի :

Բ. Աշխատութիւններու բաժանում, վարչութեան իւրաքանչիւր անդամը իր ճիւղին պատասխանատուն է ուղղակի : Հազիւ ամիսը մէկ ժողով ընելու պէտքը կը զգանք :

Գ. Մեր ուսուցչին անձնուէր ջանքերը . Տիրար Ստ. Խանձեան թէ՛ «Կամք»ին և թէ Գահիրէի «Արարատ»ին հանդէպ եղբայրական գուրգուրանք մը ունի, որուն համար երախտապարտ ենք ամենքս : Սբօրի տեսակէտէն «Կամք»՝ դեռ երեք տարիէ ի վեր կազմուած Ակումբի մը՝ րբօրներ չունի եգիպտական րբօրներուն բաղգատմամբ, այսու հանդերձ՝ Աշըգեան երկու եղբայրները հաւասարած են եգիպտական երկու րբօրներու . Կարապետ Աշըգեան 400 մեթր 57 երկվայրկեանէ վազելով, և Լեւոն Աշըգեան 1 մեթր 64 բարձրութիւն ցատկելով, իսկ չուէտական միանուագ շարժումներու և գործիքներու վրայ, անվիճելիօրէն, «Կամք»ի անդամները ամբողջ Աղեքսանդրիոյ լուսագոյններն են, Արշաւիր Սաֆրաստեան, Պ. Տէօքմէճեան գերազանցներն ըլլալով : «Կամք»ի մէկ ուրիշ անդամը, հաւանականաբար ապագայ recordman մը եգիպտոսի համար ծանրութիւն վերցնելու և երկաթ նետելու մէջ, մեր երիտասարդ Մատթթ Թապագեանն է : Թեկիսի լուսագոյն խաղացողներն են՝ Գուրտաճի-հան, Տէմիրճեան, Նասիպեան : Կրտսերներու մէջ Տիրան

Մէֆէրեան, Յ. Ամատունի, Լեւոն Արփիարեան, Օ. Նազաշեան մեծ ապագայ կը խօստանան : Կոփամարտութեան մէջ, պէտք եմ յիշել Մարտիկ Քամչեանը որ հիանալի դիմադրութեան մը կը միացնէ անվախութիւնը . ուրիշ պատանի մը՝ Արամ Չատրճեան որ դժբաղդարար այսօր professionnel եղած է, և ստիպուած ենք, ըստ Unionի օրէնքներուն, հեռացնել «Կամք»էն՝ լուսագոյն poids léger կոփամարտիկն է ներկայիս Աղեքսանդրիոյ : «Կամք»ի մասին այս հակիրճ տեղեկութիւնները տալով, եթէ անոր կազմութեան և շարունակութեան մէջ իմ դերս ունեցայ, ատիկա ոչ մէկ գրական արդիւնքի պիտի յանգէր, եթէ իմ շուրջս կամքի տէր, ազնիւ երիտասարդներու խմբակ մը չունենայի . ի մասնաւորի պիտի յիշեմ Աշըգեան երկու եղբայրները Ակումբին հիմնադիրներէն, Յ. Նալպատեան, Գ. Զօպանեան (այժմ ուսուցիչ Մարմնամարզի Բօլ-Սայիտի «Սիսուան» վարժարանին մէջ, Թահթաճեան և այնչափ ուրիշներ՝ որ ներողամիտ ըլլան ինծի՝ եթէ տեղւոյ սղութեան պատճառաւ անկարելի կ'ըլլայ մի առ մի յիշել իրենց անունները :

Վերջացնելէ առաջ, կ'ուզեմ «Կամք»ի կողմէն շնորհակալութիւն յայտնել նախ՝ Ակումբին հիմնուելէն ի վեր իրարու յաջորդող Քաղաքական Ժողովներուն, որ մանրակրկիտ քըննութենէ մը յետոյ՝ համոզուած մեր ձեռնարկին անհուն օգուտներուն՝ ամեն կերպով քաջալերեցին մեզ, Տեարց Միհրան Թեղեանի, Կարապետեանի, Փափազեանի, Պօհճէլեանի, որոնք ամեն կերպով օգտակար հանդիսացան «Կամք»ին :

«ԱՐԱՐԱՏ» ԱԿՈՒՄԲ. — «Կամք»ի կազմութենէն քանի մը ամիս յետոյ, Գահիրէի մէջ Մարմնամարզի երկու Ակումբ միաժամանակ կազմուեցան, կամ կրնանք ըսել թէ՛ ծնան և մեռան, որովհետեւ իրար չէզոքացնելու համար կազմուած էին իսկականին մէջ, և գործի մը մէջ՝ ուր ամենէն աւելի կամք, յարատեւութիւն և միութիւն կը պահանջուի, ուժերու այս տարտղնումը ուրիշ արդիւնքի չէր կրնար յանգիլ :

1914 Յունիս 1ին է որ կազմուեցաւ Գահիրէի «Արարատ» Ակումբը :


Ինչպէս «Կամք»ը, «Արարատ»ն ալ շատ համեստ հիմնարկութիւն մը ունեցաւ, հազիւ տասնեակ մը անդամներով գործի սկսած՝ այսօր 45ի չափ գործօն անդամ ունի, և

մտած է այն շաւղին մէջ, ուր գոնէ մարզանքի սիրահարներուն համար այլևս ետ դառնալ չի կայ, իր պիւտճէն ամսական երեք ոսկի է, որ բոլորովին անբաւական է այսպիսի կարեւոր ձեռնարկի մը համար: Չեմ գիտեր ի՞նչ է պատճառը որ՝ անքաւելի անփութութեամբ մը՝ Գահիրէի Ազգ. Իշխանութիւնները ուէ օգնութիւն, ուէ աջակցութիւն, չին բերեր այս աղնուացուցիչ և երիտասարդութեան համար փրկարար գործին: Անձամբ ներկայ գտնուեցայ անցեալ հոկտեմբերին իրենց տարեկան մրցահանդէսին, հազիւ տարուան մը գոյութիւն ունեցող Ակումբէ մը չէի սպասեր այն ինչ որ տեսայ: Շուէտական միանուագ շարժումներու մէջ, մանաւանդ լախտերով, կատարեալ էին: «Արարատ» իր մէջ ունի շատ լաւ մարզիկներ: որոնք մեծ ապագայ ունին եթէ յարատեւեն, բայց երկայն entrainement պէտք է. պիտի յիշեմ Յ. Նազարէթեանը, Հ. Եէմէնիճեանը, Թ. և Ս. Սէտէֆճեանները, Ս. Ամիրայեանը, որ վերոյիշեալ մրցահանդէսին շահեցաւ Տիար Ժաք Մաթոսեանի մրցանակը (արծաթ մը):

«Արարատ» Ակումբը իր մէջ ունի մանաւանդ Ա. Յովսէփեանը, Եգիպտոսի «Մարաթոն»ի championը, վազելու բնական ձիրքի մը և զօրեղ կազմուածքի մը Յովսէփեան կը միացնէ պաղարիւնը որ յաջողութեան գլխաւոր պայմաններէն է, համաչափութիւն քայլերու, և անոնց հետ իր երիտասարդութիւնը. վստահ եմ թէ՛ լաւ անբրէնրմանով մը, Յովսէփեան կրնայ աշխարհային ռամբիօնի տիտղոսին յաւակնիլ: Course de fondsի համար Ազգ. քսանդրիա՝ ունինք Աղասի Իփէքեանը, որ Լիսէ Ֆրանսէի մէջ հինգ քիլօմէթրի վրայ առաջին հանդիսացաւ, և ուրիշ շատ համեստ 17 տարեկան պատանի մը՝ Յովհ. Մուրատեան որ 1500 մէթրը առանց կանոնաւոր անբրէնրմանի 5 վայրկեանէն կատարեց «Կամք»ի 1915 Մայիսի մրցահանդէսին:

Ինչ որ «Արարատ»ի համար անհրաժեշտ է, մարզավայրն է: Ամօթ է որ Գահիրէի հայութիւնը իր մարզավայրը չունենայ, մանաւանդ հիմայ որ Հայ Հետազօտիչներու ընկերակցութիւնն ալ գոյութիւն ունի, ամօթ է որ Ազգ. Իշխանութիւնը այդչափ անտարբեր գտնուի մարմնակրթանքի:

«Արարատ»ի ուսուցիչն է Տ. Ստեփան Պանճեան, որ ամիսը երկու անգամ յատկապէս Գահիրէ կ'երթայ «Արա-



Գահիրէի «Ararats» Մարմնակրթական Ակումբին մարզիկները

րատ»ին և Հայ Հետազօտիչներու դասաւանդութեան համար. իսկ վարչական ժողովը կը կազմեն. — Պ. Պ. Ստեփան Ամիրաեան (Ատենապետ), Թուփիկ Սէտէֆճեան (Ատենադպիր), Հրանդ Եէմէնիճեան (Գանձապետ), Տիգրան Մէրճանեան, Պօղոս Ներսէսեան:

ՀԱՅ ՊՕՅ-ՄԲԱՈՒԹՆԵՐԸ. — Եթէ մարզանքի շարժումը Աղեքսանդրիայէն սկսաւ, Հայ Պոյ-Սքառութի մը առաջին ընկերակցութիւնը կազմած ըլլալու պատիւը կը պատկանի Գահիրէի երիտասարդութեան: Մօտաւորապէս տարի մը առաջ Պ. Պ. Յ. Չօպանեան և Ս. Նաճարեան, քսանի չափ պատանիներ շուրջերնին հաւաքած, սկսան մարզանք ընել տալ, բայց որոշ ընկերակցութիւն մը չէին կազմեր. դիմեցին կամքի և կորովի տէր երիտասարդի մը, — Պ. Լ. Բիրազ-




Գահիրէի Հայ «Պոյ-Սքառութի»ները

եանին՝ որ գործի սկսաւ, և ամիսներու շարաշար տքնութենէ յետոյ, կազմուեցաւ Գահիրէի Հայ Հետազօտիչներու ընկերակցութիւնը, որ այսօր 60ի չափ անդամ ունի. — Վարչական ժողովը կը կազմեն՝ Տօքթ. Սերովբեան (Ատենապետ), Փրօֆ. Գայեան և Մէթր Զօհրապ (փոխ-Ատենապետք), Տեարք՝ Գ. Միհանօֆ (Գանձապետ), Լ. Բիրազեան (Ատենադպիր), Մ. Ղազարոսեան (Առաջնորդարանի Ներկայացուցիչ): Անդամներ՝ Տօքթ. Շամլեան, Տօքթ. Տէմիրճեան, Մ. Բուտեան, Ե. Օգոստինոսեան, Յ. Սիմօնեան:

ՀԱՅ ՀԵՏԱԶՕՏԻՉՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ. — Վանի գրաւման առթիւ սարքուած հանդէսին՝ հայ զէնքերու այս առաջին յաղթանակը յաւերժացնելու համար, առաջարկեցի Կարգադիր Մասնախումբին և Քաղաքական ժողովին՝ որ Պոյ-Սքառութիներու ընկերակցութիւն մը

կազմակերպենք Աղեքսանդրիոյ մէջ, որ կերպով մը պիտի ամբողջացնէր «Կամք»ի սկսած փրկարար դերը՝ մարմնոյ կրթանքին հետ՝ պատանեկութեան տարիքը հասած տղոց մտքի և սրտի զարգացումն ալ միասին յառաջ տանելով: Առաջարկս սիրով ընդունուեցաւ և այս առթիւ հանգանա-




Անսօֆ Յալեփեան, եգիպտահ «Մարսոս»ի champion-ը

կութիւն մը եղաւ հանդէսին օրը, որուն վրայ Տիար Յովհաննէս Մութաֆօֆ իր կողմէ 10 ոսկի աւելցուց: Քաղաքական ժողովը կարգ մը երիտասարդներու դիմում ըրաւ ընկերակցութիւնը կազմակերպելու, որոնց մէկ մասը առաջին վարկեանէն իրենց զբաղմանց պատճառաւ չուզեցին ստանձնել, և ուրիշներ որ ընդունելէ յետոյ՝ հրաժարեցան: Վարչական ժողովի կազմութեան այս խնդիրը քանի մը ամիսներ անցնել տալէ յետոյ, Վարչութիւնը վերջնականապէս կազմուեցաւ հետեւեալ կերպով. — Միհրան Թեյեան (Ատենապետ), Բարսեղ Օհանեան (Փոխ-Ատենապետ), Միլքի

Գրըճեան (Ատենադպիր), Վահրամ Աբրահամեան (Գանձապետ), Կարապետ Աշըգեան, Լեւոն Ազնաւորեան, Ստեփան Խանճեան (Մարզիչ Գնդապետ), Աղեքսանդրիոյ Հայ Հետազօտիչները՝ Գահրէի իրենց եղբայրներուն դժուարութեանց չի հանդիպեցան. պատրաստ հող մը կար. «Կամք»էն ութը երիտասարդներ, իրենց ուսուցիչին ղեկավարութեամբ, մարզիչի գիրը ստանձնեցին և այսպէսով կազմեցին Պօյ-Սքաութներու Սպայակոյտը: «Կամք»ի կրտսերներէն 60 պատանի երկու օրուան մէջ Պօյ-Սքաութ արձանագրուեցան: Վարչութիւնը կրցաւ՝ շատ նեղ պարագաներու տակ՝ ամենքն ալ հագուեցնել, և հիմա մեր փոքրիկ Հայ Հետազօտիչները կը մարզուին, սպասելով մօտաւոր ապագայի մը մէջ հայ զինուորին ըլլալու, և Հայաստանին ծառայելու, որուն համար կը փքնին ամէն անոնք որ, հոս թէ Գահրէ, պատասխանատուութիւնն ստանձնած են Հայ Հետազօտիչներու, «Արարատ»ի և «Կամք»ի, և որոնց համար շատ աւելի հոգածու գտնուելու էին եփպտահայերը, նամանաւանդ Գահրէի մեր ազգայինները:

ԲԱՐՍԵՂ ՈՂԱՆԵԱՆ

 Մի՛ մոռնար, նոր Տարւոյ առթիւ, «ԵԳԻՊՏՍԱԶՆՅ ՏԱՐԵՑՈՅՑ» մը նուիրել Բօր-Սայիսի Հայ «Քեմք»ի ղեկերցաւեր երիտասարդութեան:

“COMET PHOTO STUDIOS,,

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՃՈՎ

ՎԱՅՐԿԵԱՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՍՏԳԻԻՏ ՋԱՇԱԿ

«Քօմէթ» Լուսանկարչատան յաջողութիւնը նուիրագործուած է Ամերիկայի Միացեալ-Նահանգաց մէջ, իսկ եզրկատոս իր մուտքը յեղափոխութիւն մը եղաւ լուսանկարչական հրապարակին վրայ:

Դիմել՝ ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ, Հին Պօրսայի փողոցը, իսկ ԳԱՀԻՐԷ՝ Օբերայի Հրապարակը, Զօկէպ կալուածին տակ:

ԿԱՐՍԵՐ ԾՆՈՒՆԵՂ

Ծնունդ է այսօր, ո՛վ հեզնութիւն.
Շարան արան սեւ դագաղներ սիրելեաց
Մեր առջեւէն կ'անցնին անվերջ բափօրով:
Եւ Ծնունդ է: Ասուած իմ:

Ծնունդ էր օր մը, դարեր առաջ,
Ապարաններ չեղան քեզի հիւրընկալ,
Հոն հե՛ք մարդիկ չզգացին մօրդ սուրբ երկունքն հրաշափառ:
Եւ չի ճանչցան Ծնունդը:

Անանուններ եղան, բայց բարի,
Գեթ քեզ իրենց մաւրիքն մեկ փորքր անկիւն
Շընորհելով որ ծնունդիդ մեծ դէպքն ու սօն կասարուի,
Խաղաղութիւն . . . ի մաւր:

Խանձարուրիդ համար եւ այն օր,
Բոլոր արեւն անոք, բամպակ ու քան,
Ոչխարներն իրենց բուրդ եւ բոշունները փետուր
Ունեին քեզ սօնելու:

Այսօր մըսուրի սեղ ափսոսած
Խրամներ կան, արիւնով լի «քրանեք»ներ,
Եւ մարդակերպ եակներ՝ քեզ ռումբերով գրկելու,
Եղբայր անուն . . . գազաններ:

Ո՛չ, չի կան շուր, խանձարուրիդ
Շղարօներէն բոլոր, ներմակ ու մախուր,
Կսաներէն ամբողջ վիրակապեր են պատրաստուած
Վեքեր, վեքեր փաթեղու:

Եւ մայրդ Կարմիր խաչին ուխտաւոր,
Արիւն ձեռքով խաչ մը կնքեց քու ճակատիդ,
Եւ սուրբ մարմինդ պատանեց, վիրակապի կսառով,
Շփոթելով քե մահուանդ քե ծնունդիդ է սարեղարձ:

Գահրէ, 1915, Դեկտ. 28

ԱԿԻԼԻՆԵ

ԹԱՆԹԱՅԻ ՆԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Գահիրէ-Լեղեքսանդրիա կէս ճամբուն վրայ՝ Թանթայի մեր փոքրիկ կտրիճ գաղութն ալ իր հանրային տենդոտ գործունէութիւնն ունեցաւ վերջացող տարուան ընթացքին։

Լսարան-Ընթերցատունը, որ առանցքը կոչուած էր կազմել Թանթայի հայ կեանքին, տազնապի շրջան մը բուրբեց, և իր անցեալը որքան յոյսերով ժպտուն, իր ապագան անտուգութեամբ խոժոռ կը թուի այս վայրկեանիս։

Թանթացին, սակայն, անտարբեր չի մնաց, ազգային գերագոյն ճգնաժամին անազանգերուն ու աղերսներուն։ Իր համեստ միջոցներուն ներսը չափով իր սրտագին բաժինը բերաւ երկպառհոյ հայրենանուէր զօհոգութիւններուն։

Հայ փախտականները, հայ կամաւորները, հայ առապողներն իրենց կարեկցող եղբայրական հոգիներ հաշուեցին Թանթայի մէջ։

Սպասաշունչ խումբ մը երիտասարդներ քաղաքացիական պարտականութիւններու պատնէշին շուրջը սեղմեցին իրենց շարքը։ Հայուհիներ դուրս եկան եսական բարօրութեան կղզիացեալ վիճակէն, և հասարակական իրովը շահագրգռուեցան։ Մասնաւորապէս, Ա. Գ. Գարագաշեան Բայրերն ու շարքաւ հանդիսացան ի նպատակ Հայ Կարմիր-Խաչին իրենց անձնուէր ջանքերովն ու հետապնդումներովը։

Թանթացին «մեծագործութիւն»ներ չունի, անշուշտ, ցուցադրելիք։ Հարիւր-հարիւր յիսուն հոգինոց աշխատաւոր գաղութ մը, որ կենսապայքարի տաժանքներուն քամակ կուտայ, սխրալի ժէսթեր չէր կրնար ընել։ Թանթան չունի Շարքիէի փարթամ հայ տուները։ Ազատ ստպարէզի հետեւող մէկ քանիններ, — արուեստագէտ-լուսանկարիչ մը՝ Տիար Մելիք Մէչէճեան, ղեկագործ մը՝ Տիար Լեւոն Սարաֆեան, ճարտարագէտ մը՝ Տիար Գէորգ Տիւրքիեան, որ այս տարի բացակայ էր, Տարտանէլի խրամատներուն մէջ մեծ պայքարին նուիրուիլ գացած ըլլալով, և որ՝ ցաւով կը լսենք թէ՛ հիւանդանոց փոխադրուած է երկու ամիսէ ի վեր։ Մէկ քանի բարեկեցիկ խանութպաններ։ Մնացեալները մեծ մասամբ կը պատկանին տեղւոյն Մաթոսեան Ծապրիբախի բանւորութեան, բացի հետեւեալներէն որ այդ կարեւոր հաստատութեան պաշտօնէութիւնը կը կազմեն. — Տեարք՝ Կարապետ Էտիքիսեան (Տնօրէն), Յովսէփ Վայնաչարեան (Երկրորդ Տնօրէն), Ալպէր Մաթոսեան (Առաջին Հաշուակալ), Տ. Միթիբարեան (Արկղակալ)։

Հայ Կարմիր-Խաչը

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՕԲԵՐԱՅԻՆ ՄԷՋ

Գահիրէի Սուլթանական Օբերան, Դեկտեմբեր 18ի շաբաթ գիշեր, Հայ Կարմիր-Խաչին, ի՞նչ կ'ըսեմ իմ շուշուած Հայութեան, միջազգային փառաւորութիւն հանդիսավայրն եղաւ։

Հայ Կարմիր Խաչը, իբրեւ գերազանց արտայայտիչ Հայ Պայքարին ու Հայ Տառապնքին, իբրեւ համադրական ու խորհրդակիր պատկեր Հայ Գաղափարապաշտ Զոհոգութեան, այդ իրիկուն, զիս Օբերայի Թատրոնը կը քաշէր՝ ցեղիս վերցուցած հոկայական խաչին յարգանքը, գէթ գիտակցութիւնն երթալ փնտռելու օտար հոգիներու այդ մեծափարթամ ժամադրավայրին մէջ։

Յուսախաբութիւն մը չէր սպասեր հոն ինձի։ Ընդհակառակը, Օբերայի սրահը՝ ամէն նախատեսութիւն գլոցանցնող փաստերով կը համոզէր զիս՝ թէ Հայուն ընծայուած «Փոքրիկ Դաշնակցի» տիտղոսն ունայն բառ մը չէր։ Եկեր էին ամէն անոնք որոնց ներկայութիւնը կը յանգէր այս սրտապնդող տպաւորութեան, զայն կը շեշտէր, կ'ամրապնդէր, համոզումի մը պէս կը հաստատէր ներսի դիզ։ Եկեր էին այս երկրին ամենաբարձր իշխանաւորներն ու աստիճանաւորները, բոլոր պաշտօնականութիւնները, բոլոր հմայքները... Երեկոյթին վերին հովանաւորութիւնը, սրտագին հոգածութեան ու մտերիմ շահագրգռութեան ժպիտով մը, կը մարմնանար յանձին Զօրավար ձօն Կրէնֆէլ Մաքսուէլի, որ իր ազնուամտայլ Տիկնոջ, Լէտի Մաքսուէլի հետ, Մեծն-Բրիտանիոյ փոթորկոտ ու հերոսական հոգիէն եղբայրական շունչ մը կը բերէր այս հանդէսին, մաքառող տիտանին սխրալի բարեւը՝ իր հեռաւոր պզտիկ այլ անձնուրաց զինակցին... Իշխանական օթեակներէն՝ Բրէնս Ահմէտ Ֆուատ փաշա, համակիր ու շարքութեամբ մը, կը հետեւէր յայտադրին հայկական թիւերուն, զոր Նախարարապետ Հիւսէյն Բիւշտի փաշա, այնքան անվերապահ ոգեւորութեամբ, կը ծափահարէր, մինչ Ն. Բ. Սուլթանին կողմէ իբրեւ ներկա-

յացուցիչ՝ արարողապետ Մանուկ Սահիտ պէյ Վահպա, Վեհապետին նուէրը ներփակող պահարանին հետ, անոր օգոստոսփառ ողջոյնները կը հաղորդէր Հայ Կարմիր-Պաշի Վարիչ Մարմնոյ Ատենապետին... Հո՛ն էին դեռ ուրիշ նախարարներ, Մայրաքաղաքիս ամբողջ միջազգային դիւանագիտական մարմինն ու եւրոպական գաղութներու երեւելիները, կարելի է՝ առանց չափազանցութեան՝ ըսել թէ եգիպտահայ տարեգրութիւններուն մէջ նախնեաց չունեցող պիւճութեամբ սրահ մըն էր սրուն առջեւ Հայ Կարմիր-Պաշը, 1915 Դեկտեմբեր 18 յաւէտ յիշատակելի գիշերը, պանծացուցած եղաւ Հայուն ազատախնդիր մաքառումը:

Ճոխ, թերեւս չափազանց ճոխ յայտագրին առաջին մասը գործադրուեցաւ, առանց հապճեպի, եւ փոխն ի փոխ իրենց տաղանդն արժեցուցին՝ ջութակահար է. Իզաիա, դաշնակահար Ո. Վալէնթինօ, սիրող-թաւջութակահար Յ. Սինանեան, Օր. Ն. Շաղոյան, սօքրանօի իր վճիտ ու սիրուն ձայնով, Օր. Գրօս, Պ. Ե. Օգոստինոսեան ևն.:

Միջնարարի դադարն էր հիմա: Սրահին ոգեւորութիւնն իր լրիւ թափին մէջն էր: Հայ Կարմիր-Պաշի բազմաթիւ անձուէր տիկիներն և օրիորդներ, հիւանդապահուհի իրենց սպիտակ ու կարմիր-խաչակիր համազգեստով, հաճելի ու սրտազրաւ կէտկիտում մը կը դնէին հո՞ծ բազմութեան մէջ, վիրաւոր ձերմակ աղանիներու պէս թռչտելով, ամենուրեք շտապելով, ամենուն ծաղկեփունջ մը կամ Հայ Կարմիր-Պաշի խորհրդապատկեր-բարբ-բօսքալը վաճառելով:

Պեճեռաւի օթեակէ մը, անձկոտ բարութեան ու սեւեռուն քաղցրութեան զոյգ մը սեւ զմայլելի աչքեր, երկու քօմբլիմանի կամ աշխարհիկ ողջագուրման մէջտեղ, կը յառէին, կը մուրթէին, մտահոգ, դէպի վարագուրուած բեմը: Ճիկին նէկիպ փաշա Պութրօս Ղալին էր, որ շաբաթներէ ի վեր այնքան յոգնեցաւ, այնքան հնհնաց յայտագրին հայկական բաժնին խնամոտ պատրաստութեանը համար, և որ երկոյթին այս յաջողութեան մէջ այնքան թանկագին դեր մը ունեցաւ: Ազնիւ Հայուհին անձկայրեաց էր հայ գեղեցկութիւնը յաղթական տեսնելու Օրբերայի բեմին վրայ, օտարներուն, դժուարահաճ, հմայաթափ ու սկեպտիկ օտարներուն առջեւ... Սիրտ մի՛ հատցնէք, Տիկի՛ն, ամէն բան կարգին է, ու քիչ մը վերջը երանութեան ժպիտներ պիտի

երգեն ձեր աղու եւ աղեխարչ աչքերը... Բայց ժամը բաւական յառաջացած է, արդէն 11, եւ դեռ յայտագրին ամբողջ երկրորդ մասը կայ գործադրուելիք:— Գուլիսներուն



Հայ Կարմիր-Պաշի երգեա պատրաստութիւնը Օրբերայի բեմին վրայ

մէջ վերջին պահուն տրուած կտրուկ որոշում մը կացութիւնը կը փրկէ. Տիար Արշակ Ֆէրմանեան, փափկանկատօրէն, արտօնութիւն կը խնդրէ ներկայ Բրէնսէն յայտագրին եր-

կրորդ մասին կարգը յեղաշրջելու: Հաւանութիւնը, հրամանի մը համարժէք, կը կանխէ բեմական դիւրազգածութիւնները: Հայկական Պարերն ու կենդանի Պատկերը պիտի չի գոհուին...

Անգլիական զինուորական պէնսի մը կողմէ՝ որ իր բարեհաճ մասնակցութիւնը բերած է հայկական այս երեկոյթին, Դաշնակիցներու ազգային օրհներգները կը նուագուին, ինչպէս նաեւ սուլթանական քայլերգը: Ամբողջ հասարակութիւնը յոտնկայս մտիկ կ'ընէ այս մարտական երաժշտութեան և զայն ծափերով կը ծածկէ:

Հայուն երգը միայն չի գար, դաշնակից բազմերգներու շարքին:

Չի՞ գար... Ո՞վ ըսաւ, միթէ երգերուն ամենէն վսեմը չէ՞ լուծութիւնը այն եղերական պատկերին որ ահա՛ կը պարզուի Օբէրայի բեմէն, — աւերակոյտի մը վրայ նստած Մայր Հայաստանին... Սարսուռ մը կ'անցնի սրահէն. բոլոր ժպիտները կը սառնին, բոլոր շունչերը կը բռնուին... Աչքերս չեմ ուզեր բաժնել հիանալի պատկերէն, բայց պէտք ալ կը զգամ չորսդիս նայելու, օտար աչքեր խուզարկելու... «C'est l'Arménie!»... Հայաստանն է» մրմունջը կը շրջի շրթունքէ շրթունք... Հայաստանն է, այո՛, և ի՞նչ տեսլականօրէն ոգեկոչուած Հայաստան մը, բողբոջի ու տրտմութեան ի՞նչ հրաշալի նայուածքով մը, որ կ'ուղղուի, կը մխուրտ մարդկային քաղաքակրթութեան հեռաւոր հորիզոններուն... Ո՞ր հայ բանաստեղծն երջանիկ պետի չի մեռնէր, եթէ այդ նայուածքն արժող քերթուած մը գրած ըլլար... Օր. Նեկտար Նշանեան, — այս անունը կրնանք այլեւս մոռնալ, — Դեկտեմբեր 18ի երեկոյթին հոյակապ թիւն եղաւ, անկասկած: Երեք անգամ վարագոյրը բացուեցաւ իր վրայ, և շքանորհալի հայ պարմանուհին, իր սխրալի կեցուածքին ու զգայացունց նայուածքին մէջ արձանացած, միշտ աւելի խորունկցուց, գրեթէ անջնջելի գարձաց, իր մարմնացուցած տուամին տպաւորութիւնը բոլոր ներկաներուն վրայ որոնք իրենց սքանչացումը պսոթկացին բուռն ծափահարութիւններով: Այս կենդանի պատկերին տեղանքը յարգարման մէջ բեմական նկարիչ Պ. Սքարսէլլիի տաղանդն անգամ մը եւս կ'ապացուցուէր:

Կարգը Հայկական Պարերունն էր: Օբերայի բեմը հայ

գեղջկական տօնասրահի մը կը վերածուէր, ուր Տիար Գէորգ Իսրէնեանի կողմէ այնքան նկարագեղ, իսկատիպ ու ճոխ կերպով տարազաւորուած պատուական երիտասարդներու և երիտասարդուհիներու խումբ մը իր քայլերուն ներդաշնակ կշռոյթը կը բերէր՝ Տիար Գարեգին Փափազեանի ճարտար ղեկավարութեան տակ, մինչ Բուլխաներէն Գալուստեանի հին ու նոր աշակերտուհիներ կ'երգէին: Երկու գլխաւոր պարուհիներ՝ Օրք. Լիւսի Ագաչեան և Նուարդ Պէօրէկեան հայկական բնիկ շնորհն արժեցուցին իրենց վայելուչ, գողտրիկ ու ճապուկ շարժումներովը: Իսմայիլ փաշայի օրէն ի վեր իր տեսած պալէներով համբաւաւոր այդ բեմին վրայ, մեր հայրենի պարերը պատուաբեր յաջողութիւն մը եղան՝ մեզի համար, իսկ վերին աստիճան հաճելի անակնկալ մը՝ օտարազգի ներկաներուն: Տիար Գ. Փափազեան կովկասեան Լեզկիկնկայով մը փակեց պարերուն շարքը:

Յայտագրին մնացած մասին մէջ փայլեցան՝ Տիկին Է. Սիմօնեան և Օր. Բագպիէրս:

Կէս գիշերը գրեթէ մէկ ժամ անցած էր արդէն, երբ Պ. Ե. Օգոստինոսեան, կարծես քանի մը ժամուան այս կազմուրիչ ինքնամոռացումէն մեզի, հայ հանդիսականներս, սթափեցնելու և հայ ահաւոր իրականութեան վերագարձնելու համար, կը սկսէր երգել.

«Կո՛ւ՛նկ, ուսի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
«Կո՛ւ՛նկ, մե՛ր աւխարհէն խապրիկ մը չունի՞ս...»:
Ա՛հ, այդ «մեր աշխարհը»...:



«Կովկաս» Գեղարուեստ. Միւսուբեան կողմէ Բեհնարանիա Թասրոնիկն մէջ ի նպաստ Հայ Կամաւուրներուն սարքուած՝ Ահարոնեանի «Արցուն

քի Հովիտ»ին ներկայացման մէջ այս փոքրիկը, որ բեմական մեծ ապագայ կը խոստանայ, զմայլելիօրէն կասարեց Շողիկի դերը:

ՓՈՔՐԻԿՆ ՍՐԲՈՒՇԻ ՓԱՓԱՋԵԱՆ

Ա Ր Ա Ր Ա Տ Ի Ն

Դուք, որ կը բարձրանաս իմ նախահայրերուս ազօթքին պէս վճիտ ու վսեմ, շուշանագեղ ծոցերուդ մէջ ծրարելով ողջակիզուող Ազգիս խունկն ու կնգրուկը, ալեւոր ուսերուդ վրայ կրելով անոր յամառ յոյսին բիւրեղներն ու հաւատքին սպիտակութիւնները, բարձրացի՛ր, շեշտուէ՛ մագլցէ՛, մինչեւ ապարանքը Անոր՝ որ արդարութիւն կը կերտէ ու շանթեր կը դարբնէ:

Դուք, որ իմ Հայրենիքիս վերաւոր լանջքին պէս դարերէ ի վեր կ'ուռիս, և, սփինքսօրէն լուռ, ալքերուդ մէջ ցեղին սրբազան հուրքը կ'արծարծես, յոյսը կ'արգասաւորես ու վրէժը կը հասունցնես, բարէ՛, այսօր ալ տակաւին կը մորմօքիս, կը հրաբղխիս, քրդեկորոյս մայրերու կուրծքին նման, սրտակեղեք կոտտանքիդ արձագանքը զրկելով բնաշխարհիդ կոպարներէն ալ անդին:

Դուք, հինաւուրց Սուրբի մը պէս անքթիթ, անխոնջ հակեցիր Հայաստանի ճակատագրին վրայ: Երջանկութեան ու փառքի շրջաններ, Նաւասարդի առտուան պողպաջուն շողքերուն պէս, վեհափառ ճակատդ օձեցին. թագուհիի մը հանգոյն պերճաշուք, բեւեռի աստղին նման անյողգողդ, ու Աստուծոյ սիրտին պէս բարի եղար դուն, ո՛վ անսպառ շտեմարան սիրոյ, կեանքի ու շնորհքի:

Դուք, աւերակներու ոգիին պէս ինքնամփոփ, թեւերուդ կառչած մոխիրին տակ շնչահեղձ, կուրծքդ բլքտող աղէտքէն խելայեղ՝ քանի՛ քանի՛ անգամներ սգաւոր գլուխդ մխրճեցիր ամպերուն մէջ, կապոյտին պողոտաներէն անձկօրէն սպասելու գալուստը Փրկութեան, որ կը յապաղէր, և որուն սոսնձայնը երկիւղածօրէն շարունակեցիր լսել անգութ հեռաստաններէն:

Դուք, գեհնական կոշկոճանքին մէջ ցնորած, յուսթի կուրծքերէդ մինչեւ դրախտներուդ զմրուխտները թաւալող արիւնի ճապաղիքէն խենթեցած՝ քանի՞, արդեօք քանի՞ անգամներ փորձեցիր արմատալիք ըլլալ ու փախչիլ, փախ-

չի՛լ առանց ետիդ նայելու, փախչի՛լ գնդակահար առիւծի մը պէս, ծովերու խորքին տակ թաղելու գոյութիւնդ լափլիզող վէրքին հրայրքը, և քնանալու խոնաւ յաւիտենականութիւնը:

Բայց ո՛չ. հոգ ես տակաւին. Եհովայի մը կամքին պէս շեշտ, անսասան, մայրական սիրոյ նման խորունկ ու բարձր, միշտ հաւատաւոր, աւելի յուսալից, աւելի վսեմ քան երբէք, ո՛վ իմ գեղեցկօրէն տարաբաղդ ցեղիս բիւրեղացած ոգին, ո՛վ հայ կեանքին յաւերժական բերդն ու առանցքը, ուսկից բղխած շառաւիղներ — ողբեակներդ — առանձնաշնորհուած են՝ իրենց երազներուն ու հոգեվարքին մէջ իսկ շուրջդ յածելու և անունդ յիշելով մեռնելու:

Ու ալեւոր գլուխդ կը բարձրացնես տակաւին, վե՛ր, միշտ աւելի վեր, կաթոգին ու անձկալից աչքերով դիտելու համար կարաւանները հայրենադրկուած սգաւոր զաւկըններուդ, ամպերուն շուքը և հովերուն շունչը աղերսելու անոնց տօթակէզ ճակատներուն և աստղերուն գուրգուրանքին ու աւազներուն բարութեանը յանձնելու անոնց խնկելի ոսկորները, եթերին մէջէն «խաղաղութիւն ամենեցուն» մրմնջելով, և յարութեան սարսուռներ պատգամելով մինչեւ գերեզման անապատները:

Եւ ո՛ւսկից կուգայ քեզի այդ ականակիտ հաւատքը. ո՛վ տուաւ քեզի այդ մարգարէական պատգամը, ո՛վ ըսաւ քեզի որ դեռ պիտի ապրի՛ս, ու պիտի անշո՛ւշտ լսես Արդարութեան գոռ ձայնը, պիտի անշո՛ւշտ տեսնես դահիճներուն շանթահարումը, պիտի անշո՛ւշտ խայտաս ամպարագիծ Եղեռնին սատակումին վրայ, պիտի անշո՛ւշտ վերստին հըրձուիս ու գինոյլաս՝ կեանքերուն, սէրերուն ու քաղցրութիւններուն հրաշափառ յարութեանը վրայ:

Ո՛վ իմ ցեղիս աշտանակուած կամքը, որ բռունցքի պէս կը ցցուիս, ու կը ձգտիս փայլակներուն շտեմարաններէն կորզել փոթորիկներ ու կայծակներ, որ մշանջենական ուժերուդ յենած՝ կը պատրաստուիս խուճապի մասնել ճակատագիրը, զգետնել ձիւաղային հաշիւներն ու խարդաւանանքը, հաւատքիդ սարսուռները պտտցուր, սիրոյ հրդեհներ բռնկցուր մեր ամայի սիրտերուն մէջ, ու լուսաւորէ մեր սգաւոր ուղին, ո՛վ երկնածրար փարոս հայ կեանքի ալէտանջ ովկէսնին:

— «եկայի, որդեակի իմ, ձեր մօրն այցելութեան . . . »
 Բարի հեռատաններէն վերջապէս կը հասնի, կը ծաւալի
 մեղեդին, տաճարներու խունկին քաղցրութեամբ ու մայ-
 րական ձայնին թաւալային քնքշութեամբ. հովերն ու շողերը
 թեւ թեւի՝ փայլակօրէն կը հծծեն աւետիսը հայ օճախի
 վշտահար մոխրակոյտին, հայ կեանքի վայրավատին խլեակ-
 ներուն, և անապատներու կուծքին վրայ փռուած հայ սու-
 կօրներու գոհար մանեակին :

Կեանքի մրրիկը կ'արշաւէ ոսկորէ ոսկոր, սիրտէ ի սիրտ,
 արեւելքէն արեւմուտք. աշխարհի չորս ծագերէն, շարան
 շարան, հեւ ի հեւ, կը շտապեն որդիքդ, կարօտով ու բալա-
 սանով բեռնաւորուած. կեանքը կը վերընծիւղի. լուսթիւնը
 համերգ կը դառնայ, սուգը՝ փառք. հաւատքը կը յաղթա-
 նակէ. մոխրակոյտներ կը ժպտին. և դուն, ցեղիս սրտին
 պէս, կ'ուռիս, կը հրճուիս, ու կուսական ձիւներէդ բերկ-
 րանքի ջրվէժներ կուլաս, օրհնելով յիշատակը անմահ նա-
 հատակներուդ :

Վտարուած երջանկութիւնդ կը վերագառնայ քեզի,
 առաթուր եղած փառքդ՝ կորիւններուդ արիւնովը լուսց-
 ուած՝ արքայական քղամիգի պէս կը փռուի՝ նոր կորով
 զգեցած թիկունքիդ վրայ. գեղեցկութիւնը կը պճնէ կուրծ-
 քդ, և շնորհքը կեանքի հրապօյրներ կը բուսցնէ քղանց-
 քիդ վրայ. ու դուն՝ Արարիչին ձեռքէն նոր ելած հրեշ-
 տակի մը պէս՝ վերածնած գրախտավայրին վրայ անսահման
 աղապատանքով մը պիտի հսկես յաւիտեանս յաւիտենից :

Յ. Թ. ԳՍՅԱՆՆ



EMPIRE CINEMA

ԳՍՀԻՐԷԻ ԱՄԵՆԱՇԻՔԻ ՍԻՆԵՄԱՆ
 ՇԱՐՍ. ԷՄՍՏ ԵՎ ՏԻՆ

Միակը՝ որուն սեփականատերը, Պ. ՎԻԹԱՆԻՍՆՕ ԹԻՉՉԻ,
 Հայաստան Իսպաղի մը, այնքան վեհանձն ու ինքնաբեր ժես-
 քով մը, ի նպաստ Հայ Կամաւորներուն սինեմայի երեկոյք մը
 տուաւ :

Տ Ե Ր Ո Ւ Ն Ի



† ՍՈՓՈՆ ՊԵՋԻՐՃԵԱՆ

Հեռաւոր փոքրիկին մեջէն
 — Լօսիօնէն — իր յաւիտեան-
 կան մեկնումին լուրը հասաւ :
 Սոփոն Պեզիրճեան ոչ եւս է :
 Ծերունի հայ արուեստագե-
 տին «գիմասուներ»ը «ճգիպ-
 սահայ Տարեցոյց»ի Ա. Հասո-
 րին մեջ իր արժանաւոր տղր
 գրուեց երբ Պեզիրճեան մեր
 որմերուն մեջ կը գտնուէր սա-
 կաւին : Բայց իր սիրուն
 պատկերը կը կրկնենք հոս, իր
 յիշատակին ուղղելով խան-
 դաղասագին յարգանքի ող-
 ջուն մը, եւ իրենցերուն՝ Տեր
 եւ Տիկ. Տօքթ. Սունեան պե-
 յին, յայտնելով մեր համակիր
 վեսակցութիւնները :

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Չ Մ Ե Ռ Ը

Գիշերին մեջ կը տեղայ ձիւնն անդադար,
 Ու ցուրտ քամին կ'անցի լալով միայնակ,
 Մոխրակոյտեր կը ծածկէ քոչն ըսպիտակ,
 Հոն ծրխաններն իմ հայրենի չեն մըխար :
 Ու կեանքն, աւա՛ղ, խոյս տըւած է, չի խայտար,
 Վերը լուսինն է տըխրագէմ, սրգաւոր,
 Վրկան անլուր օճիրներու բիւրաւոր,
 Հոն թօնիրներն իմ հայրենի չեն ծըխար :
 Դըրախտ մին էր, ունէր անուշ գեղ, հրապօյր,
 Կեանք բուրեղին սար, ձոր, դաշտեր ու մարգեր,
 Արդ սառնասոյր ամայութեան է պատկեր,
 Զի երգիքներն իմ հայրենի են թափուր :
 Համայնաջինջ ձրմեւը ետ է դարձեր.
 Հայ աշխարհն է ցուրտ պատանքի մեջ դըրուած,
 Մեռելական լըուսթիւնն է հոն տիրած,
 Զի ա՛լ երգերն իմ հայրենի են լուրեր :
 Սառնամանիք ծածկեն վանքեր ու խաչեր
 Մըթնուրբտով մեղեռնաբոյր ու ճընշող,
 Սըրգատեսիլ պատկերի մեջ լըուսբող,
 Ա՛լ կոչնակներն իմ հայրենի չեն հընչեր :
 — Բայց մահաբոյր ձրմուէն վերջ, Հայրենի՛ք,
 Պիտի հագնիս նորէն արեւ ու ծաղի՛կ . . . :
 Արեւմտեաներէս ՄԱՂԻԿ ԶԷՐԻՏԵԱՆ



ԱՐԻՒՆԱՆԵՐԿ ԴԱՇՏԵՐՈՒՆ՝ ԱԻԵՏԻՄ...

Անոնց՝ որոնք իրենց արժին մեջ կը զգան մարտնչուող հայ մանուկներուն կամ մայրերուն հոնդիւնը, բռնաբարուող կոյսերուն արիւն-արցունքը, ծեփերուն սապարանար կոտորուող ոսկրներու ձայնը, անապասներու նախքուն վրայ ինկած սովամահներուն յետին գալարումները, եւ փլուզումը հայ սանարներուն:

Անոնց՝ որոնք կը զգան այս բոլորը, ու արիւնոս աչքերով կը փնտռեն, ամենէն փոքրեկալից ու խաւար գիւղերին մեջ, մխիթարութեան միակ ու գերագոյն նշույլը՝ բոսորատու աւսղը, արիւնալից այդ աչքը վրեժին, ասուածային ամենաարդար վրեժին:

Եղբերական դաշտերու դաշտն ես դուն հիմա, Հայաստան:

Գաշտն արտասուողոց ու արիւնաներկ, զոր երկինքն ի զուր պիտի ջանայ իր աշնանային անձրեւներովը լուալ ու սրբել, եւ ներողամիտ աստուածներու կողմէ զրկուած մառացուծեան հովեր՝ պիտի ընդունայն տքնին խեղդել արծազանդը անհամար զոհերուդ անմեղ արիւնի բողբոջարկու ձայնին:

Աւերաքանդ հիւղակներէդ կը բարձրանայ կիսափուլ գանգակատունը այս կամ այն գիւղիդ մատուռին՝ որուն խորտակուած դռնէն կը լսուին պոչիւնն ու բառաչիւնը արջառներու:

Աստուած... Աստուած...

Մեր հոգիները կը սասանին...

Նե՛րսը, տեսէ՛ք, ներսը, աւագ խորանին տեղ, մսո՛ւր մը, ապշահար նախիբէ շրջապատուած:

Ու մենք՝ գլխաբաց ներս կը մտնենք և ընկրկելով՝ մեր ճակատը կը բարձրացնենք կիսաքանդ ձեղունին կամ զբմբէթին, որուն մէջ բացուած խրամատէն կը տեսնենք դաժան ամպերու կարաւնի մը անցնիլը, սրընթաց ու սպառնական:

Կը նայինք մեր չորս դին: Կը նայինք խուզարկու և վշտայեղձ նայուածքներով եկեղեցիներուդ մերկ պատերուն: —Ո՛չ մէկ սուրբի պատկեր, ո՛չ մէկ նշխար նուիրական:

— Ինչո՞ւ բոլորտիքդ կը նայիս ու կը հեծես, ո՞վ իմ հոգիս: Արտասուալիք աչքդ մսուրին խորը իջեցուր ու տես յարդերու մէջէն արտափայլող դէմքը, փայլակնացայտ դէմքը

աննման տառապանքներու ծնունդ նոր ֆրիստոյին, որ սիրոյ ու հաշտութեան տեղ ատելութիւն ու ս՛խ պիտի քարոզէ քու թշնամիներուդ դէմ աղծապիղծ, մարդախոշո՞շ, ու քու ցեղիդ բազուկները պիտի զինէ սասակիչ զէնքերովը ամենէն սոսկաօտարափ վրէժին:

Եւ հիմա, աւետի՛ս ձեզի, Հայաստանի արիւնաներկ գաշտեր, ու ձեզի՛ հայ նահատակներու բողբոջարկու ձորեր: Աւետի՛ս ձեզի: Անաւասիկ արդար հատուցումի փառանկ պատողը որ կը փայլի ձեր վրայ, և որուն՝ կատաղի խնդուծեամբ լի աչքերնին սեւեռած՝ հեռուներէն, աշխարհի չորս ծագերէն, գան հասնին պիտի... մոգերը:

Հայ մոգերը սեւագգեստ, անկրատեսիլ, սրոնք պիտի հետեւին՝ դաժան ամպերու կարաւանէն աւելի սրընթաց ու սպառնական՝ փայլակնագէ՛մ, վրիժաքարո՞ց ֆրիստոյին...:

ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ

Քու աչքդ գարնան երկինքին պէս վճիտ է, ո՞վ Անկեղծութիւն:

Նայուածքներուդ պայծառալինջ ուղիսին մէջ, հոգիիդ մտածմունքները կը շողան, ինչպէս աստղերը՝ Աստուծոյ այդ խորհուրդները փոփոխուեն՝ կը շողան խորը կապուտին:

Մերկ ես դուն, ու քու մերկութիւնդ իսկ է զմայլելի գեղեցկութեանդ փա՛ռքը յաւերժական: Ի՛նչ փայթ եթէ տկար ու նենգամիտ հոգիներ ատիկա քեզի այպանեն: Դուն լուսնին պէս կ'ընես, ամպագերծ լուսնին՝ որ կը փայլի լուսողոց իր մաքրութեանը մէջ, ներկելով ցածաստաններու գեռուններէն բարձրացող խճճոց բզկիւնին, և կամ անուշադիր անցնելով անխմատ տրտունջներու բնավայր ճահիճներու վերեւէն:

Դուն կը ջնորհես անունդը Սէրին, և զանի կը խրախուսես իր աղեղը լարելու անվերապան աշխոյժով:

Բարեկամութեան շունչը՝ դո՛ւն ես որ կը խնկաւետես քաղցրահոտ ծաղիկներու բոյրովը խորաշունջ ու ոգեպարար:

Քու սակի քնարդ հնչեցնելով ներդաշնակութեան առաջին խաղը կը փոխանցես տիեզերքին բազմալար սրտին:

Ո՞վ Անկեղծութիւն, առանց քեզի մանուկն իր մօրը «օրօր»էն պիտի սարսափէր, օձերու շջիւնին հետ պիտի շփոթուէր մայիսեան երգը ծիծառներուն:

Առանց քեզի, ի՛նչ պիտի ըլլար տաժանքը Հայրենիքին անունովը երգուընցողներուն:— «Հայրենիքին փրկիչն եմ ես»

պիտի գոչէին անոնք, ու իրենց սուրը մերկացնելով՝ զայն պիտի մխէին... եղբայրական լանջքերու:

Առանց քեզի, ի՞նչ պիտի ըլլար նաև տուայտանքը իրենց արիւնն ազգին նուէ՛ր ուխտողներուն: — «Ես ազգային կեանքի սեղանին մատակարար-մատուցանեմ եմ» աղաղակելով՝ նուիրական սեմերէ ներս պիտի խուժէին անոնք յախուռն ու փոշոտ ոտքերով, և անպատկառ ձեռքերնին երկնցնելով ցեղին անմահական կենսահիւթը պարունակող դարաւոր, գեղեցկօրէն ահաւոր սրուակներուն՝ զանոնք մի առ մի կոտորելով պիտի կոտորէին:

Ո՛վ Անկեղծութիւն, եթէ գուն չըլլայիր՝ արեւը մեզ պիտի մուրեցնէր, և ինքնակոչ գեղնաժպիտ «մենտոր»ներ՝ միամիտ հոգիները պիտի գահավէժ գլորէին չարաշուք մահուան զառիթափներն ի վար...:

ՄԻՀՐԱՆ Թ. ԱԺՏԵՐԵԱՆ (*)

(*) Հինգ տարի առաջ, օր մը, Արթուրի Գարամաճեան ինծի կը ներկայացնէր զինք «Հոսանք» ի խմբագրատունը, որ Պուլազ փողոցին վրայ կոչկակար բարեկամի մը խանութքը ասպնջականուած էր... «Երուանդին բարեկամն եմ», ըսաւ Աժտէրեան ինծի, Երուանդ Սարգեանին, և այս անունը յանձնարարականներուն ամենէն թանկարժէքն ու անտեղիտալին էր ինծի համար... Հարլէմի մենաւորին, ամերիկահայ իմ անմոռաց մտերմիս մօտ ապրեր, անոր հոգիին միութիւ կեղեցկութիւնը ճանչցեր, անով շրացեր, հմայուեր էր... Ու միասին ոգեկոչեցինք սիրելի բացակային հետ ապրուած անցեալի սխրալի վայրկեաններ:

Աժտէրեան մէկ քանի արկածալից տարիներ ունեցեր էր, Ամերիկայէն անցնելով Ֆրանսա, Սպանիա, Իտալիա, և հուսկ ուրեմն Եգիպտոս եկեր խրեր էր: Այս յանդուզն թափառայածուներէն, երազի ու գեղեցկութեան այս հեւասպառ հետապնդումներէն, սարսուռներ ամբարեր էր զոր կ'ուզէր արտայայտել, բայց իր միջոցներն անբաւական էին, իր բառամթերքը՝ թերի. աւելի ներշնչում ունէր քան արուեստ, և ալիս ապրեր էր քան սորվեր: Բայց կեանքն ալ գիրքի մը պէս ապրեր էր, որով կը բացատրուէին, յաճախ, իր կարգ մը աւելնոտ ու ապերասան խանդավառութիւնները:

Իր գրական առաջին փորձերուն հսկելով արժանիք մը ունեցայ՝ ճշմարիտ տաղանդի մը յայտնագործումին ու ինքնատիրացումին մէջ... Աժտէրեան արդէն չքեղ էջեր ստորագրեց: Եւ եթէ գեռ պէտք ունի ինքզինք կատարելագործելու, անտարակոյս ուշագրաւ տեղ մը ապահոված է այլևս մեր գրական նորագոյն ինքնատիպ ուժերու շարքին: (Մ. Հ.)

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ՝ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԲՆԱԳՐԷՆ)

Տասը տարեկանիս քեզ կը ճանչնայի արդէն: Դուն կը բռնէի խորքն այն փոքրիկ սենեակին զոր յատկացուցած էին ինծի: Կը տեսնէի քնանալս գեղանկար սիւնիկներով անկողինին մէջ, կին մըն էիր գուն: Շքեղ կերպասէ լայն պարեգօտ մը կը պարուէր մարմինդ: Նստեր էիր սիւնի մը կտորին վրայ որ աթոռակի մը ձեւն ունէր: Կը հարցնէի ինքզինքիս թէ ինչո՞ւ արդեօք շուրջդ կային ուրիշ բեկորներ սիւներու, ցիրուցան զրահներ ու պսակ մը որուն ծռած էր ծայրը: Ու բնագոյօրէն կապ մը կը դնէի քու տրամուլթեամբ խորաթափանց ու ամենի գեղեցկութեանդ և աւերումի ու կոտորածի այն պատկերներուն միջեւ՝ որ քեզ կը շրջապատէին...

Քեզ մատնանիչ ընելով օր մը հայրս ըսած էր ինծի. «Իր թագաւորութիւնը կործանած է, իր զաւակները մեռած են, ինքը ընկուզուած է վիշտին մէջ:» Շատ խրթին էր ասիկա իմ նորածին գիտակցութեանս համար: Սակայն այս խօսքերը յուզեցին զիս:

Ինչ թագաւորութիւնդ ու զաւակներդ սիրելի էին քեզի: Ես զանոնք կը նմանցնէի խաղալիկներու և անուշեղէններու: Զքեզ ամփոփելով իմ մէջս առ յաւէտ, ես կարծեցի չափել քու ցաւդ՝ վերգգալով այն սրտի սեղմումը զոր կը պատճառէր ինծի անագեայ վայրաշարժի մը խանդարումը և կամ զրկումը կիրակնօրեայ անուշեղէնին:

Աւելի ուշ, այս ծանօթութիւնը ծանրաբեռնուեցաւ: Հայրս, որ յաճախ կը համակերպէր իմ տղայական շատախօսութեանս, ու մարդը կ'որոշէր տղուն մէջէն, ուզեց ինծի սորվեցնել հրացանի մը զինավարժութիւնը: Փարատելու համար սարսափը՝ զոր կը պատճառէր ինծի չոր ճարձատու մը հրապատիճին՝ խոհեմարար փոխանակուած տակառիկին փամփուշտովը, ան սովորութիւնն ունէր ըսելու. «Միրտ ունեցիր, որպէսզի վաղը զինքը փրկելու երթաս:»

Այս խօսքը իմ տղու հպարտութիւնս հրահրելով՝ կը զարնուէր սրտիս՝ վեհանձնութեան զգացումներով լեցուն: Փամփուշտը կը պայթէր ստորակէտի ձեւ բոցով մը: Զիդերս կը բռնէի զանոնք կտրելու չափ ուժգին՝ պող և հանդարտ արտայայտութիւն մը ցոյց տալու համար: Կարծես թէ կը սկսէի արդէն նպատատարօրէն քուշակել վարպետ նշանաձիգը՝ զոր կ'երազէի բլլալ՝ փրկելու համար քեզի այդ կորսուած և ամայի տեղէն, տալու համար վերստին խաղաղութիւնն և ապահովութիւնը որոնք այնքան լաւ կը յարմարէին դէմքիդ գիծերուն ու կեցուածքիդ շնորհքին:

Այն ատեն, ջերմութիւն մը կ'ողողէր զիս: Տափակ ու նիհար կուրծքս կ'ուռէր և ես կը մաղթէի յեղակարծ գալուստը չըջակայքի աղջնակներուն՝ ծափահարելու ապառնի քաջագործութիւններս, շնորհաւորելու զիս իմ սիրելիներուս յատկացուած գրօսանքի մը յաջողութեանը համար:

Բայց այս տպաւորութիւնները հազիւ թէ զգայնութեանս մակերեսը կը յուզէին: Անոնք շատ անցօր կը թուէին թաթանցիլու համար անոր մէջ: Թերեւս կը պակասէր ինծի գանոնք ընդունելու յօժարամտութիւնը: Ինչ որ ալ ըլլալ, անոր յանկուցիչ այլաբանութիւնը անեղծ մնաց միշտ, և աղարտեցաւ միայն պատանեկութեանս մէջ, երբ առաջին ծանօթութիւններն ունեցայ լեզուի մը որ քուկդ եղաւ: Անոնք արուեցան ինծի առանց այն վշտի բարձրագոյ ըսողքին՝ զոր դուն կը պօռայիր, ու բոլորովին հեռու սուգերու մօտ լսանակէն: Անոնք տեղի ունեցան միայն առանին խօսակցութիւններու շրջանակին մէջ. եղան փոքր ու նիհար, խաղաղական, ու պատշաճեցան լոկ հայրական կշտամբանքներու և ընտանեկան խօսքերու:

Թոթովելով այս հնագեղ ու հրաշալի վանկերը, ես միայն տարտամ գիտակցութիւն մը կ'ունենայի անոնց անյիշատակ ծագումին և անկորնչելի գեղեցկութեանը վրայ:

Այս գիտակցութիւնն ունեցայ աղաղակի մը յանկարծականութեամբը՝ կարգալով թերթերը, կարգալով տեղեկագիրերը տարօրինակօրէն պատկերազարդուած ու միջակ պերճանքով մը կազմուած գիրքերու՝ գորս գիտաւորութեամբ մը կը թողէին, կարծես թէ, ձեռքիս տակ: Այս էջերը, ծածկուած խուսափուկ գրուածքով մը և մթամած պատկերներով, աչքիս առջեւ տարածեցին ահռելի լոյսեր: Անոնք արհաւիրքներ բերին ինծի: Անոնք բացին պատանքին ծալքերը՝ որոնց մէջ քուկիներուդ հեռ գքեզ ծածկել կ'ուզէին. երբ դահնան՝ որուն քով ինկած էիր շղթայակապ, բզբտած էր քու միտդ և արիւնդ փոշին ու մացաւներուն մէջն էր թափած, մինչդեռ ամենքէն լքուած և անտիրական էիր, ու դահիճները, արիւնտտ խրախճանքին պատրաստ, կը գրօնէին կողերդ ցաւատելով և արտախըլելով անոնց մէջէն քու մայրական ծննդաբեր գօրութիւնդ, գոգնալով քու մաքուր ու սիրաբոյր արգանդէդ անհամար սերունդները՝ որոնք ելած էին անկէ ու տակաւին ուրիշներ պիտի կարենային ելնել...

Բազդը մոռցած էր զիս... Ուժն ու քաջութիւնը ինծի կուգային միայն քաղաքակրթութեան նկուն նախապաշարութեան մէջէն:

Պարտ էի մնալ անտարբեր քու տառապանքիդ առջեւ... կը փնտռէի իմ շուրջս յուսահատական ու խոլոտ է չքերով... Տեսայ միայն անոնք՝ որ իրենց բարօրութենէն

բաժին մը չէին հաներ քեզի, չէին կերակրեր քու նօթի զաւկներդ, չէին ծածկեր քու ցրտասարսուռ ձերունիներդ, չէին զիններ քու տղամարդիկդ՝ որոնց կը սպառնար թշնամին, ու կը սպառնար կիներուն ամօթխածութեանը, մաքրութեանը աղջնակներուն՝ որոնք անոնց զօրաւոր սէրերէն ծնունդ էին առած... Բեզի արժանի ըլլալու և զքեզ յիշելու համար՝ ուրիշներ կը գործածէին իրենց գրիչը տիրական ճարտարութեամբ: Հասկցայ որ կը մեծարէիր այս վերջինները: Անոնք քեզի համար եղած անձնուիրութիւններու մեծ մասն ունէին: Անոնց մտածումը քու շունչէդ վառուած, թօրուած խոկմունքի բովէն, ամէն տեղ բազմապատկելով քու յարութեանդ պատկերն ու վերագարծը քու ժպտիկդ, քու շղթաներուդ փշուրմն ու պատիժը բարբարոսներուն՝ որ քեզ մեռած կ'ուզէին տեսնել, օգտակար կ'ընէին գանոնք, և անոնց փայփայանքին, քու խորաբաց վէրքերուդ վրայ, տեւական քաղցրութիւններ և սփոփիչ թեթեւութիւն մը կուտային:

Ես անոնցմէ ուզեցի ըլլալ... Ու պօռացի կատաղութենէս՝ տեսնելով թէ չէի կրնար: Քու լեզուիդ գաղտնիքներուն լաւ չէի թափանցեր: Ան ինծի չէր եկած, զի ես բաւական թախանձած չէի անոր...

Արգէն խղճի խայթով կը տանջուէի... Ափսոսանք մ'էր ինծի համար չի կարենալ մազլցիլ գողգօթայէդ վեր, հետեւիլ քու արիւնաներկ հետքերուդ, սեղմել զքեզ թեւերուս մէջ, այնքան ջերմօրէն, այնքան շնչասպառ, հեծեծագին, սիրահարի մը և տղու մը կրկնակ տենդով...

Ահաւոր միշտ մըն էր ինծի քեզի համար ունենալ միայն սիրոյ ցուք մը, երբ ուրիշներ կը խանդաղատէին քու վրագ, անոնք՝ որ քեզի պաշտելու և քեզմէ սիրուելու իրաւունքը ձեռք բերած էին՝ սգաւոր, իրենց սիրելիներուն գոհարբութեամբը, խաչուած ու տակաւին կանչելով զքեզ իրենց հոգեվարքի հոնգիւններով...

Լուսավառ, արգասաւոր մտածում մը ծնաւ ինքնամփոփումէս, մելամաղձութիւնս փարատեց: Կը խորհէի պանծացնել, սիրել զքեզ ուրիշ լեզուով մը որ այնքան քաղցրահնչուն ըլլար որքան քուկդ, ուրիշ բաւերով որոնք մեղմիկ ըլլային քուկիներուդ պէս, փափուկ և ճկուն: Եւ ես բազդն ունիմ որ ան քու Արեւմուտքի ամենասիրելի բարեկամուհիներէդ մէկունն է:

Կը ճանչնաս զինքը: Ան ծածկուած է թաւիչով, մետաքսով և հիւսուածքով: Ան պերճանքոտ է և շնորհալի: Ան սիրելի է ամենուն և ամենքը կը պաշտեն զայն: Հրաշալի է անոր զգայնութիւնը: Իր բարութիւնը խոհական է և այնքան մտացի, իր հրապոյրը այնքան գրաւիչ, իր տեսչանքը այնքան խորունկ, իր խօսքը այնքան անկեղծ, իր

համբոյրները անխափ անուշ՝ որ մարդ պէտք է հրէշ մը ծնած ըլլայ զայն չի սիրելու և անոր ընկերութենէն փախչելու համար...

Երէկ չէր որ ան իր թեւերուն մէջ առաւ զքեզ, սրբեց քու արցունքներդ, փայփայեց քու մազերդ, յափշտակուեցաւ գեղեցկութեանդ շքեղութենէն, ձեւերուդ ներդաշնակութեանէն ու նայուածքիդ քաղցրութենէն, հակառակ այն ամէն ցաւերուն զոր դուն կրեցիր: Ան քեզ ընդունեց իր սեղանին շուրջը, բաժին հանեց քեզի իր գինիէն, կերակուրներէն ու պտուղներէն: Ան ուզեց որ դուն պահէիր քու պատմութեանդ, խօսէիր քու լեզուդ՝ որուն շեշտն ու կշռոյթը անխափ հաճելի կը թուէին իրեն:

Ան քու դրացուհիդ էր, կը տեսնէր զքեզ յաճախ, և ուրիշ բարեկամուհիներ կ'ընկերանային անոր: Պիտի հագցընէր քեզի ծիրանի և դիպակ, պիտի յօրինէր դարձեալ քու զինանշանուած գահդ, համբուրելով քու այտերդ, շփութելով զքեզ իրեն հետ՝ ճապուկ և սերտ գրկախառնումով մը: Ան պիտի զնէր գլխուդ թագը զոր ունէիր ատենաք, սրուն զարդարանքը պիտի ամբողջացնէր իր ձեռքով:

Եւ ես հասկցայ, որ քու վրադ խղճալով, հիանալով, խրախուսելով զքեզ նմանօրինակ բարեկամուհւոյ մը լեզուին մէջ, քեզի այնքան հաճոյք կը պատճառէի որքան եթէ հնչած ըլլայի քու շրթներուդ շեշտերն ու բառերը:

Ան բոլորովին չի յանձնուեցաւ ինձի, չի վստահեցաւ իր հոգիին ու մտածումներուն զաղտնիքը, չերեւաց իմ աչքերուն իր գեղեցկութեան հրաշալի պերճութեանը, իր ձեւերուն շքեղ վսեմութեանը մէջ: Ես չի բաժնեցի անոր հետ իր ստնգանքին եղբ:նականութիւնը, ոչ ալ իր բերանը մնաց երկարօրէն իմինիս վրայ քաղցրութեամբ և հոն ձգեց հեշտալի այրուածք մը... Բայց ան թոյլ տուաւ որ իր շըրջագրեստին քղանցքը համբուրէի. վերցուց զիս, երբ ես կը խօսէի ծնրադիր իրեն և իմ մասիս. նայեցաւ ինձի ու ժպտեցաւ, իբրեւ թէ յորդորելու համար որ համբերէի տակաւին:

Մի՛ նախանձիր անոր: Մի՛ կարծեր որ ես հեռացած եմ քեզմէ՝ զայն տենդագինօրէն սիրելուս համար: Ո՛չ, ո՛չ: Գիտցի՛ր որ իմ բոլոր մտածումներս քուկդ են, ամենազոյգն տրոփիւնները սրտիս զքեզ կը փնտռեն, քեզի կ'անձկան: Դուն կապակցութիւն մը ունիս իմ բոլոր գործերուս, որոշումներուս ու տենչանքներուս հետ:

Հիմա որ ահռելի նահատակութիւն մը կ'ընկձէ զքեզ ու գերեզմանները կը շատնան շուրջդ, տակաւին հուրն ու սուրը կ'այրեն ու կը խոցոտեն քու մարմինդ և ամէն վայրկեան աւելի կը կորսնցնես զաւակներուդ և Աստուծոյ հան-

դէպ ունեցած վստահութիւնդ, հիմա որ հորիզոնները կը կարմրին, արեւը կը մարի, գիշախառն հողը գիակներ կը մարսէ, դուն կը հիւժիս ու կ'անշքեղանաս անճանաչելի դառնալու չափ, բոլոր անդոհներս քեզի համար են, ու կը տանջըլիմ խոստմնալից վաղուանդ սպասումով և այսօրուան ահաւոր վիշտովդ... Հանդուրժէ՛, սակայն, որպէս զի միւսը չի լքեմ քեզի համար. ան ալ կը տանջուի և իր փրկութիւնը քուկդ ալ պիտի ըլլայ:

Ան յաւերժօրէն օգնող ու զօրաւոր եղաւ, շուրջեց քեզի առանց համբելու, տուաւ միշտ առանց փոխարէն մեծ բան մը սպասելու, եղաւ գթութեան անխոնջ քոյր մը վշատչարչար ժողովուրդներուն, ահարկու իրաւարարուհին բռնահարուած ազգերուն, իր զաւակները մեռան՝ իրենց Հայրենիքէն դուրս՝ սիրելիներու կարօտով: Վտանգի ժամը զայն տեսաւ շրջապատուած հաւատարիմ և հզօր բարեկամուհիներէ, ասոնք ալ իրեն պէս Արեւմուտքի Թագուհիներ: Իր հմայքին ցոլքը և իր գեղեցկութեան ճառագայթութիւնը պահ մը լքած էին զինքը, բայց հիմա նորէն կը սկսին տենդոտ սիրոյ մը մթնոլորտին մէջ պարուրել զայն...

Երկուքդ ալ իմ հոգիիս մէջն էք, անբաժան իրարմէ: Բոլոր անոնց պէս՝ որոնք զքեզ տեսան մօտէն, իրենց յուզումնալից համբոյրները դրին դողգոջուն և եղերական դէմքիդ վրայ, բոլոր անոնց նման՝ որ սորվեցան զքեզ և ուսումնասիրեցին իրենց էութեան ուղղակի թրթռացումովը, ես կը զգամ իմ սրտիս մէջ քու կրկնակ ու շաղապատուած ներկայութիւնդ:

Քու զաւակներէդ քանիններ կան որոնք կը մեռնին անոր համար, զորս ան կը ցողարկէ արցունքներով՝ ինչպէս իր ճշմարիտ տղաքը, ու կը փառարանէ զանոնք իրեններուն հետ... Քանիններ կան որ կը մեռնին անոր ամենասերտ բարեկամուհիներէն մէկուն համար, ու վերջին անգամ, յաւիտենի լուութեան մէջ, անոնց տժգոյն շրթները քու անունը կը փափսան...

Ան չի բաժնիր իրենները քուկիւններէդ, ու թշնամիներուդ ձեռքերէն կը խլէ բոլոր անոնք՝ որ կ'անմահացնեն զքեզ լեռնային ահարկու և ամեհի պայքարներով...

Ու վաղը, երբ արշալոյսը ծագի, երբ այս դժոխային գիշերը անցնի երկրիս վրայէն, երբ ատելութեան սերմնա-

ցաններն ու մայրերու և մանուկներու սպաննիչները, տանար-
ներու կործանիչները, պատարագ պղծողներն ու խորան-
ներու աւերիչները, առեւանգիչներն ու հրձիգները ոճիրնե-
րով ծանրաբեռնուած իրենց ձեռքերը միացնեն, դուն պիտի
տեսնես զայն, քու բարեկամուհիդ՝ որ առաջիններէն պիտի
ըլլայ քեզի վերագարծնող ինչ որ կորսնցուցիր իրեն և իր
զինակիցներուն համար: Եւ դուն պիտի տեսնես զիս, որ պիտի
վազեմ դէպի քեզ, պաղատագին, թեւերս բացած, աղա-
աչելով որ ներես ինձի՝ քեզի համար տանջուած չըլլալուս
օճիրը...

Օ՛հ, դուն պիտի ներես՝ զիտնուլով որ այնքան ուժգը-
նորէն, այնքան խորապէս քեզի կը հասկնայի...:

Ե. ՇԻԼԵԱՆ

Հ Ա Յ Զ Ո Ջ Ի Ն

Պայմաններուն մէջ այս խիստ աննպաստ,
Երբ անդին կ'իյնան կեանքեր զիտապաստ,
Բուքը-բորանին ու ձիւն-ձըմեռին,
Ի՞նչ կը խորհի հոս հարուստը, մերին:

Կը խորհի մէկ բան. իր հանգիստը լսկ
Ու կը դիտէ ան, անտարբեր, անհոգ,
Հառաչանքը մեծ դժբախտ Հայ Ազգին,
Որուն չուզեր տալ, աւա՛ղ, իր ոսկին...

Լարե՛ ալ, հայ ջոջ, միտքդ քու այնտեղ,
Ուր հիւանդներ կան, թշուա՛ւ ու անդեղ,
Երեքը, մանուկներ, մե՛րկ ու անօթի՛,
Կիներ, որ չունին նոյնիսկ ցնցոտի:

Ալ բա՛ւ է, հերի՛ք, որքան անտարբեր,
Եղար ցաւերուն մէջ այս տարուբեր,
Բա՛ց դրամարկղիդ դուռները, բա՛ց լայն,
Աղաչանքն Հայուն ա՛յս է, ա՛յս միայն:

«Վերջնացա՛ւ, կ'ըսե՛ս, յոյսը այս Ազգին,
«Ա՛լ ես որո՞ն տամ՝ դրամն ու ոսկին»...
Մե՛ յուսահատիք, Հայը չէ՛ մեռած,
Ան պիտի սպրի արեւուն դիմաց:

Պահելու համար, միայն թէ զայն ողջ,
Քեզի կը դիմէ հայ Ազգը ամբողջ.
Բա՛ց, ուրեմն, բա՛ց դրամարկղիդ դուռ,
Ալ կարգը քո՛ւկդ է. Ազգին փորայ տո՛ւր...:

Ազգասիրիս Գ. ԲԱԳԲԱՏՈՒՆԻ

Տարեցոյցի Օրացոյցը

1916

ԱՄԻՍ	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒԲ.	ՇԲ.	ԿԻԲ.
ՅՈՒՆՈՒՍԲ	—	—	—	—	—	1	2
	3	4	5	6	7	8	9
	10	11	12	13	14	15	16
	17	18	19	20	21	22	23
	24	25	26	27	28	29	30
	31	—	—	—	—	—	—
ՓԵՏՐՈՒՍԲ	—	1	2	3	4	5	6
	7	8	9	10	11	12	13
	14	15	16	17	18	19	20
	21	22	23	24	25	26	27
	28	29	—	—	—	—	—
ՄԱՐՏ	—	—	1	2	3	4	5
	6	7	8	9	10	11	12
	13	14	15	16	17	18	19
	20	21	22	23	24	25	26
	27	28	29	30	31	—	—
ԱՊՐԻԼ	—	—	—	—	—	1	2
	3	4	5	6	7	8	9
	10	11	12	13	14	15	16
	17	18	19	20	21	22	23
	24	25	26	27	28	29	30
ՄԱՅԻՍ	1	2	3	4	5	6	7
	8	9	10	11	12	13	14
	15	16	17	18	19	20	21
	22	23	24	25	26	27	28
	29	30	31	—	—	—	—
ՅՈՒՆԻՍ	—	—	—	1	2	3	4
	5	6	7	8	9	10	11
	12	13	14	15	16	17	18
	19	20	21	22	23	24	25
	26	27	28	29	30	—	—

ԱՄԻՍ	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇՐ.	ԿԻՐ.
ՅՈՒԼԻՍ	—	—	—	—	—	1	2
	3	4	5	6	7	8	9
	10	11	12	13	14	15	16
	17	18	19	20	21	22	23
	24	25	26	27	28	29	30
	31	—	—	—	—	—	—
ՕԳՈՍՏՈՍ	—	1	2	3	4	5	6
	7	8	9	10	11	12	13
	14	15	16	17	18	19	20
	21	22	23	24	25	26	27
	28	29	30	31	—	—	—
	—	—	—	—	—	—	—
ՍԵՊՏԵՄԲԵՐ	—	—	—	—	1	2	3
	4	5	6	7	8	9	10
	11	12	13	14	15	16	17
	18	19	20	21	22	23	24
	25	26	27	28	29	30	—
	—	—	—	—	—	—	—
ՀՈԿՏԵՄԲԵՐ	—	—	—	—	—	—	1
	2	3	4	5	6	7	8
	9	10	11	12	13	14	15
	16	17	18	19	20	21	22
	23	24	25	26	27	28	29
	30	31	—	—	—	—	—
ՆՈՅԵՄԲԵՐ	—	—	1	2	3	4	5
	6	7	8	9	10	11	12
	13	14	15	16	17	18	19
	20	21	22	23	24	25	26
	27	28	29	30	—	—	—
	—	—	—	—	—	—	—
ԴԵԿՏԵՄԲԵՐ	—	—	—	—	1	2	3
	4	5	6	7	8	9	10
	11	12	13	14	15	16	17
	18	19	20	21	22	23	24
	25	26	27	28	29	30	31
	—	—	—	—	—	—	—



Մի՛ մոռնար, նոր Տարւոյ առթիւ, «ԵԳԻՊՏԱԶԱՅ
ՏԱՐԵՅՈՅՑ» մը նուիրելի Բօր-Սայիսի Հայ «Բեմք» ին
ընթերցասէր երիտասարդոքեան :

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

- 1.— ԲԱՅԲԱՅՈՒՄ (Սպառած)
- 2.— ԿԻԼԻԿԵԱՆ ԱՐԶԵԻՐԻՐԲԸ (Սպառած)
- 3.— ՀԱՅՈՒՀԻՆ (Սպառած)
- 4.— ԱՐԻՒՆԻՆ ՄԱՏԵԱՆԸ 10 Ե. Ղ.
- 5.— ՉԱՅՆԸ ՀՆՉԵՑ! 15 Ե. Ղ.
- 6.— ԵԳԻՊՏԱԶԱՅ ՏԱՐԵՅՈՅՑԸ, Ա. Հասր (1914) } 25 Ե. Ղ.
- 7.— » » Բ. Հասր (1915) }
- 8.— «ՀՈՍԱՆԲ»Ի ՀԱԻԱՔԱՇՈՒՆ 50 Ե. Ղ.

ԳԻՆ՝ 15 ՂՐՇ. ՈՂՁ

ԳՐԱՐԱՆ, ՀԵՂԻՆԱԿԷՆ

S. BARTÉVIAN

B. P. N° 1500

LE CAIRE

(Egypte)

«ԵԳԻՊՏԱԶԱՅ ՏԱՐԵՅՈՅՑԸ» փոսթի միջոցով ստացող մե-
ծայարգ ազգայիններէն կը խնդրուի բարի ըլլալ փոխարժեքն
ԱՆՅԱՊԱՂ հեղինակին ղրկելու ԹՂԹՂԳՐՈՇՄՈՎ :

« Ազգային գրադարան



NL0148494

14208